

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՐԱՆ


ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԵՐ

(գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

7/2016

АРМЕНОВЕДЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ
(периодический сборник научных статей)

ARMENOLOGY RESEARCHES
(periodical collection of scientific articles)



Ստենֆանակերտ - 2017



ՀՏԴ 001

ԳՄԴ 72

Հ 246

***Տպագրված է ԱրՊԿ գիտական խարեսքի որոշմամբ
Հրատարակվելու է 2009 թվականից
Խմբագրական խորհուրդ***

Բայացան Վ. Ռ. - զիսավոր խմբագիր, պ.գ.դ., պրոֆեսոր
Սաֆարյան Վ. Ա. - պատասխանատու քարտուղար, ԱրՊԿ պատմության
ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ
Դադայան Ս. Վ. - Արցախի գիտական կենտրոնի տնօրեն, պ.գ.թ., պրոֆեսոր
Մելքոնյան Ս. Ա. - «Հ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ.,
«Հ ԳԱԱ ակադեմիկոս
Հռվիաննիայան Լ. Շ. - «Հ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, բ.գ.դ., պրոֆեսոր, «Հ
ԳԱԱ թղթակից անդամ
Պետրոսյան Վ. Լ. - ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ, պ.գ.դ.,
պրոֆեսոր
Մուսայենյան Հ.Գ. - ԱրՊԿ բ.գ.դ., պրոֆեսոր
Սարգսյան Ա. Յ. - ԼՂՀ կրթության նոր գիտության փոխնախարար, բ.գ.թ.,
դոցենտ
Կարապետյան Ս. - «ՃՈՒԿ կազմակերպության տնօրեն

Հայագիտական ուսումնասիրություններ: Գիտական հոդվածների
Հ 246 պարբերական ժողովածու 7/2016.- Ստեփանակերտ:
ԱրՊՀ հրատ., 2017.- 168 էջ:

ՀՏԴ 001

ԳՄԴ 72



Редакционная коллегия:

- Балаян В.Р. - главный редактор, д.и.н., профессор
Сафарян В.А.- ответственный секретарь, зав. кафедрой истории АрГУ,
к.и.н., доцент
Дадаян С.В. - директор Арцахского научного центра, к.и.н., профессор
Мелконян А.А. - директор Института истории НАН РА, д.и.н., академик.
НАН РА
Оганесян Л.Ш. - Институт языка НАН РА, д.ф.н., член корр.
НАН РА
Петросян Г.Л. - зав. кафедрой культурологии ЕрГУ, д.и.н., профессор
Мусаелян О.Г. - АрГУ, д.ф.н., профессор
Саркисян А.Ю.- заместитель министра Образования и науки НКР,
к.ф.н., доцент
Карапетян С. - председатель общественной организации по изучению
армянской архитектуры.

Editorial Board:

- Balayan V.R. - Editor in Chief, Ph.D. in History, Professor
Safaryan V.A. - Executive Secretary, Head of the History Department of
ASU, Ph. D. in History, Associate Professor
Dadayan S.V. - Chief of the Artsakh Research Centre,
Ph.D. in History, Academician
Melkonyan A.A. - Director of the Institute of History of NAS RA,
Ph. D. in History, Academician of NAS RA
Hovanisyan L. Sh. - Director of the Institute of Linguistics of NAS RA,
Ph. D. in Philology, Corresponding Member of NAS RA
Petrosyan H. L - Head of the Cultural Studies Department of YSU,
Ph. D. in History, Professor
Musaelyan O.G. - ASU, PhD in Philology, Professor
Sargsyan A. Y. - Deputy Minister of Education and Science of NKR,
Ph. D. in Philology, Associate Professor
Karapetyan S. - Chairman of the Public Organization of the Research on
Armenian Architecture

ՊԵՂՈՒՄՆԵՐ ՆՈՐ ՀԱՅԿԱՋՐԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՏՈՒՄ

Նորա Ենգիբարյան, Մանուշ Տիտանյան,
Հաննա Սիրիջանյան, Տիգրան Ալեքսանյան

Քանալի բառեր. Արցախ, Նոր Հայկացուր, դամբանաբլուր, հիմնահողային դամբանախուց, գերանածածկ, կենդանակերպ կանքեր, երկմետաղ սուր, խսիր

Խաչենագնուի հովիտի դամբարանադաշտերը հայտնի էին դեռ նախախորհրդային շրջանում պատմական Արցախի տարածքում կատարված պեղումների շնորհիվ (Խաչիկ վարդապետ Դադյան, Է. Ռեները): Խոնդրո առարկա դամբարանադաշտը, որտեղ 2015 թ. կատարվել են պեղումներ, գտնվում է ԼՂՀ Մարտակերտի շրջանի Նոր Հայկաջոր և Նոր Մարաղա գյուղերի միջև՝ Ստեփանակերտ-Մարտակերտ ճանապարհի աջ կողմում: Դամբարանադաշտի մասին առաջին տեղեկությունը, դեռ անցյալ դարի քանական թվականներին, տվյալ է Ս. Տեր-Ավետիխյանը, հիշյալ տարածքում հաշվում է խոշոր հողաթմբերով 15 դամբարանաբլուր: Նա նշում է, որ դրանցից 8-ը դասավորված են մեկ շարքով, իսկ մյուսները՝ այդ շարքին հորիզոնական¹: Իրականում դամբարանաբլուրների քանակը ավելին է քան Ս. Տեր-Ավետիխյանի հիշտակածը, քանի որ նա ներկայացրել էր միայն իրար մոտ գտնվող խմբերից մենքը: Դամբարանադաշտը սկսվում է լեռնայինից տափաստանային գոտուն անցնելու սահմանագլխից, ընդարձակ տարածության վրա 25-80մ տրամագծով դամբարանաբլուրները դասավորված են շարքով և առանձին բլուրների տեսքով:

Ընտրված դամբարանաբլուրը չափնորով փոքր էր և իրենից ներկայացնում էր հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք առանցքով ձգված, հատակագծում 24x18մ չափնորով, 1.5մ (1.05-1.7մ) բարձրությամբ ճիմապատ հողաթումբ² (նկ. 1): Կավաքարային լիցքի տակ, գնտնի մակերևույթին հավասար նիշով, բացվածին լայնակի գցված, ոչ մեծ գերանների մնացորդներ (նկ. 2): Գերանածածկի վրա լցված հողի մեջ պահպանվել էին բուսական մնացորդներ: Դամբանախուցը հիմնահողային էր՝ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ուղղվածությամբ (նկ.3): Երկայնական կողմերում պահպանված ծածկի գերանների ծայրերը փաթաթված են եղել խսիրով, ինչը վկայում էն թաց կավի վրայի դրոշմաքնները (նկ.4):

Տնդանքին համահունչ, դամբանախուցը ներկայական առանցքով ուներ որոշակի թերություն: Հավանաբար այդ է պատճառը, որ արևմտյան ավելի բարձր կողմում գերանածածկը դրվել էր խցի նզրով, իսկ արևելյան՝ ցածր հատվածում նաև հողի վրա,

¹ Տեր-Ավետիք Ս. Վ. Պալատուկ գրքությունը ներկայական առանցքով ուներ որոշակի թերություն: Հավանաբար այդ է պատճառը, որ արևմտյան ավելի բարձր կողմում գերանածածկը դրվել էր խցի նզրով, իսկ արևելյան՝ ցածր հատվածում նաև հողի վրա,

² Պեղումներն իրականացվել են 2015 թ. հունիս-հուլիս ամիսներին, ԼՂՀ ԿՍ Զբոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության վարչության ֆինանսավորմամբ (արշավախմբի պետ՝ Ս. Ենգիբարյան):



որտեղ դրանց «սահքը» կանգնեցրել էին ուղղահայաց դրված գնրաններով: Խցի հարավային կողմում՝ գնրանների նզրին մոտ, հայտնաբերվեցին զոհաբերված կովի ոսկորներ: Գերանակապ ծածկի փլուզման հետևանքով խուզը լցված կավաբարպային զանգվածը ջարդել էր գույքը և խաթարել իրենի մի մասի տեղադրման նախնական դիրքը (նկ.5): Տեղում պահպանված խնցանոթներով և ոսկորներով փաստվում է, որ դամբարան կառուցողները տարանջատեն են թաղմանն ուղղված իրենը և զոհաբերված կենդանիները խնցանոթները կենտրոնացված էին խցի արևմտյան հատվածում, իսկ արևելյանում՝ կենդանիների ոսկորները: Դամբարանախցի միջին մակարդակներում, ամբողջ մակերևույթով, գնրանների մնացորդների հետ սփռված էին խնցեներներուն: և բրոնզն կիսաշրջանաձև, նզրենին անցրով բազմաթիվ զրահակոճակների ամբողջական ու բնեկորային օրինակներ: Հյուսիս-արևմտյան անկյունում հայտնաբերվել են հատակին դրված նրկու խոշոր կճուճներ (նկ. 6), իսկ մի փոքր հարավ՝ խցի կենտրոնում, միականթ փոքր սափոր: Խցի պատճի ստորին մասերում պահպանվել են հողը փոքր գործիքի թռղած համ լայնությամբ ուղղահայաց ակոսների հետքերը:

Դեղված 5.9x3.5մ հատակագծային չափերով, 3.0մ առավելագույն խորությամբ դամբանախցում կատարվել էր մեկ անհատի հուղարկավորություն: Հնամարդաբանական տարբեր մեթոդների կիրառմամբ ուսումնասիրված ոսկրաբանական նյութից նզրահանգվել է, որ ննչեցյալը ներկ է 45-55 տարենկան տղամարդ: Վատ պահպանված կմալքի ոսկորների վրա դիտարկվել են նաև բազմաբնույթ ախտաբանական շնորհմանը, իսկ ստորին ծնոտի ծախս մասում առկա է սուր գործիքի հարկածից առաջացած վնասավածքի հենտք¹: Քանի որ, ուշ բրոնզենդարյան և երկարենդարյան հյայատանի տղիմացեղային ավագանու համար իշխանության խորհրդանշներ են համարվել երկժանիները, սակրենը և գավազանի գլխադիրները² ապա հայտնաբերված գավազանի բրոնզն գլխադիրը վկայում է հուղարկավորվածի սոցիալական բարձր դիրքը³ (նկ. 7): Այդ գավազանի գլխադիր նման օրինակները հայտնի են կարմիր բների⁴ և Նոր Խաչակապի⁵ երկաթենդարյան դամբարաններից:

Նոր հայկացրի դամբարանաբերից հայտնաբերված թաղմանն ուղղված գույքը, կարմիր է խմբավորել գենքի, աշխատանքային գործիքների, զարդերի և խնցանոթների, ընդ որում, վերջինը մի քանի տարբերակի բաժանվող անոթներով ամենամեծ խումբն է կազմում: Խնցանոթների մեջ հստակ տարբերակվում են ծիսական և կենցաղում օգտագործվող անոթները: Մեծ է միականթ սափորների տեսականին, դրանք իհմնականում սև են, մնխրագույն, դաշնագույն, սակայն տարբեր են չափերով և մակերենների մշակվածությամբ: Միականթ սափորների մի մասը հարդարված են

¹ Հնամարդաբանական նյութը ուսումնասիրել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտ.աշխ., պ.գ.թ. Ա. Խուլավերյանը:

² Есаян С., Символы власти рода-племенной знати Армении эпохи поздней бронзы и раннего железа, Вестник ереванского университета, 1989, 2, с. 30.

³ Есаян С., 1989, յշ. соч., տաճ. 4, рис. 11.

⁴ Եսայան Ս., Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի կատալոգ, II, Երևան 1967. էջ 14, աղ. XV, նկ. 6

⁵ Ենգիբարյան Ն., Հայտնագործումներ Նոր Խաչակապում, Հուշարձան, տարեգիրք, Գ, Երևան, 2005, աղ. XI, նկ. 1:



ակոսներով, փայլագծներով, զծանախչով, կնտաշարներով, մյուսները զուրկ են հարդարանքից: Ամբողջական հայտնաբերվել է միայն »թեյնիկատիհա« անոթը, որը շուրջից վերև ունի աղեղնաձև կամք և ոճավորված ծորակ (նկ.8): Անոթի սակավաթիվ գուգահեռները հայտնի են Շիրակավանի, Խնձորեսկի¹, Մինզկեապուրի² մ.թ.ա. IX-VIII դր. նյութերից: Հայտաբերված երկրորդ անոթի ծորակը ցիլ գլխի տեսքով է (նկ.9): Երկու անոթներն ել հարդարված են կանելյուրներով և կնտաշարներով: Ծիսական նշանակության խնցեղենից հետաքրքիր են նաև կնտանախչով զարդարված խոյականթ և շուրջին խոյի գլխի բանդակով կրկնականթ սափորներ (նկ. 10,11): Միականթ սափորներից զարդանախչի ձևով տարբերվում է իրանի կենտրոնում համակենտրոն շրջանների պատկերներով դարչնագույն, թերի վզով օրինակը (նկ. 12): Հավաքածուում մենական օրինակից են ոճավորված կանքով կանելյուրազարդ գավաթը (նկ.13) և երկրաչափական ու կենաց ծաղի պատկերներով հարդարված ափսեն (նկ. 14): Ավանի զարդանախչերն արված են կտրելու ներակով: Կենաց ծաղի պատկերներին մոտ գուգահեռներ կան Շուշիի և Կարկառի երկաթեղայան դամբարանների նյութերում:

Ներկայացված կճունները տարբեր չափերի են: Կենցաղային նշանակության այս խնցանոթների տեսականին տարբեր գույնների է՝ մոխրադարչնագույն, մոխրագույն, խամրած սև գույն, դրանք ունեն լայն կամ ծգված իրան, հարդարված են փայլագծներով, ուռուցիկ և զծային գոտիների շարքներով, կանքներով:

Կենաց ծաղի պատկերներին ներակով: Կենաց ծաղի պատկերներին մոտ անզարդ օրինակներ:

Հայտնաբերված զինատեսակները երկուսն են՝ երկմետաղ դաստակով սուրը և երկային նիզակը: Նիզակը խողովակակոթառ է, խստ բնկորային լինելը թույլ չի տալիս պատկերացում կազմել ասյրի մասին: Երկմետաղ դաստակով երկային շնորով սուրը նույնպես հայտնաբերվել է բնկորատված վիճակում: Անդրկովկասում նման սրբի տարածումը սկսվում է մ.թ.ա. IX դարի երկրորդ կենցից³:

Աշխատանքի գործիքներից են թերի կամ բնկորատված դանակները, բրոնզե դուրք, ուկրից իլիկի գլուխը և հերունը (նկ.16): Դանակները իինգն են, երկաթից, ուղղի շնորով, թերի ծայրերով և լեզվակներով: Նմուշներից մեկը շնորի և լեզվակի միացման մասում ունի լրացուցիչ փառույթ (նկ.17):

Հայտնաբերված իրենի թվում են ծիսասարքի հետ առնչվող արսենուարներից՝ ծիս ուկրիների շրջանում հայտնաբերված »մուրճիկը« և երկու երկային օղնրի մնացորդները: Խցի տարբեր հատվածներից պեղված, հավանաբար, փայտն իրի զարդարանք հանդիսացող ուկրեն ուղղանկուն և շնանկուն ներդիրները, սարդինից, ապակուց, մածուկից, բրոնզից, լիսունցների խնցուց ուղղանկուրը և կախազարդները (նկ.18): Հանդիրձանքի մաս կազմող զարդարուն գոտիների բնկորները և զրահակոճակները (նկ. 19) եղբափակում են այս դամբարանից հայտնաբերված բարձրարված գտածոների շարքը:

Հետաքրքիր գտածոներից է 1.3 - 2.1մ խորությունում հանդիպող թենթաքարից սալաքարի բնկորներ, որոնցից մեկին կպած բացվել են սրի երկային շնորի բնկոր և

¹ Xnkikyan O., *Syunik During the Bronze and Iron Ages*, 2002, Barrington, p. 69, pl. LVI, fig. 16.

² Асланов Г., Ваидов Р., Ионе Г., Древний Мингечевир, Баку, 1959, таб., XLII, рис. 3.

³ Погребова М., 1984, с. 46-47, таб. I.



ծովային լսունջից պատրաստված ուլունք: Վերականգնված սալը ունի $1,66 \times 0,55$ մ չափեր (նկ. 20):

Դամբարանից հայտնաբերված կենդանական ոսկորների մնացորդների ուսումնասիրությունից հետևում է, որ ոսկորների մեծ մասը պատկանել է ձինի, տարրերակվել են յոթ առանձնյակների ոսկորներ: Հայտնաբերվել են նաև խոշոր և մանր եղջնրավոր կենդանիների, ինչպես նաև թռչունների ոսկորներ¹:

Հետազոտության արդյունքում պարզվել է, որ ծածկի գերանների մի մասը պատրաստված են կաղնի ծառատեսակից: Գերանների ծայրերին փաթաթված խսիրը գործված է նղեն նղենգնից²:

Ուշագրավ ճարտարապետական կառուցվածքով, ուղեկցող հարուստ նյութերով դամբարանաբլուրը համադրելով նմանօրինակ գտածոնների հետ թվագրվում է. մ.թ.ա. IX-VIII դարերով:

Ամփոփում

Խաչենագնդի հովիտի դամբարանադաշտերը հայտնի էին դեռ նախալսատրիդային շրջանում՝ պատմական Արցախի տարածքում կատարված պնդումների շնորհիվ: Խնդրո առարկա դամբարանադաշտը իրենից ներկայացնում էր կյուսի- արևներից հարավ-արևմուտը առանցքով ձգված, հատակագծում 24×18 մ չափերով, 1.5 մ ($1.05-1.7$ մ) բարձրությամբ ճիմապատ հողայթումբ: Ճարտարապետական կառուցվածքով, ուղեկցող հարուստ նյութերով դամբարանաբլուրը թվագրվում է. մ.թ.ա. IX-VIII դարերով:

Раскопки на Нор Айкаджурском некрополе

Н. Енгибарян, М. Титанян,
Д. Мириджанян, Т. Алексанян

Резюме

Ключевые слова: Арцах, Нор Айкаджур, курган, грунтовая камера, бревенчатое перекрытие, зооморфные ручки, биметаллический меч, циновка

В некрополе, расположенному между селами Нор Айкаджур и Нор Марага, в 2015г. был раскопан курган. Сведения о некрополе впервые были зафиксированы С. Тер-Аветисяном еще в 20-е годы прошлого столетия. Некрополь находится на стыке горного массива и степной полосы, где курганы диаметрами от 25 до 80м расположены рядами или в отдельности. Выбранный нами курган (размеры 24×18 м, высота земляной насыпи 1,5 метра ($1.05-1.7$ м)) ориентирован по оси северо-восток/юго-запад. Под насыпью,

¹ Յնակենդանաբանական ուսումնասիրությունները կատարել է ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոլոգիայի ինստիտուտի առաջատար գիտ. աշխ., կ.գ.դ. Ն. Մանասերյանը:

² Յնաբուսարանական ուսումնասիրությունները կատարել է ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի ավագ գիտ. աշխ., բ.գ.թ. Ի. Գաբրիելյանը:



состоящей из камней и глины, были видны контуры грунтовой камеры ориентированной по оси северо-восток/ юго-запад. На верхних границах боковых стен сохранились остатки бревен перекрытия, концы которых были завернуты в циновку. Отпечатки последних остались на глине. Анализ показал, что для перекрытия были использованы дубовые бревна.

Исследованные человеческие останки позволили определить пол и возраст погребенного. Размерные характеристики скелета, фрагменты тазовых костей указывают на принадлежность останков мужчине. Биологический возраст последнего определяется в пределах 45-55-лет. На скелете обнаружены травмы и другие патологические нарушения. Свидетельство высокого социального положения индивида в обществе указывает навершие посоха из бронзы. В погребении найдены множество артефактов. Керамические сосуды предназначались как для ритуальных церемоний, так и для повседневного использования. Из оружия были зафиксированы втулка железного копья, большой железный меч с биметаллической рукой. Среди рабочих инструментов преобладают фрагменты железных ножей, костяная пряслица, шило, бронзовое долото, а из украшений - разнообразные бусы из сердолика, бронзы, пасты. Основная масса изученных костей животных принадлежит лошадям.

Курган датируется IX-VIII вв. до н.э.

Excavations in Nor Haykajur Graveyard

N. Yengibaryan, M. Titanyan

D. Mirjanyan, T. Aleqsanyan

Summary

Key words: Artsakh, Nor Hajkajur, kurgan/burial mound/, earten cist, beam cover, zoomorphic handles, bimetallic sword, mat

The excavations of the graveyard located between Nor Haykajur and Nor Maragha villages have been started in 2015. S. Ter-Avetisyan was the first who did the notes about the graveyard yet in the twenties of last century. It starts at the border where the mountainous landscape is changing to steppe. One small scale burial mound has been selected among the rest for the excavations which was presented the earth mound covered with vegetation oriented from northeast to southwest, sized 24mx18m in plan and 1.5m (1.05-1.7m) in height. The dugout camera had NE-SW orientation and sized 5.9x3.5x3.0m. Some remains of not very large lumbers, whose ends were wrapped in matting had been preserved at the edges. As a result of the collapse of the timbered coating, the earthen-clayish mass has undermined the position of the initial placement and has destroyed the funerary goods.

Buried person was 45-55 years old male, whose high social status was approved by the find of bronze wand head among the rest. The ceramic complex from the burial mound consists of ritual and kitchen ware. Among the finds are attractive the sword with two



type metals hilt, iron knives, bronze chisel, bone spindles head, pin, the fragments of the belt, rectangular and rhoumbus bone inserts, some inserts for decoration and nails. The deceased had worn various pendants and beads made from sardius, glass, paste, limestone, bronze, snails. The analyses of the paleozoological materials found from the tomb showed the domination of horse's bones.

Burial mound dates IX-VIII cc BC.



Նկ. 1 Դամբարանաբլուրը մինչև պեղումները



Նկ. 2 Գերանների հնտքերը



Նկ. 3 Դամբանախցի տեսք



Նկ. 4 Խախրի դաշվածք կավի վրա



Նկ. 5 Երավիճակ դամբանախցում. Խնձանոթներ, սպլաքարի քնկորներ
Նկ. 6 Խղի հատակին դրված խնձանոթներ



Նկ.7 Գավազանի գլխադիր, բրոնզից



Նկ. 8 «Թնջնիկատիպ» անոթ



Նկ. 9 Յագյուխ ծղրակավոր անողե



Նկ. 10 Խոյաքանդակ շուրթով սափոր



Նկ. 11 Խոյաքանդակ կանթով սափոր



Նկ. 12 Դարչնագույն միականյթ սափոր



Նկ. 13 Միականթ գավաթ



Նկ. 14 Կճուճ



Նկ. 14 Ափսե կննաց ծառի պատկերով





Նկ. 16 Ոսկրեն ներդիրներ, իլիկի գլուխ, հերուն



Նկ. 17 Երկաթեն դանակներ



Նկ. 18 Սարդինից ուլունքներ



Նկ. 19 Զրահակոճակներ



Նկ. 20 Թերթաքարից սալ



ՄՐԳԱՉՈՐ ԳՅՈՒՂԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՑԱԾ ՍՅՈՒՆԵՑԻ ՏԻԿՆՈԶ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՉ

*Մերգել Հայովերդյան, Գայանե Շարունց
Գորիսի պետական համալսարան*

Բանալի բառեր. Սարգաձոր, Խանածախ, Խոտ, Սահմարի, Մելիք-
Հախնազար, Բահադուր բեկ:

Ստեփանոս Օրբելյանի “Պատմութիւն տանն Սիսական” աշխատությանը կից հարկացուցակում Սյունիքի Հարանդ գավառում հիշատակվում է Մարգաձոր միջին մեծությամբ բնակավայրը, որը ուր միավոր հարկ էր վճարում Տաթևի վանքին: Հարկացուցակում այն հիշատակվում է անմիջապես Խոտ գյուղից հետո¹: Ներկայումս ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի Խոտ և Շինուհայր գյուղերի միջև դեպի Որոտան գետ իջնող մի տարածք կա, որ հայտնի է Մրգաձոր (բարբառով՝ Մրքաձոր) անունով և մտնում է Խոտ գյուղի համայնքային հողատարածքի մեջ²: Մրգաձորը կապ չունի մրգի կամ այգիների հետ, տեղանքը զառիթափ ժայռոս է, այգեւետ չէ: Կարելի է եզրակացնել, որ դա Ստ. Օրբելյանի Խոտ գյուղի հարևանությամբ հիշատակած Մարգաձորն է: Մարգաձորը հին բնակատեղի է, տարեց Խոտ գյուղացի Արշ. Կարապետյանի պնդմամբ՝ Մրգաձորի տարածքում է եղել Խոտի հին բնակատեղիներից մեկը³:

Ներկայումս Մարգաձոր-Մրգաձոր-Մրքաձորը խոտեցիների համար սրբատեղի է, ուր այցելում են բոլորը, թե մանուկ հասակում, թե հետազոյում: Այնտեղ եղած եկեղեցին կոչում են Մրգաձորի վանք կամ խաչ: Եկեղեցում մոմ են վառում, մատաղ են անում: Մրգաձորի խաչը ուխտի առիթով կամ մատաղի համար այցելում են նաև շինուհայրցիները⁴:

Մրգաձորի եկեղեցին հսկա, մի քանի տասնյակ մետր բարձրություն ունեցող ուղղաձիգ ժայռի ստորոտին խիսունչի պես կպած սագաշեն, ոչ մեծածավալ շինություն է, որը պատերի քարերի գույնով այնպես է մերվել տեղանքին ու

¹ Ստեփաննոսի Սինեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Սոսկվա, 1861, էջ 375: (այսուհետև՝ Օրբելյան)


² Մրքաձորը տեղանքի բարբառային անվանումն է և կապ չունի մորուք բառի հետ: Հանիբավի է ծագումով Խոտ գյուղացի ձեռներեցի կողմից իր տաքսի ծառայությունը “Մրքաձոր” կոչելը:

³ Ալիշանը Հարանդ գավառի մեջ ևս նշում է Մարգաձոր գյուղը, բայց որին տալիս է մի երկրորդ անուն ևս՝ Մաշկաղոց (տես Ալիշան Դ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 255):

⁴ Հետաքրքիր է, որ մատաղ անողները դանակը սրբավայրից ետ չեն տանում, այլ թողնում են խրված հողի մեջ:




ժայռին, որ նշմարվում է միայն մոտիկից: Եկեղեցու երկարությունը 10 մ է, լայնությունը՝ 6 մ, մուտքի պատի հաստությունը՝ 90 սմ: Եկեղեցու առջևի տարածքը խիստ զարդարափ է, բայց տարեց շինուհայրցիների վկայությամբ հնում այնտեղ եղել է փոքրիկ տափարակ, ուր շքեղ արարողություններով նշել են Համբարձման տոնը:



Եկեղեցին “Գորիսի հանրագիտարանի” հեղինակների հավաստմամբ իբր կառուցել է Շահ-Աբասի հարեւմից փախած մի կին¹: Դա իրական լինել չի կարող, քանի որ Շահ-Աբասը մահացել է 1628 թվականին: Ավանդության հիշատակության մեջ իրական է միայն այն, որ եկեղեցին կառուցողների մեջ եղել է, այս, մի կին, բայց ոչ հարեւմից փախած, այլ հայ իշխանուիկ կամ ավելի ճշգրիտ մելիքուիկ: Մենք դա իմանում ենք եկեղեցու դռան բարավորի հստակ ընթերցվող շինարարական հինգ տողանոց արձանագրությունից²: Սիա այն.

¹ Զոհրաբյան Է., Միրզոյան Հ., Գորիսի հանրագիտարան, ՎՄՎ-պրինտ, Երևան, 2008, էջ 210:

² Արձանագրությունը 2013թ. մարտ ամսին հայտնաբերել, լուսանկարել և մեզ է տրամադրել գեղանկարիչ, ՀՀ նկարիչների միության անդամ Ժիրայր Մարտիրոսյանը:



ԵՍ ՊԱՐՈՆ ՊՀԱԹՈՒՄ ՊԱԿՍ, ՈՐԴԻ/
ՊԱՐՈՆ ՄԵԼԻՔ ՀԱԽՆԱԶԱՐԻՆ, ՈՐ ԵՄՔ
ՅԵՐԿՐԵՆ ՔԱՇԻՑԱՂՈՒՑ, ԳԵՂՁԵՆ ԽԱՍԱԾ
ԽԱ ԵՍ ԵՒ ՄԱՅՐ ԻՄ ՄԱՀՓԱՐԻՆ ՇԻՆԵԼ ՏՈՎԻՆՔ
ՍԲ ԵԿԵՂԵՑԻՍ Ի ՓՐԿՈՒԹԻ ՀՈԳՈՅՑ: Ի ԹՎԻՆ :ՈՃԽԹ: /1700/¹

Այսպիսով՝ Մրգաձորի գողտրիկ եկեղեցին շինել են տվել Խանածախ զյուղում ապրող Քաջարադի Մելիք-Հախնազարի որդի Բահադուր բեկը (Պիարուր Պակ) և նրա մայր, Մելիք-Հախնազարի կին Մահփարին՝ 1700 թվականին։ Մրգաձորը Խանածախից հեռու է մոտ 45 կմ²։ Հայրենաշեն Մահփարին, թերևս, ծագումով եղել է Մրգաձորից կամ Խոտից և լավատեղյակ լինելով իին սրբատեղիի մասին, որոշել էր իր որդու հետ այնտեղ եկեղեցի կառուցել։

Մրգաձորի եկեղեցու պատի շարվածքի մեջ հայտնաբերվել է երկար ու նեղ սալ քարի վրա արված ավելի հին արձանագրություն, որը տակավին սպառիչ ընթերցված չէ։ Այնտեղ ընթերցվում է աստվածաշեն, աստվածածին սրբավայրի անունը, որտեղ և 1700 թվականին կառուցվել է նոր եկեղեցին։ Գուցե և եկեղեցին էլ Սբ. Աստվածածին անունն է կրել.....

Խանածախից Բահադուր բեկի անունը հիշատակվում է ևս մեկ արձանագրության մեջ, որը հայտնաբերվել է 2011 թվականին։ Խանածախ զյուղի

¹ Արձանագրության թվականը ճշգրտել է պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Գր. Մ. Գրիգորյանը։

² Խոսքը Սյունիքի Խանածախ զյուղի մասին է։



Սր. Հոդվածները կավթի շինարարական արձանագրությունը երեք տողով արված է չորս քարերի վրա: Արձանագրության մեջ մի առանձին քարաբեկորի վրա հատակ թվագրված է ՌՃԾ (1701 թվական): Արձանագրության մեջ կարդում ենք.

առաջին տող՝ ԿԱՄԱՒ ԱՅ ԵՍ ՊՐՆ ԱՂԱՃԱՆ ԲԷԿԱ,
երկրորդ տող՝ ՇԻՆԵՑԻ ԶԳԱՒԹՍ ԻՎՐ[Ա] ԳԵՐԵԶՄԱՆԻ,
երրորդ տող՝ ԵՂՔՕՐՆ ԻՄՈՅ ՊՐՆ ԴՇԱԹՈՒԻՐ ԲԷԿԻՆ:

Այսպիսով, արձանագրության մեջ Աղաջան բեկն ասում է, որ գավիթը 1701թ. շինել է իր եղբայր Պիհաթուր (Բահադուր) բեկի գերեզմանի վրա:

Անտարակույս, և' Մրգաձորի եկեղեցու դրան բարավորի շինարարական արձանագրության մեջ հիշատակված Քաշաթաղի Մելիք-Հախնազարի որդի Բահադուրը, և' Խանածախ գյուղի եկեղեցու գավթի շինարարական արձանագրության մեջ հիշատակված Բահադուրը նույն անձնավորությունն է:

Մրգաձորի եկեղեցու կառուցումից (1700 թվ.) կարճ ժամանակ անց նա մահանում է և նրա եղբայր Աղաջան բեկը գերեզմանի վրա կանգնեցնում է գավիթը ու թողնում շինարարական արձանագրություն: Սա մի կողմնակի վկայություն է, որ 16-րդ դարի կեսերին Քաշաթաղում ձևավորված նշանավոր Մելիք-Հայկացյան մելիքական տոհմը 18-րդ դարի սկզբին շարունակում էր կենսունակ գոյատևել, նույնիսկ մելիքության կենտրոն Խանածախից տասնյակ կիլոմետր հեռու գտնվող Մրգաձորում իրականացնել շինարարական գործունեություն:

Հայտնի է, որ 1699 թվականին Խարայել Օրու կողմից Անգեղակոյքում հրավիրված մելիքների գաղտնի ժողովին մասնակցել է Քաշաթաղի մելիք՝ Մարտիրոսի որդի Էմիր բեկը¹: Վերոհիշյալ արձանագրությունների մեջ (1700, 1701թթ.) հիշատակված Բահադուր և Աղաջան բեկերը, հավանավար, եղել են Էմիր բեկի հայր Մարտիրոսի եղբայրները, Մելիք-Հախնազարի և նրա կին Մահիքարի գավակները:

Մահիքարին, շարունակելով Սյունյաց իշխանական տան ազնվագարմ տիկնանց բարի, հայրենաշեն ավանդները, կառուցելով Մրգաձորի եկեղեցին, թողել է անմոռաց ու ուսանելի հիշատակ:

Մրգաձոր գյուղի տեղադրության եվ այդ գյուղում եկեղեցի կառուցած սյունեցի տիկնոց ինքնության հարցի շուրջ

**Մերգել Հայսվերդյան, Գայանե Շաբունց
Գորիսի պետական համալսարան**

¹ Լեռ, Հայոց պատմություն, հ.3, Երևան, 1946, էջ 523-525:



Ամփոփում

16-րդ դարի կեսերին հիմնված Քաշաթաղի մելիքությունը իր գոյությունը շարունակել է և 17-րդ դարի վերջին, և 18-րդ դարի սկզբին: Քաշաթաղի Մելիք-Հախնազարի կինը՝ Սահիփարին, շարունակելով այլունեցի ազնվազարմ կանանց հինավոր ավանդույթը, իր որդի Բահադրուր թեկի հետ 1700 թվականին կառուցում է մելիքության կենտրոն Խանաձախից 45 կմ հեռու գտնվող Մրգաձորի գողտրիկ Եկեղեցին, թողնում շինարարական արձանագրություն:

Բահադրուր թեկի անունը հիշատակվում է մեկ այլ արձանագրության մեջ ևս:

К вопросу локализации села Маргадзор и идентификации личности сюникской княжны

С. Ахвердян, Г. Шабунц
Резюме

Ключевые слова: Маргадзор, Ханацах, Хот, Магпари, Мелик Ахназар, Багадур бек.

Основанное в середине 16 века Кашатахское меликство продолжало свое полноценное существование до конца 17 века и в начале 18 века. Жена Кашатахского мелика Магпари, продолжая древнейшие традиции Сюникских знатных женщин, совместно со своим сыном Баадур беком в 1700 году построила в 45 км от Ханацаха, центра меликства, прекрасную Мргадзорскую церковь, где оставила строительную надпись.

Имя Баадур бека упоминается также еще в одной надписи.

The location of Markadzor village and the identity of the Lady from Syunik region who had built a church in that village are being checked

S.Ahverdyan, G. Shabunc
Summary

Key words: Markadzor, Khanatsakh, Khot, Mahpari, Melik-Hakhnazar, Bahadur begue

Built in the middle of the 16th century the principality of Kashatagh continued to survive up to the end of the 17th century and the beginning of the 18th century. In 1700 along with her son Bahadur begue (prince), Melik-Hakhnazar's wife Mahpari constructed the gorgeous church of Mrgadzor which is 45 km far from the centre of the principality of Khanatsakh and left a carved writing.

Bahadur begue's name is also mentioned in another writing.



ՇՈՒՇԻՒ ՎԵՐԱԾՈՒՄԸ ԴԱՐԱԲԱԴԻ ՀՈԳԵՎՈՐ ԿԵՆՏՐՈՆԻ

Մելանյա Բաղայան

**պ.գ.թ., դրենուտ, Արցախի պետական
պատմաբարձրագատական թանգարանի տնօրեն**

**Բանալի բառեր՝ Շուշի, Ղարաբաղ, կաթողիկոս, հոգևոր, Սարգիս, Հասան-
Զալայան, միտրոպոլիտ, եկեղեցի, եկեղեցի, Բաղդասար, Աղվանից**

18-րդ դարի վերջերին ու 19-րդ դարի առաջին տասնամյակներում բավական լուրջ տարածայնություններ էին առաջացել Աղվանից կաթողիկոսական աթոռի շուրջը, որի պատճառները պետք է որոնել ինչպես արտաքին, այնպես և, որոշ առումներով, ներքին հանգամանքներում: Այսպես, օրինակ, եթե Աղվանից հոգևոր առաջնորդը աջակցություն էր ստանում Գանձակի խանի կողմից, ապա բնականաբար, նա միաժամանակ արժանանում էր խանի հակառակորդների թշնամական վերաբերմունքին: Տարաբախտաբար, քաղաքական այս հակառակությունների մեջ ներքաշված էր նաև Էջմիածինը: Եվ քանի որ Եփրեմ Զորագեղցի Ամենայն Հայոց կաթողիկոսն իր հերթին հատուկ համակրանք չէր տածում տվյալ ժամանակաշրջանում Աղվանից հոգևոր առաջնորդի հավանական թեկնածու Սարգիս Հասան-Զալայանցի նկատմամբ, ուստի և ամեն կերպ խոշջնդուում էր, որպեսզի Հայ Աղվանից կաթողիկոսական աթոռը չանցնի նրան: Ամենայն Հայոց կաթողիկոսը նույնիսկ բանադրեց Սարգսին, որի պատճառով նկատելիորեն բոլցավ վերջինիս դիրքերն անզամ իր կողմնակիցների շրջանում: Բավական երկարատև ներեկեղեցական այս պայքարի արդյունքում, ինչպես նաև, Էջմիածնի հետ հարաբերությունները կարգավորելու նպատակով, ի վերջո Սարգիս Հասան-Զալայանցը հրաժարվում է կաթողիկոսությունից:

Եփրեմ Զորագեղցի Ամենայն Հայոց կաթողիկոսի հատուկ կոնդակով 1815թ. Աղվանից կաթողիկոսությունը վերացվում է և նախկինում Աղվանից կաթողիկոսության մեջ ընդգրկված թեմերը միավորվում են՝ կազմելով Ամենայն Հայոց կաթողիկոսության ենթակայության տակ գտնվող մետրապոլտություն: Սարգիս Հասան-Զալայանցը, ստանալով մետրապոլիտի աստիճան, նշանակվում է թեմի առաջնորդ:

Աղվանից կաթողիկոսության վերացումը, անշուշտ, իր բացասական հետևանքներն ունեցավ ազգային պետականությունից զրկված Հայոց Արևելից կողմանց հայության համար, քանի որ նման պայմաններում այն երկրամասի հայությանը միավորող միակ ազգային հաստատությունն էր՝ թեկուզ և իր բացասական կողմերով հանդերձ: “Որքան կենդանի եղած է Աղուանից կաթողիկոսությունն, նույնքան պայծառ եղած են Աղուանից վանքերը: Բայց այս



կաթոլիկոսութեան մահից յետոյ՝ օրեօր յափշտակված են վանօրեից կալուածներն, ցրուած են միաբանութիւններն և քայրայված են վանքերը”¹։

Եվ այսպէս, 1815-28թթ. Արցախի հոգևոր թեմը առաջնորդեց Սարգիս Զալյայանցը. “... ձեռնասուութեան աշխարհական իշխանութեան օրինարանեալ Տերութեանն Ռուսաց վեր առա պատիւ և կոչումն կաթողիկոսական, և տուաւ միևնույն անձին փոխան այնը կորման պատիւն մետրապօլտութեան յԱրքեպիսկոպոսական պաշտաման”²:

Երկրամասում 19-րդ դարի սկիզբը նշանափորվեց քաղաքական նոր իրադարձություններով: 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո, որն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով, հոկտեմբերի 12-ին Արցախի Գյուլիստան բերդավանում կնքված հաշտության պայմանագրով Ռուսաստանի տիրապետության տակ անցան նաև Ղարաբաղի, Գանձակի և հարակից մի շարք այլ խանություններ: Փաստացիորեն այս պայմանագիրը հայ ժողովրդի համար ընդհանուր առմամբ, իր դրական կողմերով հանդերձ, նաև բացասական որոշ հետևանքներ ուներ, թեկուզ և այն պարզ պատճառով, որ հայ ժողովուրդը միաժամանակ հայտնվել էր երեք առանձին տերությունների տիրապետության տակ: Ինչ վերաբերում է հայոց եկեղեցուն, ապա արտաքին քաղաքական այս բաժանումներն, անշուշտ, ավելի էին նպաստում ներեկեղեցական հակասությունների սրմանը: Տվյալ պարագայում Հայ Աղվանից հոգևոր թեմը, գտնվելով Ռուսական կայսրության տիրապետության տակ, իսկ Հայոց Մայր Աթոռը՝ պարսկական, բավական լուրջ արգելքներ էին հարուցվում նրանց միասնական գործելակերպի վրա:

Չնայած Պարսկաստանի կողմից հարուցվող արգելքներին, 1821թ. Շուշի այցելեց Ամենայն Հայոց Եփրեմ կաթողիկոսը, որը մեծաշուր ընդունելության արժանացավ թե ժողովրդի, և թե անգամ Ղարաբաղի Մեհտի-դուլի խանի կողմից: Ամենայն Հայոց կաթողիկոսը որոշ ժամանակ մնաց Շուշիում միջոցներ ձեռնարկելով հենց այստեղ էլ Ներսէս Աշտարակեցուն հանդիպելու համար: 1822թ. Շուշիում կայացած հանդիպումից հետո Եփրեմ կաթողիկոսն ու Ներսէս Աշտարակեցին այցելեցին նաև Գանձասար, որտեղ նրանց մեծ շուրջով դիմավորեցին Արցախի թեմի առաջնորդ Սարգիս Զալյայանցն ու Արցախի հոգևորական բարձր խավը: Այդ մասին բոլոր մանրամասները ներկայացրել է Մեսրոպ Թաղիայյանը³:

Տարաբնույթ փաստերի քննության արդյունքում անժխտելիորեն պետք է ընդունել Սարգիս Հասան-Զալյայանի ազգանվեր ծառայությունները: Հոգևոր առաջնորդը հոգ է տարել նաև Գանձասարի վանքի բարեկարգման ուղղությամբ՝

¹ Քարիուտարյանց Ա., Արցախ, Երևան, 1999, էջ 156:

² Շահիսաթունեանց Յովիկ, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ Գաւառացն Արարատայ, Էջմիածին, 1842, էջ 349:

³ Թաղիայյանց Ա., Ճանապարհորդութիւն ի Հայս, Կալկաթա, 1847, էջ 270-330:

իրականացնելով վերանորոգումներ և որի մասին վկայված է նաև վանքի տարածում պահպանված արձանագրության մեջ:

Սարգիս Հասան-Զալալյանցը վախճանվել է 1828թ. և հուղարկավորվել Գանձասարի վանքի գավթում. “Այս է տապան Սարգիս Աղուանից կ/ա/թ/ո/դ/ի/կ/ո/սին, որ է յազգին Զալալ Դօլին, թվին/ ՌՄՀՀ /1828/”¹: Նրա աթոռակալության ողջ ժամանակաշրջանը Գանձասարը շարունակում էր մնալ որպես արցախահայության հոգևոր կենտրոն:

Սարգիս Հասան-Զալալյանցի մահից միայն երկու տարի հետո՝ 1830թ. նոյեմբերի 13-ին Ամենայն Հայոց Եփրեմ կաթողիկոսի կոնդակով Ղարաբաղի թեմի մետրապոլիտ կարգվեց նրա եղբայր Բաղդասար Հասան Զալալյանցը²:

1836թ. մարտի 11-ի Ծուսական կայսրության կողմից հաստատված “Յաղագս կառավարութեան գործոց Լուսավորչական Հայոց եկեղեցոյ ի Ծուսաստան” հատուկ կանոնադրությամբ՝ հայտնի “Պոլոմենին” անվամբ, կայսրության տիրապետության տակ գտնվող հայ եկեղեցին բաժանվում է 6 թեմերի՝ Նոր Նախիջևանի, Աստրախանի, Վրաստանի, Շիրվանի, Երևանի և Ղարաբաղի³:

Կանոնադրության մեջ հատուկ կետով նշված էր նաև առանձին թեմերի աշխարհագրական սահմանները: Ղարաբաղի թեմի մեջ ներառված էին նաև Շաքի և Թալիշ գավառները: Համաձայն Էջմիածնի սինոդի հրամանով 1837թ. կազմված “Հայ եկեղեցու վիճակագրութիւնը Կովկասում” օրագրության տվյալների, Ղարաբաղի թեմի մեջ ընդգրկված էին՝ “3 վանք, 53 եկեղեցի, 32 ժամանուն, 1 եպիսկոպոս, 6 վարդապետ, 2 աբեղայ, 117 ավագ քահանայ և քահանայ, 10 սարկավագ, 98 դպիր, 6 կոյս և 3 դպրոց”⁴: Իսկ 1840թ. կազմված վիճակագրության համաձայն նրանում մասնավորապես ներառված էին երեք քաղաքներ՝ Շուշի, Նուհի, Լենքորան և 156 գյուղ, որոնք բոլորը միասին ունեին 7167 տուն հայ ազգաբնակչություն⁵:

1839թ. Ղարաբաղում ստեղծվել է վանական կառավարություն⁶: Մի շարք վավերագրեր փաստում են, որ վանական կառավարության մեջ նախ և առաջ ընդգրկվում էին հեղինակություն վայելող հոգևորականներ, որոնք պատասխանատու էին եկեղեցական կանոնների, ժամերգությունների, կարգադրությունների ճշտորեն կատարման համար:

Ղարաբաղի թեմի հոգևոր կենտրոնը նոր կանոնադրությամբ դարձավ Շուշին, որտեղ էլ տեղակայվեց առաջնորդարանը: 1837թ. հուլիսի 1-ին Ծուսական կայսերական հրամանով թեմի առաջնորդ և հոգևոր վարչության նախագահ

¹ Հիվան հայ վիմագրության, պրակ V, Երևան, 1982, էջ 66:

² ՀԱՍ, ֆ. 56, ց. 12, գ. 532:

³ Երիցցան Աղ., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք 19-րդ դարում, մաս F, Թիֆլիս, 1895, էջ 557:

⁴ Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, զիրք Թ, Երևան, 2001, էջ 14:

⁵ Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց հոգեւոր դպրոցի, Թիֆլիզ, 1914, էջ 7:

⁶ Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, զիրք Թ, էջ 14:



նշանակվեց Բաղդասար Հասան Զալայյանցը¹: Ղարաբաղի թէմի առաջնորդը նույն թվականին իր օրինական օծումը ընդունեց նաև Էջմիածնում, որից հետո վերադարձավ ու հաստատվեց Շուշիում:

Եվ այսպէս, Շուշին պաշտոնապես ճանաչվեց Ղարաբաղի հոգևոր կենտրոն: Լեռյի բնորոշմամբ. “Շուշին դառնում էր հոգևոր կենտրոն այն հայության համար, որ ապրում էր երեք քաղաքներում /Շուշի, Նուխի, Լենքորան/ և դրանց վերաբերուող գաւառներում”²:

Շուշին Ղարաբաղի հոգևոր կենտրոնի վերածվելու գործում նշանակալից ներդրում ունեցավ Բաղդասար Հասան Զալայյանցը: Հատկանշական է, որ նրա կյանքի ու գործունեության բոլոր ուսումնասիրողները, ժամանակի բոլոր վավերագրերը, միանշանակորեն հատուկ պատկառանքով են խոսում հոգևորական գործի մասին, նրան ներկայացնելով նախ և առաջ որպես ազգանվեր, մեծ ժողովրդականություն վայելող առաջնորդ: “Արդէն այն հանգամանքը միայն, որ անդամալոյն մի եպիսկոպոս էր կառավարում մի ամրող թէմ, մի անդամալոյն, որ եկեղեցական ծէսերը կատարում էր յատուկ բազկաթոռի մէջ նստած և որին ձեռքերի վրայ էին այս ու այն կողմ տանում, ցոյց էր տալիս, թէ որքան կարևոր նշանակութիւն ունէր մետրապոլիտը ժողովրդի և հոգևոր իշխանութեան աչքում: ... Նա մի ստեղծագործող ոյժ էլ էր, որ ուղղութիւն էր տալիս, որին նայում էին պատկառանքով... Անդամալոյն առաջնորդը հարկաւոր դէպքերում այցելութիւններ էր անում իր ժողովրդի անդամներին, երբ հարկաւոր էր ազդու միջամտութիւն գործել զանազան արիթներով”³: Բազմաթիվ փաստեր վկայում են, որ Բաղդասար մետրապոլիտը իր ողջ հնարավորություններով մշտապես պաշտպանել է ժողովրդի շահերը:

Տնտեսական ծանր իրավիճակ էր ինչպես ժողովրդի, այնպես էլ նրա հոգևոր հաստատության համար: Եվ այս ամենի հիմնական պատճառներից մեկը տիրող անօրինականությունն ու առանձին անհատների կողմից ցուցաբերվող կամայականությունն էր, հիմնախնդիր, որի դեմ պայքար էր ծավալել թէմակալ առաջնորդը: Թէմի մէջ ներառված եկեղեցիների մեծ մասը տարբեր պատճառներով զրկվել էին վանքապատկան իրենց կալվածքներից, իսկ դրանք ետ վերադարձնելը բավական լուրջ հիմնախնդիր էր, որն էլ դարձավ Բաղդասար մետրապոլիտի հիմնական մտահոգություններից մեկը: Վանքապատկան կալվածքների վերադարձման, ինչպես նաև երբեմնի մեծաշուրջ վանքերի ու եկեղեցիների վերանորոգման հիմնահարցը, որից կախված էր վանքերի ու եկեղեցիների հետագա գոյությունը, նրա իսկ ներկայացմամբ, բազմաթիվ անզամ քննարկման է դրվել նաև Մայր Աթոռում: “Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության” աշխատության Ղարաբաղի հոգևոր թէմին նիվիրված պրակի մեջ զետեղված են Բաղդասար մետրապոլիտի բազում գրությունները թէմի մեջ

¹ Նույն տեղում, էջ 116:

² Հէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց հոգեւոր դպրոցի, էջ 97:

³ Նույն տեղում, էջ 118:



ընդունված բազմաթիվ եկեղեցիների ու վանքերի վերանորոգման կապակցությամբ:

Բաղդասար մետրապոլիտի արժանահիշատակ ձեռնարկումներից է նաև նրա ծավալած կրթալուսավորական գործունեությունը, որի առաջին քայլերից մեկն է հանդիսանում է տպագրական գործը: Բազելից քարոզիչներից գնելով Շուշիում նրանց հիմնած տպարանը, հոգևոր առաջնորդը մեծ ջանքեր է գործադրում տեղում հրատարակչական գործը պատշաճ մակարդակին հասցնելու ուղղությամբ: Անշուշտ, տպագրվող հիմնական նյութը եկեղեցական բովանդակություն ուներ: Բայց և, Լեռի խոսքերով ասած. “Ճ պիտի մոռանանք ոչ մի դեպքում, որ տպարանը իրաքանչիւր տեղում յայտնագործում է եղած գրական ոյժերը և նպաստաւոր միջնորդը է պատրաստում՝ նոր ոյժեր առաջ բերելու համար: Միննույն դերը ծառաւթեամբ կատարում էր տպարանը և Շուշում”¹: Տպագրված գրքերի շարքում հիշատակման արժանի գործ էր Եսայի Հասան-Զալայանի “Պատմութիւն կամ լիշատակ ինչ ինչ անցից՝ դիմելոց յաշխարհին Աղուանից” տպագրված 1839թ.:

Տպագրական գործը, անշուշտ, նույնպես իրականացվում էր ծանր պայմաններում, քանի որ գտնվում էր ոուս չինովնիկների խիստ հսկողության տակ: Մետրապոլիտը մեծ պատասխանատվություն էր կրում հրատարակած գրքերի բովանդակության համար, ուստի և ստիպված էր գավառապետի հարցումներին պատասխանել, որ տպարանում հրատարակվում են միայն հոգևոր բնույթի գործեր, այն էլ Էջմիածնի սինոդի թույլատվությամբ:

1838թ Շուշում բացվել է Ղարաբաղի թեմական դպրոցը: “Ամենից բարձր տեղ երևում է Նոր Թաղի փոքրիկ եկեղեցին, նրանից ցած՝ մեծ ու լայն առաջնորդարանը, ուր գետեղում է և Ղարաբաղի թեմական դպրանցը. այդ շինութիւնը կարծեմ միակն է ամբողջ քաղաքի մէջ, որ գրաւելով լավ տեղը, իր մեծութեամբ և դիրքով առանձին ուշադրութիւն է գրաւում քաղաքի ամեն կողմից նայելիս”²: Հոգևոր առաջնորդի գործադրած բացառիկ ջանքերի շնորհիվ հետագայում հոգևոր այս դպրոցը կարողացավ ոչ միայն գոյատել, այլև մինչև իր գոյության ավարտը՝ 1920թ., դպրանց հայ կրթամշակութային կյանքի կարևորագույն օջախներից մեկը: Այն իր գոյությամբ ու գործունեությամբ ավելի բարձրացրեց Շուշիի համբավը, հաղորդելով նրան, հոգևոր կենտրոնից զատ, նաև գիտական ու կրթալուսավորական կենտրոնի մեծագույն դերակատարություն, որի մանրամասները հանրահայտ են:

Շուշիի հոգևոր ու կրթալուսավորական կենտրոնի վերածմանը իրենց մեծագույն նպաստն են ունեցել նաև 19-րդ դարի ընթացքում քաղաքում կառուցված եկեղեցիները՝ Ղազանչեցոց Ս.Ամենափրկիչ, Ագուեցոց, Մեղրեցոց, Ներքին թաղի Ս.Աստվածածին, Վերին թաղի Ս.Հովհաննես Մկրտիչ Զրաբերդցոց թաղի եկեղեցիները, Կուսանաց անապատը:

¹ ՀՀօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց հոգևոր դպրոցի, էջ 124:

² “Տարագ”, 1891:



1854թ. հունիսի 27-ին իր մահկանացուն կնքեց Ղարաբաղի թեմի առաջնորդ 80-ամյա Բաղդասար Հասան-Զալալյանը: Լեռյի վկայությամբ նրա մահը մեծ սույն էր ոչ միայն արցախահայության համար, այլև նույնիսկ ուսուների ու թուրքերի¹: Համաձայն իր կտակի, հոգևոր առաջնորդը հուլարկավորվել է Գանձասարում:

Մետրապոլիսի մահից հետո որոշ ժամանակ Ղարաբաղի թեմը մնաց առանց հոգևոր առաջնորդի: Ըստ Լեռյի, նույնպիսի վիճակ էր նաև հայոց մյուս թեմերում, քանի որ Ամենայն Հայոց Ներսես կաթողիկոսը դրանով ցանկանում էր ավելի հաստատուն դարձնել նրանց ենթակայությունը Ս.Աթոռին: Սակայն նրա մահից հետո “...կաթողիկոսական տեղապահը Անդրկովկասի երեք թեմերի համար նշանակեց ժամանակավոր կառավարիչներ, որոնք պիտի կառավարէին թեմերը մինչև նոր կաթողիկոսի ընտրութիւնն ու հաստատութիւնը”²:

1857թ. Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ է նշանակվում Գևորգ Վեհապետյանը, որը քայլեր է ձեռնարկել ինչպես Շուշիի հոգևոր դպրոցի, այնպես էլ որոշ Ղարաբարում գոյություն ունեցող ծխական դպրոցների բարեկարգման, ինչպես նաև նորերի բացման ուղղությամբ³:

1864-78թթ. Ղարաբաղի թեմը առաջնորդել է Սարգիս արքեպիսկոպոս Զալալյանցը: Պահպանվել են նրա նշանակման առթիվ Ամենայն Հայոց Մատրենու կաթողիկոսին 1864թ. գրված շնորհակալագիրը, ինչպես նաև “Սարգիս արքեպիսկոպոսի գրութիւնը Կաթողիկոսին՝ Արցախի թեմի առաջնորդի պաշտօնն ընդունելու և շուտով Վեհափառին ներկայանալու մասին”⁴:

Վավերագրերը փաստում են, որ Սարգիս արքեպիսկոպոսի առաջնորդության շրջանում ներեկեղեցական հակասությունները թեմի ներսում նույնպես առկա էին և դա հատկապես սուրբ արտահայտություն էր ստացել կրթական բնագավառում: Հատկանշական է, որ այս բնագավառում հակասությունները խորացել էին նաև մյուս հայկական թեմերում: Առկա դրությունից դուրս գալու ելքը ընդհանուր բարեփոխումների իրականացումն էր, որին էլ նպատակառության մեջ կաթողիկոսի գործունեությունը: Գևորգ Դ. կաթողիկոսը 1867-1868 թուականներին ձեռնարկեց մի շարք վարչական և կրթական բարենորոգումների, որոնք զայիս էին որոշ չափով բարերարութիւն տալու հայ ժողովրդի հասարակական կեանքի զարգացումից առաջ եկող պահանջներին”⁵:

Սարգիս Զալալյանցը, Ամենայն Հայոց կաթողիկոսի հրահանգով ու քաղաքական հանձնարարությամբ, 1867-1870թթ. գտնվում էր Կոստանդնուպոլսում, իսկ հետո էլ, վերադառնալով Թիֆլիս, հավանաբար

¹ Հեօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց հոգեւոր դպրոցի, էջ 177:

² Նույն տեղում, էջ 218:

³ ՀԱՍ, ֆ. 56, գ. 1, գ. 8088, թ. 5:

⁴ Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք թ, էջ 283-285:

⁵ Հեօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց հոգեւոր դպրոցի, էջ 355-356:



Երկար ժամանակ էլ Թիֆլիսում է ապրել: Երկրամասից նրա երկարատև բացակայության պատճառով բնակչությունը հասուլ գրությամբ դիմել է Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ Սարգիս արքեպիսկոպոսին Արցախի թես վերադարձնելու կապակցությամբ¹: “Վավերագրերում” զետեված են նաև Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղղված բազմաթիվ գրությունները, իսկ ավելի ճիշտ խնդրագրերը, որտեղ, լսելով Սարգիս արքեպիսկոպոսին այլ թես ուղարկելու կաթողիկոսի որոշման մասին, Ղարաբաղի թե հոգևոր և թե աշխարհիկ գործիչները, խնդրելով Սարգիս արքեպիսկոպոսին վերադարձնել Ղարաբաղ, միաժամանակ նրան ներկայացնում են որպես “ժողովրդին սիրելի” առաջնորդ, որի ներկայությունը ժողովրդի համար անշափ կարևոր է. “...արդարն յօրէ անտի լսելոյն մեր զայս ցաւալի համբաւ զգալի ցավ պատճառեաց ի սիրտս մեր ի մասին մեկնելոյն ի վիճակէն մեր մի այնպիսի ազգասէր և արթուն հոգատար Հովուի: Ուստի որդիական սիրոյ համբուրիւ հասմբուրելով զշայրական սուրբ զարշապար գրած և խնամառատ Հայրութեանդ, ամենախոնարհաբար խնդրեմք չզրկել զմեզ ի մարդասիրական և յԱզգասիրական խնամառատ զթոյն վիճակաւոր ծօր, որպէս վայելեալ եմք մինչ ցարդ զազգասիրական աշխատանս նորա ի վաղուց անտի...”²:

Հավանաբար այդ խնդրագրերը հաշվի առնելով էլ բեկանվեց Ղարաբաղի հոգևոր առաջնորդին Բեսարարիայի թեմ ուղարկելը և նա կրկին վերադարձավ Շուշի ու անմիջապես ձեռնամուխ եղավ կրթական համակարգի բարեկարգմանը: Առաջին հերթին կանոնակարգվեց աշակերտների ընդունելության կարգը: Հասարակական կյանքի բարեկարգմանն էր ուղղված արքեպիսկոպոսի կողմից 1872թ. հրատարակված “Բարեկարգութիւնք, տնօրինեալը ի վիճակաւոր առաջնորդէն հայոց թէմին Ղարաբաղու ի Սարգիս արքեպիսկոպոսէն Հասան-Զալալեանց յաղաց կարգի կատարման ինչ-ինչ հոգևոր ծիսից հայոց ժողովրդականաց ի նմին վիճակի”, որով վերացվում էր նշանադրության, պսակի և հուղարկավորման ծեսերի հետ կապված զանազան շռայլ սովորույթները, այդ թվում “կերուխումները” և հաստատվում են շատ պարզ ու վայելուշ կանոններ³:

1876թ. Սարգիս Հասան-Զալալյանցը հասուլ կ խնդրագրով դիմում է Ամենայն Հայոց Գևորգ Դ կաթողիկոսին՝ Ղարաբաղի հոգևոր առաջնորդի պաշտոնից իրեն ազատելու կապակցությամբ, իմմանավորելով, որ իր պատկառելի տարիքն ու հիվանդությունը այլևս թույլ չեն տալիս ժողովրդին ու եկեղեցուն օգտակար ծառայություն կատարելու համար: Լեռյի վկայությամբ, Սարգիս Զալալյանցը հիվանդության պատճառով բնակվելով Թիֆլիսում, “այնտեղից էր ուղղություն տալիս թէմի գործերին, և ինքն էլ զգում էր, որ դա լավագույն կարգաւորում չէ”⁴, ինչն էլ հավանաբար, դրդել էր նրան այդ քայլին: 1876թ. Շուշիի հասարակության

¹ Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, զիրք Թ, էջ 307:

² Նույն տեղում, էջ 326:

³ Տես՝ Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց հոգեւոր դպրոցի, էջ 374:

⁴ Նույն տեղում, էջ 376:



կողմից նույնպես համապատասխան խնդրագիր է ուղարկվել Ամենայն Հայոց կաթողիկոսին, որում, ներկայացնելով Սարգիս Հասան-Զալալյանցի ազգանապատ գործունեությունը, միաժամանակ նշվում է, որ “ցաւօք սրտի ասեմբ՝ երբ ի 1875 ամի նա իր անձնական տկարութեանց պատճառաւ բացակայեցաւ աստի առողջութիւն գտնելու համար, դարձեալ մեր ժողովրդականաց մէջ սկսաւ ի վեր երկիլ նոր ի նորոյ անխաղաղութիւննք, անմիաբանութիւնը”¹: Սակայն այս խնդրագրերին Էջմիածնի կողմից մասնակի լուծում է տրվել և 1876թ., հաշվի առնելով Սարգիս Հասան-Զալալյանցի հիվանդությունը, թեմակալի փոխանորդ է նշանակվել Արքատակես վարդապետ Սեղրակյանը, որն էլ մինչև 1881 թ. առաջնորդեց Ղարաբաղի թեմը՝ փոխանորդի կարգավիճակով:

Այսպիսով, 19-րդ դարի սկզբներից Շուշին դարձավ Ղարաբաղի հոգևոր կենտրոնը, որն այդ առաքելությունը շարունակաբար իրականացնում էր Սովորականից կաթողիկոսության հոգևոր սահմաններում ներառված հայաբնակ նաև մյուս տարածքներում: Այսպես, 1909թ. Աշոտ Եպիսկոպոսի Հայոց Հայրապետին հղված տեղեկագրում հիշարժան փաստեր կան Արցախի թեմի կազմության, ինչպես նաև հոգևոր առաջնորդարանի հոգածության շնորհիվ կրթական կյանքի աշխուժացման մասին: Այն մասնավորապես կրկին փաստում է, որ “Ղարաբաղի Հայոց թեմը պարունակում է իր մէջ Շուշու, Ջիւանշիրի, Կարիագինի/Ջիբրայիլ/, Նուշու և Արեշի ամբողջ գաւառները, Գանձակի և Զանգեզուրի գաւառների մասերը, Լանքարան քաղաքը և Զաքարալայի շրջանից Կախ աւանը: Ամբողջ թեմում կայ ըստ շրջագայութեան 26.364 ծուխ, արական սեռի 101.143 շունչ իգական սեռի 88.857 - ընդամենը 190.000: ... Թեմն ունի 221 եկեղեցի, 9 վանք, որոնցից 3 շեն և 6 անմարդաբնակ”²:

Ա մ փ ո փ ու մ

Եփրեմ Զորագեղի Ամենայն Հայոց կաթողիկոսի հատուկ կոնդակով 1815թ. Սովորականից կաթողիկոսությունը վերացվում է և նրա փոխարեն ստեղծվում Ամենայն Հայոց կաթողիկոսության ենթակայության տակ գտնվող մետրապոլոսություն:

1836թ. մարտի 11-ի Ռուսական կայսրության եկեղեցական կանոնադրությամբ Ղարաբաղի թեմի հոգևոր կենտրոնը դարձավ Շուշին, որտեղ էլ տեղակայվեց առաջնորդարանը:

Այսպիսով, 19-րդ դարի սկզբներից Շուշին դարձավ Ղարաբաղի հոգևոր կենտրոնը, որն այդ առաքելությունը շարունակաբար իրականացնում էր Սովորականից կաթողիկոսության հոգևոր սահմաններում ներառված հայաբնակ նաև մյուս տարածքներում:

¹ Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, զիրք Թ, էջ 334:

² Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, զիրք Թ, էջ 465-466:



Превращение Шуши в духовный центр Карабаха

М.Балаян

к.и.н., доцент

Директор государственного историко-
краеведческого музея Арцаха

Резюме

Ключевые слова: Шуши, Карабах, католикос, духовный, Саркис, Асан
Джалалян, Амитрополит, церковь, Багдасар, Алуанский

Специальной энцикликой Католикоса Всех Армян Епрема Зорагехци в 1815 г. Агванский Католикосат ликвидируется, и на его месте создается митрополия в подчинении Армянского Патриаршества.

11 марта 1836 г. Церковным уставом Российской империи духовным центром Карабахской епархии стал г. Шуши, где и располагалось церковное верховенство.

Таким образом, с начала XIX в. Шуши стал духовным центром Карабаха, который выполнял эту миссию также и на других армянонаселенных территориях в пределах Агванского Католикосата.

Making Shoushi Spiritual Centre of Karabakh

M. Balayan

PhD of Historical Sciences, Docent

Director of Artsakh state museum of History and Country Study
Summary

Key words: Shoushi, Karabakh, Catholicos, spiritual, Sargis, Hasan-Jalalyanc,
Metropolitan, church, Baghdasar, Aghvank

With the special encyclical of Patriarch of All Armenians Yeprem Zoragekhtsy in 1815 Aghvan Catholocosate was eliminated and it its place a metropolis subordinate to Armenian Patriarchate was established. On 11 March, 1836 with church charter of Russian Empire the centre of Karabakh diocese was Shushi, where Prelacy was located. Thus, from the beginning of the XIX century Shushi had become a spiritual centre of Karabakh that performed its function continuously on Armenian populated territories within the boundaries of Aghvan Catholocosate.



ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ և ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՇՈՒՇԻՌԻՄ 1813-1917 ԹԹ.

Վահրամ Բաղդան,
պ.գ.դ., պրոֆեսոր

Բանալի բառեր՝ Շուշի, հայ, լուսավորություն, դպրոց, ուսուցիչ, ազգային, ուսումնարան, աշակերտներ, հոգաբարձու, հոգևոր, շրջանավարտներ, հայրենիք:

19-րդ դարի սկզբներին Շուշիում տնտեսության մեջ տեղի ունեցած դրական տեղաշարժերը խթանեցին նաև մշակութային կյանքի աշխատացմանը: Օրեօր փոփոխվող կյանքը նոր խնդիրներ էր դուռմ մշակութային գործիչների առջև:

Լուսավորության տարածումը, դժնդակ ժամանակներին դիմակայացած ժողովրդին գրին ու գրականությանը հաղորդակից անելը դառնում էր հայ գործիչների առաջնահերթ խնդիրներից մեկը:

Շուկայական հարաբերությունների վրա հենված տնտեսությանը անհրաժեշտ էին կրթված և բանիմաց գործիչներ:

Նոր ժամանակը հրամայաբար թելադրում էր, որպեսզի մատադ սերնդի կրթության գործը համապատասխանեցվի իր պահանջներին, այն է՝ աշխարհականացմանն ու ժողովրդականացմանը, մանկավարժական առաջավոր մեթոդների և կրթական մասնավոր համակարգի կիրառմանը:

1805 թվականին Շուշիցի Մելիք Ազարյանը բացում է մասնավոր դպրոց, որտեղ սովորում էին 95 աշակերտներ¹: Նույն թվականին Հակոբ Յուզբաշյանի բացած դպրոցում սովորում էին 45 աշակերտներ²:

Դարասկզբին Գանձասարի և Ս. Հակոբա վանքերին ու Շուշիի եկեղեցուն կից գործում էին դպրոցներ: Առաջին երկու դպրոցներում բեղմնավոր գործունեություն էր ծավալել Հովսեփ Վարդապետ Տեր Ավագյանը (Արցախեցի), որը հեղինակել է աստվածաբանական, ճարտասանական, քերականագիտական բնույթի աշխատություններ: Նրա աշակերտներից էր Պողոս Վարդապետ Ղարաբաղցին, որի մոտ Էջմիածնում սովորել է Մեսրոպ Թաղիառյանը, իսկ Թիֆլիսում՝ Ստեփանա Նազարյանը և Խաչատուր Աբովյանը:

Ս. Թաղիառյանը պատմում է, որ «իմաստասեր», «զիտնական», վարդապետ Հովսեփ Արցախեցուն և Պողոս Ղարաբաղցուն շուշեցի հարուստները բերել էին տվել իրենց որդիներին ուսուցանելու համար³:

Բարգավաճող հայկական քաղաքը դեպի իրեն էր ձգում տարբեր ազգերի ներկայացնելու:

¹ ՀԱԱ., ֆ. 56, գ. 1, գ. 78, թ. 9, 43:

² Մատենադարան, Կաթողիկոսական արխիվ, թ. 16, փ. 396, թ. 72:

³ Թաղիառյան Ս., Ճանապարհորդություն ի Հայոց, Կալվաթա, 1847, էջ 292:



1823 թվականին Շուշի են գալիս Բագելի «Ավետարանական քարոզչական ընկերության» ներկայացուցիչներ Ավգուստ Կրեյսը, Ավգուստ Դիտրիխն, Ֆիլիփիան Զարեմբան, Կառլ Պֆանտերը, Ֆրիդրիխ Շպրեմբերգը և Ֆրեդրիխ Յուլտը: Նրանք 1827 թվականին հիմնում են ուսումնարան (Լեմսի շլոյլ), որը պատրաստել է մեծ թվով ուսուցիչներ ու քարոզիչներ: Ուսումնարանում սպորտում էին 10-18 տարեկան 134 աշակերտ: Բողոքականները վկայում են. «Մանկունք զանազան դասակարգերից էին, բայց մենք աշխատում էինք, որ չքատրներ լինին: Նոքա հասակով 10-18 տարեկան էին, մեծ մասամբ Ղարաբաղցի Հայք»¹:

Բողոքականների հրավերով դրագում աշխատել են՝ Հովսեփ Վարդապետ Արցահեցին, Պողոս Վարդապետ Ղարաբաղին, Միրզա Ֆարուկը (Հարություն Ամիրիսանյանը), սարկավագներ Բարսեղը և Մովսեսը:

1835 թվականին Կովկասի կառավարիչ քարոն Ռոգեն առ Բլուդրվը այսպես է բնութագրել Բագելյան քարոզիչներին. «Այս միսիօնարները բնակչութեան Շուշի քաղաքում Ղարաբաղի նահանգի, որտեղ հայ ազգանակութիւնն աւելի օրեե է, քան միտիւլմանը, և յընթաց տասնուերեք տարուան ոչ միայն ոչ մի տեղ զաղթականութիւն չեն հաստատել, այլ մինչև անզամ քրիստոնեայ չեն դարձրել ոչ մի հեթանոս և ոչ մի մահմետական, և պարապել են հոգնոր գրեանք հայերէն թարգմանելով: Դրաքոցներ հիմնելով՝ սոք իրենց նկրտումները դարձուցել են, ինչպէս երևում է, հայ երիտասարդութեան վերայ»²:

Դպրոցում սովորեցնում էին հայերէն կարդալ և գրել թվաբանություն և աշխարհագրություն, սերտում էին Հին և Նոր կոտակարանը, վարժվում էին թարգմանության մեջ գրաբարից աշխարհաբար և հակառակը: Որոշ աշակերտների ուսուցանում էին նաև ուսաց լեզու:

Միսիոնների բացած դպրոցը իր գործունեությունը շարունակեց մինչև 1837 թվականը:

Այդ դպրոցի շրջանավարտներից ումանք հետազայում դպրոցներ են բացում Շուշիում և գավառի գյուղերում: 1829 թվականին Շուշիում գործում էր Տեղ Խաչատուրի մասնավոր դպրոցը՝ 10 աշակերտներով, 1830 թվականին Հ. Հարությունյանի դպրոցը 15 աշակերտով, 1831 թվականին Առաքել Սարկավագի դպրոցը 50 աշակերտով³:

Ռուսաց լեզուն տեղական բնակչության մեջ արմատավորելու նպատակով 1830 թվականին կառավարության որոշումով Անդրկովկասում բացվում են 20 գավառական ուսումնարաններ, որոնցից մեկը Շուշիում: Նորաբաց ուսումնարանում դասավանդումը տարվում էր ուսւերէն լեզվով:

¹ Ղուկասյան Հ., Բողոքականութեան հաստատուիլը Կովկասու հայոց մեջ, «Մեղու Հայաստանի», հմ. 53, 11 յուլիսի, 1885, էջ 1-3:

² Ղուկասյան Հ., Բողոքականութեան հաստատուիլը Կովկասու հայոց մեջ, «Մեղու Հայաստանի», հմ. 55, 18 յուլիսի, 1885, էջ 1-2:

³ Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., Շուշի ռեալականը, Երևան, 2001, էջ 9:



Դպրոցի պահպանման համար Շուշիի հայությունը հանգանակում է 523 ուրիշ 16 կոպեկ¹:

Ուսումնարանում սովորում էին 127 աշակերտ, որից 88-ը՝ հայեր էին: Այդտեղ դասավանդում էին ուսուցիչներ որոնցից մեկը վարիչն էր հայազգի Մելքոն Խիտրովն էր, իսկ մյուսները Կուզանովը, Բոյարդինը, Ա. Մելքոնյանը և մոլլա Ալահվերդիկը²:

Դպրոցում որոշ ժամաքանակ հատկացված էր նաև հայերենի ու թաթարերենի դասավանդմանը:

Շուշիի տեղական գավառական ուսումնարանը 1875 թվականին վերափոխվում է և դառնում պետական քաղաքային դպրոց: Այն որպես ոչ լրիվ միջնակարգ դպրոց գործել է մինչև 1920 թվականը:

1837 թվականին ցարական կառավարության հրամանագրով արգելվեց բազեի քարոզչական ընկերության գործունեությունը: Նույն թվականին է կայսերական հրամանով Շուշի փոխադրված Ղարաբաղի թեմի կոնսիստորիայի նախագահ նշանակվեց ժամանակի նշանավոր քաղաքական-մշակութային գործիչ Զասան-Զալայյան մեծանուն տոհմի շառավիղներից Բաղրամար Միտրոպոլիտը (1775-1854 թթ.), որը մեծագույն նպաստ թերեց Արցախի կրթական-մշակութային կյանքի աշխատացմանը: Նրա ջանքերով է 1838 թվականին հիմնվեց Շուշիի թեմական դպրոցը, որը անուրանալի դերակատարություն ունեցավ արցախահայության կյանքում:

Սկզբում դպրոցը ուներ 3 դասարան, որտեղ սովորում էին 65 աշակերտներ, դասավանդում էին 2 ուսուցիչներ³: 1886/87 ուսումնական տարում թեմականը արդեն ուներ 359 աշակերտ, 1893-1896 թվականներին՝ 400-500, իսկ 1896-1904 թվականներին՝ 500-588 աշակերտ⁴:

Ֆինանսական միջոցների բացակայության պայմաններում թեմական դպրոցը 1844 թվականին փակվում է: Թեմի առաջնորդի խնդրանքով ժողովրդի կողմից որոշ միջոցներ հատկացնելուց հետո դպրոցը 1845 թվականի օգոստոսի 17-ին նորից վերաբացվեց:

Օրեցօր թեմականի բուջեն դառնում է կայուն: Ստեղծվում է հոգեբարձուների խորհուրդ, որոնք հաճախակի հանգանակություններ էին կատարում, ինչպես Շուշիում, այնպես էլ Բաքվում, Թիֆլիսում, Մոսկվայում: Թեմական դպրոցի հիմնական բարերարներն էին շուշեցի մեծահարուստներ Աղա Անդրեաս-թեկ և Սարգս-թեկ Քալանթարյանները, Անդրեաս և Մարտիրոս Խանդամիրյանները,

¹ Арутюнян Г., Просвещение и школа в Шуши как фактор национально-культурного возрождения восточной Армении, «Աշխատանքային տեսք», 1-2, Երևան, 2013, էջ 107:

² Սանթրոպյան Ս., Արևելահայ դպրոց 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 46-48; Լեօ, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 183:

³ ՀԱՍ, ֆ. 56, գ. 3, փ. 293, թ. 5:

⁴ «Փայլակ», հմ. 39, 23 հուլիսի, 1915:



Համբարձում-քեզ Սարուխանքելյանը, Կարապէտ Ղուլյանը, Համբարձում Խաչատրյանը, Միմոն Կոստանդյանը, Համբարձում աղա Հախումյանը, Բարա Բեգլարյանը, Պետրոս Աղամայանը Ղուլյացի Բեհլամյանցը, մոսկվայաբնակ Ժամհարյան Եղբայրները: Բարվում հանգանակությունները կազմակերպում եր ծագումով շուշեցի Մարկոս Դոլուխանյանը, Բարայել Բեգլարյանը: Բարվաբնակ Մուսայել Շահեկարանյանը մի խանութ նվիրեց դպրոցին: 1893 թվականին մոսկվայաբնակ Անդրեաս Խանդամիրյանի կտակի համաձայն 20.200 ռուբի պահ է տրվում Մոսկվայի պետական բանկին և ստացված տոկոսները 900 ռուբի դրվում է հոգեբարձուների տրամադրության տակ¹: Արցախի թեմի առաջնորդ Աշոտ Եպիսկոպոս Շախյանը 1910 թվականին Բարվում և Թիֆլիսում հանգանակեց 25130 ռուբի²:

1913 թվականին թեմական դպրոցի 75-ամյա հոբելյանը նշելու համար մոսկվայաբնակ Վերին Թաղավարդ գյուղից սերված վաճառական Բաղդասար Արգումանյանը 200.000 ռուբլու աննախաղեպ նվիրատվություն կատարեց³: Նույն թվականին Միքայել Աղամյանցը Շուշիում գտնվող 30.000 ռուբի արժողության տունը նվիրեց թեմական դպրոցին⁴: Բարկեն և Զավեն վարդապետները 1913 թվականին թեմականի համար հանգանակեց են շուրջ 600.000 ռուբի⁵:

1861 թվականին Մաթևոս կաթողիկոսի կոնդակով Արցախի թեմի վանքապատկան կալվածքների կառավարումը հանձնվել է Շուշիի թեմական դպրոցի հոգեբարձուներին, որպեսզի ստացված գումարով պահպեր դպրոցը⁶:

Ցավոք 1910 թվականին Էջմիածնի Սինոդը վերստին իր ձեռքն է վերցնում թեմի կալվածքների կառավարումը և դրա պատճառով թեմականը զրկվում է որոշ հաստիքներից:

Թեմական դպրոցի համար եկամտի հաստատուն աղբյուր ունենալու համար քաղաքի հայկական թաղամասի ամեն մի ծովս տարեկան 20 կոպեկ սրբադրամ տուրք էր վճարում⁷: Դպրոցի չքավոր աշակերտների կարիքները հոգալու նպատակով թեմականն հաճախակի կազմակերպում էր մշակութային միջոցառումներ, որից ստացված հասույթը տրամադրվում էր հոգեբարձուների խորհրդին:

¹ Լ. Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգեւոր դպրոցի, Թիֆլիզ, 1914, էջ 189, 192-193, 265-268, 464-465, 560:

² Լ. Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգեւոր դպրոցի, Թիֆլիզ, 1914, էջ 598:

³ Լ. Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգեւոր դպրոցի, Թիֆլիզ, 1914, էջ 629:

⁴ Լ. Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգեւոր դպրոցի, Թիֆլիզ, 1914, էջ 633:

⁵ Քոչարյան Ա., Շուշիի հայոց թեմական հոգեւոր դպրոցի հիմնադրման 75-ամյակի տոննակատարություններն ըստ արխիվային վավերագրությունների, «Կաճառ», հմ. 6, 2012, Շուշի, 2014, էջ 68:

⁶ «Փայլակ», հմ. 64, 21 օգոստոսի, 1916:

⁷ «Գործ», հմ. 11, 9 մարտի, Բարպու, 1914:



1855 թվականին թեմական դպրոցը պարապմունքները կազմակերպում էր Ազուլեցող եկեղեցու երեցինան Գրիգոր Խաչատրյանի տան երեք սենյակներում¹: Թեմական դպրոցի աշխատանքները հարմարավետ շենքային պայմաններում կազմակերպելու համար Բաղրամար մետրոպոլիտը մի հողակտոր է վերջնում և սկսում շինարարությունը: Շենքի կառուցումն իր վերջնական ավարտին է հասցնում Սարգիս արքեպիսկոպոս Զալայյանը: 1871 թվականի սեպտեմբերի 17-ին հանդիսավոր կերպով օրինվում է նոր շինությունը²: Թեմականի պարապմունքները կազմակերպվում են նաև դպրոցի բակում գտնվող նախկին առաջնորդարանի շենքում, որի մուտքի զիմին Սարգիս արքեպիսկոպոսը 1878 թվականին փորագրել է տվել «Աղաջեմ յիշել զիս յայնմ աւուր, յորժամ բանք սպառին և գրծք թագաւորեն»³:

Անդրեաս Խանդամիրյանի կտակած գումարներով Շուշիում 1894 թվականին օրիորդաց դպրոցի համար շինարարություն է սկսվում: Այն ավարտվում է 1898 թվականին: Սակայն հոգեբարձուների խորհուրդը հաշվի առնելով, որ նորակառուցի պայմանները ավելի հարմարավետ եր, որոշվեց նույն թվականի դեկտեմբերից թեմականի ուսումնական պարապմունքները կազմակերպել նոր դպրոցում: Նախկին շենքն էլ տրամադրվեց օրիորդաց դպրոցին⁴:

Թեմականի ուսուցիչները բարձր մտավոր պատրաստություն ունեին: Նրանց մեծ մասը ավարտել էին Ռուսաստանի և Եվրոպական երկրների նշանավոր բուհեր:

«Մեղու Հայաստանի» թերթի լրագրողը գրել է. «... ուսուցչական խոսմբը բաւական ընտիր է Շուշու հոգևոր ազգային դպրոցում, հոգեբարձութ դպրոցական և հոգացող...»⁵:

Տարբեր տարիներում այսուեղ դասավանդել են հայ մշակույթի նշանավոր դեմքեր Պերճ Պոռշյանը, Մակար Բարիսուդարյանը, Մեղրակ Մանդինյանը, Պետրոս Շանշյանը, Մանուկ Աբեղյանը, Լևոն Մանվելյանը, Երվանդ Լալայանը, Արտաշես Կանայանը, Ստեփան Դեմուրյանը, Վրբանես Փափազյանը, Սահիրիդոն Մելիքյանը, Հրայր Աճառյանը, Արշակ Չիլինգարյանը, Նիկոլ Աղբայանը, Լևոն Թախիտաշյանը (ակադեմիկոս Արմեն Թախիտաշյանի հայրը), Ավետիք Տեր-Պողյանը, Հայրապետ Մուսայելյանը, Խաչիկ Սամվելյանը, Արշալույս Աստվածատրյանը, Գարեգին Խաժակյանը, որը 1915 թվականին մեծ եղեռնի զոհ դարձավ, և ուրիշներ: Նրանց շնորհիվ թեմականում և մյուս դպրոցներում փոխվել են ուսուցման, դաստիարակության հին ձևերը, կզմվել նոր ուսումնական պլաններ, ծրագրեր, դասագրքեր:

Թեմականի բազմաթիվ շրջանավարտներ իրենց կրթությունը շարունակելով արտասահմանյան բարձրագույն հաստատություններում, դարձել են նշանավոր

¹ Լեօ, նշվ.աշխ., էջ 209:

² Լեօ, նշվ. աշխ., էջ 367:

³ «Բազուի ձայն», հմ. 121, 31 օգոստոսի, 1913:

⁴ Լեօ, նշվ. աշխ., էջ 555:

⁵ «Մեղու Հայաստանի», հմ. 67, 3 սեպտեմբերի, 1880, էջ 2:



զիտնականներ, մշակութային, հասարակական, պետական գործիչներ՝ Ախմոն Հախումյանը, Կոստանդին Մելիք-Շահնազարյանը (Տմբլաչի Խաչան), Լեռն Մուրայանը, Արսեն Տերտերյանը, քիմիկոս Հակոբ Հովհաննիսյանը, Գաբրիել Ղուլիմիկյանը և ուրիշներ:

Թեմականը Արցախի և մասնավորապես Շուշիի հայության կյանքում անփոխարինելի տեղ ուներ: Այնքան մեծ էր նրա ժողովրդականությունը, որ 1913 թվականին դպրոցի 75-ամյա հորելյանական միջոցառումները վեր էին ածվել տոնի: Ժամանակակիցը գրել է. «Եկեղեցում ասեղ զցելու տեղ չկար, հայերից շատերը խանութները փակել են և եկել եկեղեցի, այդտեղ են և տեղույս ուսուաց այրողիմնազիայի բարձր դասարանների աշակերտները, իրենց ուսուցիչների հետ միասին, այդտեղ են արհեստաւորները ու համբարական դրոշակավիրները, ձեռքներին բռնած երփներանգ դրոշակները: ... յարակից փողոցներն ու տների պատշգամբները լեփ-լեցուն էին հազարաւոր ամբոխով»¹:

Թեմականում ազգային դաստիարակությունը բարձր հիմքերի վրա էր դրված: 1903 թվականին երբ ցարական հրովարտակով փակվեցին հայկական դպրոցները, նույն ճակատագրին արժանացավ նաև թեմականը: Մի շաբթ ուսուցիչներ ձերքակալվեցին:

Թեմականի շրջանավարտներից մեկը՝ Աբրահամ Կիսիբեկյանը 1903 թվականի դեպքերի մասին գրել է. «Վերցրինք մեր զիմերը, մեր ուսուցիչը նորից կրկնեց ու պատվիրեց մեզ սիրել մայրենի լեզուն և պինդ պահել, չմոռանալ մեր սիրելի դպրոցը: ... Նրա արցունքները թափվում էին, նա այլևս իրեն զաբել չկարողացավ...: Զկար այլևս մեր սիրելի ու անզուգական թեմական դպրոցը, բայց նա խորն էր թափանցել մեր հոգու մեջ և նա դրել էր արդեն մեր կյանքի հիմնաքարը՝ լինել միշտ անձններ դեպի այդ ժողովրդի լեզուն, կուլտուրան ու նրանից ոչինչ չինայել»²:

Դպրոցների վերաբացումից հետո թեմականը շարունակել է գործել մինչև 1920 թվականի մարտյան ողբերգական դեպքերը: Հայկական թաղամասի հետ միասին թուրքերը ուսումնական այդ հաստատություններ նույնպես հրո ձարակ դարձրին:

Աղջիկների կրթության և դաստիարակության հարցերով մտահոգ հայ մտավորականները 19-րդ դարի 60-ական թվականներից Շուշիում ձեռնամուխ եղան նաև իգական դպրոցների բացման գործին: Ֆրանտում մեծ էր թեմական դպրոցի 1863-63 թվականների տեսուչ Պետրոս Շանշյանի դերը: Պետրոս Շանշյանի տեղակալը՝ մեծանուն գրող Պերճ Պոռշյանը իրավամբ գրել է. «Շանշյանը դրեց մեր Ռուսաստանի հայ նոր սերնդի մեջ ինքնածանաշուրջան և ինքնազարգացման հիմնաքարը»³: Բոլոր առումներով այնքան մեծ էր այդ մտավորականի դերակատարությունը, որ նրա աշխատած տարիները Պ. Պոռշյանը որակել է որպես «Ուսկե դար»:

¹ «Բազուի ձայն», հմ. 119, 24 օգոստոսի, 1913:

² Կիսիբեկյան Ա., Շուշեր, հ. 1, Երևան, 2011, էջ 123:

³ Պոռշյան Պ., Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1964, էջ 215:



1863 թվականի Պ. Շանջյանի նախաձեռնությամբ Շուշիում հիմնվում է իգական դպրոց, որը գործել է մեկ տարի և փակվել¹: Բայց նա չվհատվեց: Այս անգամ փորձեց իր գաղափարները իրագործել մեծահարուստ Համբարձում Հախումյանի տիկնոց Մարիամ Հախումյանի միջոցով: Տիկին Մարիամը ծագումով Մելիք-Շահնազարյանների տոհմից էր: Նա սկզբում իր տանը դաստիարակում էր 7 աղքատ աղջիկների:

Դետրոս Շանջյանը և Պերճ Պոռջյանը կազմում են ապագա դպրոցի կանոնադրությունը, որտեղ նախարանում նշվել է: «Շուշուայ հայ տիկնանց միաբանութիւնը, շարժկած լուսավորութեան սիրով և աղջկանց կրթութեան վսեմ նշանակությամբը ընտանեկան կենայ համար, որից կախյալ է ինչպէս իրաքանչյուր մարդոյ երջանկութիւնը, այնպէս և ազգի բարօրութիւնը, հաստատում է Շոշիումը օրիորդաց ուսումնարան ամեն կարգի աղջկաց համար»²: Կանոնադրությունը կաթողիկոսի կողմից հաստատվելուց հետո դպրոցի բացումը գործնականորեն իրագործվում է 1864 թվականի ապրիլի 7-ին, որտեղ պատրաստելու էին «լուսավորյալ վարժապետոնիք և լուսավորյալ մայրեր»³:

Մարիամ Հախումյանը դպրոցին հատկացնում է իր տան հինգ սենյակները, իսկ թեմականի ուսուցիչները ձրիաբար պարապում էին:

Աղքատ ընտանիքներից օրիորդները, որոնք կազմում էին դպրոցի աշակերտուհիների 3/4-ը, ուսանում էին տիկին Մարիամի և նրան մոտ ազգական հարուստ կանանց հաշվին: Կարճ ժամանակամիջոցում Մարիամյան դպրոցը այնքան է առաջադիմում, որ թուրքերը մինչև անգամ աղաջում էին իրենց աղջիկներին նույնպէս ընդունել: «Տիկին Մարիամ Հախումյանը թողած իւր շքեղ և շրայլ սալոնը, հազար աշակերտների համազգեստի ձևով և սպիտակ գոգնոցը կապած, առաւտից մինչև կէս օր պտրուում էր աշակերտուհեաց մէջ, որի ձեռագործը ուղղելով, որի դասը կրկնելով և աղքատներին քաջալերելով նորանոր գրքերով և ընծաներով»⁴:

Մարիամ Հախումյանը վախճանվել է 1885 թվականի հուլիսի 19-ին Գանձակում: Նրա մարմինը ամփոփվել է հայրենի քաղաքի՝ Շուշի Մելրեցո եկեղեցու գավթում: «Շուշին շատ քիչ է տեսել այդպիսի հանդիսավոր յուղարկաւորութիւն և թաղումն և շատ քշերն են արժանացել այն յարգանքին, որը վայելեց հանգուցեալ տիկին Հախումյանը: Կարելի է ասել, որ Շուշուայ բոլոր ազգաբնակութիւնը և բազմաթիւ զիւղացիք մասնակցում էին այդ սգոյ հանդեսին...: Թաղումը կատարուեցավ վերին աստիճանի շքեղութեամբ, քաղաքի բոլոր եկեղեցիներում պատարագ էր

¹ Գ.Տ.Գ., Նամակ Շուշոյ, «Մշակ», հմ. 65, 1877, էջ 2:

² Պոռշեանց Պ., Ղարաբաղու Տիրամայր Սուլբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացուիլը, Շուշի, 1864, էջ 293:

³ «Խորհրդային դպրոց», 27 հուլիսի, 1987:

⁴ Տիկին Ս., Տիկին Մարիամ Հախումեան, «Մելրու Հայաստանի», հմ. 63, 15 օգոստոսի, 1885, էջ 2:



կատարվում: Թուրք ազնուականութիւնը, հոգևորականութիւնը և բոլոր համբեարը այցելեցին հազուցելոյ գերեզմանը, իսկ Խորշիդ-Բէզոսմ խանումը Մէջթի դուլի խանի դրաստրը դառն արտասուր էր թափում հանգուցելոյ գերեզմանին Վերայ՝ ասելով. «Հայերը թարում են այստեղ ամենաազելօր և ամենաազիւ Մայկօ խանումին»¹:

Սարբամ Հախումյանի գործը վարակիչ էր: 1876 թվականին Շուշիում բացվել է իգական նոր դպրոց: Այն 1885-86 ուսումնական տարում փակվել է: Մեկտարյա ընդմիջումից հետո դպրոցը վերաբացվել է որպես Երկրասարան իգական դպրոց: 1891 թվականից դպրոցը վերաբոխվել և դարձել է չորսամյա: 1908-1909 ուսումնական տարում կրթօջախը գործել է 5 բաժանմունքով:

19-րդ դարի վերջերին Շուշիում բացվում է ուսական իգական Մարինսկու դպրոցը, որի աշակերտների մեծ մասը հայուիներ էին: Այսպես, 1898 թվականին 257 աշակերտուիներից 240 հայուիներ էին, 14 հոգի ուսու, 2 թաթար և մեկ հոգի այլը²:

Նոր ժամանակները պահանջում էին աղջիկների կրթության և դաստիարակության գործին մեծ ուշադրություն դարձնել: 1913 թվականին ողջ Կովկասում կար 54 իգական գիմնազիա, որտեղ սովորում էին 20539 աշակերտուին, որոնցից ուսուներ էին 11 640 հոգի (56.6%), հայերը՝ 4 102 (19.9%), վրացիները՝ 2 428 (11.8%), բուրքերը՝ 156 հոգի (0.7%):³

1874-75 ուսումնական տարում Խորեն Ստեփանեի, Ղազարոս Աղայանի, Համբարձում Հախումյանի ջանքերով Շուշիի Կուսանաց անապատին կից բացվում է Երկսեռ դպրոց, որտեղ սովորում էին 20 աղջիկ և 12 տղագա:

1862 թվականներին բացվեց Ազուլեցոց եկեղեցական-ծխական դպրոցը: 1865 թվականից Դորպատի համալսարանի շրջանավարտ Ա. Աբրահամյանի նախաձեռնությամբ սկսել էր գործել Շուշիի հայ բողոքականների դպրոցը: 1870-ական թվականներից սկսած Շուշիում սկսում են գործել Մելրեցոց Ս. Աստվածածին եկեղեցուն կից դպրոցը, Վերին թաղի Թաղեւոյան արական-ծխական դպրոցը, Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու գավթում Գևանե Դանիելյանի երկսեռ կրթարանը:

1875 թվականի փետրվարից Շուշիում իր աշխատանքներ մեկնարկեց Խորեն վարդապետ Ստեփանեի մասնավոր ուսումնարանը⁵: 1884 թվականի դեկտեմբերի 26-ին թէմականի տեսուչ Հ. Տէր-Գրիգորյանի նախաձեռնությամբ Շուշիում սկսեց գործել Ս. Հոհիփամբ Կուսանաց անապատի հոգևոր ծխական դպրոցը: Ակզրում այն տեղակայված էր եկեղեցուն մոտ գտնվող Արգուման Բարպարանի տանը⁶:

¹ Նույն տեղում, էջ 1-2:

² Բալայան Վ., Արցախի պատմություն, էջ 210:

³ «Բազուի ձայն», հմ. 109, 21 հուլիսի, 1913:

⁴ Արցունի Գ., նշանական, էջ 112:

⁵ «Մեղու Հայաստանի», հմ. 11, 22 մարտի, 1875, էջ 3:

⁶ ՀԱԱ, ֆ. 319, գ. 1, թ. 167, թ. 2:



1881 թվականից քաղաքում գործում էր մի քանի մասնավոր դպրոցներ՝ Ա. Բաղդասարյանի՝ 29 աշակերտ, Ա. Պարոնյանի՝ 40 աշակերտ, Ա. Տեր-Գրիգորյանի՝ 30 աշակերտ, Ա. Տեր-Հովհաննիսյանի 35 աշակերտ, Վ. Շախունցի 30 աշակերտ¹:

Արցախսահայության կյանքում կարևոր երևոյթ էր 1881 թվականին Շուշիի ռեալական ուսումնարանի բացումը: Դպրոցը պետական էր, որտեղ ուսուցումը տարվում էր ուսերեն լեզվով: Քննարկվող ժամանակաշրջանում Կովկասում գործող ռեալական 9 դպրոցները նպատակ ունեին ազգային փոքրամասնությունների շրջանում տարածել ուսաց լեզուն:

Քանի որ այն միջնակարգ դպրոցի կարգավիճակ ուներն, նրա շրջանավարտները կարող էին ուսումը շարունակել ուսական և եվրոպական բուհերում, ուստի այն ինչ որ ձևով սպառնալիք է դառնում հայկական դպրոցների, մանավանդ թեմականի համար: «Այսուհետև այս դպրոցը պիտի դարնար սովոր աղքատ դասակարգի սեփականութիւն,-գրել է Լեռն,- որովհետև Շուշու ունետր դասակարգը, որ դրանից առաջ ստիպուած էր իր զաւակներին գոնէ գրագիտութիւն ստվրեցնել թեմական դպրոցում, այժմ միանգամայն հեռանում էր նրանից: Հեռանում էր նույն իսկ և փոքր ի շատէ ունետր արհեստաւորութիւնը , հեռանում էին նույն իսկ այն տեսակ տարրերը, որոնք կարող էին ուրիշներից ստացած օգնութեամբ, որորմութեամբ ուսում տալ իրանց երեխաներին»²:

Այդ ամենով հանդերձ ռեալական ուսումնարանը իր գոյության 40 տարիների ընթացքում մեծ դեր է ունեցել հայ ժողովրդի տնտեսական, հասարակական-քաղաքական, մշակութային կյանքի զարգացման գործում:

Սկզբնական շրջանում ռեալականի ուսումնական գործընթացը կազմակերպվել էր շուշեցի հարուստ Մովսես բենի տանը, այնուհետև Կովկասի փոխարքայի որոշմամբ հայոց թաղամասում 1901 թվականին կառուցված մի փոքր շենքում: 1907 թվականին դպրոցը գտնվում էր Լոռիս Մելիքով փողոցի վրա գտնվող «Մարդուն» հյուրանոցի դիմաց Աթաքելյանի տանը: 1901-1908 թվականներին շուշեցի մեծահարուստ նավթարդյունաբերող Գրիգոր Առաքելյանի (Առաքելով) միջոցներով կառուցվում է ռեալականի նոր շենքը: Խոնարհված շենքի ճակատին առայսօր պահպանվում է հայ բարերարի կատարած գործի մասին գրությունը:

Ռեալական դպրոցի, հայ աշակերտների թիվը տարբեր տարիների տատանվում էր 68-ից 80 տոկոսի սահմանում: Այսպես 1911-12 ուսումնական տարում ռեալականում սովորում էին 370 աշակերտ, որից 252-ը (68.1 տոկոսը) հայեր էին, 95-ը (25.7 տոկոսը) թուրքեր, 16-ը (4.32 տոկոսը) ռուսներ, 3-ը (0.81 տոկոսը) հույներ, 2-ը (0.54 տոկոսը) հրեաներ³: 1912-1916 թվականի ընթացքում ռեալականի աշակերտների թիվը հասալ 420-ի, որից 333-ը հայեր էին, 87 այլ ազգերի

¹ Խուրդյան Ս., Արևելահայ դպրոցները 1830-1920թթ., Երևան, 1987, էջ 383:

² Լեօ, Նշվ.աշխ, էջ 405-406:

³ «Ղարաբաղ», հմ. 10, 18 դեկտեմբերի, 1911:



Ներկայացուցիչներ¹: Ռեալական ուսումնարանում աշխատում էին 16-23 ուսուցիչներ: Նրանց մեծ մասը հայեր էին՝ Սեղբակ Մանդինյանը, Սիմոն Հախումյանը, Համբարձում Առաքելյանը, Հակոբ Խոջամիրյանը, Սամվել Գյուլզայյանը, Գարիիկ Գյուլիքիսյանը, բժիշկ Արասարյանը, Ռուբեն Տեր-Գասպարյանը, Արշավիր Քամայյանը, Զավադ Բեկ Իշխանյանը, բանսիրական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Առաքել Առաքելյանը, Ալեքսանդր Հովհաննիսյանը, Ներսես Աղասարյանը, Միքայել Ղարաբեկյանը, Հարութ Մելիքյանը²: Ռեալական դպրոցի տնօրենն էր մաթեմատիկոս Ա. Իվանովը³:

Ռեալականի սաների մի մասը իրենց կրթությունը հետագայում շարունակել են Ուսուսատանի և Եվրոպայի նշանավոր բուհերում: Նրանք հարորդակից դառնալով ուսական և եվրոպական առաջարեմ գաղափարներին և հասրակական, քաղաքական, մշակութային նոր զարգացումներին, վերադարձնալով հայրենիք, իրենց գիտելիքներն ու փորձը անմնացրդ նվիրել են հայոց երկրի զարգացմանը: Այդ գործիքների շարքում իրենց արժանի տեղն ունեն բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննիսյանը, Անդրեաս Արզումանյանը, Արշակ Հախումյանը, Հայկ Միքայելյանը, Գրիգոր Սաղյանը, Նիկոլայ Փիրումյանը, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Իվան Կնունյանը, ՀԳԱԱ ակադեմիկոս Վաչե Իսագուլյանը, գիտության վաստակավոր գործիչ Բահաթուր Բահաթուրյանը, պրոֆեսոր Հայկ Գյուլիքիսյանը, պրոֆեսոր , գիտության վաստակավոր գործիչ՝ Ռուբեն Գյանցեցյանը, ակադեմիկոսներ՝ Արմեն Թափառաջանը, Անդրանիկ Իոսիֆյանը, Աշոտ Հովհաննիսյանը, ակադեմիկոս Սերգեյ Վարունյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր, գիտության վաստակավոր գործիչ՝ Միքայել Շահնազարյանը, բանասիրկան գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խորեն Սարգսյանը, վաստակավոր ինժեներներ՝ Հովսեփ Տեր-Աստվածատրյանը, Մկրտիչ Յուզբաշյանը, Հովհաննես Մելիք-Փաշյանը, քիմիկոս, պրոֆեսոր Գրիգոր Տեր-Ղազարյանը, Լեզվաբան, ՌԳԱ թղթակից անդամ Ռուբեն Ավանեսովը, պատմաբան, հասարակական գործիչ Դավիթ Տեր-Դանիելյանը (Դավիթ Անանուն), Հայաստանի ժողովրդական նկարիչ Միքայել Արուտյյանը, կոմպոզիտոր, խմբավար Եղիշե Բաղդասարյանը, դրամատուրգ, երաժշտագետ՝ Ըկատերինա Բահաթրյանը (Բահաթուրը), ժողովրդական արտիստ Գուրգեն Գաբրիելյանը, կոմպոզիտոր իմբրավար Դամիել Ղազարյանը, ժողովրդական արտիստ, ռեժիսոր, մանկավարժ Տիգրան Շամիրիսանյանը, ժողովրդական նկարիչ Ստեփան Աղաջանյանը, ՀԽՍՀ վաստակավոր ճարտարագետ, ԽՍՀՄ ճարտարապետության ակադեմիայի խոկան անդամ՝ Սամվել Սաֆարյանը, հասարակական, քաղաքական, պետական գործիքներ՝ Լևոն Աթաբեկյանը, Սարգիս Բաղդասարյանը, Ալեքսանդր Բեկգայյանը,

¹ Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., նշվ. աշխ., էջ 24:

² Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., Նշվ. աշխ., էջ 24, Տեր Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 111:

³ «Փայլակ», հմ. 24, 13 ապրիլի, 1917:



Խսահակ Դովլաթյանը, Հովհաննես (Բվան) Թևոյանը, Վլադիպավ Կասպարովը, Սարգիս Կասյանը, Հակոբ Բեջանյանը (Հակոբ Կամարի), Լուղվիզ Կնունյանցը, Բոգդան Կնունյանցը, Սարգիս (Սարոն) Համբարձումյանը, Սահակ Տեր-Գարբիկյանը, Լևոն Վարդապետյանը, իայ ազգային ազատազրական պայքարի նշանափոր դեմքերից Մարտիրոս (Մարտիկ) Սարուխանյանը: Ստեփան Լիսիցյանը իրավացիորեն նկատել է, որ բարձրագույն ուսումնական հաստատություններին հայկական որեւ մարզ այնքան շրջանավարտ չի տվել, որքան Ղարաբաղը¹:

1870-80-ական թվականներին թեմական և քաղաքային դպրոցներից բացի Շուշիում գործում էին 10 հայկական դպրոցներ²: 1895-96 ուսումնական տարում Շուշիում կար 10 հայկական դպրոց, որտեղ սովորում էին 981 աշակերտ, դասավանդում 36 ուսուցիչ, ուսական 2 տիպի դպրոցներից 543 աշակերտներից 349-ը և 30 ուսուցիչներից 25-ը հայեր էին³: Ցարական կառավարության 1897 թվականի հունիսի 2-ի և 1903 թվականի հունիսի 12-ի որոշումներով փակվեցին հայկական դպրոցները: Ցարիզմը ավելի դաժանորեն էր վերաբերվում հայկական դպրոցների նկատմամբ, որովհետև Կովկասում հայությունն էր, որ առավել շատ ընկալունակ էր ազատության գաղափարների նկատմամբ: Այդ առաջադեմ մտածելակերպի ձևավորման և տարածման օջախներ էին հայկական կրթական հաստատությունները:

Շուշիում շարունակեցին աշխատել միայն ուսական գիմնազիան և ռեալական ուսումնարանը:

Քանի որ Շուշիի ռեալական ուսումնարանում հայության ազդեցությունը մեծ էր Կովկասի ուսումնական շրջանի հոգեբարձություն կրթարանի դեկավարությունից պահանջել է. «1. բոլոր կարգադրությունները և հրամանները արձակել անպայման ուսաց լեզվով, նույնիսկ նոր ընդունված փորձիկների համար:

2. Փոխել աղոթքի կարգը՝ նախ աղոթել ուսերեն, ապա՝ հայերեն, հաշվի առնելով այն, որ պետականությունը բարձր է ազգությունից:

3. Գրադարանը մաքրել հայերեն և ուսերեն կասկածելի գրքերից:

4. Առաջարկվում է հայ դասատություններին և աշակերտներին ուսւների ներկայությամբ միշտ խոսել ուսերեն»⁴:

Հայությունը չվիատվեց պայքարի արդյունքում 1905 թվականից հայկական կրթօջախները նորից շարունակեցին իրենց հայրենաշեն գործունեությունը: 1911-13 թվականներին Շուշիում շարունակեցին իրենց աշխատանքները՝ թեմական հոգևոր դպրոցը 289-300 աշակերտներով, Մարիամյանը՝ 250-269 աշակերտներով, Եկեղեցական-ծխական մի դասայ երկսեռ դպրոցներ, ուր սովորում էր 60 աղջիկ և տղա, Մելրեցոց եկեղեցական դպրոցը՝ 70-122, Թաղևոյանը՝ 120-135, Ազուկեցոց

¹ Լիսիցյան Ստ., Լեռնային Ղարաբաղի հայերը, Երևան, 1981, էջ 23:

² «Դպրոց», հմ. 4, մաս 1, 1875-1876, էջ 133:

³ Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., նշվ. աշխ., էջ 29:

⁴ Գրիգորյան Հ., Հարությունյան Գ., նշվ. աշխ., էջ 34:



դպրոցը՝ 50, քաղաքայինը՝ 250, ռեզալականը՝ 400, Մարինսկի ուսական օրիողաց դպրոցը 100 և մեկ մասնավոր տարրական դպրոց՝ 60 աշակերտներով¹:

Շուշեցի մեծահարուստ Պողոս, Արշակ, Հակոբ և Արքահամ Ղուկասյան եղբայրները իրենց հանգուցյալ քրոջ հիշատակը հավերժացնելու համար Ամենայն հայոց կաթողիկոսի տրամադրության տակ են դնում երկու հարյուր հազար ուրբիշ և Շուշիում գտնված քառասուն հազար ուրբիշ արժողության իրենց սեփական տունը «Մարիամ Ղուկասյան» անունով օրիորդաց դպրոց հիմնելու համար: Էջմիածնին նվիարերած հիմնական դրամագլուխը պետք է մնար բանկում և ստացված տոկոսները գործադրվի դպրոցի պահպանության համար²: Դպրոցը բացվել է 1914-1915 ուսումնական տարում և ունեցել է լրիվ միջնակարգ դասընթաց: Դպրոցի առաջին տեսուչը Հայրապետ Մուսայելյանն էր, իսկ 1916 թվականից հետո Ասլան Շահնազարյանը:

1916 թվականին Շուշիում կար 45 ուսուցիչ³: 1913 թվականին թեմական դպրոցի տեսուչն (տնօրեն) էր Ղազար Տեր-Ղազարյանը, 1914 թվականից Ալեքսանդր Շատուրյանը (Շուրբենի), 1913 թվականին Մարիամյան օրիորդաց դպրոցի ավագ ուսուցիչն (տնօրեն) էր Հովհան Ստեփանյանը, 1914 թվականից Հարություն Թումյանը, իսկ Մարիամ Ղուկասյան դպրոցինը Հայրապետ Մուսայելյանը⁴:

1915-1916 ուսումնական տարում Շուշիում գործում էին հետևյալ կրթական հաստատությունները. պետական դպրոցներ՝ քաղաքային դպրոց, սա ուներ երեք բաժանմունք և չորս դասարան, յոթ տարվա դասընթացով, ուսական Մարինսկի դպրոց կամ պրոզիմնազիա բաղկացած էր երեք բաժանմունքից և երեք դասարանից՝ վեց տարվա դասընթացով, ուսական ուելական դպրոց, որը ուներ երկու բաժանմունք և յոթ դասարան, ինը տարվա դասընթացով: Հայկական մասնավոր դպրոցներ. Մարիամյան օրիորդաց դպրոց, որը ուներ երեք բաժանմունք և չորս դասարան, յոթ տարվա դասընթացով, հայոց թեմական դպրոց, որը բաղկացած էր մեկ բաժանմունքից և յոթ դասարանից, յոթ տարվա դասընթացով, Մարիամ Ղուկասյան օրիորդաց դպրոցը կազմված էր ութ դասարաններից: Կային նաև երկսեռ տարրական ծխական դպրոցներ: Ազուլեցող եկեղեցական ծխական դպրոցը ուներ երկու բաժանմունք, որտեղ աշխատում էին երկու ուսուցիչներ: Մեղրեցոցը ուներ երկիհարկանի առանձին շենք: Այն ուներ երեք բաժանմունք: Շուրջ երեք հարյուր աշակերտների սպասարկում էին չորս ուսուցիչներ: Կանաչ ժամի կամ Վերին թաղի եկեղեցական ծխական դպրոցը նույնպես առանձին ծենք ուներ: Դրոցը բաղկացած էր երեք բաժանմունքներից, որտեղ աշխատում էին չորս ուսուցիչներ⁵:

¹ «Մշակ», հմ. 151, 1913, «Ղարաբաղ», հմ. 2, 20 նոյեմբերի, 1911:

² Էջո, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հգեւոր դպրոցի, էջ 634-636:

³ «Փայլակ», հմ. 96, 25 դեկտեմբերի, 1916:

⁴ Կիսիբեկյան Ա., Շուշեր, հ. 1, էջ 250-251:

⁵ Կիսիբեկյան Ա., նշվ. աշխ., հ. 1, էջ 302-305:



Վերոհիշյալ պէտական և մասնավոր դպրոցները գտնվում էին հայկական քաղամասում:

Շուշիում հայկական դպրոցների ծաղկման վերջին շրջանում Ղարաբաղի գործկոմը հայ կրթական հիմնարկությունների աշխատանքը կազմակերպելու համար 1917 թ. ապրիլի 27-ին ստեղծում է «ժողովրդական տուն» հաստատությունը, որի գործունեությունը համակարգելու համար կյանքի է կոչվում հանձնախումբ, որի կազմում ընդգրկված էին Ալեքսանդր Շատուրյանը, Հայկ Հովհաննիսը, Հայրապետ Մուսայելյանը, Ռուբեն Տեր-Գալստյանը և Սիրանուշ Զաքարյանը¹:

Այսպիսով, 19-րդ դարի 20-ական թվականներին Շուշիում տնտեսության մեջ տեղի ունեցած փոփոխություններն ու դրական տեղաշարժերը աշխուժացրին նաև քաղաքի մշակութային, կրթական, լուսավորական կյանքը:

Շուշիում հարաբերությունների վրա հենված տնտեսությանը անհրաժեշտ էին կրթված և բանհմաց մարդիկ:

Նոր ժամանակները հրամայաբար թելապրում էին, որպեսզի մատադ սերնդի կրթության գործը համապատասխանեցվի տվյալ պատմափուլի պահանջներին, այն է աշխարհականացմանն ու ժողովրդականացմանը, մանկավարժական առաջավոր մեթոդների և կրթական մասնավոր համակարգի կիրառմանը:

Այդ պահանջներից ենելով 19-րդ դարի սկզբներից մինչև 1920 թվականը Շուշիում բացվել էին տարրեր տիպի բազմաթիվ դպրոցներ, որոնց շրջանավարտները ոչ միայն ապահովեցին հայրենի քաղաքի և երկրամասի բարգավաճումը, այլ նաև նոր լիցը ու ընթացք հաղորդեցին համայն հայության համար արժեհամակարգային նշանակության ձեռքբերումների արմատավորմանը:

Ամփոփում

19-րդ դարի 20-ական թվականներին Շուշիում տնտեսության մեջ տեղի ունեցած փոփոխություններն ու դրական տեղաշարժերը աշխուժացրին նաև քաղաքի մշակութային, կրթական, լուսավորական կյանքը:

Շուշիում հարաբերությունների վրա հենված տնտեսությանը անհրաժեշտ էին կրթված և բանհմաց մարդիկ:

Նոր ժամանակները հրամայաբար թելապրում էին, որպեսզի մատադ սերնդի կրթության գործը համապատասխանեցվի տվյալ պատմափուլի պահանջներին, այն է աշխարհականացմանն ու ժողովրդականացմանը, մանկավարժական առաջավոր մեթոդների և կրթական մասնավոր համակարգի կիրառմանը:

Այդ պահանջներից ենելով 19-րդ դարի սկզբներից մինչև 1920 թվականը Շուշիում բացվել էին տարրեր տիպի բազմաթիվ դպրոցներ, որոնց շրջանավարտները ոչ միայն ապահովեցին հայրենի քաղաքի և երկրամասի բարգավաճումը, այլ նաև նոր լիցը ու ընթացք հաղորդեցին համայն հայության համար արժեհամակարգային նշանակության ձեռքբերումների արմատավորմանը:

¹ «Փայլակ», հմ. 29, 30 ապրիլի, 1917:



Школьная жизнь и вопрос национального воспитания в

Шуши в 1813-1917 гг.

В. Балаян

Резюме

Ключевые слова - Шуши, армянин, просвещение, школа, учитель, национальный, училище, ученики, попечитель, духовное лицо, выпускники, родина.

Перемены и положительные тенденции, происходящие в экономике Шуши в 20-ых годах 19-ого столетия, пробудили также культурную, учебную, просветительскую жизнь города. Экономике, основанной на рыночных отношениях, нужны были образованные и толковые люди.

Новые времена востребовано диктовали, чтобы молодое поколение соответствовало требованиям данного исторического периода, а именно - переходу к светской жизни и демократизации, применению педагогических передовых методов и внедрению частной учебной системы.

Исходя из данных требований, с начала 19-ого века до 1920 года в Шуши открылись разного рода множество школ, выпускники которых не только обеспечили процветание родного города и края, но также предали новый искру и процесс закоренению имеющихся ценных достижений для всего армянского народа.

The school life and the problem of national education in
Shushi in 1813-1917

V. Balayan
Summary

Key words: Shushi, Armenian, illumination, school, teacher, national, college, pupils, trustee, spiritual, graduates, homeland.

The changes and the improvements in economy of Shushi in the 20-es of the 19th century inspired also the cultural, educational, illuminative life of the city.

For the economy based on the market relations were necessary knowledgeable and educated people.

The new times imperatively dictated that the education of the younger generation was to be corresponded with the requirements of the historical period, that is secularization, democratization, the use of leading pedagogical methods and the use of private system of education.

Based on these requirements from the beginning of the 19th century till 1920 different numerous schools had been opened in Shushi, the graduates of which not only promoted to the prosperity of their homeland but also they stimulated to the achievements for all Armenians.



**ՇԱՄԱԽԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՌՈՑՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (XIX դ.)
Գևորգ Ստեփանյան
պ.գ.դ., պրոֆեսոր
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, առաջատար գիտաշխատող**

Բանալի բառեր - Շամախի, Վանք, Եկեղեցի, դպրոց, թեմական, Սր. Սանդիխյան:

Շամախի քաղաքի հայության պատմությունը դարեր շարունակ գոյատևած մի հարուստ ու ի ինքնատիկ հայկական ուստանի պատմություն է, որն ընդգրկում է վաղ ժամանակներից մինչև 1989 թվականը, երբ Ադրբեյջանի Հանրապետության հայատյաց, նենգ ու բարբարոս քաղաքականության հետևանքով հայրենի օջախներից վերջնականապես դուրս մղվեց այդ քաղաքի տեղաբնակ հայությունը՝ բռնազավթելով ժամանակի ընթացքում նրա ստեղծած ահրելի հարստությունը¹:

Շամախի քաղաքը տարածված է Կովկասյան լեռնապարի հարավարևելյան ճյուղերի ստորոտին, փոքրիկ բլրաշարի վրա՝ փոքած Սր. Սահակ և Զագալավագա գետակների խառնվելու տեղում: Քաղաքին ամենանոտիկ լեռներն են դեպի հյուսիս-արևմուտք ձգվող Ղզղարասին և Փեղրաքունը²: «Խոր ձորեր են Շամախու արևելեան և արևմտեան կողմերն: Արևմտեան ձորով հոսում է Մեյսարու վտակն և արևելեան ձորով մի փոքրիկ առու: Երկու ջրերս միանում են պարսից - թաղի ստորոտում և խառնում Փիր-Սահար գետակին: Քաղաքիս վերնամասն հարթ է, միջնամասն՝ լանջ, ստորին մասն՝ հովտահարթ»³, - գրում էր Մակար Եպս. Բարիսուտարյանցը: Շամախին հայտնի էր իր այգիներով և վարդաստաններով, որը արդյունք էր բնակլիմայական ննաստավոր պայմանների և բարեբեր հողի: Շամախին մեծ զավակ Ալ. Շիրվանզադեն զմայլանքով է նկարագրել իր ծննդավայրի բնությունը. «Այնտեղ երկինքը կապոյտ է, ինչպէս Փիրուզա, երկիրը բոյսերով, ծաղիկներով փարթամ, ինչպէս մի սքանչելի պարտէզ: Այնտեղ ձմեռը եղանակը մեղմ է, ոիլրենկան, ոչ քամի, ոչ փոթորիկ: Խսկ գարնանը և ամռանը բարձրագագար ծառերի վրայ գիշեր-ցերեկ երգում են անթիւ սոխակներ: Եւ ինչ համեղ մրգեր կան այնտեղ, եթէ գիտենաք, ինչ հոտաւետ պտուղներ»⁴:

Պատմական հիշատակությունները վկայում են, որ Շամախիում վաղ ժամանակներից բնակվել է հայկական որոշակի էթնիկ տարր: Հայ բնակչության վաղեմությունը փաստող ապացույցներից խիստ բնորոշ է Սարգիս արքեպս. Զալալ-

¹ Շամախի քաղաքի հայության պատմության մանրամասն քննությունը տե՛ս Ստեփանյան Գ., Շամախի քաղաքի հայերի պատմությունից, Երևան, 2013:

² Տե՛ս Հ. Ղ., Նամակ Շամախուց, «Մշակ», Թիֆլիս, 1872, հուլիսի 20, N 28:

³ Բարիսուտարեանց Մ., Աղուանից երկիր և դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 156:

⁴ Շիրվանզադէ Ալ., Իմ կեանքից, «Հասկեր», Թիֆլիս, 1910, N 11, էջ 320-321:



յանցի վկայակոչումը. «Այսորիկ գիւղօրայք հին են, և բնակիչքն (իմա՝ հայերը - Գ. Ս.) բնիկ շամախտեցիք...»¹: Հարցի վրա լուս է սփռում նաև շամախտեցի հասարակական գործիչ Ներսես Արելյանի ուսումնասիրությունում տեղ գտած տեղեկատվությունը. «Հայերը համարվում են Շիրվանի հին բնակիչների մի մասը: Նրանց այստեղ հայտնվելու ժամանակը վերաբերում է եթե ոչ X-XI դարերին, ապա ամենայն հավանականությամբ շատ ավելի վաղ ժամանակների»²: Համաձայն կովկասագետ Ն. Զեյդլիցի վկայության՝ «Շամախի քաղաքի շրջակայքում սփրոված հայկական բնակավայրերը ամենայն հավանականությամբ կազմում են միջին դարերում առավել մեծ քանակությամբ եղած բնակավայրերի մնացորդները»³: Շամախիի հայ բնակչության վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում նաև Եվլուացի մի շարք ճանապարհորդներ⁴: Այս աշումնվ ուշագրավ տեղեկություն է հաղորդում իտալացի դիվանագետ, Ճանապարհորդ ու վաճառական Ջոզեֆո Բարբարոն, որը 1471-1473 թթ. եղել է Վենետիկի դեսպանը Իրանի այդ ժամանակվա տիրակալ Ակ-Լոյունու Ուզուն-Հասանի արքունիքում: Վենետիկ վերադարձնալու ճանապարհին Բարբարոն Թավրիզից հետո լինում է - նաև Շամախիում: Նկարագրելով Շամախին՝ նա գրում է. «Գտնվում է դեպի Բագվի ծովը վեց օրվան ճանապարհ հեռու... Այս շատ լավ քաղաք է, ունի չորս հազարից հինգ հազար տուն եւ շինում է մետաքս, կտավ եւ ուրիշ բաներ իրենց եղանակով: Գտնվում է Մեծ Հայաստանում⁵, եւ բնակիչների մեծ մասը հայ են - (ընդգործումը - Գ. Ս.)»⁶: Ուշագրավ նաև անգլիացի ճանապարհորդ ու վաճառական Էնթոնի Ջենքինսոնի՝ Շամախիում 1563 թ. ապրիլի 10-ին եղած ժամանակ - կատարած գրառումներից հետևյալ հատվածը. «...այս քաղաքը (Շամախին - Գ. Ս.) ծովից ուղտով յոթ օրվան ճանապարհ հեռու է, բայց հիմա շատ ավերակ է, բնակեցված գլխավորապես հայերով... (ընդգործումը - Գ. Ս.)»⁷: 1780-ական թվա-

¹ Զալալեանց Ս., ճանապարհորդութիւն ի Սեծն Հայաստան, մասն Բ, Տիֆլիս, 1858, էջ 394:

² Экономический быт государственных крестьян Геокчауского и Шемахинского уездов Бакинской губернии, исследование Н. А. Абелова, «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», т. VI, ч. II, - Тифлис, 1887, с. 12.

³ Списки населенных местъ Россійскоу империи по Кавказскому краю, LXV, Бакинская губерния. Список населенныхъ местъ по сведениямъ 1859 по 1864 годъ. Состм. глав. ред. ком. Н. Зеидлицем, Тифлис, 1870, с. 93.

⁴ Տե՛ս Պոգոսյան Գ. (Խահբակյան), Արմանե Շամախ և սպասարկության առաջնային համայնքների պատմությունները, Երևան, 2013.

⁵ Ենթադրելի է, որ Զ. Բարբարոյին շփոթեցրել է Շամախի քաղաքում ստվար հայության առկայության հանգանանքը, ուստի քաղաքը ներկայացրել է Մեծ Հայքում:

⁶ Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ: Աղյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, հ. Ա, ԺԴ-Ժ դր., Երևան, 1932, էջ 199:

⁷ Նույն տեղում, էջ 372:



Կաններին Շամախի այցելած ֆրանսիացի ուղեգիր Լուի-Ֆրանսուա ֆերիեր-Սովոքը նույնպես վկայում էր, որ «Շամախիում բնակվում էին շատ հայեր»¹:

Աղբյուրները փաստում են, որ հայ բնակչությունն իր ուրույն դերակատարություն է ունեցել քաղաքի էրնումշակութային զարգացումներում և վաղ ժամանակներից ստեղծել է հոգևոր մշակութային անկրկնելի կողողներ²: Մատենագրական աղբյուրները փաստում են, որ միջնադարում Շամախին եղել է Երկրամասի հարուստ գրչօջախներից մեկը: Մշակութային այդ գործունեությունն իր շարունակությունն ունեցավ նաև հետագա ժամանակներում, եթե 1849 թ. բանաստեղծ Մովսես Չոհրապյանց Արցախեցին, Մարգար Ղուկասյանը և Մինաս Տարղիիշյանց Շամախիում հիմք դրեցին հայկական տպագրության գործը³:

Շամախին XIX դ. առաջին կեսին արդեն համարվում էր Արևելյան Այրկովկասի զարգացած և աչքի ընկնող առևտրական կենտրոններից մեկը և ապրում էր բավական աշխույժ տնտեսական ու մշակութային կյանքով: Քաղաքի կրթական, մշակութային, հասարակական-քաղաքական կյանքի և վաճառականության բնագավառներում հայ բնակչության դերի հետագա բարձրացման շնորհիվ, այն դիտվել է նաև իրու հայկական քաղաք: Պատոհական չէ, որ 1828 թվականին, եթե Ուստաստանը ստեղծում էր Հայկական մարզը, Լազարյաններն իրենց առաջադրած ծրագրով, հայկական մարզի սահմաններում ընդգրկել էին նաև պատմական Հայաստանից դուրս գտնվող Շամախին և Շաքին: «Շատ մարզեր,- ասված էր ծրագրում,- ինչպես հին Նախիջևանի, Երևանի, Ղարաբաղի, Շաքու և Շամախու մարզերը՝ էջմիածնի նախազահ վանքով կազմում են Հայաստանի վաղեմի թագավորության ընդհանուր կորիզը և գլխավոր հիմքը»⁴: 1832 թ. տվյալներով քաղաքում հայապատկան տների թիվը հասնում էր 279-ի⁵:

Ակնառու էր շամախահայերի դերը առևտրի, արդյունաբերության, մասնավորապես՝ մետաքսարելի արտադրության բնագավառում⁶: Շամախահայերն առաջնակարգ մասնակցություն ունեցան քաղաքի տնտեսության զարգացման գոր-

¹ L. F. Ferrières – Sauvebœf, Mémoires historiques, politiques et géographiques des voyages du comte de Ferrières – Sauvebœf, faits en Turquie, en Perse et en Arabie, depuis 1782 jusqu'en 1789, Tome première (t. 1), Maestricht, 1790, p. 228.

² Մանրամասն տես Կարապետյան Ս., Բուն Աղվանիքի հայերեն վիմագրերը, Երևան, 1997, էջ 52-60:

³ Մանրամասն տես Ստեփանյան Գ., Շամախի և Բաքու քաղաքների հայկական տպագրության պատմությունից: Հայկական տպագրությունը դարերի միջով (հոդվածների ժողովածու), Երևան, 2014, էջ 93-105

⁴ Դիլյան Վ., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989, էջ 308:

⁵ Տես Օբозрение российских владений на Кавказе (в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношенииях) (Талышинское ханство), СПб., 1836, ч. III (Ширванская провинция), с. 155.

⁶ Մանրամասն տես Ստեփանյան Գ., Շամախահայերի դերը Արևելյան Այրկովկասի առևտրատնտեսական հարաբերություններում (Հայաստանի քաղաքակրթական ավանդը մետաքսի ճանապարհի պատմության մեջ: Միջազգային գիտաժողովի նյութեր, 21-23 նոյեմբերի 2011, Երևան, 2012, էջ 198-218):



ծում, որի գրեթե ամբողջ կապիտալը գտնվում էր նրանց ձեռքին¹: Շամախիում լյան ճանչում ունեին Լալայան², Աղամյան, Քալանթարյան, Կածկաճյանց, Դոլուխանյանց, Ավշարյանց, Շահնազարյանց ազնվականական տոհմերը³:

Շամախի քաղաքի ազգաբնակչության բնական աճի Վրա խիստ բացասական ազդեցություն են թողել հաճախակի կրկնվող ավերիչ երկրաշարժերը: 1859 թ. տեղի ունեցած աղետակի երկրաշարժի պատճառով, նոյն թվականի վերջերին նահանգային կենտրոնական վարչությունը տեղափոխվում է Բաքու⁴, որի հետևանքով Շամախին աստիճանաբար կորցնում է երեսնի փառքը և նյութական բարեկեցությունը: Ավերումների և տնտեսական անկանան հետևանքով հազարավոր անգործ մնացած շամախահայեր թողնում են հայրենի եզերքը և գաղթում Բաքու: Եթե 1873 թ. ընտանեկան ցուցակների տվյալներով Շամախիի հայերի թիվը 5177 (2940 ար., 2237 իգ.) էր⁵. ապա 1897 թ. համառուսաստանյան ա-

¹ Տե՛ս Կերեպանով Պ., Ստատистическое описание Шемахинского губернис. Шемаха, Кавказский календарь на 1852 г., Тифлис, 1851, с. 428.

² Շամախի քաղաքի առևտորի, արդյունաբերության և հասարակական կյանքում հայ մելիքական տոհմերից առանձնահաստով դերակատարություն է ունեցել Լալայան գերդաստանը: Այդ գերդաստանի շառավիղներից Շամախիում և Բաքվում ծավալած իրենց բարերարությամբ հատկապես մեծ ճնշաչում էին ծեռք բերել Մարկոս թեկ Լալայանի որդի Պողոս թեկը և նրա 8 որդիները՝ Արանար, Հովհաննեսը, Ալբահը, Մարգարը, Գևորգը, Հակոբը և Կարապետը (տե՛ս Խ. աք. Ս. Խորեն ավ, թիվ. Միրզաքելյան], Կենսագրական ակնարկ շամախիցի Լալայանց ազնի տոհմի (տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 57, գ. 1, գ. 309, թ. 1-12): Լալայանները Շամախիում ունեն շրեն տներ, քարվանատներ, քաղաքի, քաղաքի գույք կավաճքներ որոնց քվում բարարաբնակ երկու ծանավոր գյուղ (Ղարաղալի, Արար Մարտի), ջրաղացներ, վարելատներ, արոտատներ, այգիներ, ամարանցներ, ծմեռանցներ, որսատեղեր և բազմաթիվ ծառաներ (Քաջքերումի Գ., Բազմամիլիոն ծառանգութիւն (տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, գ. 1, գ. 439, թ. 10):

³ Շամախին ծննդավայր է հայ մեծանուն մի շարք մտավորականների: Այդտեղ են ծնվել երկու քոյլերի գավակներ Ալ. Շիրվանզադեն, Հովհաննես Աբեյյանը և Վերջիններին մայրերի մորաբոց որդի Կոստան Զարյանը, գրականագետ, դրամատորգ և բարգմանի, Լայացիկի համալսարանը փիլիսոփայության դոկտորի աստիճանով ավարտած Սեղրակ Թառայանը, բանաստեղծ, արձակագիր Վահան Գալքիայանը, գեղեցկատես դերասանուիկ Եվգինե Սեբարը (1927 թ. նա Փարիզում հաղթող է ճանաչվել աշխարհի տարբեր երկների (ԱՄՆ, Գերմանիա, Անգլիա, Իտալիա, Հունաստան, Թուրքիա) միջև գեղեցկուիկ կինոդերասանուիու համար կայացած մրցույթում), պարուի, դերասանուի, գրող և գրականագետ, Իրանում ելքովական տիպի առաջին բարորդի հիմնադիր Սոֆիա Փիրբուղայանը, նոյն ինքը՝ Արմեն Օհանյանը, Ս. Պետրոսովի Գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ, Ուսուստանի Վիրորդ քաղաքի դպրոցներից մեկում 1892 թ. նկարչություն դասավանդած Ստեփան Ներսեսովը (Ներսեսյան, 1859-1894), Բարվում ճանաչված երդվյալ ատենակալ և փաստաբան Սահակ Տեր-Մտիվանյանց - Գուրգենյանը (Աղվանից) և շատ ուրիշ նշանավոր գործիչներ (տե՛ս Ստեփանյան Գ., Շամախի քաղաքի հայերի պատմությունից, էջ 42-43):

⁴ Տե՛ս Վесь Կавказ. Промышленность, торговля и сельское хозяйство Северного Кавказа и Закавказья. Составил и издал М. С. Шапшовиц, Баку, 1914, с. 21, տե՛ս նաև Ակտы, собранные Кавказскою археографическою комиссиюю, под ред. Ад. Берже, т. XII, Тифлис, 1904, с. 398.

⁵ Список населенных мест по сведениям 1873 г., Бакинская губерния. Состав. глав. редак-ак. комитета Н. Зейдлицем, Тифлис, 1879 (б. с.).



ռաջին մարդահամարի տվյալներով քաղաքն ուներ 2515 (1274 ար., 1241 ից.) հայ բնակչի¹:

* * *

Դպրոցը, աճող սերմդի կրթության և լուսավորության գործը նահանգի հայ բնակչության առաջնահերթ և իրատապ խնդիրն էր: Մահմեդական հոծ զանգվածով շրջապատված հայ բնակչության համար ուժացումից խուսափելու և ազգային ինքնագիտակցությունը պահպանելու գործում առավել մեծացել էր մայրենի լեզվով գործող դպրոցների դերը: Դրանում իր մեծ դերակատարությունն է ունեցել X դ. Վերջերին-XI դ. սկզբներին կազմավորված Շամախու հայոց թեմը (Երևանավի հնագույն անվանումով ավանդաբար կոչվել է նաև Շիրվանի թեմ): Սկզբնապես թեմի առաջնորդանիստ կենտրոնն էր Սաղիանի Սրբավանական Նախավկա վանքը, սակայն, հենվելով 1836 թ. մարտի 11-ի «Պոլութենիե»-ի սահմանած այն կարգի վրա, որով թեմական կենտրոնները պետք է տեղափոխվեին քաղաք, առաջնորդանիստը Սաղիանից տեղափոխվում է Շամախի, և տեղի Սրբավանական Նախավկա վանքում է մայր Եկեղեցի³:

Աներկրա է, որ շամախահայերը կրթական գործին շատ մեծ նշանակություն են տվել հենց սկզբից: Տակավին միջնադարից շամախահայերը ուսումնակրթական սերտ կապեր են ունեցել Սյունյաց մետրոպոլիտական Աթոռի հետ: Զեռագիր հիշատակարանի վկայության համաձայն՝ Հովհան Որոտնեցու մահվանից հետո (1382 թ.), երբ Տարեկի համալսարանը գլխավորում էր նրա աշակերտ Գրիգոր Տարեկացին (1346-1411 թթ.), Զուլայից, Թավրիզից, Սյունիքից և այլ վայրերից ուսանելու եկած 12 աշակերտներից մեկը, որի անունն էր Հովհան, Շամախից էր: Զեռագիր հիշատակարանում ասվում է. «Այլ մեք դարձուք ի վեր ի մեծ Գրիգոր Տարեկացին, որ ի Վրոդովնաց Վերին աշխարհին առեալ զաշակերտս իր Բժ (12)-ան... որ էին վարդապետը՝ Մխիթար Տարեկու, Յովհանէս ի Վանիցն Հերմոնի, Գալուստ ի Վաղընեցու, յունան ի Շամախու...»⁴: Այս վկայությունը մեկ այլ խմբագրությամբ տեղ է գտել նաև «Հայունավկուր»-ում, որտեղ Գրիգոր Տարեկացու և նրա աշակերտ Հովհանի մասին ասվում է. «Եւ ուներ ժողովեալ բազում աշակերտս՝ որոյեն Զուլայան ի Շամախու»⁵: Տակավին միջնադարից իրենց ազգաշահ գործունեությունն էին ծավալել Շամախուց ոչ հեռու գտնվող Սաղիանի Սրբավանական Նախավկա և Մեյսարի Սրբավանական Նախավկա վանքերն իրենց վա-

¹ Первая всеобщая перепись населения Российской империи, 1897, LXI. Бакинская губерния. под редакцией Н. А. Троицкого, СПб., 1905, т. 61, с. 1, тես նաև տաблица XIII, с. 53.

² Տես Ստեփանյան Գ., Շամախու հայոց թեմի սկզբնավորման հարցի շուրջ, ՀՊՃՀ (տարեկան գիտաժողովի նյութերի ժողովածով), Երևան, 2005, N 3, էջ 870-873:

³ Արիստակէս Եպս. Ստեփանյան, Հովհաննէս Եպիսկոպոս Շահիսարունեանցի կենսագրութիւնը, Ս. Պետերբուրգ, 1898, էջ 127-128:

⁴ Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. Բ, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 152:

⁵ Գիրք որ կոչի Յայսմատուք, ապրիլի ԻԵ, Կ. Պոլիս, 1730:



նական դպրոցներով, որոնք հայտնի էին որպես գրչության արգասավոր կենտրոններ¹:

Այսրկովկասը Ռուսաստանին միավորելուց հետո չնայած ցարիզմը վարում էր իրեն հպատակ ժողովուրուների գաղութացման և ուժացման քաղաքականություն, այդուհանդեռ ՀԽ դարի սկզբին և հաջորդ տասնամյակների ընթացքում սոցիալ-տնեսական վիճակի բարեկավմանը զուգընթաց կրթական գործի զարգացման համար համեմատաբար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին: Հոգևոր-մշակութային և կրթական կյանքի որոշ աշխատացում նկատվեց նաև Շամախու հայոց թեմում: Հարկ է նշել, որ նախքան հայկական դպրոցների բացումը, Շամախիում հայ երեխաներն իրենց ուսումը ստացել են արքունի կամ պետական ուսումնարաններում: Ցարական արքունիքի կողմից 1829 թ. օգոստոսի 2-ին հրապարակված «Անդրկովկասյան ուսումնարանների կանոնադրության» հիման վրա ուսումնարաններ բացվեցին նաև Շամախիում, Ղուբայում, Բաքվում և Դերբենդում²: 1838 թ. մայիսի 12-ին ուսումնարան է հիմնվում Շամախիում³, ուր 1858 թ. դրությամբ 144 սովորողներից հայ էր 81-ը⁴: 1866 թ. տվյալներով հայ աշակերտների թիվն արդեն 169 (117 ար., 52 իգ.) էր⁵: 1877 թ. Շամախիում Բաքվի-Դերբենդի տնօրինության հրավասության ներքո բացվում է քաղաքային երկրորդ ուսումնարանը, որտեղ 1895 թ. 138 աշակերտից հայ էր 86-ը (20 գյուղաբնակ, 66 քաղաքաբնակ)⁶: Ուսումնարանի գրադարանի 1343 անուն գրքից հայոց լեզվով գրքերի թիվը 24 էր⁷:

Քննվող ժամանակահատվածում Շամախի քաղաքում գործել են հայկական դպրոցի հետևյալ տիպերը՝ թեմական, ծխական և մասնավոր: Ըստ այդմ՝

ԹԵՍԱԿԱՆ (ԾԽԱԿԱՆ ԱՐՍԱԿԱՆ) ԴՊՌՈՑ-Այսրկովկասում թեմական դպրոցները կամ հոգևոր սեմիանրանները բացվեցին 1836 թ. մարտի 11-ի «Պոլուժենիե»-ի հիման վրա, ըստ որի յուրաքանչյուր ռուսահայոց թեմ պետք է ունենար իր թեմական դպրոցը: Ի տարրերություն ռուսահայոց այն թեմերի, որոնք նյութական գունվում էին առավել բարվոք վիճակում և կարձ ժամանակամիջոցում ստեղծվեցին թեմական հոգևոր դպրոցներ, Շամախու թեմում այդ գործընթացը տևականորեն ծգձգվեց: Հիմնական պատճառն այն էր, որ թեմը, գտնվելով նյութական սույն պայմանների մեջ, միջոցներ չէր կարողանում հայրայթել թեմական դպրոցի բացման համար: Ալ. Երիցյանի դիտարկմամբ. «Այդ միջոցներում շատ խեղճ ու անբարեկարգ էր նաև Շամախու կամ Շիրվանի թեմը: Այնտեղ էլ կոնսիստորիան

¹ Մանրամասն տես՝ Ստեփանյան Գ., Շամախու Հայոց թեմի Սաղիանի Ս. Ստեփանոս Նախավկա վանքի պատմությունը, Երևան, 2007, տես՝ նաև նոյեմբեր՝ Շամախու Հայոց թեմի Սէլյարիի Սր. Աստուածածնի վանքի պատմությունից, «Հայկագեան Հայագիտական հանդէս», Պէյրութ, 2009, էջ 351-357

² Տես՝ Սանրբույան Մ. Արևելահայ դպրոցը ՀԽ դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 36-37:

³ Տես՝ նոյեմբեր՝ տեղում:

⁴ Տես՝ նոյեմբեր՝ տեղում, էջ 62:

⁵ Տես՝ «Փորձ», Տփիսի, Ա տարի, 1876, էջ 156:

⁶ Տես՝ Օписование города Шемаха. Составиль С. П. Зелинский, Тифлис, 1896, с. 25.

⁷ Տես՝ նոյեմբեր՝ տեղում:



միայն անունով գոյութիւն ունէր»¹: Թեև 1838 թ. թեմական իշխանության կողմից դպրոցի համար արդեն Վարձվել էր շենք, սակայն համապատասխան ուսուցիչների բացակայության պատճառով դպրոցի բացումը հետաձգվեց մինչև 1840 թ., երբ գտնում են 2 ուսուցիչ²: Արևելահայ դպրոցի XIX դարի առաջին կեսի պատմությունն ուսումնասիրած Մ. Սանթրոսյանի դիտարկմամբ. «Ծանախու թեմական հոգևոր դպրոցը բացվեց և սկսեց գործել որպես ոչ այնքան էլ բարեկարգ և կարգավորված տարրական եկեղեցական դպրոց՝ իր հետագա գոյության տարիներին լավագույն դեպքում բարձրանալով վիճակային հոգևոր դպրոցի մակարդակին»³: Դպրոցը սակայն կարձատու կյանք է ունեցել: Միջոցների անբավարարության պատճառով այն գործեց մինչև 1842 թ.⁴: Էջմիածնի Սինոդի՝ 1842 թ. փետրվարի 2-ի նիստում ընթերցվում է Ծանախու թեմի կրոստորիայի հայտարարությունը՝ «միջոցների պակասության պատճառով թեմում հոգևոր ճեմարան բացելու անհնարության մասին»⁵:

Թեմական դպրոցի վերաբացումը տեղի է ունենում 1844 թ. մայիսի 28-ին (այլ աղյուրների տվյալներով՝ 1843թ.) թեմի առաջնորդ Մատթևոս Եպս. Վեհապետյանի (Երևանցի, 1841 թ. հունիսի 18-1847 թ.) ջանքերով և եկեղեցական մարդիների ու բնակչության հայթայթած միջոցներով⁶: Նկատենք, որ թեև դպրոցը կրում էր թեմական անունը, սակայն աննպաստ պայմանների թելադրանքով այն չբարձրացավ ծխականի մակարդակից: Դպրոցն ունեցել է հոգաբարձուների խորհուրդ, որի նախագահը դպրոցական կանոնադրության համաձայն ծխական քահանան էր: Դպրոցի ուսումնական վարչությունը բաղկացած էր մեկ ավագ և երեք ուսուցիչներից⁷: Դպրոցում ավանդվել են հայերեն և ռուսերեն ընթերցանություն, վայելչագրություն, թերականություն, ճարտասանություն, երգեցողություն, թվաբանություն, պատմություն, աշխարհագրություն և սրբազն պատմություն⁸: Հետագայում նույնական դասավանդվել են այդ առարկաները: 1846 թ. տվյալներով դպրոցն ունեցել է 30 աշակերտ⁹:

Հիմնադրումից ի վեր դպրոցը գործել է նյութական ծանր պայմաններում: Ուստի թեմի առաջնորդ Մատթևոս Եպիսկոպոսը դրամական ամփոփեց օգնության համար պարբերաբար դիմել է Էջմիածնի Սինոդին: Սակայն Էջմիածնից

¹ Երիցեանց Ալ., Ամենայն Հայոց Կարողիկոսութիւնը եւ Կովկասի Հայք XIX դարում, մասն Բ, Թիֆլիս, 1895, էջ 477:

² Տե՛ս Սանթրոսյան Մ. նշվ. աշխ., էջ 283:

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, ց. 7, գ. 516, թ. 647-648:

⁵ Սանթրոսյան Մ. նշվ. աշխ., էջ 283:

⁶ Տե՛ս Ղուկասեանց Հ., Բողոքականութիւն Կովկասու Հայոց մէջ (պատմական նիւթեր), Թիֆլիս, 1886, էջ 44:

⁷ Տե՛ս Սմբատեանց Մ., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ոլստատեղեաց եւս եւ քաղաքացն եւ գիտօրէից որք ի Ծանախուց թեմի, Տփիսի, 1896, էջ 296:

⁸ Տե՛ս Յանիկանց Ս. Ա. Առաքելյան Հայոց պատմությունը և այլ պատմություններ, մասն Ա. Առաքելյան, էջ 26:

⁹ Տե՛ս Սանթրոսյան Մ. նշվ. աշխ., էջ 284:



դրամական օգնություն ստանալու բոլոր փորձերն ապարդյուն են անցել: Կամավոր նվիրատվությունների գումարը երեք տարվա ընթացքում ընդամենը կազմել է 947 թ.¹: Զախողիք են նաև աշակերտներից ուսման վարձ հավաքելու փորձերը, իմշի հետևանքով շատ աշակերտներ հեռացել են դպրոցից²: Դպրոցը թեև գտնվում էր ծայրաստիճան վատրար պայմաններում, այսուհանդերձ այն շարունակել է իր կենսագործունեությունը և փակվել է 1851 թ.³:

Դպրոցի գործունեության երկրորդ շրջանը սկսվում է 1858 թ.⁴ Էջմիածնի Սինոդի 1857 թ. նոյեմբերի 8-ի հրամանով՝ «ծխական հոգևոր ուսումնարան» անվանք⁵: Ազգագրագետ, պատմաբան ու տնտեսագետ, երկրագործության նախարարության պաշտոնյա Ստեփան Զելինսկին (Մկրտչյան) Շամախի քաղաքի համայուն նկարագրության մեջ նոյն թվականի դրույթյամբ դպրոցը նշում է ոչ որպես թեմական, այլ՝ երկրասյա Եկեղեցական-ծխական⁶: Դպրոցի գործունեությունը որոշակի կանոնակազմված հիմքի վրա է դրել թեմի առաջնորդ Դանիել արքեպոս: Շահնազարյանցը (Տարոնեցի, 1863-1868 թթ.): Թեմակալի նախաձեռնությամբ առաջին անգամ կազմվել է դպրոցի կանոնադրությունը, ընտրվել են հոգաբարձուներ, հրավիրվել են համապատասխան ուսուցիչներ, սկսել են կանոնավոր գործել դպրոցի հաշվապահական գործառույթները և այլն⁷:

Դպրոցը պահվել է Եկեղեցական հասույթներով, «Բաքվի Հայոց Մարդասիրական ընկերության» նպաստով, ծխականների և մասնավոր անձաց նվիրատվություններով⁸: Դպրոցին պարբերաբար նվիրատվություններ են կատարել բարերարներ Մարգարա Կաճկաճյանցը, Գևորգ Բեկ-Ներսիսյանցը, թիֆլիսեցի մեծահարուստ Անտոն Ղորղանյանը⁹ և այլք: Դպրոցին 1866 թ. 251 թ. չափով օգնություն էր հատկացրել նաև Աստրախանի հայոց թեմի հայությունը¹⁰:

Դանիել արքեպոս: Շահնազարյանցին հաջորդած Անդրեաս արքեպոս. Անդրեասյանը (Պոլսեցի, 1869-1874 թթ.) 1870 թ. նպատակադրվում է ծխական դպրոցը Վերածել թեմականի: Այդ նպատակով թեմակալը դրամական հանգանակություն է կատարում Բաքու, Ղերբենդ և Ղուբա քաղաքների հայերի շրջանում¹¹: 1870 թ. մի խումբ հայ բարերարների կողմից դպրոցի շենքում հիմնվում է քաղաքի երկսեռ դպրոցների գործարանը, որի ցուցանակի վրա գրված էր.

¹ Տե՛ս նոյեն տեղում:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, գ. 15, գ. 221, թ. 362-363:

³ Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի իմստիտուտ-Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 124, վավ. 359, տե՛ս նաև Սանքտպուտ Մ. նշվ. աշխ., էջ 284:

⁴ Խուդոյան Մ., Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ. (ժամանակագրությունը հավելյալ մանրամասներով), Երևան, 1987, էջ 459:

⁵ Տե՛ս Սանքտպուտ Մ. նշվ. աշխ., էջ 284:

⁶ Տե՛ս Յանիկսկու Հ., նշվ. աշխ., շ. 26.

⁷ Տե՛ս Ղուկասեանն Հ., նշվ. աշխ., էջ 103:

⁸ Տե՛ս «Արարատ», 1876, Ն Գ, էջ 117, տե՛ս նաև Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 296-297:

⁹ Տե՛ս «Արարատ», 1870, Ն ԺԱ, էջ 307:

¹⁰ Տե՛ս նոյեն տեղում:

¹¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, գ. 2, գ. 1921, թ. 74:



«Եսնուսուեա արմանական դպրության վայրից»¹: Գրադարանը կարճ ժամանակամիջոցում այնքան է բարգավաճում և հարստանում նորանոր գրքերով, որ «...նոյն իսկ քաղաքային դպրոցի (որ ուներ բաւականին հարուստ գրատուն) ուսուցիչների նախանձն էր շարժում»²: Գրադարանը նեկավարել է գրադարանապետը: Գրքերը կնքվել են երկու դպրոցների և գրատուն կնիքներով: Գրադարանն ունեցել է նաև իր ընթերցարանը³: Անշուշտ, գրադարանի առկայությունը մեծապես նպաստել է ուսումնական գործի արդյունավետության բարձրացմանը:

Անդրեաս արքեպիս. Անդրեասյանի՝ Հայոց կաթողիկոս Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցուն ներկայացված գեկուցագրում ասվում է, որ 1873 թ. դպրոցն ունեցել է 73 աշակերտ, իսկ արդեն 1874 թ.՝ 7 ուսուցիչ, 124 աշակերտ⁴: 1877 թ. ուսուցիչների թիվը նվազել է՝ հասնելով 3-ի, իսկ աշակերտներին՝ 79-ի⁵: 1881 թ. դպրոցի շինության այրվելու պատճառով դասերն անցկացվել են առաջնորդարանի վերնահարկում⁶: Դպրոցը գործել է ծանր և սուր պայմաններում ուստի և չի կարողացել բարձրանալ ծխականի մակարդակից: 1885 թ. դպրոցը փակվել է⁷ և վերաբացվել է 1886 թ., որից հետո դպրոցը պաշտոնապես դասվել է ծխական դպրոցների շարքին և շարունակել է գոյություն ունենալ թեմի աղքատիկ եկամուտների հաշվին⁸: 1888-89 ուստարված վիճակագրական տեղեկագրում դպրոցը նշված է ոչ որպես թեմական, այլ «Տղայոց երկանայան ուսումնարան»⁹: Այսինքն ուներ հնգամյա դասընթաց: Հաջորդ՝ 1889-90 թթ. ուստարում դպրոցն ուներ 80 աշակերտ, որից 47-ը՝ վճարովի, 33-ը՝ ծիր հիմունքներով¹⁰: Ըստ սոցիալական կազմի 1-ը եղել է հոգևորականի, 6-ը՝ աստիճանավորի, 3-ը՝ ազնվականի, 36-ը՝ վաճառականի, 30-ը՝ արհեստավորի, 4-ը՝ հողագործի ընտանիքից¹¹: Նույն ուստարում դպրոցում դասավանդել և տքնածան աշխատանքով դպրոցի վերելքին իրենց լուսան են ներդրել բազմամյա մանկավարժներ Կարապետ սրբ:

¹ Տե՛ս Գրասէր [Գարեգին Լևոնյան], Ծամախի: Գրադարանի խնդիրը, «Արձագանք», Թիֆլիս, 1894, յոնիսի 3 (15), N 62:

² Նույն տեղում:

³ Տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 296:

⁴ Տե՛ս «Լայրոց», Վաղարշապատ, 1875-1876, N 4, էջ 134:

⁵ Տե՛ս «Արարատ», 1878, N ԺԱ-ԺԲ, էջ 455:

⁶ Տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 297:

⁷ Տե՛ս Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԶ: Կարապետ եպիսկոպոս Տեր-Սլուտչեան (1866-1915): Փաստաթթերի եւ նիւթերի ժողովածու, Երևան, 2006, էջ 405:

⁸ Տե՛ս Երկանյան Վ., Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870-1905), Երևան, 1970, էջ 54:

⁹ Տե՛ս Վիճակագրական տեղեկութիւնը եկեղեցական-ծխական ուսումնարանաց Հայոց, յընթաց 1887-88 ուսումնական ամի, Վաղարշապատ, 1889, էջ 113, տե՛ս նաև Ծամախուց, «Նոր Դար», Թիֆլիս, 1891, յոնիարի 15, N 6:

¹⁰ Տե՛ս Վիճակագրական տեղեկութիւնը եկեղեցական-ծխական ուսումնարանաց Հայոց, յընթաց 1889-98 ուսումնական ամի, Վաղարշապատ, 1891, էջ 102, տե՛ս նաև Քարիստարեանց Մ., նշվ. աշխ., էջ 162:

¹¹ Տե՛ս Վիճակագրական տեղեկութիւնը եկեղեցական-ծխական ուսումնարանաց Հայոց, յընթաց 1889-98 ուսումնական ամի, էջ 102:



Տեր-Հովհաննես (Կրոն և երգեցողություն: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան Ճեմարանը), Ալեքսանդր Շավարշյանցը (հայոց լեզու, բնագիտություն և թվաբանություն: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան Ճեմարանը), Պատվական Հովհաննեսյանցը (հայոց լեզու և թվաբանություն: Ավարտել է Արցախի թեմական դպրոցը), Աստվածատուր Աստվածատուրյանցը (ռուսաց լեզու: Ավարտել է Մոսկվայի Լազարյան Ճեմարանը), Արանաս Եգանյանցը (հայոց լեզու և թվաբանություն: Ավարտել է Երուսաղեմի ժառանագավորաց դպրոցը)¹ և Խ. Փանյանցը²: Կարապետ սրբ. Տեր-Հովհաննեսի տարեկան աշխատավարձը կազմել է 450 ռ., իսկ մյուսներինը՝ 400 ռ.³:

1895 թ. դպրոցը դարձայ փակվել է⁴: Թեմի առաջնորդ Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի (1887 թ. հունվարի 23-1894 թ. հունիսի) նախաձեռնությամբ և ատենադպիր Աբրահամ բեկ-Շահվերդյանցի օժանդակությամբ ու հակողությամբ դպրոցի նախկին տեղում 1890 թ. կառուցվում է նոր շենքը⁵: Այդ տարիներին դպրոցի գրադարանն ունեցել է 6 ձեռագիր և 450 հայերեն և ռուսերեն տպագիր գրքեր⁶: Տարբեր տարիներին թեմական դպրոցին նվիրատվություններ են կատարել բարերարներ Կարապետ Լալայանցը, Կարապետ Քալանթարյանցը, Նիկոլայ Կաճկաճյանցը, Բաղդասար Նազարյանցը և Մարտիրոս Միրզաքելյանցը⁷: Դպրոցին կտակով նյութական միջոցներ է տրամադրել (300 ռ.) Բաքվի Սր. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցու ավ. քին. Թաղեսոս Բուդայանցը⁸, և շամախեցի Աղաբարա Լալայանը (2000 ռ.)⁹: Ի դեպ, վերջինիս կտակում մնացած 5000 ռուբլով կտակակատար Լալայանները մտադիր են եղել Շամախու հին Եկեղեցու ավերակների տեղում հիմնել հայոց դպրոց¹⁰:

Հետագա ժամանակներում, երբ դպրոցը հայտնվել էր նյութական անմիտիար վիճակում, Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը ծրագրում է դպրոցը Շամախուց տեղափոխել Բաքու և այդտեղ բացել թեմական նոր դպրոց, որի մասին 1893 թ. դեկտեմբերի 20-ին գրությամբ հայտնել է Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանցուն: Մտավախություն ունենալով, որ Շամախուց և հարակից գյուղերի երեխսաները ի վիճակի չեն լինելու գալ Բաքու, խնդիրն այդպես էլ մնում է առկախ: 1895 թ. դրությամբ դպրոցն ունեցել է 5 ուսուցիչ: 127 աշակերտ¹¹: Նույն թվականին

¹ Տե՛ս նոյեն տեղում:

² Տե՛ս Գրասէր [Գրաեգին Լևոնյան], Շամախի: Գրադարանի խնդիրը, «Արձագանք», Թիֆլիս, 1894, յունիսի 3 (15), N 62:

³ Տե՛ս Վիճակագրական տեղեկութիւնը Եկեղեցական-ծխական ուսումնարանաց Հայոց, յընթացս 1889-98 ուսումնական ամի, էջ 102:

⁴ Տե՛ս Վավերագրեր հայ Եկեղեցու պատմության, գիրք ԺԶ, էջ 405:

⁵ Տե՛ս Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 297:

⁶ Տե՛ս նոյեն տեղում, էջ 296:

⁷ Տե՛ս «Արարատ», 1871, N Ե, էջ 52:

⁸ Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1885, հուլիսի 21, N 3, էջ 38:

⁹ Տե՛ս նոյեն տեղում:

¹⁰ Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1893, փետրվարի 5 (7), N 15:

¹¹ Տե՛ս Յուսիսկու Ս., նշվ. աշխ., c. 26.



դպրոցի գրադարանն ուներ 1323 կտոր գիրք, որից հայերեն՝ 853, ռուսերեն՝ 464, այլ լեզուներով՝ 6¹: 1896 թ. դպրոցը դարձալ փակվել է².

Ստահոգ դպրոցի վերաբացմամբ, Մկրտիչ Ա Վանեցին 1896 թ. հոկտեմբերի 27-ի կընդակով դիմում է Բարձի հայ մեծահարուստներին և ակնկալում վերջին նյութական աջակցությունը³: Կաթողիկոսը մտադրվել էր դպրոցը վերաբացել որպես թենական և այն Շամախուց տեղափոխել Բաքու: 1896 թ. Դպրոցի վերաբացման աշխատանքները կազմակերպելու նպատակով կաթողիկոսի հրահանգով Բաքու է մեկնում Եկեղեցական-կրթական գործի եռանդուն գործիչ Խորեն եպս. Ստեփանեն: Այդ աշխատով շամախահայերը 400-ից ավել ստորագրությամբ նամակ են հղում կաթողիկոսին՝ խնդրելով դպրոցը բացել ոչ թե Բաքվում, այլ Շամախիում: Նամակում ասվում էր. «Ամենիս սրտագին բաղձանքն է մեր ճգնաժամի օրերուն գեթ քացված տեսնել Շամախում մեր միակ միսիրարյուս ու ապավեն թենական դպրանոցը հենց տարբույս սեպտեմբերից սկսած»⁴: Ի դեպ, թենական դպրոցը Շամախուց Բաքու տեղափոխելու խնդիրն այդ օրերին լայն քննարկման առարկա էր դարձել նաև մամուլում: Հասարակական գործիչ Ավ. Արասխանյանցը գտնում էր, որ դպրոցը Շամախուց աեսոք է տեղափոխվի Բաքու՝ այդ քայլը պայմանավորելով այն հանգամանքով, որ խիստ նվազել էր Շամախի և Գյոքչա գավառներ հայ աշակերտների թիվը, այնինչ Բաքվում կարող էին սովորել նաև այդտեղ հաստատված շամախեցի և գյոքչայեցի երեխաներ: «Ինչ է Շամախու հասարակութիւնը, գրում էր Ավ. Արախանյանցը, - եթէ ոչ մի յետամնաց ժողովուրդ, որի ամենակենդանի ոյժերի առաջին գործ է լինում թողնել այդ քաղաքը և հաստատուել Բաքրում: Ինչ ունի Շամախու հայ հասարակութիւնը, համեմատութեամբ Բաքրի»⁵: Վերաբացվող թենական դպրոցը Շամախուց Բաքու տեղափոխելը նպատակահարմար է համարել նաև Ալ. Շիրվանզադեն⁶: Արաջ անցնելով՝ նշենք, որ դպրոցի՝ Բաքու տեղափոխման հարցը լայն քննարկման առարկա է դարձել նաև հետագա ժամանակներում՝ թեմի առաջնորդ Կարապետ եպս. Տեր-Սկրտչյանի (1914 թ. մարտի 31-1915 թ. նոյեմբերի 19) օրոք⁷, ընդհուպ նաև 1917 թ.⁸ թեմի հաջորդ առաջնորդ Բագրատ եպս. Վարդագարյանի (1916 թ. նոյեմբերի 24-1920 թ.) օրոք: Հարկ է նշել, որ թենական

¹ Տե՛ս նոյեն տեղում:

² Տե՛ս Խուլյան Ա., նշվ. աշխ., էջ 458:

³ Տե՛ս Արասխանեանց Ա., Նոր թենական դպրանցների խնդիրը, «Մուրճ», 1896, N 10-11, էջ 1386, տե՛ս նաև «Մշակ», Թիֆլիս, նոյեմբերի 9, 1896, N 128:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, գ. 3, գ. 350, թ. 65-66, տե՛ս նաև Արասխանեանց Ա., Նոր թենական դպրանցների խնդիրը, «Մուրճ», 1896, N 10-11, էջ 1386, տե՛ս նաև Երկանյան Վ., նշվ. աշխ., էջ 213:

⁵ Արասխանեանց Ա., Նոր թենական դպրանցների խնդիրը, «Մուրճ», Թիֆլիս, 1896, N 10-11, էջ 1386:

⁶ Տե՛ս «Տարագ», Թիֆլիս, 1896, N 46, էջ 726-727:

⁷ Տե՛ս Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԶ, էջ 382-387:

⁸ Տե՛ս Գարագաշ Ա., Շամախեցիների ժողովը առաջնորդաբանում, «Մշակ», Թիֆլիս, 1917, մարտի 12 N 54:



դպրոցի բացումը Բաքվում խափանվեց ցարական իշխանությունների կողմից: Այդ տարիներին դպրոցական կյանքի որոշ աշխուժացումը և հայ ժողովրդի առաջադիմության և լուսավորության ձգտումը ռուս պաշտոնյանների պրտով չեն: Գ. Գոլիցինի կառավարչապետության տարիներին նոր ուժընությամբ որսարդվեց հայերին դավանափոխելու քաղաքականությունը¹: Ուստի, 1896 թ. դեկտեմբերի 19-ին ներքին գործոց նախարար է Գորեմիկինը առանց պատճառները հայտնելու Սկրտիչ Ա Վանեցուն հայտնում է, որ «ներկայում ծայր աստիճան աննպատակահարմար է թեմական դպրոցի բացումը ...»²:

Դպրոցը վերաբացելու և այն թեմական աստիճանի բարձրացնելու ուղղությամբ քայլեր է ձեռնարկել նաև Շամախու թեմի առաջնորդ Կարապետ Եպս. Այվազյանը (1896 դեկտեմբերի 20-1898): Թեմակալի կողմից 1898 թ. կազմվում է դպրոցի ծրագիրը և ներկայացվում Էջմիածնի Սինոդին, որպեսզի վերջինս ներկայացնի կառավարությանը՝ ի հաստատում: Մկրտիչ Ա Վանեցին, շարունակելով թեմական դպրոցի վերաբացման ուղղությամբ ծավալած բուռն գործունեությունը, 1899 թ. փետրվարի 24-ին թիվ 267 կոնդակով շտապ կարգով ներկայացրել է «Բարձրագոյն հաստատութեան Շամախու թեմական դպրանոցի կանոնադրութիւնը», սակայն, քանի դեռ ծխական դպրոցները մնում էին փակված վիճակում, թեմական դպրոցի բացումը մնում էր անորոշության մեջ³:

Շամախիում ծխական դպրոցն առաջնորդարանի շենքում վերաբացվեց միայն 1905 թ.⁴ Ա և Բ դասարաններով, իբրև՝ «սկզբնավորութիւն ապագայ թեմ. [ական] դպրանոցի»:

Ամփոփելով նշենք, որ այդպես էլ թեմական աստիճանի չբարձրացված Շամախու արական ծխական դպրոցը թեմի կրթամշակութային կյանքում յուրովի դերակատարություն է ունեցել: Այստեղ են սկզբնական կրթություն ստացել և թեմում հետագայում հոգևոր ծառայության անցել մեծ թվով քահանաներ և եկեղեցական-ծխական դպրոցների ուսուցիչներ⁵:

Սբ. ՍԱՆԴԻՏՅԱՆ ՕՐԻԿՐՈՂ ԵՐԿՐՈՍՅԱՆ ԴՊՐՈՑ-Հարկ է նշել, որ ուսումնական գործում շամախահայերը մեծ տեղ են հատկացրել նաև աղջիկների կրթության հարցերին: Այդ է վկայում Շամախուց Հովհ. Միրզաբեկյանի «Արարատ» անսագրին տված մի հաղորդման հետևյալ հատվածը. «Յուսալի է ևս Շա-

¹ Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես- XIX դարի վերջ), Երևան, 2010, էջ 599

² Երկանյան Վ., նշվ. աշխ., էջ 214:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, գ. 2, գ. 1921, թ. 75:

⁴ Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԶ, էջ 353: Թեմի առաջնորդ Կարապետ Եպս. Տեր-Սկրտչյանի՝ Էջմիածնի Սինոդին 1914 թ. սեպտեմբերի 14-ին հղած գրությունից պարզվում է, որ դպրոցը դեռևս չէր վերածվել թեմականի (տե՛ս նոյն տեղում, էջ 367-368): 1917 թ. դրությամբ շարունակում էր գործել որպես եկեղեցական-ծխական դպրոց (տե՛ս Քօնեան 3., Շամախի, «Հորիզոն», Թիֆլիս, 1917, փետրվարի 24, N 40):

⁵ Շամախու հայոց թեմական դպրոցի հանգամանալից քննությունը տե՛ս Ստեփանյան Գ., Համառոտ ակնարկ Շամախու թեմական դպրոցի պատմությունից (XIX դ.-X դ. սկիզբ): Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), հ. 7, Երևան, 2006, էջ 67-74:



մախույ հայ ժողովուրդից, որ պետք է զբաղվի ժամանակիս պահանջման համեմատ ուշադրութեան արժանաւոր այն հասարակաց խնդրոյն, որ կվերաբերի իրանց օրիորդական ուսումնարանին, անտարակոյս լինելով, թէ՝ պատրաստելու է նա ողջախոհ, և զաւակաց բարոյապէս և բնականապէս օգուտը և վնասը ճանաչող Աստուածապաշտուիթեամբ սնուած մայրեր»¹:

Շամախիում իգական դպրոցը հիմնվել է 1867 թ. (այլ աղբյուրներով՝ 1869 թ.²)՝ թեմի առաջնորդ Դանիել արքեպոս. Շահնազարյանցի (Տարոնեցի, 1863-1868) օրոք³: Դպրոցը տեղափորված է Եղեկ Եկեղեցապատկան սեփական տներից մեկում⁴: Դպրոցի ուսումնական վարչությունը բաղկացած էր մեկ ավագ և Երեք ուսուցչուիկներից⁵: Ի դեպ, ստեղծվող իգական դպրոցները մեծ մասամբ Եկեղեցական-ծխական էին, արականից մի փոքր ավելի սեղմված ծրագրով, որտեղ ավանդություն էին նաև հատուկ առարկաներ⁶: Այդտեղ ավանդվել են կրոն, հայոց պատմություն, աշխարհագրություն և բնագիտություն, գծագրություն, ռուսաց լեզու, թվաբանություն, ազգային և Եկեղեցական երգեցողություն, հայոց և ռուսաց Վայելչագրություն և Ճեռագործություն⁷: Բացված տարում դպրոցն ունեցել է ընդամենը 12 աշակերտ⁸: 1868 թ. դպրոցը նյութական անհրաժեշտ միջոցների բացակայության պատճառով գտնվել է վատրար պայմաններում: Դպրոցին նյութական անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու նպատակով Շամախու թեմի հաջորդ առաջնորդ Անդրեաս արքեպոս. Անդրեասյանը (Պոլսեցի, 1869-1874) 1869 թ. հունիսի 22-ին Շամախու թեմական դպրոցի դահլիճում տեղի հասարակության ներկայացնության մասնակցությամբ հրավիրում է ժողով, որը և որոշվում է Շամախիում կազմակերպել մի ընկերություն, որը պետք է նյութապես ապահովեր իգական ուսումնարանի գոյությունը: Ինչպես ասվում է «Արարատ» ամսագրում. «...անցեալ 1869 թուականում բացեց (Անդրեաս արքեպոս. Անդրեասյանը, - Գ. Ս.) մի թեթև և դիրիխ եղանակ ժողովրեան ձեռնատու և նպաստածություն լինելու յիշեալ դպրոցին, որով ինքեանք աւելի ծանրութիւն չզգալով կարողանան գէթ գոյութեան մէջ պահել իրանց ուսումնարանը-իրանց լուսաւորութեան արիթր»⁹:

Ընկերության կանոնադրության 1-ին կետի համաձայն հանգանակված գումարը պետք է լիներ 3 ռ. արծաթից ոչ պակաս, 2-րդ կետով հանգանակվող գումարը պետք է Վճարվեր դպրոցի հոգաբարձության միջոցով՝ կանխիկ կամ 4-րդ ամսի վերջում, 3-րդ կետով յուրաքանչյուր հանգանակող դպրոցի հոգաբարձության կողմից ստանում է ապահովագիր, և վերջին՝ 4-րդ կետով՝ ընկերության

¹ «Արարատ», 1870, N Բ, էջ 277:

² Տե՛ս Յելիսեակ Ա. Ա. աշխ., ս. 26.

³ Տե՛ս «Մելոյ Հայաստանի», Թիֆլիս, Խոկտեմբերի 1, 1869, N 47, էջ 330-331:

⁴ Տե՛ս Յելիսեակ Ա. Ա. աշխ., ս. 26.

⁵ Տե՛ս Սմբատեան Ա. Ա. աշխ., էջ 296:

⁶ Տե՛ս Երկանյան Վ. Վ. աշխ., էջ 51:

⁷ Տե՛ս «Արարատ», 1876, N Գ, էջ 117:

⁸ Տե՛ս Խուդոյան Ա. Ա. աշխ., էջ 459:

⁹ Տե՛ս «Արարատ», 1870, N Բ, էջ 276:



անդամները պարտավորվում էին կանոնադրությունը կատարել սրբորեն և անխախտ¹: Դպրոցի՝ 1873-1874 թթ. հաշվետվությունից երևում է, որ հիշյալ ընկերությունը ունեցել է 7 անփոփոխ անդամ, 30՝ տարեկան անդամ և 24՝ խնամակալ կանայք: Միաժամանակ սահմանված է եղել, որ անփոփոխ անդամները պարտավոր էին դպրոցի օգտին մուտք 100-ական ռուբլի, իսկ տարեկան անդամները՝ յուրաքանչյուր տարի 10-ական ռուբլի, խնամակալ տիկնայք՝ տարեկան 5-ական ռուբլի²: «Արարատ» ամսագրում հարատարակված ցուցակից հետևում է, որ 1870 թ. փետրվարի 7-ի տվյալներով դպրոցի օգտին հանգանակել է ին 89 հոգի, իսկ հանգանակված գումարը կազմել է 521 ռ.³: Տարեցտարի հանգանակված գումարներով հնարավոր է եղել ապահովել դպրոցի ուսումնական բնականոն գործընթացը: Դպրոցն ունեցել է նաև իր եղածախումբը, որի ղեկավարն էր Բաղդասար սարկավագը⁴: 1873 թ. դպրոցն ունեցել է մեկ նախապատրաստական և մեկ առաջին դասարան, 4 ուսուցիչ, 41 աշակերտ⁵: 1874 թ. աշակերտների թիվը աճել է՝ հասնելով 61-ի, դրան հակառակ 2-ով նվազել է ուսուցիչների թիվը⁶: Նոյյն թվականի տվյալներում դպրոցի նախնական դասարանն ունեցել է 1 ուսուցիչ, 65 աշակերտ⁷: 1875 թ. աշակերտների թիվը դարձյալ նվազել է՝ հասնելով 58-ի, ուսուցիչների թիվը մնացել է նոյնը՝ 2 հոգի⁸: 1877 թ. դպրոցն ուներ 4 ուսուցիչ, սակայն նվազել էր աշակերտների թիվը՝ հասնելով 53-ի⁹: Դպրոցը չի ունեցել իր սեփական գրադարանը և օգտվել է թեմական դպրոցի գրադարանից¹⁰:

Դպրոցի շենքի խարխուր լինելու պատճառով Շամախուր թեմի առաջնորդ Թադևոս արքեպոս. Ջյունականը (1876-1880 թթ.) 1879 թ. ձեռնարկում է նոր շինության աշխատանքերը: Թեմակալի միջնորդությամբ գավառապետ Ստարցև հատկացնում է շինության համար նոր հողատարածք: Դպրոցի կառուցմանը նյութապես աջակցել են Համազասպ Վրդ. Համազասպյանցը, դպրոցի վերակացու և հոգաբարձու Հովհաննես Խալաֆյանցը¹¹, շամախեցի մեծահարուստ Պավել Շամիրի Մելիք-Բեգավարյանցը, Լալայան Եղբայրները և Քալանքարյանները¹²: Դպրոցի նոր շինության աշխատանքներն ավարտվել են 1880 թ.¹³:

¹ Տե՛ս նոյյն տեղում, էջ 277:

² Տե՛ս Խուլդյան Ա., նշվ. աշխ., էջ 459:

³ Տե՛ս «Արարատ», 1870, N Բ, էջ 277-278:

⁴ Տե՛ս «Արարատ», 1870, N Բ, էջ 283:

⁵ Տե՛ս «Արարատ», 1873, N Ե, էջ 189-190:

⁶ Տե՛ս «Արարատ», 1874, N Դ, էջ 147:

⁷ Տե՛ս նոյյն տեղում:

⁸ Տե՛ս «Արարատ», 1875, N Բ, էջ 155:

⁹ Տե՛ս «Արարատ», 1878, N ԺԱ-ԺԲ, էջ 455:

¹⁰ Տե՛ս Յունիկս Ս., նշվ. աշխ., շ. 26.

¹¹ Տե՛ս Սմբատեանց Ա., նշվ. աշխ., էջ 297:

¹² Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1880, օգոստոսի 27, N 149:

¹³ Տե՛ս Սմբատեանց Ա., նշվ. աշխ., էջ 297:



1885 թ. դպրոցն արդեն երկրայա էր: Սակայն նոյն թվականին դպրոցը փակվել է և Վերաբացվել է 1886 թվականին: 1889-90 թթ. ուս. տարում դպրոցն ուներ 49 աշակերտ, որից 46-ը՝ վճարովի, 3-ը՝ ծրի հիմունքներով¹: Ըստ սոցիալական կազմի 4-ը եղել է աստիճանավորի, 3-ը՝ ազնվականի, 27-ը՝ վաճառականի, 14-ը՝ արհեստավորի, 1-ը՝ հողագործի ընտանիքից²: Օրիորդաց դպրոցում դասավանդել են արական դպրոցի ուսուցիչները: 1889-90 թթ. ուս. տարում թե՛ արական և թե՛ իգական դպրոցները միասին ունեցել են 1 ավագ ուսուցիչ, 4 ուսուցիչ և 1 վարժուիկ³: 1895 թ. աշակերտների թվուն արդեն հասնում էր 78-ի⁴: Դպրոցը պահպել է Եկեղեցական հասույթներով, ծխականների և մասնավոր անձաց նվիրատվություններով, թատրոնական ներկայացումներից ստացված գումարներով, աշակերտուիկների ծեռագործ աշխատանքների վաճառքով և «Բաքվի Հայոց Մարդասիրական ընկերության» նպաստով⁵: Ընդհանուր առմամբ, 1887-1895 թթ. ընթացքում «Բաքվի Հայոց Մարդասիրական ընկերությունը» դպրոցին տարեկան տրամադրել էր 1500 ռ. օգնություն⁶: 1895 թ. դպրոցն ունեցել է 78 աշակերտ, 1 ուսուցչուիկ և թեմական դպրոցի 3 ուսուցիչ⁷: 1896 թ. դպրոցը դարձյալ փակվել է: Վերաբացվել է միայն 10 տարի անց՝ 1905 թ.⁸:

ՀԱՅ ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆՆԵՐԻ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՌՈՑ-ՀԻՄՆՎԵԼ Է 1881 թ. Ծամախու թեմական դպրոցին կից, տեղի դպրոցի ուսուցիչ և տեսուչ Ա. Գալստյանի դեկավարությամբ: Այդտեղ շաբաթը երեք անգամ հանրության համար դասսախոսություններով հանդես են Եկել թեմական դպրոցի ուսուցիչները: Դպրոցը գործել է Երկու տարի:

Ծամախիի հայ բնակչության կրթական կյանքում ոչ պակաս կարևոր դեր են խաղացել նաև մասնավոր դպրոցները, որտեղ հիմնականում սովորեցնում էին տառաձանաչություն, գրել, կարդալ և մի քանի շարականներ: Այսրկովկասի քաղաքացիական իշխանությունների՝ 1834 թ. կազմած մասնավոր դպրոցների ցուցակում նշվում է, որ Ծամախին ունեցել է 8 հայկական դպրոց՝ 8 ուսուցիչ և 83 աշակերտ¹⁰: Մասնավոր դպրոցները Ծամախիում գործել են մինչև 1834 թ. և փակ-

¹ Տե՛ս Վիճակագրական տեղեկութիւնը Եկեղեցական-ծխական ուսումնարանաց Հայոց, յընթաց 1889-98 ուսումնական ամի, էջ 102, տե՛ս նաև Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 162:

² Տե՛ս Վիճակագրական տեղեկութիւնը Եկեղեցական-ծխական ուսումնարանաց Հայոց, յընթաց 1889-98 ուսումնական ամի, էջ 102:

³ Տե՛ս Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 162:

⁴ Տե՛ս Կրամկան ստորագրական ուսումնարանաց Հայոց, յընթաց 1889-98 ուսումնական ամի, էջ 102, տե՛ս նաև Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 162:

⁵ Տե՛ս «Արարատ», 1876, N 4, էջ 117, տե՛ս նաև Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 296-297:

⁶ Տե՛ս Կրամկան ստորագրական ուսումնարանաց Հայոց, յընթաց 1889-98 ուսումնական ամի, էջ 102:

⁷ Տե՛ս Յանիկ Հայոց պատմությունը, մաս 1, էջ 26:

⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, գ. 3, գ. 572, թ. 4:

⁹ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1882, հունիսի 9, N 101:

¹⁰ Տե՛ս Սամբրոսյան Մ., նշվ. աշխ., էջ 282:



Վել Այսրկովկասի կառավարչապետ Ի. Պասկվիչի կարգադրությամբ¹: Կասպիական մարզի վարչության՝ 1842 թ. օգոստոսի 14-ի՝ Վրաստանի կառավարչապետին ուղղված գեկուցագրում ասվում է, որ Շամախի քաղաքում գործում էր հայկական 1 մասնավոր դպրոց՝ 20 աշակերտով²: Աղբյուրներում սակավ տեղեկություններ են պահպանվել 60-70-ական թվականներին Շամախիում գործած հետևյալ երկու դպրոցների մասին:

ՏԵՐ-ԱՎԱՍԵՍԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱԾ-ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՄՈՒՅԳ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՆ ՊԱՀՊԱՆՎԵԼ: Հայտնի է, որ մեկ տարի՝ 1866 թ. այդ ուսումնարանում է սովորել Ալ. Շիրվանզադեն, ապա տեղափոխվել թենական դպրոց, ուր այդ ժամանակ դասավանդում էր Գասպար Վարժապետը³: Սակայն Շիրվանզադեն այստեղ էլ երկար չի մնում. հրո հորոդրով մտնում է ռուսական գավառական երկրասյան դպրոցը⁴: Գրողն «Իմ կյանքից» հուշերում հետևյալ ուշագրավ նկարագրությունն է թողել կիսագրագետ Տեր-Ավանեսի և նրա դպրոցի մասին: «Դա (Տեր-Ավանեսը - Գ. Ս.) մի հասարակ զյուղացի էր եղել, եկել էր մեր քաղաքը, գրել կարդալ սովորել և եկեղեցում տիրացու դարձել: Թե ինչպես էր քահանա ձեռնադրվել, աստված գիտե: Գլխավորն այն է, որ ինքը հազիվհազ ավետարանը կարդալ գիտեր, ուսումնարան էր բաց արել և դաս էլ էր տալիս մեզ, ամեն մեկցս վերցնելով ամիսը մի ռուբլի:

Եվ ինչ դաս, «այր, մե, ճե, ռա, թեն, ինի, մեն, սե» և այլն, բայց այն էլ ասեմ, որ մեծ աշակերտուները կարդում էին սաղմոսագիրք, ավետարան, ավելի ուսյալները՝ աստվածաշունչ, մինչև անգամ ձարտասանություն:... Տեր-Ավանեսի ուսումնարանում սեղաններ չկային, մենք նստում էինք հատակի վրա ծալապատիկ»⁵: Դպրոցի հետագա գործունեության վերաբերյալ այլ տեղեկություններ մեզ հայտնի չեն:

ՀԱՅՅԱԼ ՎԱՐԺԱՊԵՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱԾ-ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՄՈՒՅԳ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՆ ՊԱՀՊԱՆՎԵԼ: Հայտնի է միայն, որ այն գործել է 1860-ական թվականներին, Հայքալ անունով Վարժապետի տան կից սենյակներից մեկում⁶: Այդ դպրոցում կարճ ժամանակով ուսանել է ապագա մեծ դերասան Հովհաննես Աբելյանը, ում հուշերում ասվում է. «Նա (Հայքալ Վարժապետը - Գ. Ս.) հաստատել էր ուսումնարանը իր բնակարանին կից սենյակներից մէկում, ուր գետնին շարան-շարան նստուում էին աշակերտները, իրանց տանից բերած կապերտի կտորների վրայ»⁷: Դպրոցի հետագա գործունեության այլ տեղեկություններ մեզ հայտնի չեն:

¹ Տե՛ս նոյն տեղում, էջ 283:

² Տե՛ս նոյն տեղում:

³ Տե՛ս Հիմն բուղթեր: Նիւթեր Շիրվանզադի մասին, «Վէմ», Փարիզ, 1935, Դ-տարի, սեպտեմբեր-դեկտեմբեր, թիւ 4, ԺԲ, էջ 90:

⁴ Տե՛ս Շիրվանզադե, Խմ կյանքից, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1959, էջ 167, 181, տե՛ս նաև Շիրվանզադե, Կյանքի բովից, Երկերի հինգ հատորով, հ. 5, Երևան, 1988, էջ 11:

⁵ Նոյն տեղում, էջ 167, 171:

⁶ Տե՛ս Մելիքսեթյան Ս., Հովհաննես Աբելյան: Կյանքը գործունեությունը, Երևան, 1954, էջ 10:

⁷ Մարդաբան Ֆ., Յովհաննես Աբելյան (Կենսագրական տեղեկություններ), Թիֆլիս, 1907, էջ 2:



Նշենք, որ թե՛ Տեր-Ավանեսի և թե՛ Հաքյալ Վարժապետի դպրոցները աչքի են ընկել դաստիարակության իրենց խստաբար օրենքներով: Այս դպրոցներում գործում էին ծեծը և ֆալախսկայի «զորությունը»¹: Հովհ. Աբելյանը Հաքյալ Վարժապետի «Դաստիարակչական» գործումներության վերաբերյալ թողել է հետևյալ վկայությունը. «Ոչ, նա բաւականանում էր՝ ճիպոտի և երբեմն էլ իր չիբուխի գգաւանքներով: Իսկ, եթէ հարկը պահանջում էր մի այնպիսի պատիժ տալ, որ «օրինակ» լինէր աշակերտութեան, երևան էր գալիս ահա՝ «օրինուած» ֆալախսկան»²:

Ամփոփելով նշենք, որ վերոնշյալ դպրոցներն իրենց գործումներությամբ նշանակալի դեր են կատարել Շամախի քաղաքի հայ բնակչության կրթամշակութային կյանքի զարգացման ուղղությամբ և հատկապես մատաղ սերնդի դաստիարակության գործում:

Ամփոփում

Աղբյուրները վկայում են, որ Շամախի քաղաքի հայ բնակչությունը կարեւոր ու յուրահատուկ դերակատարություն է ունեցել քաղաքի Եթումշակութային զարգացման մեջ:

Շամախի հայկական եկեղեցական - ծխական դպրոցը հիմնադրվել է 1840 թ.: Սբ. Սանդուղյանի դպրոցը հիմնադրվել է 1867 թվականին: Այս դպրոցները մեծ դեր էր խաղացել շամախահայության կրթական եւ մշակութային կյանքի զարգացման գործում:

Из истории армянских школ города Шамахи (XIX в.)

Г. Степанян
д.и.н., профессор
Резюме

Эти источники свидетельствуют о том, что местное армянское население города Шамахи сыграло важную и уникальную роль в этнокультурном развитии города.

Армянская религиозно-приходская школа Шамахи была основана в 1840 году. Школа Св. Сандхтян для девочек была основана в 1867 году. Эти школы внесли большой вклад в развитие образовательной и культурной жизни армян Шамахи.

¹Տե՛ս Շիրվանզադե, Իմ կյանքից, ԵԺ, հ. 5, էջ 167, 171:

²Մարդաբան Ֆ., նշվ. աշխ., էջ 3:



**From the History of Armenian Schools of the city of Shamakhi
(XIX century)
G. Stepanyan
Doctor of Historical Sciences, Professor
Summary**

The sources testify that the local native Armenian population of Shamakhi played an important and unique role in the ethnic-cultural development of the town.

The Armenian religious-parish school of Shamakhi was established in 1840. The St. Sandukhtyan school for girls was established in 1867. These schools greatly contributed to the development of the education and cultural life of the Armenians of Shamakhi.



**ՎԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱԳՈՒԹՅԱՆ ԵՎ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀՐՄԵՎՈՐՄԱՆ ՃԵՎ
Ավետիս Հարությունյան
պ. գ.թ.
ՀՊԱՀ-ի Հայոց պատմության ամբիոնի դոցենտ**

Բանալի բառեր՝ Վանի շրջանային վարչությունն, երաշխիք, Հասարակական կարգ, հայկական Վգունդ, Լևոն Շաղոյանը, Վանի ոստիկանություն, Գրիգոր Բուղարացին

Անցնելով իշխանության գլուխ, Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությունն իր տարածքային սեփականությունը հրչակեց Կովկասյան ռազմաճակատում պատերազմի իրավունքով Օսմանյան կայսրությունից գրավված շրջանները, ուստի և գերադասեց դրանց անմիջական կառավարումը հանձնել իր տեղական իշխանությանը՝ Անդրկովկասյան հաստոկ կոմիտեին, որը պետք է կարգ հաստատեր «ոչ միայն Անդրկովկասում, այլև տնօրիներ այդ վայրերի քաղաքացիական կառավարում»¹:

Զանքերի գնով Պետրոգրադի կենտրոնական իշխանության հսկողության տակ հաջողվեց կազմել Հայաստանի համար մասնակիր մի վարչություն, որի կենտրոնն էր Թիֆլիսը: Մինչև 1917 թ. օգոստոս այն իր մասնաճյուղերն ուներ Վանում, Կարինում, Երզնկայում, Բայազետում և Տրավիզոնում²:

Ստեղծված նոր իրադրության պայմաններում ինքնաբերաբար առաջ է գալիս Վանում տեղական դեկավար նոր մարմնի ստեղծման անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով, որ նոր մարմնի ստեղծումը անպատեհություն կարող էր առաջացնել հայկական ընկերությունների շրջանում, որոնք ճանաչված էին և ունեին դրամական միջոցներ, ընկերությունների ներկայացուցիչների հետ համատեղ, քաղաքապետի և Դանիել Վարդապետի մասնակցությամբ, 1917 թ. մայիսի սկզբներին կազմվում է 8 հոգուց բաղկացած ժողովրդական ներկայացուցչական առժամյա դեկավար մի մարմին՝ Շրջանային վարչություն՝ ժամանակավոր Վարիչ մարմին և որի կազմի մեջ մտնում են քաղաքապետը, դաշնակցական ու սահմանադիր-ռամկավար ազատական կուսակցությունների ներկայացուցիչներ՝ Կ. Համբարձումյանը (նախագահ), բժիշկ Տեր-Թովմասյանը, Գր. Օհանջանյանը (քարեգրոծականի Վանի

¹ Борьба за победу Советской власти в Грузии, Документы и материалы, Тбилиси, 1958, с.8.

² Թեոդիկ, Ամենուն Տարեցույցը, Ժ-ԺԴ տարի, 1916-1920, Կ.Պոլիս, 1920, էջ 109:



լիազոր), Ա. Մաքսապէտյանը, Գր. Խղդաթյանը, Ս. Հյուս-Փանովյանը, Ս. Մեսրոպյանը և Բ. Կապուտիկյանը (Կապոցիկյան)¹:

1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո նորաստեղծ այդ մարմինը դատնում է Վանի Հայկական իշխանության՝ երկրորդ կառավարության կորիզը:

Ղեկավար այդ նոր մարմին նախագահ՝ Վանի նախանգային կոմիսար է ընտրվում «Համառուսաստանյան Քաղաքների միության» Կովկասյան բաժանմունքի Վանի լիազոր Կոստյա Համբարձումյանը՝ «Մեր Կոստին»², որը Ս. Օրմանյանի դիակով բնորշմամբ «Կասպուրականի երկրորդ նրիմեանն էր...»³, կամ ինչպես նրան կոչում էին մի նոր Արմենակ Եկարյան, մարդ, որը «հոգով ու սրտով նուիրուած է Վասպուրականի վերաշնուրեան գործին ...մի անձնաւորութիւն է, որ Վանի շրջանային վարչութեան ոգին կը կազմէ, նրա զիսաւոր զարկերակն է»⁴:

Շրջանային վարչությունն իրականացնում է մի շաբթ ձեռնարկումներ, որոնք Վանում իրոք դատնում են ապահով և ինքնուրույն կյանքի երաշխիքը:

Հասարակական կարգի և անվտանգության պահպանման, իշխանությունների օրինական կարգադրություններն ի կատար ածելու, ինչպես նաև հայկական V զնդին օժանդակելու համար 1917 թ. մայիսին, ժողովրդական նոր կառավարության հետ միասին, Վանում հիմնադրվում է ոստիկանական մարմին՝ Վանի մարզային միլիցիա⁵, որը ղեկավարում էին Լսոն Շաղոյանը և Գրիգոր Բուղդարացին⁶ (Ըստ Եղիշե Վարդանյանի՝ Լ. Շաղոյանը և Տիգրան Բաղդասարյանը⁷):

Ոստիկանության ստեղծումը կենսական հարց էր, որը քննարկվում էր պաշտոնական և անպաշտոն պատասխանառու անձանց կողմից: Այն անհրաժեշտ էր երկրամասը ավագակային և մարդաշնչ հարձակումներից պաշտպանելու համար:

Անհնարին էր Վանում շոշափելի գործ կատարել, ստեղծագործական աշխատանք իրականացնել, վարչական կազմակերպություն ստեղծել, օգնություն իրականացնել բնակչության ֆիզիկական և տնտեսական գոյությունը պահպանել՝ առանց ոստիկանական ուժեղ կազմակերպության:

¹ «Արև», Բարու, 1917 թ. ապրիլի 11, թիվ 71, նաև Վասպուրական. 1915-1930, էջ 101, նաև «Աշխատանք», Վան, 1917 թ. մայիսի 13, թիվ 4:

² «Հայաստան», Թիֆլիս, 1917 թ. թիվ 92:

³ Օրմանեան արք. Ս., Թուրքահայ աղետը. պատմական փաստաթղթեր, Ս. Տեղեկագիր, Էջմիածին, 1919, էջ 37:

⁴ «Արև», Բարու, 1917 թ. հուլիսի 15, թիվ 145:

⁵ Հարությունյան Ա., Ցարական և Ժամանակավոր կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նվաճված տերիտորիայում 1915-1917թթ., ԲՀԱ, 1971 թ., թիվ 3, էջ 72:

⁶ Վրացեան Ա., Հայաստանի հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 62:

⁷ Վարդանեան Ե., «Նահանջ Բյուրոց» Վասպուրականի, Բոստոն, 1920, էջ 7:



Ուստիկանության անհրաժեշտության տեսանկյունից, Վասպուրականը, որը գտնվում էր ռազմաճակատի հարևանությամբ, շարունակական և սպառնացող վտանգի տակ, ուներ բացադիկ նշանակություն:

Փետրվարյան հեղափոխության սկզբից եներ Արևմտյան Հայաստանի նախկին բոլոր ուսումնական պահությունները հեռացվեցին գրավված մարզերից, որի արդյունքում նախկին 3.000 ռազմա-ուսումնական պահակախմբի փոխարեն մնաց 1000-ից պակաս ոստիկան:

1917 թ. օգոստոսի 31-ին գեներալ-կոմիսար Պ. Ավերյանովը Ժամանակավոր կառավարությանն է ներկայացնում պատերազմի իրավունքով գրավված Թուրքահայաստանի և Թուրքիայի այլ մարզերի ռազմատարիկանական պահպանությունը վերակազմակերպելու և Թուրքահայաստանում մարզային ու քաղաքային միլիցիա (ոստիկանություն) ստեղծելու մասին գեկուցագիր ու կանոնադրության նախագիծ, որտեղ մատնանշվում էր, որ պետության շահերը պահանջում էին ամեն կերպ ամրապնդել Կովկասյան բանակի թիկունքը, իսկ դրա համար անհրաժեշտ էր Թուրքիայից գրավված մարզերում ստեղծել կիսառազմականացված ոստիկանություն²: Ժողովրդական ոստիկանության ջոկատների գլխավոր խնդիրն էր ապահովել տեղի բնակչության անվտանգությունը տարրեր տեսակի ավազակախմբերից, որոնք նաև հանդգում էին հարձակվել ռուսական գործերի պահեստների, տրանսպորտի և փոքրաթիվ ստորաբաժանումների վրա:³ Նախատեսվում էր բազմաքանակ ու լավ վարձատրվող ոստիկանություն ստեղծել Վանի, Խնուրակի, Էրզրումի ու Պոնտոսի մարզերում: Վանի մարզն ընդգրկում էր Վանի նախկին վիլայեթը՝ նրա հին թուրքական սահմաններով, Բայազետի և Դիառինի օկրուզները՝ մինչև Թիշլի-չայ գետից արևմուտք: Այդ սահմաններում Վանի մարզը ներառում էր 52.000 երկսեռ բնակչից: Ավազակային ասպատակությունների տեսանկյունից մարզը գտնվում էր թուրքական և պարսկական Քրդստանի հարևանությամբ, որն առանձնահատուկ իրավիճակ էր ստեղծում⁴: Մարզի ոստիկանությունը պետք է լիներ հետևակային և հեծյալ՝ զինված ժամանակակից գենքով: Նախատեսվում էր ստեղծել զորամասերի կանոններով գործող 4 տեսակի՝

¹ Հարությունյան Ա., Ցարական և Ժամանակավոր կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նվաճված տերիտորիայում 1915-1917թթ., ԲՀԱ, 1971 թ., թիվ 3, էջ 65:

² Հարությունյան Ա., Ցարական եվ ժամանակավոր կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նվաճված տերիտորիայում 1915-1917 թթ., ԲՀԱ, 1971 թ. թիվ 3, էջ 64-71:

³ Ստեփանյան Մ., Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը Առաջին աշխարհամարտի և Հայոց ցեղասպանության ժամանակաշրջանում, Երևան, 2005, էջ 111:

⁴ Հարությունյան Ա., Ցարական եվ ժամանակավոր կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նվաճված տերիտորիայում 1915-1917 թթ., ԲՀԱ, 1971 թ. թիվ 3, էջ 67:



տեղական անվտանգության, հադրդակցության ուղիների, ուղեկալային և պահեստային (ռեզերվային) ոստիկանություն¹:

Դրան հաջորդում է ուսուների կողմից պատերազմի իրավունքով գրավված Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի այլ մարզերի մարզային և քաղաքային ոստիկանության ժամանակավոր կանոնադրության նախագիծը, ըստ որի հասարակական կարգի և անվտանգության պահպանման, ինչպես նաև իշխանությունների օրինական կարգադրությունների ի կատար ածելու համար, յուրաքանչյուր մարզում իմմանում էր մարզային, իսկ մի քանի ավելի բնակեցված քաղաքներում՝ քաղաքային ոստիկանություն²:

Վանի հայկական ոստիկանության վարչությունը Վանը չորս շրջանների բաժանելուց հետո, իր ուշադրությունը բնեղում է զավաները: Վարչությունը ձեռնարկում է կազմել ձիավոր և հետևակ ոստիկանական խմբեր՝ Հայոց-Զորի, Թիմարի, Արձակի, Սարայի և Բերկրիի շրջանների համար: Սակայն, զենքի և դրամի սակագության պատճառով, վարչությունն ի վիճակի չեր ավելացնել ոստիկանների թիվը³:

Իրականում ոստիկանների թիվը հասնում էր 154 հոգու, որոնցից 70-ը՝ ձիավորներ էին: Նրանք ստանում էին 60-120 ռուբ. աշխատավարձ⁴: Ըստ Էրեբյան Վասպուրականը կարիք էր զգում 800 սպառազեն և 700 պահեստային ոստիկանների⁵: Ոստիկանության թվաքանակը շատացնելու համար ռամկավարները 1917 թ. սեպտեմբերին Շրջանային վարչությանն առաջարկեցին պարտադիր զինվորագրության հարցը: Սակայն, հակառակ ինդրի կարևորությանը և տրված բացատրություններին, առաջարկը մերժվեց դաշնակցության կողմից: Այդ մասին Հմայակ Մանուկյանը գրում է՝ «Դաշնակցութիւն որ քան տարրան յեղափոխական անցեալ ունի, Դաշնակցութիւն՝ որու հետ է ամբողջ ժողովուրդը, այնքան դիրք եւ այնքան հմայք ունի, որ բաւական է որ ան դիմէ ժողովրդեան, ու դուք պիտի տեսներ շուտով այնքան միլիցիա արձանագրուողներ պիտի լինին, որ մենք ի վիճակի չախտի ըլլանք բոլորին կարիքը հոգալու»⁶:

¹ ԱԳԲԱ ԲՓ, ֆ. 366, օպ. 1, ձ. 93, լ. 155, ֆ. 2003, օպ. 4, ձ. 19, լլ. 179-186, նաև Արգումանյան Մ.Վ., Ժամանակավոր կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նկատմամբ և մյուս մերկացումը բոլշևիկյան կուսակցության կողմից, ԲՀԱ, 1967, թիվ 2, էջ 118:

² Հարությունյան Ա., Ցարական եւ ժամանակավոր կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանի նվաճված տերիտորիայում 1915-1917 թթ., ԲՀԱ, 1971 թ. թիվ 3, էջ 72-82:

³ «Արև», Բարու, 1917 թ. մայիսի 24, թիվ 106:

⁴ «Հորիզոն», Թիֆլիս, 1917 թ. օգոստոսի 29, թիվ 184:

⁵ «Հորիզոն», Թիֆլիս, 1917 թ. օգոստոսի 29, թիվ 184:

⁶ Վարդանեան Ե., «Նահանջ Բյուրոց» Վասպուրականի, էջ 7:



Սակայն, երեքուկես ամավա փորձառությունից հետո, Շրջանային վարչությունը և նոյն ինքը՝ Հ. Մանուկյանը համոզվեց, որ իրենք սխալվել են որ տեղական ուժերով կամավոր ոստիկաններ արձանագրելով անհնար էր բավարար թվով ոստիկաններ հավաքագրել տարածաշրջանը վերահսկելու համար՝ նամանավանդ, որ դրսից որևէ օժանդակության հոյս չկա:

Միայն 1917 թ. դեկտեմբերի կեսերին Շրջանային վարչությունը ստիպված եղավ քվեարկելու պարտադիր գինվորագրության օրենքը¹:

Միջոցների տղության պատճառով, կառավարությունը տվել էր շատ քիչ քանակությամբ զենք և է ավելի քիչ քանակությամբ փամփուշտներ: Ոստիկանների կեսից ավելին կամ կրում էին ատրճանակներ, կամ է զենք չունեին: Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության հրահանգների համաձայն, ոստիկաններն աշխատավարձ պիտի ստանային նախկին ստրաժնիկների և գրադավոյների չափ, այսինքն՝ հետևակը՝ 35 ռուբ., հեծելազորը՝ 70 ռուբ.: Սակայն առաջին երկու ամիսների համար ոստիկանների ստացած աշխատավարձը ներկայացնում էր հետևյալ պատկերը. հետևակ՝ 60-ական ռուբ., ձիավորներ՝ 75-ական ռուբ., խմբավետների օգնականներ՝ 80-ական ռուբ., խմբապետներ՝ 100-ական ռուբ.: Երրորդ ամսվա համար շրջանային վարչությունը կատարեց աշխատավարձերի բարձրացում, որը ներկայացնում էր հետևյալ պատկերը՝ հետևակ՝ 80 ռուբ., ձիավորներ՝ 100 ռուբ., խմբապետներ՝ 120 ռուբ.: Երեք ամսվա ընթացքում Շրջանային վարչությունը ոստիկանական վարչության վրա ծախսել էր 33.600 ռուբ., որից 10.000-ը՝ տեղական միջոցներից²: Թեև ոստիկանությանը հրահանգված էր ոչչի չխառնվել, սակայն նա իրականացնում էր կամայականություններ և բռնագրավկուներ³:

Այդուհանդեռձ, Վանի ոստիկանությունը կարձ ժամանակում, իր օգտակարությունը ցույց տվեց: Այն սանձահարեց անօրինական գինի և օղի վաճառողներին, արգելեց պղինձ, երկար, կաշի և այլ նյութեր արտահանել Պարսկաստան, իսկ որոշ անսաստներին էլ բանսուարկեց⁴:

Քիչ չէին նաև թուրք գինվորների գերևարության դեպքերը, որոնց պատմածով թուրքերի հիմնական ուժերի թվաքանակը Վանի մերձակայքում տատանվում էր 600-700-ի սահմաններում: «Ասոնց դրութիւնը յուսահատական է, թեթև յարձակումով ասոնք բոլորն ալ կամ անձնատուր պիտի լինին, կամ իրենց շունչը Պիթլիս պիտի առնեն»⁵:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո թե՝ արևմտահայերը և թե՝ արևելահայերն աշխատում էին ունենալ միասնական հայկական գորամասեր, այսինքն, ցրված վաշտերն ու գումարտակները վերածել գնդերի և ապահովել իրենց

¹ Վարդանեան Ե., «Նահանջ Բյուրոց» Վասպուրականի, էջ 8:

² «Հորիփոն», Թիֆլիս, 1917թ. օգոստոսի 29, թիվ 184:

³ «Արև», Բաքու, 1917 թ. ապրիլի 7, թիվ 69:

⁴ «Արև», Բաքու, 1917 թ. մայիսի 24, թիվ 106:

⁵ «Արև», Բաքու, 1917 թ. հուլիսի 15, թիվ 145:



անվտանգությունը։ Այդ ուղղությամբ հայերի ցանկությունը տալիս է իր դրական արդյունքը։ Ժամանակավոր կառավարության նախարարի 1917 թ. հունիսի 2-ի հրամանագրով հայկական ցաք ու ցրիվ վաշտերն ու գումարտակները վերածվում են վեց զների։ Երեք հրահանգիչների օգնությամբ միջոցներ ձեռնարկվեցին նաև Վանի երիտասարդներին գինվրական պատրաստվածություն տալու և գենք կրելու համար՝ հարձակման և նահանջի դեպքում բանակին օժանդակելու և քաղաքապահ գորքի դեր կատարելու ուղղությամբ¹։ Այդ նպատակով անցկացվեց ցուցակագրություն և առանձնացվեցին 3 հրահանգիչներ²։

Այսպիսով, Վան-Վասպուրականը վերաշինվում էր, «յարութիւն էր առնում մոխիրների տակից³։ Վերաշինության գործին լծկած մարդիկ աշխատում և ճգնում էին օգտակար ու շինարար գործեր կատարել և պատրաստվում էին ապրել նոր կյանքով։ Վասպուրականցին՝ քաղաքացին, զյուղացին, կոսակցական գործիչը և թե պաշտոնյան, հանդէս բերեց զարմանալի կենսունակություն և ձեռներեցություն՝ վերակառուցելու և վերակենդանացնելու կիսավեր և քարուքանդ դարձած իրենց անշափ սիրելի Վասպուրականը։ Ամենատաժանելի պայմաններում վասպուրականցին պահեց իր հոգեկան արիությունը, իր ձեռքը վերցրեց սեփական ձակատագրի տնօրինումը և կազմակերպեց իր հավաքական կյանքը։

Ամփոփում

Ստեղծված նոր իրադրության պայմաններում Վանի շրջանային վարչությունն իրականացնում է մի շարք ձեռնարկումներ, որոնք Վանում իրոք դառնում են ապահով և ինքնուրույն կյանքի երաշխիքը։

Հասարակական կարգի և անվտանգության պահպանման, իշխանությունների օրինական կարգադրություններն ի կատար ածելու, ինչպես նաև հայկական V զնիին օժանդակելու համար 1917 թ. մայիսին, ժողովրդական նոր կառավարության հետ միասին, Վանում հիմնադրվում է ոստիկանական մարտին՝ Վանի մարզային միլիցիա, որը դեկավարում էին Լևոն Շաղոյանը և Գրիգոր Բուղդարացին։

Այդուհանդեռձ, Վանի ոստիկանությունը կարձ ժամանակում, իր օգտակարությունը ցույց տվեց։

¹ «Արև», Բարու, 1917 թ. հոկտեմբերի 7, թիվ 211:

² «Արև», Բարու, 1917 թ. հոկտեմբերի 7, թիվ 211:

³ Վրացեան Ա., Հայաստանի հանրապետութիւն, էջ 24:



**Van's Regional Administration and Security Functions as a Form of
Manifestation of Statehood**

A. Harurunyan

PhD Assistant of Historical Sciences, ASPU after Kh. Abovyan

Summary

Key words: *district department of Van, guarantee, independent life, V Regiment, Levon Shaghoyan, police to Van, Grigor the Bulgarian.*

The district department of Van is creating a bunch of undertakings, which will guarantee a possibility of living a safe and independent life.

In the May of 1917, to provide public order and security, lawful execution of orders, and, as well as, to support the V Regiment, a regional police force was set up leaded by police authorities Levon Shaghoyan and Grigor the Bulgarian (Grigor Bulgharaci.)

Great measures were taken in Van to give weapons and military training to young people. In case of an attack, the soldiers would retreat in the direction of supporting the army and playing the role of the city's safe-keepers and guardians. List writings were held for that purpose, and three instructors were separated.

**Региональные администрации и функции безопасности Вана как форма
проявления государственности**

А. Арутюнян

к. и. н., доцент АГПУ им. Х. Абояна

Резюме

Ключевые слова: *районное управление Вана , гарантирование, общественный порядок, армянский V полк, Левон Шагоян, полиция Вана, Григор Болгарский*

Районное управление Вана осуществило ряд мероприятий, направленных на гарантирование безопасной и независимой жизни. Для обеспечения общественного порядка и безопасности, исполнение государственных законов, а также в целях поддержки армянского V полка, в мае 1917 года была создана областная полиция во главе с Левоном Шагояном и Григором Болгарским (Григор Булгарац). В короткие сроки полиция Вана показала свое значение.



**ԱՐՅԱՆԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ և
ԲԱՐԲԱՌԸ ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Արմեն Սարգսյան

*Ք. գ. թ., դոցենտ, ԼՀՀ կրթության, գիտության և սպորտի
նախարարություն*

Բանալի բառեր- ազգագրություն, բանահյուսություն, բարբառ, ուսումնասիրություն, հողված, քաղաք, զյուղ, ընտանիք, հարսանիք, թաղում, ավանդություն:

Հայ մշակույթի պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Ստեփան Լիսիցյանը: Առանձնապես կարեռվում են նրա ազգագրական ուսումնասիրություններն ու տասնամյակների ընթացքում հարյուրավոր բնակավայրերից գրառած հարուստ նյութերը, ինչը լուրջ հիմք դարձավ գիտության այդ բնագավառի մի շարք հիմնախնդիրների լուծման համար¹: Նշանավոր գիտնականի ուշադրությունից անմասն չմնաց Արցախը, որի ազգագրական բազմակողմանի քննությունն է ներկայացված անհիմն պատճառներով տասնամյակներ շարունակ ձգձգվելուց հետո² տպագրված «Լեռնային Ղարբաղի հայերը» հիմնարար աշխատության մեջ³:

Աշխատությունը սկսվում է «Հեղինակի կողմից»⁴ նախաբանով, որտեղ Լիսիցյանը տեղեկություններ է հաղորդում ազգագրական ակնարկի ստեղծման հանգամանքների մասին: Հստ այդ հաղորդման՝ հեղինակը 1924 թվականի ամռանը Անդրկովկասի ԿԳԿ-ին առընթեր Անդրկովկասյան գիտական աստղիացիայի կազմակերպած գիտարշավի շրջանակներում ազգագրական նյութեր հավաքելու նպատակով մեկնում է Լեռնային Ղարբաղը: Ստեփանակերտում մարզի ղեկավարության հետ մշակված երթուղիների համաձայն՝ նա ուսումնասիրություններ է կատարում Ասկերանի շրջանի Ավետարանց, Դաշուշեն, Մարտունու շրջանի Թաղավարդ, Սոս, Գյունե Ճարտար, Գիշի, Ննգի, Հաղբութի շրջանի Թաղլար, Տող, Հաղբութ, Ծամձոր,

¹ Варданян Л., Степан Лисициан и основные проблемы армянской этнографии, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2015, N2, էջ 208-228:

² Այդ մասին մանրամասն ուշ և Վարданян Լ., Степан Лисициан и источники армянской этнографии, Ереван, 2005, с. 287-292:

³ Լիսիցյան Ս., Լեռնային Ղարբաղի հայերը (Ազգագրական ակնարկ), «Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ», Երևան, 1981, էջ 9-84:

⁴ Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 9-10:



Օքակոս, Մարտակերտի շրջանի Վանք, Վաղուհաս, Հաթերք, Մադավուզ, Երից-Մանկունք, Մեծ Շեն, Կուսապատ, Մարտակերտ գյուղերում՝ «հավաքելով բազմակողմանի հարուստ նյութ»¹: Այստեղ հեղինակը հիշատակում է նաև մինչ այդ Արցախի ազգագրության ուսումնասիրության բնագավառում հրատարակված որոշ աշխատանքներ՝ նշելով, որ իր շրջագայության ժամանակ այդ նյութերը ստուգել, տարածապես ընդլայնել և զգալիորեն լրացրել՝ հատուկ ուշադրություն դարձնելով «հետեւղափոխական ժամանակաշրջանում (մինչև 1924 թ.) տնտեսական և սոցիալական վերափոխումների հետեւանքով ժողովրդի կենցաղում տեղի ունեցած փոփոխություններին»², որոնք, ըստ նրա, ավելի են խորացել հատկապես տնտեսության կողեկտիվ ձևերին անցնելուց հետո՝ ընդգրկելով տեղական կյանքի բոլոր կողմերը. գրեթե պատմության գիրկն են անցել հին սովորույթները, որոնք մի քանի տասնամյակ առաջ տակավին պահպանվում էին ժողովրդի մեջ՝ կարևոր աղբյուր հանդիսանալով հասարակական զարգացման վաղուց անցած փուլերի ըմբռնման համար³:

Առաջարանին հետևում է «Աշխարհագրական ակնարկ» բաժինը⁴, որտեղ Լիսիցյանը, լինելով նաև նշանավոր աշխարհագրագետ, առանձին ենթարաժիններով համառոտ, բայց բովանդակալից ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սահմանները, ուղիելքը, գետերը, անտառները, բաժանումն ըստ շրջանների:

Բուն ուսումնասիրությունը բաղկացած է հինգ գլուխներից: Առաջին՝ «Բնակչությունը» գլխում⁵ հանգամանորեն քննության են առնվում էթնիկ կազմը և սոցիալական խմբավորումը: Հեղինակը Լեռնային Ղարաբաղը համարում է հայկական այն եզակի մարզերից, որոնք դարերի ընթացքում պահպանել են իրենց էթնիկական կազմը, «որը, սակայն, այստեղ արդեն չի կրում այն ամբողջական բնույթը, որը նրան հասուն էր մինչև XVII դ. և XVIII դ. կեսերը»⁶. Ըստ հեղինակի՝ 18-րդ դարի կեսերին մերձկասայան տափաստանների անասնապահ կիսավաշկատուն ցեղերը ջիվանշիրցի Փանահի գլխավորությամբ, հետզիետե ավելի են ձգուում տիրանալ Ղարաբաղի հրաբխային սարահարթի կանաչապատված ալպիական մարգագետիններին, ինչի արդյունքում հիմնվում է «Ղարաբաղի խանությունը», որի կազմավորման հետ էլ մահմեդական տարրերը սկսում են հիմնվել Ասկերանում, Շուշում և այլ վայրերում՝ զբաղեցնելով ճարահատյալ գաղթած հայ բնակչության

¹ Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 9:

² Սույն տեղը

³ Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 10:

⁴ Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 11-15:

⁵ Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 16-26:

⁶ Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 16:



տարածքները։ Եվ չնայած ոռւսական իշխանության հաստատումից հետո հայ գաղթականների մի մասը վերադարձնում և վերադարձնում է իին հողերը, այնուամենայնիվ, վերադարձները քիչ էին և չէին կարող ապահովել հայ բնակչության նախկին խտությունը։ Էթնիկ տեղաշարժերից նշվում է նաև 1828 թ. պարսկական Ղարաղաղ մարզի հայության մի մասի վերաբնակեցումը Լեռնային Ղարաբաղում, ինչը, սակայն, Արցախի ազգագրական և բարբառային առանձնահակություններում էական փոփոխությունների պարճառ չի դառնում, քանի որ «այդ տարրերը ամբողջ բնակչության 10% են կազմում, մասսամբ էլ այն պատճառով, որ Ղարաբաղի և Ղարաղաղի միջև վաղուց ի վեր գոյություն ունեին կենցաղային տեսակետից նրանց մերձեցնող տնտեսական ու մշակութային կապեր»¹։ Լիսիցյանը հայտնում է, որ իր հետազոտության ժամանակ Լեռնային Ղարաբաղի բնակչությունը կազմում էր շուրջ 130 հազար մարդ, որից 120 հազարը հայեր էին, 10 հազար՝ աղբբեջանցիներ, որից միայն 5 հազարը՝ Շուշիում, սակայն չնայած դրան՝ որոշ հանգամանքներ՝ երկարատև հարևանությունը, դարավոր քաղաքական ենթակայությունը պարսկական շահերի գերազույն իշխանությանը, տնտեսական հարաբերությունները մահմեդական ցեղային ավագանու հետ, իիմբ են հանդիսացել հայ բնակչության մեջ աղբբեջանահրանական ազդեցությանը, ինչը դրսորդվում էր տարբեր ձևերով՝ աղբբեջաններենի իմացություն, արևելյան երաժշտության յուրացում, երեխաններին մահմեդական անուններ տալու և այլն։

Այս զիսում առավել խորությամբ են նկարագրվում սոցիալական խմբավորումները, հատկապես՝ ոռւսական գերիշխանության ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղում դասային հարաբերությունների արմատական փոփոխությունները, որի արդյունքում պարսկական հասարակական դասային խմբավորումները, տնտեսական և քաղաքական նոր պայմաններում քայլավելով, իրենց տեղը զիջեցին նոր ձևերին։ Դա առաջին հերթին անդրադարձավ մելիքների հետնորդների վրա, որոնք, ինչպես և խանները, զրկվեցին իրենց հրապարակային- իրավական արտոնություններից, ինչը անցավ նոր աստիճանավորությանն ու զինվորական իշխանությանը, իսկ մելիքների ժառանգները, ցարական իշխանության քաղաքականության արդյունքում զինվորական կրթություն ստանալով ռազմական տարբեր ուսումնարաններում ու կադետային կորպուսներում, ստացան սպայական կոչումներ՝ հաճախ հասնելով բարձր աստիճանների։ Այսպես, մելիքական տոհմերի ներկայացուցիչները և նրանց երբեմնի հպատակներից շատերը, զրկվելով իրենց հողերի մեծ մասից, հեռանում են գյուղերից և հաստատվում քաղաքներում՝ լրացնելով ոչ միայն սպաների, այլև աստիճանավորների, ազատ մասնագիտության տեր անձանց ու արդյունաբերողների շարքերը, իսկ իրենց

¹ Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 17:



հողամասերը վարձակալությամբ հանձնում գյուղացիներին: Այս ամենը հանգեցրին ազնվականության հասարակական դերի թուլացմանը, ինչի պատճառով էլ մասնավոր տիրույթային կալվածատիրական հողերի ազգայնացումը Լեռնային Ղարաբաղում շուղեկցվեց գյուղի աշխատավոր տարրերի հակազնվականական ցաման այնպիսի բռնկումներով, ինչպես Վրաստանում¹:

Դասային քայլայումից անմասն չմնաց նաև հոգևորականությունը: Նոր պայմաններում գյուղական համայնքների սահմանները ընդարձակվեցին վանքապատկան հողերի հաշվին, արդյունքում հոգևորականության եկամուտները նվազեցին, սահմանափակվեցին բարեպաշտական նվիրատվությունները, ինչն էլ հանգեցրեց բազմաթիվ միաբանությունների վերացմանը: Այս շրջանում փակվեց Աղվանից կաթողիկոսությունը՝ վերածվելով սովորական թեմի՝ սկզբում մետրոպոլիտի, այնուհետև եպիսկոպոսի իշխանությամբ, իսկ հոգևոր կառավարումը Գանձասարից տեղափոխվեց Շուշի: Մյուս կողմից՝ հոգևորականների զավակները «ձգուում էին առավել եկամտաքեր և պատվաքեր զբաղմունքների, քան եկեղեցական արարողությունների կատարումն էր՝ իրենց համար պարտադիր չհամարելով այն հաստատված կարգը, ըստ որի որդին ժառանգում էր հոր հոգևորական կոչումը»²: Ուսում ստանալով քաղաքներում՝ նրանք հաճախ չին վերադառնում իրենց դասը ծառայության մտնելով կառավարական հիմնարկներում, ավելի հազվադեպ բանակում: Հոգևորականների հեղինակությունը ավելի մեծ անկում ունեցավ խորհրդային կարգերի հաստատումից հետո. դրան գուգընթաց գյուղից հեռանում էին մեծ թվով արհեստավորներ, վաստակ փնտրելով Շուշի, Գյանջա, Նուխի, Շամխոր, Գրոզնի, Թիֆլիս և այլ քաղաքներում: Արդյունքում հին սոցիալական խմբակումների քայլայմանը գուգահեռ, ձևավորվում են մանր և խոշոր առևտրականների, ձեռնարկատերների, գնորդների խավերը, զարկ է տրվում օղեթորմանն ու շերամապահությանը, հիմնվում են մետաքսագործական ֆաբրիկականներ:

Հեղինակը անդրադառնում է նաև ուսումնական հաստատությունների վիճակին՝ նշելով, որ քաղաքացիական պատերազմի նախօրեին դրանց թիվը Լեռնային Ղարաբաղում չէր հասնում 50-ի, որից միայն Շուշիում գործող թեմական դպրոցն ու ռեալական ուսումնարանն էին միջնակարգ, որոնց, ինչպես նաև այլ նմանատիպ և բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտները, հայրենիքում աշխատանք չգտնելով, բնակություն էին հաստատում Անդրկովկասի, Անդրկասապիայի և Ռուսաստանի այլ մասերի:

¹ Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 18:

² Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 20:



տարբեր քաղաքներում՝ ներգրավելով տեղի արդյունաբերական և մշակութային կյանքում:

Նշված գլխի «Հայերն ու հարևանները» բաժնում¹ ներկայացվում է հայերի և աղրբեջանցիների (որոնք մինչև հեղափոխությունը պաշտոնապես կոչվում էին թարաբներ) հարաբերությունները, որոնք ուսական տիրապետության շրջանում ել ավելի լարվեցին՝ հանգեցնելով արյունալի ընդհարումների: Հիշատակվում են Շուշու 1905 և 1920 թվականների, Շուշուց քիչ ներքև գտնվող հայկական Քայրալիքենդ գյուղի 1919 թ. կոտորածները:

Աշխատության երկրորդ գլուխում՝ «Քաղաքը և գյուղը»², հեղինակը տալիս է կարևոր տեղեկություններ Շուշի և Ստեփանակերտ քաղաքների, գյուղերի, տների, ազարակների, արցախցիների արտաքինի ու հագուստի մասին:

Շուշին բնակչները կոչում են Ղալա (քերդ), իսկ իրենց՝ ղրղզց (քերդի բնակչներ): Լիսիցյանը վկայակոչում է որոշ ծերունիների, որոնք ել, վկայակոչելով իրենց հայրերին, պնդում են, որ մինչև Փանահ խանի մուտքը, այդտեղ եղել է բնակավայր արհեստանոցներով և առևտրական կրապակներով: Հեղինակը Շուշին ներկայացնում է որպես տնտեսական մեծ նշանակություն ունեցող կենտրոն, որտեղ զարգացած էին արհեստները, առևտուրը, արդյունաբերությունը, մշակույթը, տպագրական գործը, ուսումը: Այն նաև նշանավոր ամառանոց էր, հատկապես՝ այլ վայրերում ապրող շուշեցիների համար: Քաղաքը բաղկացած էր չորս հիմնական թաղերից Ագուեցոց, Ղազանչեցոց, Թավրիզեցոց և Մելրեցոց, որոնց բնակչները հիմնականում այստեղ են տեղափոխվել համապատասխան վայրերից: Դրանցից յուրաքանչյուրը հայրենակցական սկզբունքով համախմբված էր իր եկեղեցու շուրջն ու մինչև ուսական քաղաքային կարգի հաստատումը կառավարվում էր իր թաղային կազմակերպությամբ: Շուշիի բնակչությունը 1823 թ. յոթ հազարից 1914 թ. հասել էր 25 հազարի, և «այն Անդրկովկասյան Հայաստանում բացարձակապես գյուղատնտեսական զբաղմունքներից կտրված գուտ քաղաքային տիպի միակ բնակավայրն էր»³:

Սակայն, ինչպես նշում է Լիսիցյանը, Շուշու հրդեհից հետո նոր կենցաղի առաջացման համար քաղաքային տարրի նշանակությունը խիստ նվազում է: Վարչական կենտրոնը տեղափոխվում է Ստեփանակերտ, որը 1927 թվականին ուներ շուրջ երեք հազար բնակիչ, երեսն են զայիս առևտրաարդյունաբերական նոր կենտրոններ, ինչպիսիք են՝ Մարտակերտը և Հոնաշենը, Լեռնային Ղարաբաղին սահմանակից Աղդամ և Կորյագինո գյուղերը: Այստեղ տեղեկություններ են տրվում նաև արտագնացության մասին, նշվում է, որ մեծ

¹ Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 24-26:

² Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 27-37:

³ Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 29:



թվով գյուղացիներ գյուղատնտեսական անբարենպաստ պայմանների (հատկապես Դիզակում և Վարանդայում) պատճառով արտագնա աշխատանքի էին մեկնում Դաշտային Ղարաբաղ և Մոլանի տափաստան (հերկի և բերքահավաքի ժամանակ), բայց հատկապես՝ Բաքու, Գրոզնի և այլ քաղաքներ, որտեղ աշխատանքի էին տեղափորձում գործարաններում, ֆաբրիկաներում, խանութներում, շինարարությունում և պետական ու մասնավոր այլ ծառայություններում՝ սովորաբար զարնանը վերադառնալով և սկսելով դաշտային աշխատանքները, որոշներն ել «Զահավետ էին համարում չքողնել քաղաքային աշխատանքը, իսկ գյուղի դաշտային աշխատանքները կատարել կիսրարային կամ վարձակալական այլ սկզբունքներով աշխատուժ վարձելով»¹: Արտագնաց գյուղացիները վերադառնալով քաղաքային տարբեր սովորություններ էին տարածում գյուղերում, ինչի ազդեցությամբ աստիճանաբար փոփոխվում է գյուղի պատկերը, հատկապես՝ հագուստը և կահկարասին:

Լեռնային Ղարաբաղում, ըստ Լիսիցյանի նկարագրության, գյուղերը տեղաբաշխված էին հովիտների ու կիրճերի բարձրաբերձ լանջերին, ուղղաձիգ ժայռերի (քերծ) մոտ, ինչի գլխավոր պատճառներն են պաշտպանական նպատակահարմարությունները և աղբյուրների մերձավորությունը: Տները ցրված էին անկանոն զանգվածներով, չունեին որևէ հստակ հատակագիծ, բայց կրում էին հին ազգատոհմային խմբավորումների հետքերը, չնայած նոր ընտանիքներն արդեն տուն կառուցելու համար ազատ հողամասեր էին ընտրում ազատոհմային թաղամասերից հեռու՝ գյուղի ծայրամասում՝ այնքան էլ հաշվի չառնելով ազգակցական կապերը: Որպես ամենուր հանդես եկող հնաձև տուն՝ նկարագրվում է դարադասը (աև տուն)², որն իր տեղը հետզիեւե գիշում էր նոր, հաճախ երկհարկանի, թիթեղածածկ կամ կղմինդրածածկ տանիքներով և պատշգամբավոր տներին, որոնց ստորին հարլը ծառայում էր տնտեսական նպատակների, իսկ վերինը՝ բնակելի, թեև ամուանը բնակիչները գերադասում էին բնակվել ստորին հարկում, որտեղ ավելի զով էր: Մարագները, գոմերը և այլ կառույցներ շինվում էին տներից քիչ հեռու՝ ծածկվելով ծղոտով կամ եղեգով:

Հաճախ գյուղացիները իրենց ժամանակի մեծ մասն անց էին կացնում տնից հեռու՝ դաշտերին կից սարքած կալերում կառուցված ժամանակավոր բնակատեղերում, որոնք ժամանակի ընթացքում վեր են ածվում մշտական բնակավայրերի: Ըստ հեղինակի՝ նման ազարակներ են առաջացել Գյունե Ճարտար, Սոս, Թաղավարդ հին գյուղերի մոտ: Դրանցից շատերը դեռևս չունեին

¹ Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 31:

² Ղարադամի առավել մանրամասն նկարագրությունը հեղինակը տվել է իր «Կ изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам)» հոդվածում, «Известия Кавказского историко-археологического института», Тифлис, 1925, т. 3, с. 97-108):



հատուկ անուններ և պարզապես կոչվում էին կալէր: Ազարակներ էին ստեղծվում նաև զյուղերից հեռու այն վայրերում, որտեղ զյուղացիները, գոմեր կառուցելով, ձմռանը պահում էին անասունները: Արդյունքում այդ ազարակները վեր էին ածվում առանձին զյուղերի: Լիսիցյանը նշում է, որ այդպես Վաղուհաս զյուղից առանձնացել է Հարությունագոմեր, Առաջաձորից՝ Պողոսագոմեր և Վըրսլյումեր, Կուսապատից՝ Դամրու, Հորաթաղ և Մարտակերտ, Կալարատասուց՝ նոր Կալարարասի, Խրիսան, Կորազերք, Կանաչ թալա, Չոբան-Գոնե զյուղերը, իսկ Ավետարանոց զյուղից Ալամանց կյումեր, Մըրգումանց կյումեր, Պլկանանց կյումեր և Հասանանց կյումեր զյուղից անջատման պատճառ այն էր, որ մեխքները այդտեղ գտնվող գոմերում վերաբնակեցրել էին առավել բազմանդամ ընտանիքներին¹:

«Տան կահավորումը» խորագրի տակ ներկայացվում է տան կահավորումը, ամանեղենը, ուտեստը: Լիսիցյանը նշում է, որ 20-րդ դարի քասանկան թվականներին դարադամ են թափանցել Ճենապակե ափսեներն ու արծաթազօծ զավաքները, դանակները, պատառաքաղները, վիեննական ձկաթոռը, իսկ նոր տներում էին կահավորումից ոչինչ չի մնացել: Այդտեղ սենյակները տաքացնում էին բուխարիկներով կամ թիթեղե վառարաններով, մուտք էր գործել քաղաքային կահույքը: Նկարագրության համաձայն՝ կահավորման ամենազնահատելի մասը կրկին կազմում էին գորգերն ու անկողինը, խոհանոցային ամանեղենը մեծ մասամբ պղնձից էր, գերակշռում էին Անդրկովկասի հայ բնակչության մեջ լայնորեն տարածված կոնաձև կաթսաները, երկար բռնակով խոր թափաները, ծանր քամիչները: Ուտեստից հիշատակվում են բանջարեղենը, փլավը, ձվածեղը, կոլոտակը, բյուլթան, տոլման, քաղցրավենիքից՝ կաթսահունցը, զաթան, բարակ քաղցր բլիբները, հացի տեսակներից՝ պոռզը, որը, շնորհիվ փայտի առատության, թխվում էր երկու-երեք օրը մեկ անգամ և այլն: Հայտնվում է նաև, որ բանջարեղենից կարտոֆիլը համեմատաբար նոր էր տարածվել, սմբուկ չէր հանդիպում, թռչուններից շատ էին հավերը, իսկ սազեր ու բաղեր իսպառ չկային, կովերի փոխարեն շատերը գերադասում էին այծ պահել, որի պատճառով ամենուր զգացվում էր պանրի, կարագի, մածնի, մսի պակասը: Հաջորդ «Արտաքինն ու հագուստը», բաժնում² մեծ ազգագրագետը անդրադառնում է դարաբաղջի հայերի արտաքին տեսքին, սանրվածքին և հագուստի նկարագրությանը: Համեմատելով այլ վայրերի հայերի հետ՝ նշվում են արցախցիների արտաքինի առանձնահատկությունները՝ բարձր հասակը, ավելի սպիտակ մաշկը, բաց գույնի մազերը, ուղիղ կեցվածքը, դուրս ցցված փորի գրեթե բացակայությունը, թեթև ու արագ քայլվածքը, արագ խոսելաձնը և այլն:

¹ Լիսիցյան Ս., Լեռնային Ղարաբաղի հայերը, էջ 34:

² Լիսիցյան Ս., նշվ. աշխ. էջ 35-37:



Նշվում է, որ վերացել է տղամարդկանց սափրած գլխին մազափունջ (քյաքու) և երեխաների ձակատի մեջ տեղը թել թռղնելու սովորությունը, մինչդեռ կանանց սանրվածքն ավելի պահպանողական էր. աղջիկները, ինչպես և ամուսնացած կանայք, մազերը չորս հյուս էին անում՝ երկուսը ետ զցելով մեջքին, երկուսը՝ կրծքին:

Հաղորդվում է, որ տնայնազործության մեջ որպես հիմնական հումք գործածվում էր բուրող, աստիճանաբար տարածվում էր բամբակը, իսկ մետաքսը լայն գործածություն չուներ, քանի որ տեղի ջուղիակային տեխնիկան մետաքս նուրբ գործվածքներ ստանալու հնարավորություն չէր տալիս: Տղամարդկանց հազուստից հիշատակվում է արխալուղը, չուխան, կուլքան (գուլպա) ոչխարի մորթուց կարված լայն կոնաձև փափախը, քուլքը, յափնչին (այծենակաձ), տրեխը, քուշը (երեսը բաց կրնկավոր կիսակոշիկ), կանացի հազուստից՝ երկար ներքնաշապիկը, խոնջանը, երեք քղանցք ունեցող արխալուղը, մետաքս լայն գոտին, քուլքը, որոնք սակայն հետուած իրենց տեղը զիջում էին քաղաքներից մուտք գործած նոր ձևերին. «Նույնիսկ զուղերում այժմ հազվադեպ են հին տարազը կրում, եթե հազնում էլ են, ապա միայն պառազներն ու հիսունն անց կանայք: Ավելի երիտասարդներն արդեն ազատվել են դրանցից»¹:

Ընտանեկան ու հասարակական հարաբերություններին, բարքերին ու ծեսերին է նվիրված աշխատության երրորդ «Ընտանիքը» գլուխը², որի առաջին՝ «Բաժանն» բաժնում տրվում են ընտանիքի հոր մահից հետո, նույնիսկ նրա կենդանության օրոր ունեցվածքի բաժանման ձևերը, ընտանիքի անդամների փոխհարաբերությունները, դրանցից յուրաքանչյուրի տեղն ու դիրքը ընտանիքում: Բաժանքի ժամանակ սկզբում առանձնացվում էր չամուսնացած եղբայրների ու քույրերի բաժինը. Քույրերը ստանում էին այն, ինչ հասնում էր օժիտով՝ սպիտակեղեն, հազուստեղեն, անկողին՝ խարզ, իսկ եղբայրները՝ հիմնականում անկողնային սպիտակեղեն՝ ազայ հակը, և այն, ինչ նախատեսվում էր նրանց հարսանիքի ծախսերի համար: Այրի մայրը, ով ամուսնու մահից հետո հաճախ մնում էր ավագ, երբեմն էլ՝ կրտսեր որդու մոտ, նույնպես ստանում էր որոշակի գումար, մնացած ունեցվածքը բաժանվում էր ամուսնացած եղբայրների միջև, իսկ եթե հայրը ողջ էր, նրա բաժինը չէր գերազանցում որդիների բաժնին: Տունը բաշխվում էր կամ վիճակ զցելով, կամ վիխադարձ համաձայնությամբ:

Ըստ հաղորդման՝ նախահեղափոխական Արցախում «նույնիսկ բաժանված անհատական ընտանիքում ներքին փոխհարաբերությունները որոշվում էին հոր և մոր հնավանդ հեղինակությամբ, կրտսեր անդամների անձի լրիվ ճնշմամբ,

¹ Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 37:

² Լիսիցյան Ս., նշվ. աշխ էջ 38-52:



ինչպես նաև կնոց ստորադրյալ վիճակով»¹: Ընտանիքի գլուխ էր կանգնած հայրը, ով բաշխում էր աշխատանքը՝ միաժամանակ ընտանիքի լիազոր ներկայացուցիչը հանդիսանալով հավաքույթներում, ժողովներում, հարսանիքներում, թաղման և այլ միջոցառումների դեպքում: Նրան ենթարկվում էին բոլորը, և միայն հոր ծերության ու տնտեսությունը վարելու անկարողության դեպքում իշխանությունը փոխանցվում էր որդուն: Սակայն տան լիիրավ իշխանությունը պատկանում էր մորը, ով «առանց վերահսկողության տնօրինում էր բոլոր պաշարները, կանանց մեջ բաշխում էր տնային բազմաթիվ աշխատանքները, հետևում ամեն մի անդամի վարք ու բարքին»²: Հեղինակը շեշտում է այս համերաշխությունը, որ տիրում էր արցախյան ավանդական ընտանիքում և ընդհանրապես գերդաստանում, չնայած լինում էին նաև երիտասարդների ըմբռատության դեպքեր: Առավել ստորացված էր կնոց վիճակը, ով սկեսրայի և քավորի հետ չէր խոսում մինչև մահ, սկեսրոջ հետ մինչև առաջին երեխայի ծնվելը, տեզրոջ հետ՝ տասը տարի և ընդհանրապես զրկված էր բազում ազատություններից ու դատապարտված լուսաւորության: Նա հաճախ էր նախատվում և նույնիսկ ծեծվում սկեսրոջ կողմից՝ չհամարձակվելով հակածառել: Եվ պատահական չէ, որ ընտանիքում տղայի ծնունդը դիմավորում էր համընդհանուր շնորհավորանքներով, իսկ աղջկա ծնունդը համարվում էր դժբախտություն:

Լիսիցյանը անդրադառնում է նաև հեղափոխությունից հետո նոր կարգերի հաստատման արդյունքում առաջացած ընտանեկան հարաբերությունների փոփոխություններին՝ նշելով, որ ընտանեկան տարածայնությունները ավելի հաճախակի էին դառնում հատկապես վաղ ամուսնությունների արգելումից հետո, և եթե նախկինում աղջիկն ամուսնանում էր 12-14 տարեկանում և որպես չկազմակերպված և զգարգացած էակ՝ հեշտությամբ համակերպվում նոր իրադրությանը, ապա 16 տարին կանանց ամուսնական նվազագրված տարիք սահմանելուց հետո հարս գնացած աղջիկն, ունենալով ձևավորված խառնվածք և հակումների որոշակի ինքնուրույնություն, այևս չէր հանդուրժում նոր ընտանիքում բռնակալությունն իր նկատմամբ: Փոխվում են նաև ընտանիքի ավագ և կրտսեր անդամների փոխհարաբերությունները. Երիտասարդեներն ավելի ու ավելի ակտիվորեն են միջամտում ընտանեկան և այլ հարցերի լուծմանը: Դրան զուգընթաց ավելի հաճախակի են դառնում ամուսնական հավատարմության խախտման դեպքերն ու կողմանակի սիրային կապերը, որի հիմնական պատճառներից նշվում են արտագնաց ամուսինների բացակայությունները, ամուսնու երկարատև գինվորական ծառայությունը, բռնի

¹ Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 39:

² Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 39:



ամուսնությունը, մետաքսամանման գործարաններում տղամարդկանց ու կանաց համատեղ աշխատանքը և այլն:

Նոր կարգերը էական փոփոխությունները չեն մտցնում արցախցու ավանդական հյուրասիրության մեջ. «Սովորույթը պատվիրում է ընդունել հյուրին՝ ամենայն հոգատարություն ցուցաբերելով նրա նկատմամբ: Սակայն ամենուր չէ, որ տանտերն առաջարկ սիրալիրությունն է ցուցաբերում...»¹:

«Հարևանները» հորագիր տակ վեր են հանվում գյուղական նույն համայնքի մեջ ընդգրկված ընտանիքների և հատկապես՝ հարևանների փոխհարաբերությունները: Որպես փոխօգնության կարևոր ձև է նկարագրվում հրաքաշը. «Հրաքաշը գյուղատնտեսական աշխատանքներում կենդանի (եզների) և անկենդան (գութանի) գույքի ու աշխատավոր ձեռքերի միավորումն է, ընդումին, ամրող հաշիվն արվում է՝ եզներն ընդունելով որպես միավոր: Աշխատողն ընդունվում է որպես մեկ եզ, գութանը՝ երկու (այն գյուղերում, որտեղ գութանները շատ կատարելագործված են՝ որպես մեկ): Որոշ դեպքերում միավորումը սահմանափակվում է մեկ հերկով, որից հետո միացյալ ուժերով մշակված ամրող տեղամասը՝ երրքշվէ ցիլը (հրաքաշի ցելը), քանդիրի՝ պարանի օգնությամբ, ըստ եզնահաշվի, բաժանվում է մասնակիցների միջև: Այնուհետև ամեն մեկը ցանում է իր դաշտն ու հավաքում բերքը: Հրաքաշի մեկ այլ հաշվարկի դեպքում եզնամիավորի հաշիվը փոխանցվում է օրերի հաշվին, և ամեն մասնակի դաշտը վարվում է առանձին՝ նրան հասանելիք օրերի հաշվով: Եթե կողմերից մեկը լրիվ չէր օգտագործում իրեն հասանելիք օրերը, մնացած ժամանակը կարող էր վաճառել մյուսին, իսկ եթե վարը նախատեսվածից ավելի շատ ժամանակ էր իրել, դրա դիմաց դրամ էր մուծում ամրող միավորմանը կամ էլ որևէ մեկից գնում էր նրա ավել օրերը»²: Հիշատակվում է նաև ավելի երկարատև միավորումների մասին, որոնց դեպքում յուրաքանչյուրը սերմացու էր բերում իր եզների թվի հաշվով, և բոլոր աշխատանքները համատեղ կատարելուց հետո ամրող բերքը բաժանվում էր եզնամիավորի հաշվին համաձայն:

Փոխօգնության մեկ այլ ձև է միջին, որը, ի տարբերություն նախորդի, բնութագրվում է որպես «դաշտային, այգեզործական, կամ տնային գործերում միմյանց անձնական աշխատանքով կամ գործիքներով օգնելու ձև, որն առկա էր ինչպես հարևանների և բարեկամների, այնպես էլ համայնքի բոլոր անդամների միջև»³:

Բարոյական պարտք էր համարվում նաև արքատներին օգնելը:

¹ Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 42:

² Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 43:

³ Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 44:



«Հարսանիք» բաժնում մեծ ազգագրագետը հանգամանալից նկարագրում է ընտանիքի ստեղծման այդ կարևոր երևոյթի ամբողջական գործընթացը: Համառոտակի անդրադառնալով հարսնախոսության՝ նա նշում է, որ հարսանիքի օրը և նյութական պայմանները պարզելու նպատակով աղջկա հոր տանը նշանդրեր էր նշանակվում՝ երկու կողմերի ամենամուտ ազգականների մասնակցությամբ ու գյուղի տանտիրոց, հոգևորականի, քավորի ներկայությամբ, որը կոչվում էր հրդէ կրտորի: Որոշվում էին փեսայի ընտանիքի կողմից հարսնացուի ընտանիքին տրվելիք նվերները և հարսանիքի ծախքերը հոգալու համար նախատեսված մթերքները, ինչպես նաև հարսնացուի օժիտի պարունակությունը, որի մեջ մտնում էին հագուստեղենը, անկողնու, խոհանոցային պարագաներ, գորգեր, սնդուկ, մաֆրաշ (գորգագործ պարկ անկողնու համար): Բուն հարսանիքը տեղի էր ունենում աշնանը կամ ձմռանը՝ դաշտային աշխատանքներն ավարտելուց հետո, հատկապես՝ Բարեկենդանին, և սովորաբար տևում էր երեք, երեսմ՝ յոթ օր, ընդ որում՝ ձգտում էին սկսել ուրբաթ օրը, որպեսզի վերջին կիրակի օրը գյուղացիներն ավելի ազատ լինեն և կարողանան ավելի մեծ կազմով մասնակցել խնջույքին: Այսուհետև նկարագրվում են հարսանիքի նախապատրաստական աշխատանքներն ու ծեսերը, հյուրերին հրավիրելու ձևերը: Հատուկ հանդիսավորությամբ էին հրավիրում քավորին՝ մատուցելով նվերներ: Երեկոյան փեսայի տանը գուրնայի նվազի տակ սկսվում էր հարսանեական սկզբնական խնջույքը՝ օդու և գինու առատ գինարբուրով, որը դեկավարում էր հարսանիքի տնօրենը՝ թոյրաշին կամ թամադան, ով սովորաբար լինում էր փեսացուի փեսան կամ հորեղբոր տղան: Դրան հետևում էին փեսայի ու նրա ընկերների՝ մակարների սափրման ու փեսայի հագուստի օծման արարողությունները, որից հետո մակարների խումբը՝ դեկավարի՝ մակարքաշու գլխավորությամբ, դաշույներով, թրերով կամ հրագենով գինսած, փեսայի և մյուս հարսանիքավորների հետ գնում էին հարսի տուն: Հարսնացուի հայրական տանը, ըստ հաղորդման, խնջույքը շարունակվում էր մինչև առավոտ կամ ուշ գիշեր: Առավոտյան քահանայի կողմից տեղի էր ունենում հարսի պսակազգեստի օծումը՝ քրթէթ օրինէքք, որից հետո նրան հազցնելով՝ գնում էին եկեղեցի: Եկեղեցու մոտ մակարների պահակախումբ էր կանգնեցվում, որպեսզի ոչ-ոք շիամարձակվեր կտորը քար նետել և դրանով հարսին անպատճ դարձնել: Թօյրաշին քահանային էր հանձնում գյուղի տանտիրոց տերողորման՝ որպես վկայություն նրա համաձայնության: Պասկադրությունը կատարվում էր եկեղեցում, իսկ եթե գյուղում եկեղեցի չկար՝ թոնրի մոտ: Եկեղեցուց հարսանեական թափորը շարժվում էր դեպի սուրբ օջախները, որտեղ մոտ վառելով, խունկ ծխելով և սրբությունները համբուրելով՝ վերադառնում էին հարսի ծնողների տուն՝ ճանապարհին հյուրասիրվելով երիտասարդ գույզի բարեկամների կողմից: Հարսի հայրական տանը մասնակցելով կազմակերպված խնջույքին՝ խումբը վերջապես ուղևորվում էր



փեսայի տուն, որտեղ առատ խնջույքը շարունակվում էր մինչև ուշ գիշեր, իսկ հաջորդ օրը տեղի էր ունենում մեծարման հանդեսը, որը կոչվում էր մեծառք, որին էլ հաջորդում էր կանչը¹: Վերջապես տերտերը քավորի ներկայությամբ փեսայի ու հարսի վրայից հանում էր եկեղեցում նրանց վրա կապած նարոտը՝ կը նրանք արմուղը, և նրանք իրավունք էին ստանում՝ ամուսնական մահիձ մտնելու: Ամուսնական զիշերը հարսին և փեսային թռղնում էին մենակ: Հաջորդ օրը առավոտյան ընտանիքի կանայք և քավորը, ստուգելով հարսի անարատությունը, դրա ապացույցը հանդիսացող ամուսնական սավանը շնորհավորանքներով ուղարկում էին հարսի ծնողներին, իսկ հարսի մայրը մեկ շարաթ անց զալիս էր դստերը լողացնելու՝ կը լինըլիս:

Հարսանեկան այս ամբողջ գործընթացը ներկայացնելիս Լիսիցյանը անդրադարնում է դրանում ընդգրկված մի շարք ծեսերի և մանրամասների: Նշվում է նաև, որ քառասուն օր երիտասարդ զույգը անմարուր էր համարվում, կինը զրեթե տնից դուրս չէր գալիս, իսկ ամուսինն իրավունք չուներ հարսանիք գնալու, ծննդկանի տուն մտնելու, նույնիսկ կտուրով անցնելու, գոմ մտնելու: Այս շրջանը կոչվում էր քրոասունք:

Առանձին բաժիններ են կազմում ծննդյան և կնունքի, թաղման և հոգեհացի նկարագրությունները: Հեղինակը դարձարացի հայուհու ամենամեծ դժբախտությունը համարում է անպտուղ լինելը, որի վերաբերյալ կասկածներ առաջանալուն պես հարսը ապավինում էր հերիմներին, կախարդներին, վիուկներին, աղոթքներին ու ուխտատեղիներին: Երկունքի ցավերը սկսվելու դեպքում տղամարդկանց տնից դուրս էին հանում, իսկ տատմոր հետ մնում էին պառավներն ու մերձավոր ազգականուիկները, ովքեր, հավատալով, որ ծննդի ժամանակ ծննդկանի շուրջ բոլորը չար ոգիներ՝ քաշկեր են բնակվում, տարբեր ծեսերով ձգուում էին վնասազերծել դրանց, հատկապես, երբ ծնունդը ձգձգվում էր: Երեխայի ծնվելու մասին անմիջապես տեղեկացնում էին բարեկամներին ու մերձավորներին, առաջին հերթին՝ քավորին, որոնք իրենց ուրախությունն արտահայտում էին՝ տարբեր ուտեստներ ուղարկելով: Հատկապես մեծ ուրախություն էր, երբ արու զավակ էր ծնվում, որի դեպքում «սոատմերը աշքալուսանքով (մըշտըլդ) հոր մոտ էր գնում ու կատակով գրակը նրա զիսից իւլելով՝ գետնով էր տալիս և նվեր (դրամ, քաշկինակ, թել և այլն) պահանջում»²:

Ծննդաբերությունից հետո կինն համարվում էր չարերով համակված և մինչև երեխայի կնունքը իրավունք չուներ ընդհանուր սպասքից օօտվելու, կար ու ձև անելու, նույնիսկ երեխային կայչելու, որին այդ ընթացքում լողացնում էր տատմերը կամ տան պառավներից մեկը:

¹ Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 49:

² Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 50:



Կնունքը սովորաբար կատարվում էր եկեղեցում, երբեմն՝ տանը՝ թոնրի շուրջը, ծննդից մեկ շաբաթ անց: Տերտերը երեխային անուն էր տալիս, որը լինում էր կա՛մ ծնողների ընտրությամբ, կա՛մ ըստ օրացույցի այդ օրը ծնված սրբի անուն, կա՛մ էլ որևէ հերոսի ու անվանի գործի անուն, մինչդեռ «կենդանի պապի կամ տատի օրոր նրանց անունները երեխաներին չէին տրվում, իսկ եթե տրվում էին էլ, ապա չէին հորործվում, այլ փոխարնվում էին քնքացնող, աղճատված, պայմանական ձևերով»¹:

Լիսիցյանը նշում է նաև, որ մինչև քառասունքը (քառասուն օրը) լրանալը երեխան ավելի էր ենթակա չար բժժանքների, ահա թե ինչու խիստ զգուշանում էին նրա և օտար մարդկանց, նոյնիսկ հարազատ հոր շփումներից: Միայն քառասունքն անց ծննդկանին լրդացնում էին ծղոտի վրա, ծղոտը այրում, որից հետո մորն ու մանկանը ուղեկցում էին եկեղեցի, որտեղ տերտերն աղոթքով կատարում էր վերջնական սրբագրությունը:

Թաղման ու հոգեհացի արարողությունները նույնպես ուղեկցվում էին զանազան ծեսերով: Երազում հանգույցյալ բարեկամին տեսնելը համարվում էր մոտավոր մահվան նշան, իսկ մահամերձի զառանցանքը՝ զրուց հանգույցյալ բարեկամների հոգիների հետ: Հավատում էին, որ հոգին մարմնից հեռանալիս ճիշ է արձակում, որը տեսանելի է միայն բարեպաշտներին: Նկարագրվում է, որ մահվանից անմիջապես հետո հավաքվում էին բարեկամներն ու ազգականները, տերտերը օրինում էր պատանն ու հանգույցյալին լրդացնելու ջուրը: Հանգույցյալին լրդացնելուց հետո ձեռքերը կրծքին խաչելով՝ փաթաթում էին կարպետի մեջ և, հյուսած պատզարակի՝ նամի՞ վրա, իսկ նոր ժամանակներում՝ դագաղի մեջ դնելով, տեղափոխում եկեղեցի: Հուղարկավորությունից առաջ բարեկամուիիները, հարևանուիիներն ու հատուկ հրավիրված եղերամայրերը նստում էին դիմակի շուրջը և սկսում ողբը՝ թվարկելով հանգույցյալի արժանիքները, նրա վերաբերմունքն ընտանիքի անդամների և հարևանների հանդեպ, տարբեր դեպքեր ու խոսքեր հիշելով նրա կյանքից: Նկարագրության համաձայն՝ թաղման արարողությունը կատարվում էր եկեղեցական ավանդույթներով: Նշեցյալին գերեզմանոց էին ուղեկցում միայն տղամարդիկ և գերեզման իջեցնում պատանած կամ դագաղի մեջ դրած: Մերձավոր բարեկամներից որևէ մեկն առաջինն էր, նախօրոք տերտերին խաչով օրինել տալով, մի բուռ հող նետում փոսը, որից հետո մնացածները նույնն էին անում: Դրանից հետո տան ավագի հրավերով բոլորը մասնակցում էին կազմակերպված հոգեհացին՝ ժրմահաց, որտեղ ճաշակելով ոչխարի կամ տավարի մսով եփած կուրկուտ (ցորենի ձավար) և զինի ու օղի՝ հանգույցյալի մասին տարբեր հիշողություններ էին պատմում, իսկ հաջորդ օրը հանգույցյալի գերեզմանին այցելում էին կանայք: Համառոտ նկարագրվում են նաև հանգույցյալի մահվան

¹ Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 50:



յոթերորդ օրը (օհոնք) և տարին լրանալու կապակցությամբ կատարվող արարողությունները և ծեսերը:

Ուսումնասիրության «Հավատալիքներ» գլխի առաջարանում¹ նշանավոր ազգագրագետը անդրադառնում է դարաբաղջի հայի հավատալիքների բարդ համակցության ծագումնաբանությանը փորձելով դրանց մի մասը կապել հեթանոսական, զրադաշտական, ինչպես նաև արևելքում և արևմուտքում տարածված մինչմագրեզական հավատալիքների հետ, միաժամանակ նշելով, որ «առկա նյութերն առայժմ այնքան թերի են, որ համեմատական ազգագրության շատ հարցեր տակալին կարելի է միայն նշել, բայց ոչ ամենին վերջնական լուծում տալ»²:

«Ուսուավայրեր» բաժնում³ առանձին խորագրերի տակ ներկայացվում են սրբացված լեռնագագարները, պուրակները, աղբյուրները, նահատակները, օջախները և կենդանիների պաշտամունքը:

Ինչպես նշում է հեղինակը, «լեռնագագարների երկրպագումը, բնականաբար, առաջնակարգ տեղ է գրավում: Զկա շատ թե քիչ բարձր մի լեռ, որի կատարին սուրփ (սօրփ) կամ խաչ չկանչի»⁴: Նման բարձունքներից նկարագրվում են Սովոր, Դիզափայտը, Մեծ և Փոքր Քիրսերը, պուրակներից՝ Գյունե Ճարտար գյուղի մոտ գտնվող Կոհակ կոչվող պուրակը, Դաշուշեն գյուղից ներքև գտնվող Սարիբեկի սրբավայրը, ինչպես նաև Հադրութի և Սիստրաշենի նշանավոր ջննարինները, որոնց բնակիչները դիմում էին տարբեր խնդրանքով:

Աղբյուրների պաշտամունքը կապվում է նրանց՝ այս կամ այն հիվանդությունը բուժելու գորությամբ: Այպես՝ Հյունոտ գյուղի մոտ գտնվող աղբյուրը բուժում էր քոսը, Ավետարանց գյուղի մոտինը և Գիշի գյուղի Ռսկե խաչ աղբյուրը՝ դրդերոցքն ու թրմորը, Կուսապատի մոտ գտնվող Յեղին ախպուրը՝ աշքացավը, Գյունե Ճարտարի Ուսուածաղիկ կամ Դավաշչագ աղբյուրը՝ կարմրախստը: Որոշ աղբյուրների պաշտամունքի հիմքն էլ նրանց՝ հրաշքով առաջանալու հանգմանքն է: Ժողովրդի պատմելով՝ Եղիշե Առաքյալի վանքի մոտ թիսող սուրբ աղբյուրը թիսել է Վաշագան Բարեպաշտի ձեռքի մահիադի ջրի թափած տեղում, Խաչմաշ գյուղի մոտի աղբյուրը հորդել է հենց զանգակատանը, որտեղ աղոթող մայրը դիմել է Աստծուն՝ խնդրելով հագեցնել երեխայի ծարավը, Դիզափայտ լեռան լանջի Արջին աղբյուրը՝ ծարավից ուժապատ արջի՝ երկնքից օգնություն խնդրելու արդյունքում:

Ցուրահատուկ պաշտամունքի առարկաներ են նահատակները, որտեղ սովորաբար հանուն հավատի կամ կռվի ժամանակ առանց հաղորդության

¹ Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 53-55:

² Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 55:

³ Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 55-60:

⁴ Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 55:



զոհվել կամ էլ կայծակից խոցվել են առանձին անհատներ: Նման վայրերից հիշատակվում են Կրօքելալա զյուղի մոտ՝ Մեծ և Փոքր, Փիր-Զամալ զյուղի մոտ՝ Կսրե, Նախիջևանիկ զյուղի մոտ՝ Ճգնավորուհու, Նոր Քյաթուկ զյուղի մոտ՝ Սպիտակ հօլ, Դրբնավազ զյուղի մոտ՝ Աղին նրհատակ, Շուշու հին գերեզմանոցում՝ Թիֆլիսեցի նրհատակ Անտոնը, Կուսապատի մոտ՝ Ղարիբ խաչ և այլ սրբավայրերը:

Հստ հարորդման՝ Լեռնային Ղարաբարում ամենուր պաշտում էին գերեզմանները՝ հավատալով, որ առանց հարորդության հանկարծամահ եղածների գերեզմաններն ունեին բուժիչ հատկություններ: Նման զորություն ունեին նաև հերոսների և հրաշագործների գերեզմանները, ինչպես թուրք Սուլեյման բեկին սպանած օրիորդ Գայանեի գերեզմանը, Ննգի զյուղի քահանա Կարապետ Տեր-Պետրոսյանի տապանաքարը:

Դրանց զուգընթաց երկրպագվում էին որոշ կենդանիների գերեզմանները: Դրանցից հայտնի են Դիզափայտի լանջին կայծակից արջի խոցված տեղը, Պտղեսքերքում՝ Սուրբ Գրիգորի վանքի մոտ գտնվող գերեզմանը, որտեղ թաղված է վանքի կառուցմանը մասնակցած և իր փրկիչ կրոնավորի մահից հետո ինքնասպանություն գործած արջը, Կուսապատից արևելք գտնվող Եղին ախաղուրը, որտեղ նետահարվել է կամավոր զոհաբերվելու նպատակով հայտնված եղնիկը:

Որպես երկրպագվող վայրեր են նշվում սուրբ օշախները, որոնք հանդիպում են գրեթե յուրաքանչյուր զյուղում և կրում են տոհմային անվանումներ, ինչպես Կուսապատում՝ Էրիցանց ու Վեղանց, Ծովատեղում՝ Բգերանց, Գյունե Ճարտարում՝ Միրզաբեկանց, Տողոնց ու Խոշանց, Նսկիում՝ Դերանց և այլն:

«Պաշտամունքի ձեռքը» բաժնում¹ Լիսիցյանը անդրադառնում է հասարակական ու մասնավոր մատաղներին և մոգական հնարներին: Նվարագործության համաձայն՝ հասարակական մատաղները արվում էին զյուղի բնակիչների կողմից՝ մեծ տոներին, սովորաբար՝ եկեղեցու մոտ, առանց եկեղեցական արարողության, ինչպես նաև երաշտի ու հասարակական այլ աղետների ժամանակ, իսկ մասնավոր մատաղները սովորաբար արվում էին աղոթատեղի մոտ, որոշ դեպքերում էլ՝ զյուղում՝ ծանր հիվանդի առողջացման կամ ուխտի առիթով, ընդ որում՝ տերտերի ներկայությունը պարտադիր չէր:

Սոգական հնարներից հիշատակվում են սրբավայրի հող, ջուր կամ թեփ մարմնին քսելը, մեջք սուրբ հող ու փոշի լուծած ջուր խմելը, սուրբ ծառերի ճյուղերից զգեստի կտորներ կախելը, սուրբ ծառերին մեխեր խփելը, «կոլսված» երեխայի զլխավերնը ձեռքով երեք անգամ շրջագիծ շարժում անելը, սրբավայրի շուրջը երեք անգամ ծնկաչոր պտտվելը, սուրբ քարերի ձեղքերով անցնելը, նորածին արու զավակի պորտալարի մի մասը երևացող տեղ, իսկ աղշկանը՝

¹ Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 60-63:



հեռավոր մի անկյուն նետելը, թադրումից հետո ննշեցյալի սպիտակեղենը մաքուր լվանալը, զայլի երախը «կապէլլ», ուրիշներին իր ունեցվածքի մասին տեղեկություններ չհայտնելը, օրորոցներից, երեխաների ուսաժապավեններից, անասունների վզից աշկրհելունքներ կախելը և այլն:

Առանձին բաժիններով են ներկայացվում սատանաների՝ քաշկերի, սրբերի ծառաների նկարագրությունները, երդման ձևերը, տիեզերական հայացքները՝ երկնային լուսատուների, ինչպես նաև որոտի, կայծակի, ալեկոծության, ծիածանի, երկրաշարժի շուրջ եղած պատկերացումները:

«Տոներ» խորագիր տակ¹ Լիսիցյանը հանգամանալից նկարագրում է ժամանակին տարածված նշանավոր տոները՝ Նավասարդը, Սուրբ Սարգիսը, Բարեկենդանը, Տեառնընդառաջը (Դրոջունը, Դոնդունը), Ծաղկազարդը (Զրրզարդար), Ավագ շաբաթը և Զատիկը, Համբարձումը, Պայծառակերպության օրը (Վըրբէկօր, Վըրբէկար), անդրադառնում դրանց ընթացքում կատարվող ծեսերին, խաղատեսակներին, գործածվող կերակրատեսակներին:

Ամփոփելով հավատալիքների մասին իր ուսումնասիրությունները՝ հեղինակը նշում է, որ «Հեռնային Ղարաբաղում դեռ խորհրդային շինարարությունը սկսվելուց շատ առաջ, կապված տնտեսական ու մշակութային պայմանների փոփոխության հետ, սկսել էին մոռացվել և այլափոխվել հին, նախնիներից ժառանգած հավատալիքները»²:

Հարկ է նշել, որ «Հավատալիքները» զիսում ընդգրկված են բազմաթիվ ավանդություններ և ավանդագրույցներ, ինչպես նաև ասույթային բանաձևություններ, որոնք կարևոր նշանակություն ունեն Արցախի բանահյուսության ուսումնասիրության համար:

Աշխատության վերջին՝ «Հեզուն և արվեստը» զլուխը³ նվիրված է Ղարաբաղի բարբառի, երաժշտության և պարերի համառոտ նկարագրությանը: Այստեղ հեղինակը անդրադառնում է արցախահայերի բարբառի քերականական և հնչյունական որոշ առանձնահատկությունների, ինչպես նաև մինչև այդ հրատարակված աշխատանքներին՝ նշելով, որ «դեռևս չի հավարված ողջ լեզվական նյութը, և փորձեր չեն արված որոշելու բարբառի լեզվակազմը՝ դրանում պահպանված էթնիկական շերտավորումների բացահայտման նպատակով»⁴:

Երաժիշտներից հիշատակվում են որոշ գուսանների անուններ՝ Ռուստամ, Սարգիս Ղզղակեցի, Գրիգոր Գալոյան և ուրիշներ, որոնց թիվը, սակայն, հետզիետե նվազում է: Նշում է նաև, որ Ղարաբաղում համաժողովրդական

¹ Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 67-73:

² Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 73:

³ Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 75-77:

⁴ Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 75:



զանգվածային ստեղծագործություններ, տեղական հերոսավեպ, տեղի հերոսների գովերգում չկա, թույլ է արտահայտված հայերեն զուտ քնարական ստեղծագործությունը՝ սիրահարական և ընտանեկան բնույթի երգերի տեսքով, հատկապես բացակայում է կանանց երգը, մինչդեռ ժողովրդական արձակ խոսքը գուներ է, իսկ շվին արդեն անհետանում է:

Հաղորդման համաձայն՝ բազմազան չեն պարերը, վերացել են երեմնի շուրջպարերը, եղած պարերը դանդաղ են, չկան թոփշքներ ու բացականչություններ: Ըստգծվում է, որ Ղարաբաղում ընդհանրապես պարում է ոչ թե տղամարդը, այլ կինը, այն էլ՝ չամուսնացած երիտասարդ կինը, իսկ քաղաքից վերադարձած պատանիներն ու երիտասարդները հին պարերի փոխարքն արդեն նախապատվությունը տալիս են այնպիսի ժամանակակից պարերի, ինչպիսիք են պոլկան, վալսը և մազուրկան:

1930-ական թվականներին՝ իր առաջին շրջագայությունից ավելի քան մեկ տասնամյակ անց, նշանավոր ազգագրագետը նորից է շրջագայում Լեռնային Ղարաբաղում՝ ստացած տպավորությունները շարադրելով որպես «Լեռնային Ղարաբաղի հայերը» աշխատության վերջաբան¹, որտեղ տրվում են 1920-ական թվականների կեսերից մինչև 1930-ական թվականների կեսերը երկրամասի հայերի կյանքում, կենցաղում, պատկերացումներում տեղի ունեցած մեծ փոփոխությունները՝ բնակչության թվի աճ, զյուղատնտեսության մերենայացում, հիդրոէլեկտրակայանների, ջերմակելեկտրակայանների, գործարանների կառուցում, ցանքատարածությունների ընդլայնում, անասունների զլամանակի ավելացում, շերամապահության, մետքսագործության, գորգագործության զարգացում, իին տների՝ դարդամների փոխարքն երկիհարկանի կողային պատուհաններով տների կառուցում, կրթական և մշակութային ցանցի ընդլայնում, ընտանիքում ու հասարակության մեջ կոնց դերի բարձրացում և այլն, որոնք ըստ հեղինակի, արդյունք են խորհրդապահն կարգերի հաստատման:

«Լեռնային Ղարաբաղի հայերը» աշխատությունը հագեցված է հեղինակի անձնական արխիվից, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության իստիտուտի ու Հայաստանի պատմության պետական թանգարանի ֆոնդերից ընտրված համապատասխան չափագրություններով, զարդանկարներով, լուսանկարներով, որոնց ընտրությունը, ինչպես նաև աշխատության հրատարակման հետ կապված գիտաժեխնիկական աշխատանքները, կատարել է Ս. Լիսիցյանի թոռնութիւն՝ ազգագրագետ Լիլյա Վարդանյանը, ով մեծ ավանդ ունի նշանավոր ազգագրագետի գիտական ժառանգության ուսումնասիրման գործում²: Հարկ է

¹ Լիսիցյան Ս., նշվ. աշխ., էջ 77-82:

² Варданян Л., Степан Лисициан и источники армянской этнографии, Ереван, 2005, Из истории этнографического изучения Нагорного Карабаха (конец XIX- начало XX вв.), «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Անցյալը, ներկան և ապագան. Միջազգային գիտաժողովի



նշել, որ Լ.Վարդանյանի խմբագրությամբ է տպագրվել նաև աշխատության ռուսերեն հրատարակությունը¹, որի «Խմբագրի կողմից» ներածականում բնութագրվում է մեծ ազգագրագետի գիտական կենսագրությունը: Աշխատությանը կցված է ազգագրական տերմինների բառարան և աշխարհագրական անունների, պատմական հուշարձանների ու տեղական սրբավայրերի ցանկեր՝ կազմված Լ. Վարդանյանի կողմից:

1920-ական թվականներին Լեռնային Ղարաբաղից գրառած նյութերը հիմք հանդիսացան Ս. Լիսիցյանի գիտական մեկ այլ կարևոր աշխատանքի, որտեղ տրված է արցախյան հնաձև ավանդական տան՝ ղարադամի ուսումնասիրությունը²: Հոդվածի սկզբում անդրադառնալով հայկական գյուղական կացարանների մասին եղած նկարագրություններին՝ հեղինակը կարևոր ու անհետաձգելի է համարում այդ բնագավառի ուսումնասիրությունը, հատկապես, որ մի կողմից՝ Արևմտյան Հայաստանի հայկական բնակավայրերն զբերե ամբողջովին վերացված են, իսկ մյուս կողմից՝ համատարած գետնափոր հին կացարանները լայն թափով փոխարինվում են նոր՝ կողային պատուհաններ ու թիթեղածածկ կամ կղմինդրածածկ տանիքներ ունեցող տներով: Լիսիցյանը նշում է նաև, որ, այնուամենայնիվ, 1924թ. ամռանը իրեն հաջողվել է Լեռնային Ղարաբաղի ծայրամասային որոշ գյուղերում հանդիպել հնագույն կառուցվածքով տների, որոնք կոչվում են ղարադամ (սև տուն), որի նկարագրությունն էլ տալիս է սույն հոդվածում: Ըստ նկարագրության՝ ղարադամները կառուցվում էին լեռան լանջին, այնպես, որ նրանց երեք պատերը զբերե ամբողջությամբ թաղված էին հողի մեջ, և միայն առօսի մասը՝ դրոնվ և տանիքով, գտնվում էր բակից վերև: Այն հիմնականում ուներ քառանկյուն ձև՝ սովորաբար մինչև 12 արշին երկարությամբ կողմերով, իսկ պատերը, որոնցից միայն առաջինն էր կառուցվում հիմնավոր, ունեին 1,5 արշին հաստություն, ներսից պատված էին կավածեփով կամ գյաջով և ունեին խորշեր՝ պատրհան, որոնք ծառայում էին որպես բաց պահարաններ: Այնուհետև մանրամասնորեն նկարագրվում են չորս հաստ կաղնե այունների վրա հենված տանիքի կառուցվածքը, երդիկը, դուռը, թոնիքը, հետևի պատի տակ սարքված քարե հարթակը, որի վրա շարում էին ամանեղենը, այսուրի պատկերը, տարբեր իրեր և այլն: Պատկերվում է նաև ղարադամի հատակագիծը:

¹ Լիսիցյան Ս., Արմեն Նաղորոց Կարաբախ. Էթնոգրաֆический очерк, Ереван, 1992
² Լիսիցյան Ս., К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам), «Известия Кавказского историко-археологического института», Тифлис, 1925, т. 3, с. 97-108.



Լիսիցյանը նշում է, որ դարադամը հիմնականում ծառայում էր որպես ձևառաջնական կացարան, իսկ վաղ գարնանից մինչև ուշ աշուն ամբողջ ընտանիքն անց էր կացնում դարադամի առջևի մասում՝ 5-7 այուների վրա կառուցված պատշաճամբում, որի տանիքը նույնպես պատված էր հաստ կավացեխով, իսկ անասնազոմերը, որոնց նկարագրությունը նույնպես տրվում է հորդվածում, կառուցվում էին դարադամից ավելի հեռու: Հեղինակը համառոտ նկարագրում է նաև նոր տիպի տները, որոնք 20-րդ դարի 20-ական թվականներին արդեն գրեթե ամենուր փոխարինել էին հին կացարաններին: Միաժամանակ նա հանգում է այն եզրակացությանը, որ միայն դարաբաղյան դարադամի ուսումնասիրությունը հիմք է տալիս ասելու, որ դրանց և ժամատների հատակագծերը անմիջական կապ ունեն իրար հետ¹:

1940 թ. Բաքվում տպագրվում է Վ. Պետրովի «Էթնոբոտանիկա Հայորդոց Կարաբախ» ուսումնասիրությունը, որի մասին Ս. Լիսիցյանը հանդես է գալիս գրախոսականով²: Թվարկելով ուսումնասիրության արժանիքները և այն ընդգրկված նյութով ու այդ նյութի ուսումնասիրության համար գործածված մեթոդներով համարելով Ղարաբաղի գիտական պատմության համար կարևոր՝ նշանավոր ազգագրագետը ներկայացնում է նաև նրանում տեղ գտած որոշ թերություններ և բացքողումներ:

Արցախի ազգագրությանը անմիջականորեն առնչվում է Ս. Լիսիցյանի «Զանգեզուրի հայերը» կոթողային աշխատությունը³, որտեղ ազգագրական տարրեր երևույթներ ու հարցեր քննելիս ու նկարագրելիս նա հաճախ է համեմատում Արցախի հետ՝ ընդգծելով դրանց ընդհանրություններն ու յուրահատկությունները:

Թերևս այս ամենին հարկ է ավելացնել նշանավոր «Ազգագրական հարցարանը»⁴, որով տասնամյակներ շարունակ բազմաթիվ ազգագրագետներ, ինչպես հայ ազգագրական մյուս շրջաններից, այնպես էլ Արցախից հավաքել և ներկայում էլ գրառում են ազգագրական կարևոր նյութեր:

Եվ ընդհանրապես, Ս. Լիսիցյանի ազգագրական ողջ ժառանգությունը անփոխարինելի հիմք է Արցախի ժողովրդագիտության ուսումնասիրության համար:

¹ Նույն տեղում, էջ 108:

² Լիսիցյան Ս., Օ հնագույն Վ. Ա. Петрова «Էթնոբոտանիկա Հայորդոց Կարաբախ», աշխատությունը պատմաբան Ա. Վահագուստի համար, Երևան, 1940, «Տեղեկագիր ՍՍՌՍ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի», Երևան, 1942, N1-2, էջ 187-190:

³ Լիսիցյան Ս., Զանգեզուրի հայերը, Երևան, 1969

⁴ Լիսիցյան Ս., Ազգագրական հարցարան, Երևան, 1946



Ամփոփում

Հոդվածում վեր են լուծվում հայ նշանավոր ազգագրագետ Ստեփան Լիսիցյանի՝ Արցախին նվիրված ուսումնասիրությունները։ Առանձնապես մեծ տեղ է հատկացվում նրա «Լեռնային Ղարաբաղի հայերը» ազգագրական ուսումնասիրությանը, որը հիմնված է 1920-ական թվականներին հեղինակի գրառած դաշտային նյութերի վրա և ներկայացնում է արցախահայերի տնտեսական զբաղմունքը, նյութական և հոգևոր մշակույթը, հավատաիրները և ընդհանրապես նիստուկացը։

Этнография, фольклор и диалект Арцаха в исследованиях Степана Лисициана

А. Саркисян

Резюме

Ключевые слова: этнография, фольклор, диалект, исследование, статья, город, деревня, семья, свадьба, похороны, легенда.

В данной статье рассматриваются исследования известного армянского этнографа Степана Лисициана, посвященные Арцаху. Особенно большое место выделено его этнографическому исследованию «Армяне Нагорного Карабаха», которое основано на полевых материалах, собранных автором в 1920-х годах и представляет хозяйство, материальную и духовную культуру, верования и быт армян Арцаха.

Artsakh Ethnography in the works of Stephen Lisitsian

A. Sargsyan

Resume

Key words: ethnography, folklore, dialect, collection, research, article, town, village, family, wedding, burial, tradition.

In this article the works of Armenian famous ethnographer Stephen Lisitsian which are devoted to Artsakh are analyzed. Special attention is paid to his ethnographical research of «Armenians of Nagorno Karabakh» based on the field materials written down by the author during the 1920s which represented the economical duties, material and spiritual culture and the daily life of Artsakh people.



**ՎԱՆՔԱՍԱՐԻ ԵՎ ՆՐԱ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ
ԲՆԱՊԱՏՄԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**
**Կարինե Բալայան, կ. գ. թ., Ար ՊՀ
Հենրիկ Գրիգորյան, Ար ՊՀ**

Բանալի բառեր: Վանքասար, Տիգրանակերտ, Հովհաննես, կիսաանապատներ, տափաստաններ, ֆրիզանա, ջրաճահճային բուսականություն, բնական լանդշաֆտներ, արգելոց, պեղումներ:

Խաչենագետի իշվածքը յուրահատուկ բնապատմական միջավայր է, որտեղ գեղեցիկ բնական լանդշաֆտները պահպանում են պատմամշակութային դարաշրջանների հարուստ մշակութային ժառանգությունը:

Մարտակերտից Ստեփանակերտ գնացող ձանապարհի աջ կողմում, կրաքարից կազմված մի սապատավոր լեռնաբազուկ ձգվում է հյուսիսից դեպի հարավ: Տարին բոլոր նրա լանջերը պատած են լինում չոր կիսաանապատներին բնորոշ բուսականությամբ: Պատճառն այն է, որ այս վայրերում մթնոլորտային տեղումներ քիչ են լինում, և եղած անձրևաջրերն ել անմիջապես ներծծվում են կրաքարային ապարների մեջ: Լեռնաշղթան անհիշելի ժամանակներից կոչվում է Վանքասար: Այն մի տեսակ բնական պատմեշի դեր է խաղում տափաստանային և լեռնային Ղարաբաղի միջն¹:

Վանքասարը կրաքարե հսկայական եռանկյունատեսք մի լեռ է, որի գագաթին գտնվում է 7-րդ դարում կառուցված կենտրոնագմբեթ եկեղեցին, ստորոտներից մեկում՝ Տիգրանակերտը, իսկ հակառակ եզրին՝ վաղքրիստոնեական ժայռափոր համալիրն ու ջրանցքը: Լեռան վրա գտնվող բոլոր հուշարձանները կառուցվել են լեռան հանքերից հանած կրաքարով, որի հետևանքով Տիգրանակերտը եղել է սպիտակ քաղաք²:

Տիգրանակերտը հանդիսանում է հայ ժողովրդի պատմության կարևոր պատմական վայրերից մեկը. այն գրաղեցնում է բավականին ընդարձակ

¹ Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985,

² էջ 78:

² <http://www.tigranakert.am/environment>



տարածք՝ գտնվում է Խաչեն գետի միջին հոսանքի աջ ափին՝ Վանքասարի արևելյան մասում:

Տիգրանակերտը սփռված է Վանքասարի լեռնաշղթայի արևելյան լեռնալանջերին ու նախալեռնային հարթավայրի տարածքում: Վանքասարի լեռնաշղթայի բարձրադիր գագաթային մասում է գտնվում Հովկասարը՝ 681 մ բարձրությամբ: Այն իշխող բարձր դիրք է գրավում շրջակա տարածքի վրա: Այստեղից դեպի արևմուտք ձգվում է Խաչենի ընդարձակ հովիտը՝ Օխնաբրյուր և Հավքախաղաղ լեռնաշղթաների միջև:



Նկ. 1. Վանքասար

Հայաստանի հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արշավախումբը 2005թ. հայտնաբերել է Հայոց արքա Տիգրան Բ Մեծի (95-55 թթ. մ.թ.ա.) կողմից Արցախում հիմնած Տիգրանակերտ քաղաքը և 2006-2016թթ. հնագիտական պեղումներ է կատարել նրա տարածքում: Այն Տիգրանի անունը կրող միակ բնակավայրն է, որի տեղը ճշգրտորեն պարզված է, և որը ենթարկվում է հնագիտական հետազոտության: Պեղումների արդյունքում բացվել են քաղաքի Միջնաբերդի պարիսպների մի հատվածը, Ամրացված թաղամասի պարիսպների ժայռափոր իիմքերը, նույն թաղամասի դարավանդներից մեկի հենապատը, Կենտրոնական թաղամասի բազիլիկ եկեղեցին: Հետախուզական պեղումներ են կատարվել նաև Ամրացված թաղամասի ու Կենտրոնական թաղամասի մի քանի հատվածներում, վաղքիստոնեական դամբարանադաշտում: Հետազոտվել են նաև քաղաքի մերձակայքում գտնվող պաշտամունքային-քարայրային



համալիրը, նրա ստորոտով անցնող ժայռափոր ջրանցքը, Խաչենագետի ձախ ափին գտնվող վաղմիջնադարյան ամրոցը¹:

Ապագա քաղաքի վայրի ընտրությանը մեծապէս նպաստել է աղբյուրների մոտիկությունը, ինչի շնորհիվ հեշտությամբ լուծվել է քաղաքի ջրամատակարարման խնդիրը: Քաղաքի արևելքում և հարավում տարածվում են զյուղատնտեսական բերքի հողատարածքները, որոնց ոռոգումը ապահովվել է Խաչենագետից եկող ջրանցքով: Ամրակայված թաղամասը գտնվում էր Վանքասար լեռան ստորոտում՝ աղբյուրներից բարձր: Քաղաքն ամբողջությամբ կառուցվել է տեղի սպիտակ կրաքարից: Շնորհիվ արհեստական կառուցված սանդղափուլերի՝ Տիգրանակերտը ձգվել է լեռան լանջերով ընդհուպ մինչև դրա ստորոտը, շրջապատված է եղել հզոր ամրոցային պատերով և ունեցել է ժայռափոր անցուղիներ: Դա եղել է փառահեղ սպիտակ քաղաք՝ ամբողջությամբ թաղված կանաչ այգիների մեջ: Այն գոյություն է ունեցել մինչև 14-րդ դարը: Վանքասարի վանքի պատերին կան հայկական գրություններ, իսկ ժամանակին այստեղ եղել են նաև խաչքարեր²:

Խաչենի հովտում առկա են վերաբնակեցված մի շարք բնակավայրեր՝ Նոր Մարաղա, Նոր Այգեստան, Արմենակավան, Նոր Սեյսուլան, Հովտաշեն, Նոր Ղազանչի, իսկ հովտի կենտրոնում իր գեղեցկությամբ առանձնանում է Խաչենի ջրամբարը:

Սարդարաշեն գյուղից դեպի հարավ-արևելք ձգվում է Շիկաքարի լեռնաճյուղը, իսկ Հավբախադաց լեռնաշղթայի արևելյան շարունակությունը հանդիսացող Քարագլուխ լեռնաբազուկը, որը հանդէս է գալիս սարավանդի տեսքով, լավ դիտվում է Հովկասարի բարձունքից:

Տիգրանակերտից դեպի արևելք տարածվում են Կուր-Արաքսյան հարթավայրի շարունակությունը հանդիսացող Արցախի և Միլի տափաստանները / 200 - 300 մ բարձրությունների վրա:/

Երկրաբանական տեսակետից Վանքասարի լեռնաշղթան կազմված է յուրայի և կավճի հասակի / 130 – 145 մլն տարի առաջ/ նստվածքային, հրաբխածին – նստվածքային ապարներից: Այստեղ տարածված են կրաքարեր, ավազաքարեր, կոնգլոմերատներ, մերգելներ, տուֆորեկչիաններ և այլն: Ապարաշերտերն ունեն

¹ Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ. Սաֆարյան Վ. . Արցախի Տիգրանակերտի հնագիտական հնտագոտության հիմնական արդյունքները 2005 – 2009 //«Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2005-2010 թթ»/ ԼՂՀ կառավարությանն առնվազն գրուաշրջության վարչություն, Ստեփանակերտ, 2011, էջ 25;

² Պետրոսյան Հ., Խաչատրյան Ժ., Փիլիպոսյան Ա., Սաֆարյան Վ., Արցախի Տիգրանակերտի և շրջակայրի հնագիտական հետագոտության հիմնական արդյունքները – Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը, Երևան, 2006, էջ 361-365:



30 – 40° թեքություն, դա վկայում է, որ լեռնաշղթայի արևմտյան լանջին գուգահեռ անցնում է խզվածքային գոտի: Այստեղ մեծ տարածում ունեն կրողինն – տեղադրումային ռելիէֆի ձևերը, այդուվիալ – պրոյուվիալ նստվածքային կուտակումները: Տիգրանակերտի տարածքում բավականին մեծ տարածում ունեն կարստային ռելիէֆի ձևերը կարստային անձավները:

Վանքասարի հարավային ստորոտում, ուր լեռնաշղթան ձուվում է հարթությանը, կրաքարային ժայռի տակից դուրս է ժայթքում հորդ աղբյուր՝ Շահբուլաղը. դա ոչ թե սովորական աղբյուր է, այլ մի գետակ. ամենայն հավանականությամբ Խաչեն գետի ջրերը վերին և միջին հոսանքների շրջանում ներ են ծծվում ու լեռան տակով անցնելով հրաբիսածին, նստվածքային ծալուկեն ապարների միջով աղբյուրի ձևով դուրս են գալիս: Այս կենարար ջուրը առաջին և հիմնական պայմանն է հանդիսացել, որ այստեղ դարեր շարունակ եղել է բնակավայր: Դրա անառարկելի ապացույցը հուշարձաններն են, որոնք ունեն տարբեր հասակ և տարածված են Տիգրանակերտում ու հարակից տարածներում:

Հովվասարի բարձունքից բավականին գեղեցիկ տեսարան է ձգվում Խաչենի ջրամբարի ու հովտի երկայնքով, վերաբնակեցված զյուղերն աշքի են ընկնում իրենց բերքատու այգիներով, վարելահողերով ու արոտավայրերով:

Ուսումնասիրված տարածքներին բնորոշ են կիսաանապատային, չոր տափաստանային և ջրային լանդշաֆտները: Հողերը հիմնականում մոխրահողեր են, տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 250-300մմ, միջին տարեկան ջերմաստիճանը + 12 –ից +14 °C¹:

Նշված տարածքներում տիրապետում են կիսաանապատային և լեռնաշորասեր բուսականության տարրերը, որոնք երբեմն առաջացնում են ինքնուրույն բուսական համակեցություններ: Կիսաանապատային բուսական համակեցություններում զգալի են էֆեմեր ճիմ առաջացնող դաշտավլուկազգիները (անապատասեզ, ցորնուկ, այծակն, դաշտավլուկ, փետրախոտ և այլն):

Ուսումնասիրված տարածքներում առավել տարածված են հետևյալ բուսատեսակները. Կապար փշոտ - *Capparis spinosa*, Մատուտակ մերկ - *Glycyrrhiza glabra* L., Ոիղտափուշ սովորական - *Alhagi pseudalhagi* (M. Bieb.), Կաթնափուշ բծավոր, Մարեմփուշ, դլդան - *Silybum marianum* L., Օշինդր բուրավետ - *Artemisia fragrans*, Կատաղի վարունգ, իշավարունգ - *Ecballium*

¹ Սնացականյան Բ., Առաքելյան Յու., Լեռնային Ղարաբաղի հանրապետության ու հարակից տարածքների ջրագրությունը և ջրային հաշվեկշիռը, Երևան, 2005, էջ 21:



elaterium, Սպանդ սովորական - *Peganum harmala* և այլ տեսակներ¹:



Նկ. 2. Որդուափուշ սովորական



Նկ. 3. Կապար փշոտ

Կիսաանապատային, լեռնաչորասեր, տափաստանային և ջրաճահճային բուսականության տարրերն ունեն ժողովրդատնտեսական մեծ նշանակություն. դրանք սննդային, կերային, մեղրատու, դեղատու և գեղազարդային բույսեր են: Գեղազարդային բուսատեսակներից են Շտերնֆերգիա Ֆիշերի, հիրիկ ցանցավոր և այլն, իսկ դեղաբույսերից լայնորեն կիրառվում են ժողովրդական բժշկության մեջ հետևյալ տեսակները՝ ջղախոտ, հազարատերևուկ, սպանդ, օշինդր, մատուտակ, կապար, կատաղի վարունգ և այլն: Եթերայուղատու բուսատեսակներից նշված տարածքներում հանդիպում են խնկածաղիկ, լերդախոտ և այլն:

Ուսումնասիրված տարածքներում բուսաաշխարհագրական տեսակետից մեծ հետաքրքրություն են ներկայացնում ժայռոտ և քարքարոտ լեռնալանջերին տարածված լեռնաչորասեր բուսականությունը՝ ֆրիզանան: Տիրապետող կենսաձևերը փշոտ, թափոտ, մանրատերև, բարձիկանման բազմամյա խոտաբույսեր են, թփեր և կիսաթփեր: Նշված բուսականության կազմում առկա են հազվագյուտ, ռելիկտային՝ մնացորդային տեսակներ. Վայրի տանձենի / ուռատերև /, խնկենի, էֆեղրա, նանենի, թզենի, ցաքի և այլն: Ընդ որում հարկ է նշել, որ Վանքասարի եկեղեցու շրջակայրում աճող խնկենին վնասված է զալերով, որոնք համարվում են բուսական ուռուցքներ՝ առաջացած միջատների ազդեցության հետևանքով:

Հսկայական պատմամշակութային ժառանգության պահպանման նպատակով՝ ԼՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի որոշմամբ հնագույն

¹ Բալայան Կ., Լեռնային Ղարաբաղի ֆլորան /անոթավոր բույսեր/, Երևան, 2014, էջ 20-21:



հայկական Տիգրանակերտ քաղաքի պեղումների վայրում ստեղծվեց «Տիգրանակերտ» պետական պատմամշակութային արգելոց (2136 հա տարածք):

Վանքասարն ու Տիգրանակերտն ունենալով հնագիտական և պատմամշակութային բացառիկ նշանակություն, շրջակա միջավայրի համար վեր են ածվել նաև բնական յուրահատուկ օազիսի, և կանաչապատման աշխատանքները, ծառատուններ միայն նպաստում են արգելոցի, որպես Արցախի բացառիկ զբուաշրջավայրի զարգացմանը:

Տիգրանակերտը լինելով զբուաշրջության կենտրոն ցանկալի է, որ ԼՂՀ դպրոցների, ԲՈՒՀ-երի կողմից միջոցներ ձեռնարկվեն, որպեսզի մեր աշակերտներն ու ուսանողները կազմակերպեն արշավներ նշված տարածքները և Հովվասարի բարձունքից դիտեն Խաչենի հովտի, հարակից տարածքների բնական, պատմական վայրերն ու հուշարձանները: Դա յուրահատուկ հնարավորություն է ծանոթանալու Արցախի Տիգրանակերտի, Վանքասարի և Նրանց հարակից տարածքների պատմությանը, հնագիտական արժեքներին, լանդշաֆտներին, ինչպես նաև նպաստելու արգելոցի հետագա զարգացմանը:

Կիսանապատային, տափատանային, լեռնաչորասեր և ջրածահճային բուսականության տիպերի, ինչպես նաև ԼՂՀ ֆլորայի ներկայացուցիչների պահպանության առումով առաջարկում ենք բացի «Տիգրանակերտ» արգելոցի տարածքից, ապահովել Վանքասարի և նրա հարակից տարածքների ֆլորայի գենոֆոնի պահպանությունն ու վերաբերությունը:

Ամփոփում

Հոդվածում ներկայացվում են Վանքասարի և նրա հարակից տարածքների ուսումնասիրությունների վերաբերյալ 2013 – 2016 թվականների ընթացքում մեր կողմից իրականացված գիտական հետազոտությունների արդյունքները: Չնայած ուսումնասիրված տարածքների բուսական ծածկոցի ոչ մեծ խոռոչյանն ու տեսակային կազմի համեմատական աղբատությանը, աշխատանքում նշված տարածքների բուսականության մեջ կան գիտական մեծ արժեք ներկայացնող բուսատեսակներ: Նշված տեսակների պահպանության հարցը լուծելու համար անհրաժեշտ է ձանաչել տվյալ բուսականության բաղադրիչ տարրերը, նրանց արդի վիճակը և հեռանկարները:

Природно-исторические особенности Ванкасара и прилегающих территорий

К.Балаян, Г. Григорян

Резюме

Ключевые слова: Ванкасар, Тигранакерт, Оввасар, полупустыни, степи, фригана, водно- болотная растительность, природный ландшафт, заповедник, раскопки.



В статье представлены результаты проведенных нами в 2013 – 2016 гг. научных исследований по изучению Ванкасара и прилегающих территорий. Несмотря на небольшую плотность и сравнительную скудность видового состава растительного покрова изучаемых территорий, в нем существуют виды, имеющие большую научную ценность. Для решения вопроса защиты этих видов необходимо знать составные элементы данной растительности, их современное состояние и перспективы.

The Natural and Historical Features of Vankasar and the Adjacent Areas

K.Balayan, H. Grigoryan

Summary

Keywords: Vankasar, Tigranakert, Ovvasar, semideserts, steppes, phrygana, wetland vegetation, natural landscape, nature reserve, excavations.

In the given article the results of the scientific studies of Vankasar and its surrounding areas made in 2013-2016 are presented. Despite the low density and the relative paucity of the specific structure of a vegetable cover of the studied areas, there are the types of plants having great scientific value. For solving the issue of protection of these species of vegetation it is necessary to know the components of the vegetation, its current status and prospects.



ԱՐՅԱՆՅԱՆ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՎՆԹԱՑԻ ՆՈՐՈՂՅԱ
ՓՈՒԼԸ
(մաս առաջին)
Նունե Մարումյան
Արդ

Քանալի բառեր: գոյապայքար, պատվիրակություն, նստաշրջան, որոշում, հանրահավաք, հանրազիր, արցախահայություն, խորական քաղաքականություն, հակամարտություն, անկախություն:

1988 թվականի փետրվարն արձանագրվեց մեր ժողովրդի պատմության մեջ իր նախադեպը չունեցող համաժողովրդական շարժման ծավալմամբ, որով սկզբնավորվեց արցախյան հիմնախնդրի նորօրյա փուլը:

Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը արցախահայության նորանկախ պետականության զարգացման արդի փուլի առաջնահերթ հիմնախնդրներից է, որը մեր ազգի կենսական շահերի տեսանկյունց՝ ունի հույժ կարևորություն:

Երկու տասնամյակից ավելի ժամանակաշրջանի հեռավորությունից, թվում է, թե հայերս պետք է տիրապատեինք հիմնախնդրի բոլոր նրբություններին, նրա առանցքային հարցերի վերաբերյալ ունենայինք ճշգրտված ու խմբագրված, հղկված ու ստուգաբանված բանաձևեր: Սակայն, ստիպված ենք փաստել, որ նախընթաց տարիներին, ձևավորվել ու միջազգային շրջանակներում արմատավորվել է խնդրի ձևախեղված, անհայանպաստ մի կերպար, որը բացառում է հակամարտության արդար կարգավորումը:

Արցախյան հակամարտության ծավալման նորօրյա փուլի հիմքում ընկած էր Լեռնային Ղարաբաղի Ինքնակար Մարզի ժողովրդական պատգամավորների խորհուրդի 1988 թվականի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանը, որտեղ որոշվեց.

1. Լեռնային Ղարաբաղի Ինքնակար Մարզի ժողովրդական պատգամավորների խորհուրդը 1988 թվականի փետրվարի 20-ի իր արտահերթ նստաշրջանում, ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին, խնդրել Աղրբեջանական ԽՍՀ Գերազույն խորհրդին ու Հայկական ԽՍՀ Գերազույն խորհրդին՝ խորն ըմբռնման զգացում դրսետել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և լուծել ԼՂԻՄ-ը Աղրբեջանի ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերազույն խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ի Աղրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը: Աղրբեջանական ԽՍՀ Գերազույն խորհրդի նախագահությունը 1988 թվականի հունիսի 13-ին, ինչպես



նաև Աղրբեջանական ԽՍՀ 11-րդ գումարման Գերագույն խորհրդի 1988 թվականի հունիսի 17-ի 7-րդ նստաշրջանը, քննարկելով նշված հարցը, այն անընդունելի գտավ: Այս հարցի վերաբերյալ Աղրբեջանական ԽՍՀ պետական իշխանության բարձրագույն մարմինների որոշումների մանրագին ու հանգամանալի ուսումնասիրումը հանգեցնում է այն միանշանակ հետևողական իշխանությանը, որ ինչպես Աղրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը, այնպես էլ Աղրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդորը ճիշտ չեն հասկանում ԼՂԻՄ ժողովրդական դեպուտատների խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի որոշման իմաստն ու բովանդակությունը: Այդ որոշման անընդունելիության մասին նրանց պատասխանը ավելի շատ իշեցնում է թրուցիկ հուսադրություն, քան խորհրդային սոցիալիստական հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինների իրավական ակտ: Քանի որ հակառակ դեպքում ազգերի ազատ ինքնորոշման լենինյան սկզբունքի իրականացմանն ուղղված ակտի ճանաչումը ոչ մի կերպ չի համատեղվում խորհրդային սոցիալիստական հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինների կոչման հետ:

2.Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների խորհուրդը իր անհամաձայնությունն է հայտնում «Մարզը Աղրբեջանական ԽՍՀ-ի կազմից հայկական ԽՍՀ-ին տալու վերաբերյալ ԼՂԻՄ ժողովրդական դեպուտատների խորհրդի միջնորդության մասին» Աղրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1988 թվականի հունիսի 17-ի 7-րդ նստաշրջանի որոշումներին և, հաշվի առնելով ստեղծված լարված իրադրությունը, արտահայտելով Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության կամքը, եներլով մեր միասնական միուրենական բազմազգ պետության ազգային-պետական կառուցվածքի հիմքում ընկած ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի մասին լենինյան սկզբունքի հետևողական իրականացման անհրաժեշտությունից, անհրաժեշտ է համարում մեկ անգամ ևս անմիջականորեն դիմել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ խնդրելով ամենայն ուշադրությամբ քննարկել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թվականի հունիսի 15-ի նստաշրջանի որոշումը, որը համաձայնություն տվեց ԼՂԻՄ-ն ընդունել Հայկական ԽՍՀ կազմի մեջ և «Աղրբեջանական ԽՍՀ-ի կազմից ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին տալու մասին» ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի նստաշրջանի որոշումը և դրականորեն լուծել հարցը:

Մարզում ստեղծված արտակարգ իրադրությունը կայունացնելու և աշխատանքային նորմալ ոիթմը վերաբերձնելու նպատակով խնդրել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը մինչև Լեռնային Ղարաբաղի հարցի վերջնական ու դրական լուծումը ժամանակավորապես, որպես արդի փուլում



միակ ընդունելի տարրերակ, ամենակարճ ժամկետում ինքնավար մարզը հանել Աղրբեջանի ԽՍՀ-ի կազմից և հանձնել ԽՍՀՄ կառավարության տնօրինությանը:

3.ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների խորհուրդը միջնորդում է ԽՍՀՄ Գերազույն դատարանի առաջ, հաշվի առնելով Աղրբեջանական ԽՍՀ Սումգայիթ քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների քաղաքական-իրավական սկզբունքային գնահատականի անհրաժեշտությունը, այդ քաղաքում կատարված մասսայական պետական հանցագործությունների՝ բանդիտիզմի և մասսայական անկարգությունների էռթյան չարամիտ խեղաթյուրումը և դրանք որպես խուլգանական նկատառումներով կատարված սպանություններ ներկայացնելու Աղրբեջանական ԽՍՀ Գերազույն դատարանի փորձը, ինչպես նաև այն հանգամանքը, որ սոցիալիզմի սկզբունքների հետ անհամատելելի սումգայիթցի ջարդարարների չարագործությունները արդեն հսկայական վնաս են հասցրել Աղրբեջանի և Հայաստանի ժողովուրդների քաղաքական, բարոյական կյանքին, նրանց ավանդական բարիդրացիական հարաբերություններին, դեկավարվելով ԽՍՀՄ Գերազույն դատարանի մասին ԽՍՀՄ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետով, իր դատավարության տակ վերցնել այդ քրեական հանցանքների գործերը որպես առաջին ինստանցիայի դատարան հանգամանորեն և օբյեկտիվորեն քննարկել դրանք, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության անունից կայացնել խիստ, բայց արդարացի դատավաճիր:

4. Հավանություն տալ 19-րդ համամիութենական կուսակցական կոնֆերանսի հասցեով ներկա նստաշրջանի մասնակիցների դիմումի տեքստին:

5.ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների խորհուրդը մարզի աշխատավորներին կոչ է անում ամենուրեք՝ ձեռնարկություններում, կազմակերպություններում, կոլտնտեսություններում և սովորություններում վերականգնել նորմալ աշխատանքային ոիթմը, մորթիլզացնել բոլոր ջանքերը հանուն ժողովրդական տնտեսության ձյուղերում գոյացած բացթողումների վերացման, աշխատանքային նորմալացված ոիթմով դիմավորել 19-րդ կուսկոնֆերանսը»¹:

Այսպիսով, արցախցիները համարձակորեն համապատասխան որոշումներ ընդունելով փորձեցին տնօրինել սեփական ձակատագիրը: Սակայն դա հանդիպեց ինչպես Աղրբեջանի Հանրապետության, այնպես էլ կենտրոնական իշխանության խիստ դիմադրությանը: Կենտրոնը անպատճաստ էր ընդունել հարցի կարևորությունը:

Հուլիսի 12-ին ԼՂԻՄ ժողովատգամավորների մարզխորհրդի նոր նստաշրջանը կրկին հաստատեց ԼՂԻՄ-ը Մայր Հայաստանին վերամիավորելու անհրաժեշտությունը, նշելով այն որպես մարզում և նրա շուրջ պահպանվող

¹ «Խորհրդային Դարաբաղ», Ստեփանակերտ, 1988, 24 հունիսի:



լարված իրավիճակից դուրս գալու միակ ընդունելի տարրերակ: Միաժամանակ առաջարկվեց ԼՂԻՄ-ը վերանվանել Արցախի հայկական ինքնավար մարզ¹: «Ինչպես արդարացիորեն նշված է ԽՄԿԿ 19-րդ համամիութենական կոնֆերանսի բանաձևում, խորհուրդների բազմազգ պետության ձևափորման նախնական փուլին հատուկ դինամիզմը էապես թուլացավ և խարիվլվեց ազգային քաղաքականության լենինյան սկզբունքներից նահանջելու, անձի պաշտամունքի շրջանում օրինականության խախտումների, լճացման գաղափարախոսության և հոգեբանության հետևանքով: Ազգային հարցի լուծման գործում ձեռք բերված նվաճումների բացարձակ բնույթ էր տրվում, պատկերացումներ էին ստեղծվում ազգային հարաբերությունների անհիմնախնդրության մասին: Բավականաշափ հաշվի էին առնվում ինչպես առանձին հանրապետությունների և ինքնավար կազմավորումների, այնպես էլ ազգային խմբերի սոցիալ-տնտեսական, կուլտուրական զարգացման բուն ընթացքով առաջ քաշված ոչ քիչ սուր հարցերը յուրժամանակյա լուծում չէին ստանում: Դա հասցնում էր հասարակական անբավարպածության, որը երբեմն կոնֆլիկտային(վիճահարույց) բնույթ էր ստանում:

Այս ոլորտում հասունացած խնդիրների շարքում հատուկ տեղ է գրավում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, որը ծագել է 1921 թվականի հուլիսի 5-ին, ապա սրբել և խորացվել է հետագա տասնամյակների ընթացքում: ...Գոյատևման նպատակով հայերը հարկադրված թողնում էին իրենց նախնիների օջախը և ապաստան փնտրում Խորհրդային Սիության տարբեր տարածաշրջաններում:

Այս ամենը շարունակվեց, չնայած մարզի վերաբերյալ ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկ. Մ.Ս.Գորբաչովի դիմումին և ԽՄԿԿ Կենտկոմի ու Մինհստրների խորհրդի ընդունած որոշմանը»²:

Մարզում տիրող իրավիճակը ներկայացնելուց հետո ժողովրդական պատզամավորների ԼՂԻՄ 20-րդ գումարման խորհրդի 8-րդ նստաշրջանը նշում է, որ Ղարաբաղյան հիմնախնդիրը կարելի է լուծել միայն «Աղրբեջանի ԽՍՀ-ի կազմից դուրս գալու և Հայկական ԽՍՀ-ին միանալու միջոցով»³:

Ուստի ժողովադատական մավորների ԼՂԻՄ խորհուրդը ելնելով իրավիճակից որոշում է.«1.Հաշվի առնելով ստեղծված վիճակը, անհրաժեշտ համարել մեկ անգամ ևս ընդգծել հետևյալը. Արտահայտելով Լեռնային Ղարաբաղի բնակչության ճնշող մեծամասնության պետական կամքը և ելնելով մեր միասնական միութենական բազմազգ պետության ազգային պետական կառուցվածքի հիմքում ընկած ազատ ինքնորոշման ազգերի իրավունքի մասին լենինյան սկզբունքը հետևողականորեն իրականացնելու անհրաժեշտությունից,

¹ Նոյն տեղում, 1988, 13 հուլիսի:

² «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1988, 13 հուլիսի:

³ Նոյն տեղում, 1988, 24 հունիսի:



հոչակել Ազգային պատմական և ազգային կազմից Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի դուրս գալը:

2.Հաշվի առնելով, որ վերջին ժամանակներս ինքնավար մարզում իրադարձությունը ծայրաստիճան սրվել էր, իսկ հանրապետական մարմինների գրաված դիրքը ավելի է ապակյունացնում իրավիճակը, ուշադրությունը դարձնելով այն բանին, որ Ազգային պատմական և ազգային կազմի գործնականությունը խզված էն, ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ խորհուրդը մարզի համար միակ ընդունելին համարում է Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ Հայկական և Արցախի պատմական դեպուտատների կողմից 1988 թվականի հունիսի 15-ի նստաշրջանի որոշման իրագործումը:

3.Ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ խորհուրդը հույս է հայտնում, որ Լեռնային Ղարաբաղի միացումը Հայկական և Արցախի պատմական դեպուտատների Սոցիալիստական Հանրապետությունների Միության աշխատավորների և ժողովուրդների կողմից:

4.Հանձնարարել ժողովրդական դեպուտատների Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի գործկոմին սահմանված կարգով միջնորդություն հարուցել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Արցախի Հայկական Ինքնավար Մարզի վերանվանելու մասին»¹:

Սակայն ղարաբաղյան հիմնախնդրի քաղաքական լուծումը շարունակվում էր ձգձգվել, մարզը կանգնեցնելով անկանխատեսելի հետևանքների առջև: Ստեղծված լարված իրադրության պայմաններում Լեռնային Ղարաբաղի մասին հարցը քննարկվեց ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահությունում, և առաջադրվեց հաշվի առնել ԽՍՀՄ Սահմանադրության 78-րդ հոդվածը ու տարածքային փոփոխություններ չկատարել:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության որոշման մեջ նշվեց տարածքային փոփոխության անհնարինության մասին իր թե խուսափելով ազգամիջյան բախումներից, չկասկածելով կամ չցանկանալով ընդունել նաև հակառակ վերաբերմունք՝ հարցի արդարացի լուծման բացառումը նույնականացնելու ազգամիջյան բախումների: Միաժամանակ առաջադրվեց հարցի խոր ուսումնասիրման ու նոր առաջարկություններ մտցնելու համար ստեղծել Ազգային խորհրդի հանձնաժողով: Սակայն այդ հանձնաժողովը, որ խնդիր ուներ ուսումնասիրել տարածաշրջանում ստեղծված իրավիճակը և նպաստել լարվածության հետագա թուլացմանը, ավելի խորացրեց լարվածությունը: Կենտրոնական հեռուստատեսությունը, ռադիոն, մամուլը, լրատվության մյուս միջոցները շարունակում էին խեղաթյուրել ղարաբաղյան շարժման հությունն ու բնույթը, թաքցնել Սումգայիթում և այլուր իրագործված բարբարոսությունները, կտրականապես հրաժարվում էին քաղաքական գնահատական տալ այդ

¹ «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1988, 13 հունիսի:



իրադարձություններին, փորձում մասնատել ընդհանուր, նախօրոք կազմակերպված հանցագործությունները և դատավարություններն անցկացնել երկրի տարեր քաղաքներում:

1988թ. հունիսից մինչև 1989թ. դեկտեմբերը Լեռնային Ղարաբաղում այդ հարցի վերաբերյալ նոր առաջարկություններ մտցնելու կապակցությամբ եղան 4 հանձնաժողովներ, որոնց մոտ համապատասխան կարծիք մշակվեց Լեռնային Ղարաբաղի և նրա շուրջը տիրոտ իրադարձությունները ուսումնասիրելոց հետո:

1988 թվականին քարձրացրած դարաբաղյան հիմնահարցը հակամարտության վերածվեց այն պահին, երբ Ադրբեջանն ուժ կիրառեց:

1988 թվականի հունիսի 21-ին տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պատգամավորների մարզխորհրդի նոր նստաշրջան, որը կրկին անգամ դիմեց ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին խնդրելով մեծ ուշադրությամբ քննարկելու ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի որոշումը, որն իր համաձայնությունն է տվել Ղարաբաղը միացնել Հայաստանին: Կոնկրետ փաստերով հիմնավորվեցին մարզը Հայաստանին վերամիավորելու արցախցիների պահանջի արդարացիությունը, դատապարտվեց Սումգայիթը և հարց դրվեց Սումգայիթում կատարված հանցագործությունները քննել ԽԽՍՀ Գերագույն դատարանում¹:

1988 թվականի աշնանից դարաբաղյան շարժումը դուրս եկավ իր շրջանակներից և դարձավ ակտիվ քաղաքական գործոն: Այն ավելի մեծ թափ ստացավ 1988 թվականի նոյեմբերին և դեկտեմբերի սկզբին: Ադրբեջանից տեղահան արվեցին հարյուր հազարավոր հայեր: Կենտրոնական իշխանությունները ռազմական դրություն մտցրին Բարվում և Երևանում: Ճգնաժամի այդ ամենալարված ժամանակ Հայաստանում 1988 թվականի դեկտեմբերի 7-ին տեղի ունեցավ աշխարհացունց երկրաշարժ: Մ. Ա. Գորբաչովի աղետի գոտի ժամանելուց և մեկնելուց անմիջապես հատու Արցախում ձերբակալվեցին դարաբաղյան շարժման ակտիվիստ Ա. Մանուչարովը, իսկ Երևանում՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամները...²:

ԽԽՍՀ Գերագույն խորհրդի 1989 թվականի հունվարի 12-ի հրամանագրով ԼՂԻՄ-ում մտցվեց կառավարման հատուկ ձև սկսվեց արցախյան գոյամարտի նոր փուլ: Դադարեցվեցին մարզի ժողովրդական պատգամավորների և նրա գործադիր կոմիտեի լիազորությունները մինչև խորհրդի նոր կազմի ընտրությունների անցկացումը, ինչպես նաև կուսակցության մարզային կոմիտեի գործողությունները: Որոշման մեջ ասված է, որ կոմիտեն օժտված է ինքնավար մարզի ժողովրդական դեպուտատների խորհրդի լիազորություններով: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Հատուկ կառավարման կոմիտեն չկարողացավ կայունացնել վիճակը...

¹ «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1988, 23 հունիսի:

² Նույն տեղում, էջ 75-76:



Տարածաշրջանում վիճակը կարգավորելու համար ԼՂԻՄ ուղարկվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նոր հանձնաժողով, որի եզրակացությունն արդեն թելադրված էր կենտրոնից... Կենտրոնում չէին ուզում հասկանալ, որ Ղարաբաղի բնակչության ազատ ինքնորոշման իրավունքի մերժումը, նրան բռնությամբ Աղրբեջանական ԽՍՀ-ի կազմում պահելը նշանակում է ԽՍՀՄ սահմանադրության և միջազգային պարտավորությունների կողմից խախտում¹:

ԼՂԻՄ եկած ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի հանձնաժողովի անդամ, ակադեմիկոս Եմեյանովը նշել է. «Դրությունը շատ ծանր է, երբեք չէր կարելի մտածել, որ գործը կարող էր այդքան հեռու գնալ: Այժմ այստեղ երկու քշնամի կողմեր են: Դիրքորոշումը ծայրահեղորեն է արտահայտվում. մեկը՝ ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու, մյուսը՝ ընդհակառակը՝ տերիտորիան չբաժանելու կողմնակից: Ես գտնում եմ, որ այդ հարաբերությունների սրման պատճառը գտնվում է ոչ միայն հանրապետությունում, այլ նաև կենտրոնում: Այն բացատրվում է մեր կենտրոնական օրգանների անշրջադարձությամբ, անշարժունությամբ, այդ հիմնախնդրի նկատմամբ նրանց մոտեցման ուսկրացածությամբ: Ասում են, մինչև որ կայծակ չլինի, մուժիկը (գյուղացին) չի խաչակնքի: Այստեղ արդեն վաղուց կայծակ եղավ, ուստի կոորդինալ միջոցներ դեռ վաղուց էր հարկավոր ձեռնարկել: Գտնում եմ, որ մինիմում արդեն մեկ տարի ուշացել ենք»²:

Գերագույն քաղաքական մարմնի անվճռականությունից օգտվեցին Աղրբեջանի հակաժողովրդական շրջանները: 1989թ. սեպտեմբերին Արցախում հայտնվեցին մեսիսեթցի թուրքերը: Մարզում մեսիսեթցիների հայտնվելը տեղի ունեցավ Հատուկ կառավարման կոմիտեի գործունեության ըսթացքում, որն անմիջապես ենթարկվում էր ԽՍՀՄ վարչական և պետական կառավարման գերագույն օրգաններին³: Կուսակցության մարզկոմի և քաղխորհրդի կազմացրումը հասցրին մարզի ինքնուրույնության թուլացմանը, որից օգտվեցին Աղրբեջանի դեկավարները, սկսեցին խառնվել մարզի գործերին, հաճախ շրջանցելով Հատուկ կառավարման Կոմիտեն:

Սումգայիթում տեղի ունեցած ցեղասպանության ակտին հաջորդեցին հայերի շարդերն ու սպանությունները Շուշիում, Բաքվում, Կիրովարադում և Աղրբեջանական ԽՍՀ մյուս քաղաքներում ու շրջաններում, որոնք ուղեկցվում էին բռնատեղահանություններով: Միաժամանակ Լեռնային Ղարաբաղը ենթարկվում էր ինչպես ներքին ձնշման, այնպես էլ արտաքին կազմակերպված շրջափակման:

¹ Բարսեղով Յու. , Ինքնորոշման իրավունքը ազգամիջան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է, Երևան, 1990, էջ 74-75:

² Аргументы и факты, 5-11 августа 1989г., № 31.

³ «Известия», 15 января 1989г..



Այդպիսի ծանր պայմաններում էր, որ Լեռնային Ղարաբաղի Ազգային Խորհրդի նախագահությունը դիմում հղեց ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդին Ղարաբաղի 80 տոկոսը կազմող հայ բնակչության ապահովմանը օժանդակելու խնդրանքով: «ՄԱԿ-ի Գլխավոր ասամբեայի 1948թ. դեկտեմբերի 10-ի դեկլարացիայի 2-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր մարդ ունի ազատությունների իրավունքներ, յուրաքանչյուր մարդ և նրա ընտանիքի բոլոր անդամները չնա կարող ենթարկվել ոչ մի խորականության, յուրաքանչյուր մարդ ունի իր երկրի տարածքում ազատորեն տեղաշարժվելու իրավունք: ՄԱԿ-ի դեկլարացիան միշտ էլ խախտվել է Ղարաբաղում, իսկ այսօր արդեն խոսք է գնում հայ բնակչության հանդեպ ֆիզիկական հաշվեհարդարի ռեալ սպառնալիքի մասին: Ճնշում են սումգայիթյան ցեղասպանությունը կրկնելու կոչեր, որոնք պաշտպանություն են գտնում Ադրբեջանական հանրապետության պաշտոնական շրջանների կողմից: Երկար ամիսներ փոքրիկ, հարյուրիկան հազարանոց քրիստոնեական մարզը գտնվում է ամենադաժան պաշարման պայմաններում, կանոնավոր կերպով կատարվում են սպանություններ, բռնություններ, իրականացվում էր արմատական բնակչության դեպրտացիա (բռնագաղթ):

Չնայած ամենաբարձր ինստանցիաներով հղված բազմաթիվ դիմումներին, մեր երկրի դեկավարությունը տարածաշրջանի բնակչության անվտանգությունը երաշխավորող վճռական միջոցներ չի ձեռնարկում:

Այսօր դիմում ենք Ձեզ համար պահանջով՝ ամեն ինչ անել Ղարաբաղի հայ բնակչության անվտանգության ապահովման համար, անհրաժեշտության դեպքում ընդհուպ մինչև ՄԱԿ-ի գորքերի կոնտինգենտ մտցնելը: Վաղը կարող է ուշ լինել»¹:

1989թ. նոյեմբերի 20-ին ՏԱՍՍ-ը տարածեց «ԽՍՀՄ արտգործնախարարությունում» հաղորդագրությունը, որտեղ կտրուկ ձևով քննադատվում է ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի հանձնաժողովի կողմից Լեռնային Ղարաբաղի հարցի առնչությամբ ընդունված բանաձևը: Համանման հայտարարությամբ հանդես է եկել նաև ԽՍՀՄ Գերազույն Խորհրդի միջազգային հարցերի կոմիտեն: Այդ կապակցությամբ ԼՂԻՄ Ազգային խորհրդի անդամները, լիազորված մարզի հայ բնակչության անունից հայտարարելու, «որ ամբողջ հայ ժողովուրդը և ԼՂԻՄ-ի հայ բնակչությունը, մասնավորապես, գրիունակությամբ են ընկալել ԱՄՆ-ի սենատի հանձնաժողովի որոշումը»², դրանով իսկ հերքելով ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա. Բեսմերտնիխի հայտարարությունը՝ «սենատական հանձնաժողովի այդպիսի որոշումը հարուցել է խորհրդային քաղաքացիների սուր հակագրեցությունը և չի կարելի

¹ «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1989, 4 սեպտեմբերի:

² «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1989, 22 նոյեմբերի:



շխականալ այդ վրդովմունքը»¹: Խոսք չեղավ այն մասին, թե ո՞վ էր լիազորել Ա. Բեսմերտնիխին բոլոր խորհրդային քաղաքացիների անունից «վրդովմունք» հայտնելու:

Լեռնային Ղարաբաղի բնակչությունը, ի դեմս իր ներկայացուցական այնպիսի մարմինների, ինչպիսին է, ամենից առաջ, ԼՂԻՄ-ի Ազգային խորհուրդը, ինքն է քաղմից բարոյական և քաղաքական աջակցության համար դիմել դէմոկրատական պետություններին, այդ թվում և Միացյալ Նահանգներին, միջազգային հասարակայնությանը, Միավորված ազգերի կազմակերպությանը: Ուստի հայ ժողովուրդը բոլորվին էլ սենատի հանձնաժողովի բանաձևը չի համարում «կոպիտ և ինքնակոչ միջամտություն», ինչպես որ ասված է ՏԱՍՍ-ի հաղորդագրության մեջ:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին՝ որպես ինքնորոշման նկատմամբ նրա ժողովրդի ձգումանը սրափորեն նայելու խորհրդային դեկավարության չկամություն, հիմնախնդրի Հայաստանի և Աղրբեջանի միջև տարածքային վեճեր հանգեցնելու փորձեր, մարզի չդադարող շրջափակում և աղրբեջանական ազգայնամոլների զինված հարձակումներ, «ԼՂԻՄ իրադրության կարգավորման առնչությամբ» ԽՍՀՄ Գերազույն խորհրդի հանձնաժողովի առաջարկությունների լրիվ ձախողում. այս ամենը բնավ չի վկայում դեպի կարգավորում տանող ինչ-որ միտումի մասին: Մանավանդ, որ հիմնախնդրը ոչ թե «կարգավորման» կարիք ունի, այլ ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա վերջնական լուծման կարիք, սկզբունք, որը ամրապնդված է միջազգային փաստաթղթերում, որի տակ դրված են նաև խորհրդային ներկայացուցիչների ստորագրությունները: Ուստի 1989թ. նոյեմբերի 21-ին ԼՂԻՄ Ազգային Խորհրդի նախագահությունը ենելով ստեղծված իրավիճակից ճիշտ գնահատեց ԱՄՆ-ի սենատի որոշումը և այդ կապակցությամբ հայտարարեց. «ԼՂԻՄ-ի հայ բնակչության՝ սուվերեն հայ ժողովրդի լիիրավ հատվածի անունից ԼՂԻՄ Ազգային խորհրդը ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի հանձնաժողովի անդամներին երախտագիտություն է հայտնում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազգային ազատազրական շարժումն ըմբռնելու և նրան աջակցելու համար: Միաժամանակ, Ազգային խորհուրդը ՏԱՍՍ-ի Գերազույն Խորհրդի միջազգային հարցերի կոմիտեի հաղորդագրությունները դիտում է որպես «սառը պատերազմի ոգով» տողորված հաղորդագրություններ, որպես ստալինյան-բրեժնևյան ժամանակների ռեցիդիվ, որը հակասում է խորհրդային դեկավարության կողմից հոչակված «նոր քաղաքական մտածողությանը»²:

1989թ. նոյեմբերի 21-ի ՏԱՍՍ-ի հաղորդագրությանը հաջորդում է նոյեմբերի 28-ի ԽՍՀՄ Գերազույն խորհրդի որոշումը «Լեռնային Ղարաբաղի ինքնավար

¹ Նույն տեղում:

² «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1989, 22 նոյեմբերի:



մարզում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին»¹, ըստ որի նախատեսվում է Լեռնային Ղարաբաղը փաստորեն բռնությամբ կրկին վերադարձնել Աղրբեջանական ԽՍՀ իշխանության տակ՝ հակառակ նրա հայ ազգաբնակչության հստակ, արտահայտված կամքի, որը բազմիցս հաստատված և պատշաճ ձևով վավերագրված է նրա ներկայացուցչական մարմինների որոշումներում:

ԽՍՀՄ Գերագույն խորհուրդի որոշումն ընդունվել էր՝ շրջանցելով դեմոկրատական պառամենտական ընթացակարգը: Տեղում իրադրությունը պարզելու և ԼՂԻՄ-ի հիմնախնդրի լուծման վերաբերյալ համապատասխան հանձնարարականներ ներկայացնելու համար ստեղծված՝ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդի հանձնաժողովին թույլ չի տրվել իր եզրահանգումների մասին գեկուցել ԽՍՀՄ Գերագույն խորհուրդի նստաշրջանում: Լեռնային Ղարաբաղի և Հայկական ԽՍՀ-ի հայ ազգաբնակչությունը ներկայացնող ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների կարծիքը ամբողջովին և ցուցադրաբար անտեսվել է: Որոշումն ընդունվել էր հապշտապ, առանց քննարկման, ԼՂԻՄ-ից և Հայկական ԽՍՀ-ից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների բացակայությամբ, որոնք իշխանության բոլոր լրել են նիստերի դահլիճը:

Ընդունված որոշումը նահանջ էր առանց այն էլ սահմանափակ այն միջոցառումներից, որոնց կատարումը ներկայացվում էր որպես իրավական հիմունքների վրա Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի քաղաքական լուծման անհրաժեշտ պայման: Հատուկ կառավարման կոմիտեի գործունեությունը ամրապնդելու փոխարեն, այն փոխարինվում է մի մարմնով, որը կարող է միայն ժամանակավորապես իրականացնել վերահսկիչ-վերադիտող ֆոնկցիաներ այն պայմաններում, եթե նախատեսվում է իրական իշխանությունը նորից վերադարձնել Աղրբեջանական ԽՍՀ-ին:

Ի պատասխան ԽՍՀՄ Գերագույն խորհուրդի նոյեմբերի 28-ի որոշման Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը 1989թ. դեկտեմբերի 1-ին ընդունեցին որոշում², որը ԽՍՀՄ Գերագույն խորհուրդի նոյեմբերի 28-ի որոշումը որակավորեց որպես բռնակցման նոր ակտ: «Հիմնվելով ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքների վրա և արձագանքելով հայ ժողովրդի՝ բռնի ուժով բաժանված երկու հատվածների վերամիավորման օրինական ձգումանը, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը որոշում են.

¹ «Խորհրդային Ղարաբաղ», 29 նոյեմբերի 1989թ.: Տես նաև՝ Թովմայան Վ. Հ., Աղաջանյան Վ. Ա., Ներսիսյան Յու. Բ., Ղարաբաղյան հարց, Ստեփանակերտ, 1991, էջ 121:

² «Խորհրդային Հայաստան», Երևան, 1989, 3 դեկտեմբերի, «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1989, 5 դեկտեմբերի:



1. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ձանաչում է Լեռնային Ղարաբաղի Խնքնավար Մարզի ինքնորոշման փաստը հաստատված ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի և հուլիսի 12-ի նստաշրջանի, ինչպես նաև մարզի բնակչության լիազոր-ներկայացուցիչների 1989 թվականի օգոստոսի 16-ի համագումարի և Ազգային խորհրդի հոկտեմբերի 19-ի նիստի որոշումներում:

2. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ձանաչում է Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների համագումարը և նրա ընտրած Ազգային խորհուրդը որպես միակ օրինական իշխանություն:

3. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը հոչակում են Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը:

4. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը ստեղծում են համատեղ հանձնաժողով (իր աշխատանքային ապարատով) Հայկական ԽՍՀ-ի Լեռնային Ղարաբաղի վերամիավորումն իրագործելու ուղղությամբ գործնական քայլեր մշակելու համար:

5. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը պարտավորվում են ներկայացնել Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության ազգային շահերը:

6. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդի նախագահությունը, Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին և ԼՂԻՄ Ազգային խորհրդի նախագահությանը հանձնարարվում է գործադրել սույն որոշումից բխող բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ իրականացնելու համար Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի քաղաքական, տնտեսական և մշակութային կառուցվածքների իրական միաձուլումը միասնական պետական-քաղաքական համակարգում¹:

Փաստորեն ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշմամբ բնության անշատված հայ ժողովրդի մի մասի՝ Լեռնային Ղարաբաղի բնակչության ինքնորոշման իրավունքի ժխտումը ամբողջ «հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքի անտեսումն է և կոպտորեն ունահարում է խորհրդային ֆեղերացիայում ԽՍՀՄ ժողովուրդների կամավոր միավորման սկզբունքը, ուղղակիորեն հակասում է ԽՍՀՄ սահմանադրության հիմնարար սկզբունքին և խախտում է ԽՍՀՄ միջազգային պարտավորությունները, այդ թվում ՄԱԿ-ի կանոնադրության, Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդակցության մասնակից պետությունների ներկայացուցիչների Վիեննայի հանդիպման եզրափակիչ ակտի և ամփոփիչ փաստագծով, որոնք պետություններին պարտավորեցնում են իրենց օրենքները, կանոններն ու քաղաքականությունը համապատասխանեցնել միջազգային իրավունքի վերաբերյալ նրանց

¹ «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1989, 3 դեկտեմբերի:



պարտավորություններին, ներառյալ իրավասության և իրենց ձակատագիրը տնօրինելու, ներքին ու արտաքին քաղաքական ստատուսը ըստ իրենց հայեցողության որոշելու ժողովրդի իրավունքի սկզբունքը:

ԽՍՀՄ Գերազույն խորհրդի որոշումը՝ որպես ինքնորոշման սկզբունքին, ԽՍՀՄ կազմի մեջ հայ ժողովորդի մուտք գրքելու պայմաններին, ԽՍՀՄ և Հայկական ԽՍՀՄ սահմանադրությանը, ինչպես նաև ԽՍՀՄ-ի և խորհրդային ֆերերացիայի սուբյեկտների միջազգային պարտավորությունների հակասող որոշում, հայտարարվում է անվավեր Հայկական ԽՍՀ-ին և Լեռնային Ղարաբաղի համար և ոչ մի իրավական հետևանքներ չստեղծող:

Հայկական ԽՍՀ-ն և ԼՂԻՄ-ը ներկայացնող ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների նիստերի դահլիճից հեռանալու պահից ընդունված ԽՍՀՄ Գերազույն խորհուրդի բոլոր որոշումները, հայ ժողովրդի իրավունքներին ու շահերին դրանց չհամապատասխանելու դեպքում, համարել չգործող»¹:

Միաժամանակ Հայկական ԽՍՀ Գերազույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը հայ ժողովրդի և բնությամբ անջատված նրա մի մասի՝ Լեռնային Ղարաբաղի բնակչության ինքնորոշման իրավունքի խախտման դեմ բողոքով դիմեցին ԽՍՀՄ Գերազույն խորհրդին, բոլոր միութենական հանրապետությունների գերազույն խորհուրդներին, ՄԱԿ-ի անդամ պետությունների պառլամենտներին, ներառյալ Եվրոպայում անվտանգության ու համագործակցության վերաբերյալ խորհրդակցության մասնակից պետություններին և Եվրոպական պառլամենտներին, Հայկական ԽՍՀ արտաքին գործերի նախարարությանը, արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապերի հայկական ընկերությանը, սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեին, Արմենպրեսին՝ արտասահմանյան բոլոր հայ համայնքներին տեղյակ պահելով ԽՍՀՄ Գերազույն խորհրդի ընդունած որոշման, սույն որոշման մասին, ել ավելի համախմբելով մայր հայրենիքի շուրջը՝ ի պաշտպանություն հայ ժողովրդի ուսնահարված իրավունքի:

Վերոհիշյալ որոշման ընդունման հետ միասին Հայկական ԽՍՀ Գերազույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը ընդունեցին մի նոր որոշում՝ «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին»²: «Հայկական ԽՍՀ Գերազույն խորհուրդը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի ինքնորոշման փաստը հաստատված ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի հուլիսի 12-ի նստաշրջանների, ինչպես նաև մարզի բնակչության լիազոր-ներկայացուցիչների 1989 թվականի օգոստոսի 16-ի համագումարի և ազգային խորհրդի հոկտեմբերի 19-ի նիստի որոշումները:

¹ Նույն տեղում, 5 դեկտեմբերի:

² «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1989, 5 դեկտեմբերի:



Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը հոչակում են Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը: Լեռնային Ղարաբաղի բնակչության վրա տարածվում են Հայկական ԽՍՀ-ի քաղաքացիական իրավունքները»¹:

Ընդունելով այսպիսի որոշում, Հայկական ԽՍՀ և ԼՂԻՄ-ի բարձարագույն մարմինները պատրանքներ չեն տածում, թե այն ոգևորությամբ կընդունվի միութենական ատյաններում ու Արքեջանում: Դրա վառ ապացույցն այն է, որ 1989թ. դեկտեմբերի 6-ին Բարգում կազմվեց Լեռնային Ղարաբաղի դեկապարությունը ստանձնող հատուկ մարմին՝ կազմկոմիտե Արքեջանի ԿԿ երկրորդ քարտուղար Պոլյանիշկոյի գլխավորությամբ: Պրովինցիացիոն գործողությունների նոր ալիք սկսվեց Արքեջանի ժողովրդական ճակատի և նրա ազդեցության տակ ընկած ներքին զորքերի ստորաբաժանումների պարետության կողմից: «1990թ. հունվարի 2-ին Ստեփանակերտ քաղաքում ողբերգական դեպք տեղի ունեցավ: Զինվորական կարգախմբի կողմից կրակ է բացվել բնակչության վրա, որի հետևանքով երկու հոգի զոհվել են, երեք՝ ծանր վիրավորվել»²: Այս դեպքի կապակցությամբ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորներ Զ. Հ. Բալայանը, Վ. Մ. Գաբրիելյանը, Վ. Մ. Գրիգորյանը, Բ. Վ. Դադամյանը և Հ. Ա. Պողոսյանը դիմեցին ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Մ. Մ. Գորբաչովին ի գիտություն հաղորդելով, «որ տարածաշրջանի իրադարձությունը սպառնում է դուրս գալ վերահսկողությունից»:

Մենք վճռականորեն պահանջում ենք ստեղծել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավորական հանձնաժողով և Ստեփանակերտ ուղարկել իրադարձությունը տեղում գնահատելու համար»³:

Փաստորեն պարզորշ է, որ դարաբաղյան հարցի լուծման համար պայքարի նոր փուլ է սկսվում, գրամարտի նոր շրջան:

1990-ական թվականների վերջերից սկսած մեր հոգու խոռվի նախասկզբից հրապարակվել են երկրի բարձր ատյանի ոչ քիչ որոշումներ, օրենքներ, դեկլարացիաներ ու պլատֆորմներ, որոնցից յուրաքանչյուրն ահավոր ճգնաժամից դուրս գալու հոլյու է ներշնչել ամենքիս: Երեխայի պես ուրախացել ենք այն պատգամավորների ելույթներով, որոնք առաջարրում էին խորհրդային ֆեդերացիայի հիմնովին վերակառուցման անհրաժեշտության խնդիրը: Ակսած 1988 թվականի փետրվարից ամեն երեկո ուշի-ուշով հետևել ենք «Ժամանակ» տեղեկատվական ծրագրին, սպասելով Արցախի իրավիճակի մասին որևէ օբյեկտիվ կարծիքի, հուսադրվել ենք արտասահմանյան լրագրողների

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում, 1990, 4 հունվարի:

³ «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1989, 4 դեկտեմբերի:



պահանջներով, կարծելով, թե կարող է դա Արևմուտքի կառավարությունների ազդեցիկ անհատների վրա որևէ ազդեցություն ունենալ և նպաստել գործընթացի առաջխաղացմանը, մոռանալով հայ ժողովրդի ազգային-ազատազրական շարժման վերջին հարյուրամյակի պատմությունը, որ մեծ տերություններից և ոչ մեկին, ինչպիսի հավատ և ինչպիսի հասարական կարգ էլ նա ունենա, չեն հուզել ոչ հայկական կոտորածները, ոչ կողոպուտները, և ոչ էլ Հայաստան աշխարհի տարածքային թրաստումները։ Բոլոր մեծ տիրությունները հայկական բզկտված հարցը, որի բաղկացուցիչ մասը Արցախի հիմնախնդիրն է, օգտագործել են միայն իբրև դիվանագիտական խաղ՝ իրենց նվաճողական շահերի համար։

Արցախի հիմնահարցի լրացման համար նոր հնարավորություններ բացվեցին 1991 թվականի սեպտեմբերի 2-5-ը տեղի ունեցած ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ՝ հինգերորդ համագումարից հետո, երբ արդեն այդ համագումարը ըստ էության լուծարել էր ԽՍՀՄ-ը։ Իսկ արդեն 1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետությունում անցկացվեց հանրաքվե, և հայ ժողովուրդը միակամ վճռեց իր ապագան։ անկախ ժողովրդական Հայաստանի օգտին քվեարկեց քվեարկության իրավունք ունցող քաղաքացիների 94,39 տոկոսը։ Հայ ժողովուրդը կարողացավ միջազգային համակեցության նորմերի սահմաններում իր կամքը՝ անկախ ու ժողովրդավարական պետություն ստեղծելու մասին հայտնել աշխարհին։ Սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունեց «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման մասին» որոշումը, ըստ որի Հայաստանի Հանրապետությունը հռչակվեց Հայաստանի Հանրապետության Անկախ Պետություն։ Հայ ժողովուրդը մի անգամ է աշխարհին ցուց տվեց իր անհողողող կամքը, իր արիությունն ու վճռականությունը։

Մինչ այդ, օգոստոսի 29-ին, տեղի ունեցած Արքեջանի Հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանը ընդունեց «1918-1920թթ. պետական անկախության վերականգնման» մասին որոշում։ Ի պատասխան դրան, սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցած ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը՝ բոլոր մակարդակների պատգամավորների մասնակցությամբ, ընդունեց որոշում «Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզի և դրան կից Շահումյանի շրջանի շրջաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (ԼՂՀ) հռչակելու»¹ մասին, որը (ԼՂՀ)-ն օգտվում է ԽՍՀՄ սահմանադրությամբ և օրենսդրությամբ հանրապետություններին տրված լիազորություններից և իրեն իրավունք է վերապահում ինքնուրույնաբար որոշելու իր պետական-իրավական

¹ «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1991, 3 սեպտեմբերի։



Կարգավիճակը՝ երկրի և հանրապետությունների դեկազարության հետ քաղաքական կոնսուլտացիաների և բանակցությունների հիման վրա: ԼՂ տարածքում մինչև ԼՂ սահմանադրության և օրենքների ընդունումը պիտի գործեր ԽՍՀՄ սահմանադրությունն ու օրենսդրությունը, ինչպես նաև՝ գործող մյուս օրենքները, որոնք չեն հակասում սույն հոչակագրի նպատակներին: Իսկ դեկտեմբերի 10-ին Արցախում անցկացված հանրաքվեն անկախ ճանաչեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

(Շարունակելի)

Ամփոփում

Հոդվածում ներկայացվում է 1988 թ. ԼՂԻՄ ժողովատգամավորների խորհրդի արտահերթ նատաշրջանի որոշումը, որով արցախյան շարժման նորօրյա փուլի իրավական հիմքը դրվեց: Փորձ է արվում ցույց տալ, որ արցախիայությունը օրինական ճանապարհով ձեռնամուխ եղավ պաշտպանելու իր ազգային ինքնուրույնությունն ու անկախությունը: Սակայն ի պատասխան դրան Աղրբեջանն ուժ կիրառեց, ինչն հանգեցրեց ռազմական գործողությունների:

Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, ողբերգական իրադարձություններ, արցախիայությունը 1991թ. սեպտեմբերի 2-ին հռչակեց Լեռնային Ղարաբաղի անկախ Հանրապետությունը:

Новая фаза процесса урегулирования арцахского противостояния

Н. Сарумян,
к.и.н., доцент АрГУ
Резюме

Ключевые слова: борьба за существование, представительство, сессия, всенародное собрание, решение, противостояние, дискриминационная политика, независимость, присоединение, армяне Арцаха.

В статье представлено решение внеочередной сессии народных депутатов НКАО 20-го февраля 1988 года, которым новому этапу арцахского движения было придано правовое основание. Делается попытка показать, что население Арцаха встало на защиту своего национального суверенитета и независимости. Однако, в ответ армяне Арцаха столкнулись с военным противостоянием со стороны Азербайджана, что привело к кровопролитным военным действиям.

Преодолев многочисленные трудности, трагические события, армяне Арцаха 2-ого сентября 1991 года провозгласили независимость Нагорно-Карабахской Республики.



A New Phase of the Process of Settlement of Artsakh Confrontation

N.Sarumyan,
p.s.n., docent ASU
Summary

Key words: the struggle for existence, delegation, session, national awakening, assembly, decision, the opposition, discrimination policy, independence, unification, Artsakh Armenians.

The article presents the decision of the extraordinary session of People's Deputies of the Nagorno Karabakh Autonomous Region on February 20, 1988, which established the legal basis for the Karabakh movement. The article attempts to reflect that Artsakh Armenians stood up to defend their national identity and independence.

However, the Azerbaijan responded to the peaceful rallies of Artsakh Armenians by brute force, which resulted in military clashes. Overcoming adversities and tragedies, Artsakh Armenians declared as Nagorno Karabagh Republic on September 2, 1991.



ՆՈՒԲԱՐՅԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Մամվել Պողոսյան

պատմ. գիտ. դոկտոր

ՀՊԱՀ հայոց պատմության ամբիոն

Բանալի բառեր՝ Նուրարյան գերդաստան, Սյունիքի մելիքներ, Նուրար, Պողոս Նուրար, Սուաքել Նուրար, Մեսրոպ Նուրարյան:

Հայ ժողովրդի պատմության մեջ զգալի հետք է թողել Նուրարյան նշանավոր գերդաստանը, որի տարբեր ներկայացուցիչներ ավելի քան 200 տարի աշքի են ընկել իրենց գործունեությամբ: Այդ տոհմին հատկապես մեծ ճանաչում են բերել Նուրար փաշան և նրա որդին՝ Պողոս Նուրար փաշան:

Նուրարյան տոհմը սերում էր Սյունիքի մելիքներից: Ինչպես հայտնի է, 1720-ական թվականներին Սյունիքում հայերի մղած ազգային-ազատագրական պայքարի տարիներին Դավիթ Բեկի նշանավոր զորավարներից էր Զավնդուրի մելիք Թորոսը (1681-1724): Վերջինս զոհվեց 1724 թ. Բարկուշատի ճակատամարտում: Զավնդուրի նոր մելիք դարձավ նրա երիտասարդ ազգականը՝ գեղադեմ, արի Նուրարը, որը մինչ այդ Թորոսի զորքերի սպարապետն էր¹: Ա. Գարտաշյանը նշում է, որ նա մելիք Թորոսի որդին էր², սակայն դա թյուրիմացության հետևանք է, և սկզբնաղյուրները ցույց են տալիս, որ իրականում նրանք ազգականներ են:

Ապստամբության վախճանից հետո Նուրարը հեռացավ հայրենի Շիկահող գյուղից և 1732 թ. հաստատվեց Զմյուտնիայում: Նա այնտեղ ամուսնացել և ունեցել է երեք որդի՝ Դավիթ, Սողոմոն, Պաղտասար, որոնք Զմյուտնիայում վաճառականությամբ էին զբաղվում: Եղբայրներից Սողոմոնն ունեցել է չորս զավկա՝ Նուրար, Մկրտիչ, Սուաքել, Դավիթ, որոնք շարունակում էին զբաղվել վաճառականությամբ:

Նուրարի թոռը՝ Մեսրոպ Հովհաննեսի Նուրարյանը (Զմյուտնիա, 28.11.1842 - 04.12.1929, Մարտել) իր տոհմին մեծ հեղինակություն բերեց, որպես թարգմանիչ, բառարանագիր, բանասեր: Նա սովորել է Զմյուտնիայի Մեսրոպյան վարժարանում, վաղ տարիքից հմտացել ֆրանսերենի մեջ: Դեռևս

¹ Ղուկաս Մերաստացի, Դավիթ Բեկ կամ պատմություն Ղափանցոց, Երևան, 1992, էջ 37:

² Գարտաշեան Ա., Նիւթեր Եզիդապոսի Հայոց պատմութեան համար, հ. Բ, Վենետիկ-Ս.Ղազար, 1986, էջ196:



աշակերտական տարիներից թարգմանություններ է կատարել Շատոքիանից և Մասհնիկից: Գր. Մսերյանի հետ խմբագրել է «Մեղեռք» պարբերականը, որն առաջադիմական զաղափարների պատճառով 1882 թ. փակվել է սովորական կառավարության կողմից: Հրատարակել է «Բառարան ֆրանսերեն հայաշխարհիկ» (Պոլիս, 1892), իսկ 1911 թ.՝ դրա համառոտը՝ «Առձեռնը»: Թարգմանել և հրատարակել է Վ. Հյուգոյի «Փարիզի աստվածամոր տաճար» (Զմյուռնիա, 1868, 1871), Մոլիերի կատակերգությունները (հ. 1-2, Զմյուռնիա, 1905), Լաֆոնտենի առակները, Ֆ. Նանսենի «Դեպի բները», Գյորեի «Ֆառուտի» առաջին մասը՝ ազատ ոճով (Զմյուռնիա, 1910), Շեքսայիրի «Ուուեն և Զուլիետը»: Մամուլում տպագրել է Բենջամեն Կոստանի «Աղողք» վեպը, Բուալոյի «Գրակալը» ևն: 1922 թ. Զմյուռնիայի աղետից հետո հեռացել է Ֆրանսիա, հաստատվել Մարսելում: Երկար տարիներ աշխատակցել է արևմտահայ մամուլին («Արեւելեան մամուլ», «Բիզանտիոն», «Շանթ», «Ծաղիկ», «Կոչնակ» ևն): Ստորագրել է Ս. Նուպար, Մեսրոպ Նուպար¹: Հետմահու հրատարակվել է նրա հուշագրությունը «Սգավոր տարիներ» (Փարիզ, 1939):

Սկրտիչ Նուբարյանի ժառանգներին էր վիճակված նոր փառք բերել այդ տոհմին: Նա ամուսնացավ Եզիպտոսի արտաքին գործերի և առևտրի նախարար Պողոս բեյ Յուսուփյանի (1768-1844) քրոջ՝ Մարիամ-Վարդուիի Յուսուփյանի (Գյուլ հանըմ) հետ և ունեցավ չորս որդի՝ Նուբար փաշան, Առաքել բեյը, Կարապետ (Շարլո) բեյը, Սողոմոն չելեպին և երկու դուստր՝ Հոփիսիմեն և Մարթան: Հոփիսիմեն 1840 թ. ամուսնացել է կոմս Ժ. դե Բոննալի հետ, իսկ Մարթան՝ Դանիել Մարկոսյանի (Մարկոսֆ) հետ և ունեցել երկու որդի՝ Շարլ-Կարապետը և ճարտարագետ Մկրտիչ բեյ Մարկոսփը:

Մկրտիչ Նուբարյանը Եզիպտոսի փոխարքա (1805-1849) Սուհամմեդ Ալիի առևտրական գործերի ներկայացուցիչն էր Զմյուռնիայում և Փարիզում: 1842 թ. նա Մարսելում հանկարծամահ եղավ և աճյունն ամփոփվեց Զմյուռնիայի Ս. Ստեփանոսի գերեզմանատանը՝ Նուբարյանների տոհմական դամբարանում:

Կարապետ բեյ Նուբարյանը 1830 թ. իր մորեղբոր՝ Պողոս բեյ Յուսուփյանի հրավերով մեկնեց Եզիպտոս և ստանձնեց Սուհամմեդ Ալիի թարգմանի և քարտուղարի պաշտոնը: Սակայն 1839 թ. նա մահացավ, իսկ աճյունը հողին հանձնեցին Զմյուռնիայի Նուբարյան դամբարանում:

Սողոմոն չելեպի Նուբարյանը բարձր առաջադիմությամբ ավարտել է Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանը, ապա մեկնել Եզիպտոս և Սուհամմեդ

¹ «Սիոն», Երուսաղեմ, 1930, թիւ 1, էջ 31-32:



Ալից ստացել «Սաղ-Գօլ-Աղասը պատիւին պաշտօնը»¹: Սակայն Սողոմոնը նույնպես վախճանվեց երիտասարդ տարիքում:

Առաքել բեյին և, հատկապես, Նուբար փաշային եր վիճակված ճանաչման նոր ստիճանի բարձրացնել իրենց գերդաստանի հեղինակությունն ու անունը: Նրանք նույնպես, օգտվելով մորեղբոր հովանավորությունից, բնակություն հաստատեցին Եզիդոսում և դեռևս երիտասարդ տարիքում բարձր դիրքի հասան այնտեղ:

Առաքել բեյ Նուբարը (1826-1858) Փարիզում բարձրագույն կրթություն ստանալուց հետո, 1846 թ. վերադարձել է Զմյուտնիա, իսկ 1847 թ. տեղափոխվել Եզիդոսու: Նա դարձավ Եզիդոսու տիրակալ Մուհամմեդ Ալիի որդու՝ իշխան Իբրահիմի, թարգմանն ու քարտուղարը: Խելքի և անձնական բարձր հասկանիշների շնորհիվ 24 տարեկանում Առաքել Նուբարը նշանակվեց Եզիդոսու արտաքին գործերի և առևտրի նախարար (1850-1853), ապա՝ Բեյլինում Եզիդոսու ներկայացուցիչ (1853-1856)², իսկ 1856 թ.՝ Սուլանի ընդհանուր կառավարիչ: Մինչ այդ մահմեդականներով բնակեցված այդ երկրամասը չէր կառավարվել քրիստոնեայի կողմից: Մի շաբթ ցեղեր ապստամբություն բարձրացրին, քանի որ անհանդուրժելի էին համարում քրիստոնեայի կողմից մահմեդականներին կառավարելը: Տեղեկանալով այդ մասին, Առաքելը միայնակ ու անզեն մեկնեց ապստամբների ճամբարը և հարցրեց, թե ինչու են ապստամբել, եթե միայն իր քրիստոնեա լինելու համար է, ապա կարող են իրեն սպանել, քանի որ անցանկալի էր համարում, որ իր անձի պատճառով բազմաթիվ մարդկանց արյուն հեղվեր, եթե այլ խնդիր կար, ապա ինքը կփորձի լուծել: Այդ դիվանագիտական քայլը պսակվեց հաջողությամբ: Ապստամբների առաջնորդը, հիացած Առաքելի համարձակությունից ու ազնվությունից, համբուրեց նրա ձեռքը և իր հպատակությունը հայտնեց, որից հետո Առաքելը 14 ամիս խաղաղությամբ իշխեց իրեն վստահված նահանգում և վայելում էր հպատակների սերն ու հարգանքը: Իր անկաշառ ուղղամտության համար նրան Սուլանում տվեցին «Արդարասեր» մականունը, որը պաշտոնապես կցվեց իր անվանը, և Սուլանի կառավարիշների ցուցակում նա

¹ Գարտաշեան Ա., նշվ. աշխ., էջ 203:

² Պերդրան Է., Նուպար փաշա (1825-1899): Նիշք եւ տպաւրութիւնք, թարգմ. Մեսրոպ Նուպարեան, Վ.Պոլիս, 1910, էջ 43-47:



հիշատակվում է Առաքել Նուբար Արդարասեր անունով¹: Սակայն երկար չկառավարեց, քանի որ նա ևս մահացավ երիտասարդ տարիքում:

Նուբար Փաշա Նուբարյանին (Զմյուռնիա, 1825-1899, Փարիզ) վիճակված էր դառնալ Եգիպտոսի ամենանշանավոր պետական-քաղաքական գործիչներից մեկը: Զմյուռնիայի հայկական դպրոցում ստացել է միջնակարգ կրթություն, ապա երկու տարի ուսանել է Ծննում և Սորեգում: 1842 թ. դեռևս 17-ամյա պատանի Նուբարը, մորեղբոր՝ Պողոս քեյ Յուսուֆյանի հրավերով, մեկնեց Եգիպտոս՝ քարտուղարի պաշտոնով: Նուբարն օժտված էր մեծ ունակություններով, պերճախոսությամբ, դիվանագիտական բարձր հմտություններով, պետական գործչին անհրաժեշտ գրեթե բոլոր ունակություններով, որոնք ըստ արժանվույն գնահատվեցին Եգիպտոսի իշխորների կողմից:

1844 թ. Նուբարը նշանակվեց Եգիպտոսի փոխարքա Մուհամմեդ Ալիի քարտուղար-քարգմանիչը և թագաժառանգի ուղեկից-խորհրդատու²: 1846 թ. Եգիպտական պատվիրակության կազմում մեկնեց Փարիզ: Ֆրանսիայի կայսր Լուի Ֆիլիպը, հիմնալով հայ երիտասարդի մտավոր բարձր ունակություններով, նրան անձամբ պարզեատրեց Պատվո լեգեոնի խաչով³:

1849 թ. Նուբարը ստացավ քեյի տիտղոս, նշանակվեց փոխարքայի առաջին քարտուղար և միաժամանակ Ալեքսանդրիայի առողջապահության վարչության տնօրեն⁴: 1850 թ. ստացավ առաջին լուրջ դիվանագիտական հանձնարարությունը: Մեկնեց Լոնդոն և բրիտանական կառավարության մոտ կարողացավ հակահարված տալ թուրքական կառավարության նկրտումներին, որոնք առաջ էին եկել Մուհամմեդ Ալիի մահից հետո: Իր դիվանագիտական տաղանդի շնորհիվ 25-ամյա երիտասարդը որոշ արտոնություններ ապահովեց Եգիպտոսի փոխարքայի համար⁵:

1850 թ. սեպտեմբերի 3-ին Կ. Պոլսում Նուբար փաշան ամուսնացավ Գևորգ քեյ Երամյանի դստեր՝ Ֆուլիկի (1831-1906) հետ:⁶ Նրանց առաջնեկը եղավ Պողոս Նուբարը, որը նրանց միակ որդին էր: Նուբարն ունեցավ նաև երկու դուստր՝ Մարիամը և Վարդուհին:

¹ Գարտաշեան Ա., նշվ. աշխ., էջ 215-216:

² Պերդրան Է., նշվ. աշխ., էջ 29-32:

³ Նույն տեղում, էջ 34-35:

⁴ Զարդարեան Վ., Յիշատակարան, (1512-1912), հ. Բ, Վ.Պոլիս, 1911, էջ 279:

⁵ Պերդրան Է., նշվ. աշխ., էջ 36:

⁶ Զարդարեան Վ., Յիշատակարան (1512-1933), հ. Գ, Գահիրէ, 1934, էջ 47-50:



Նուբարը եղել է Վիեննայում Եզիպտոսի ներկայացուցիչ (1853-1856)¹, Եզիպտոսի ընդհանուր դատախազության նախագահ (1856-1858), Երկաթուղիների վարչության տնօրեն (1858-1859), իսկ 1859-1862 թթ. տարբեր դիվանագիտական հանձնարարություններով մեկնել է Եվրոպա²:

1863 թ. Նուբարին շնորհվեց ֆերիք և փաշա տիտղոսները: Լուրջ ներդրում է ունեցել Սուեզի ջրանցքի կառուցման գործում: 1865 թ. Նուբարը նշանակվեց Հանրօգուտ շինությունների նախարար և Երկաթուղիների վարչության տնօրեն, իսկ 1866 թ.³ Արտաքին գործերի նախարար³: Վերջին պաշտոնը նա վարեց մի քանի անգամ (1866-1874, 1875-1876, 1878-1879, 1884-1888): Ցանկացած պաշտոնում, կազմակերպական բարձր որակների շնորհիվ, Նուբարն իրեն դրսևորում էր լավագույնս: Դա էր այն զիսավոր պատճառներից մեկը, որի շնորհիվ նա անընդմեջ բարձրանում էր, չնայած, ինչպես վկայում են ժամանակակիցները, չուներ քծնելու և շողոքորելու սովորություն, որը հատուկ էր աշխարհի բոլոր արքունիքներին, հատկապես Արևելքի երկրներին:

Նուբարի վարած արդյունավետ բանակցությունների շնորհիվ, օսմանյան սուլթան Աբդուլ Ազիզը 1866 թ. և 1867 թ. ստորագրեց երկու հրովարտակներ, որոնցով հիմք դրվեց Եզիպտոսի բացարձակ ինքնավարությանը, իսկ 1868 թ. սուլթանը հրամանագիր ստորագրեց, որով Եզիպտոսի փոխարքան անվանվում էր խոյիվ՝ ստանալով իշխանությունը Ժառանգաբար փոխանցելու իրավունք⁴:

Նուբարը չափազանց մեծ ջանքեր գործադրեց Եզիպտոսում դատարանների և արդարադատության համակարգի բարեփոխում իրականացնելու համար: Իննամյա (1867-1876) պայքարից հետո Նուբարը ստեղծեց Եզիպտոսի քաղաքացիական, առևտրական, քրեական օրենսգրքերը, իսկ հյուպատոսական դատարանները նրա ջանքերով փոխարինվեցին միջազգային կամ խառը դատարաններով՝ կազմված եզիպտացիներից և եվրոպացիներից, որոնք զգալիորեն սահմանափակեցին եվրոպացիների իրավունքները Եզիպտոսում: Մինչ այդ օտարերկրացիների համար գործում էին հյուպատոսական դատարաններ, ուր ոտնահարվում էին եզիպտացիների շահերը⁵:

¹ Պերդրան Է., նշվ. աշխ., էջ 43-47:

² Զարդարեան Վ., Յիշատակարան, հ. Բ, էջ 281:

³ Նույն տեղում, էջ 283:

⁴ Պերդրան Է., նշվ. աշխ., էջ 76-77:

⁵ Թոփուզյան Հ., Եզիպտոսի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1978, էջ 85-86:



Նուբարը մեծ ուշադրություն էր դարձնում Եզիպտոսում ոռոգման համակարգը զարգացնելուն և հակայական առաջընթաց արձանագրեց նաև այս հարցում: Իզուր չէր, որ Եզիպտոսի գյուղացիները՝ ֆելահները, Նուբարին կոչում էին «Փելահների հայր»:

1876 թ. նա ժամանակավորապես հեռացավ Եվրոպա, քանի որ ընդհարվել էր խոհի Իսմայիլի հետ, որը զբաղված էր պետական ունեցվածքը վատնելով և երկիրը նորանոր պարտքերի մեջ ներքաշելով:

1877 թ. Բուլղարական հարցի քննարկման ժամանակ Գերմանիայի կանցլեր Օտտոն Ֆիսմարկը տերություններին առաջարկեց Բուլղարիայի կառավարիչ նշանակել Նուբարին, որը դրական արձագանք ունեցավ, սակայն չիրականացավ ոուս-թուրքական պատերազմի սկզբելու հետևանքով¹: Այդ փաստը վկայում էր Նուբար փաշայի միջազգային բարձր վարկանիշի մասին: Այդ պաշտոնում Նուբարին նշանակելու հարցը քննարկվեց նաև Բեռլինի կոնֆերանսից հետո: Անգլիայի վարչապետ Բիքոնսֆիլդը ներկայացրեց Նուբարի անունը: Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Ռուսաստանի ներկայացուցիչները հակված էին Նուբարին տեսնելու Բուլղարիայի իշխանի պաշտոնում, սակայն Թուրքիայի ընդիմության հետևանքով նրա թեկնածությունը հանվեց²:

Անգլիայի և Ֆրանսիայի պահանջով, 1878 թ. օգոստոսի 28-ին Իսմայիլը Եզիպտոսում հաստատեց Նախարարների խորհուրդ՝ կառավարություն, որի նախագահ նշանակեց Նուբարին: Այդ կառավարությունը հայտնի է «Եվրոպական կարինետ» անունով, քանի որ բոլոր նախարարները եվրոպացի էին: 1879 թ. Նուբարը կրկին ընդհարվեց Իսմայիլի հետ և հեռացավ Երկրից: Հետագայում ևս երկու անգամ Նուբարը ստանձնեց Եզիպտոսի վարչապետի պաշտոնը (1884-1888, 1894-1895): Այդ պաշտոնում Նուբարն ամբողջ եռանդով փորձում էր պաշտպանել Եզիպտոսի շահերը և հակահարված տալ օտարերկրյա գաղութարարներին:

Չնայած նա գործում էր Հայաստանից հեռու, երբևէ չէր եղել պատմական հայրենիքում, սակայն երբեք չմոռացավ իր հայկական ինքնության մասին: Նուբարը նշում էր. «Կյանքս նվիրեցի Եզիպտոսին, որովհետև բախտը իմ առաջ այդ գործը հանեց, հրապուրվեցա անկից և կապվեցա: Բայց օտար երկրի մեջ այդ

¹ Զարդարեան Վ., Նուպարեան գերդաստան, «Նոր Հայաստան» շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1919, թիւ 6, էջ 90-91:

² Նուպար փաշա ու եւրոպական մամուլը, «Անահիտ», Փարիզ, 1899, թիւ 4, էջ 144:



գործունեությունս երբեք ինձի շմոցուց, որ հայ մըն եմ»¹: Նա միշտ հպարտանում էր, որ հայ էր և ամենուրեք փորձում էր բարձրացնել իր ժողովրդի անունը: 1860-ական թթ. ֆրանսիացի հայագետ Վիկտոր Լանզուան Նուբարի պատվերով ֆրանսերեն թարգմանեց և հրատարակեց հայ մատենագիրների գործերը, ֆրանսերենով հրատարակեց Հայոց պատմությունը²: Նուբարի հանձնարարությամբ Վենետիկի Միսիարյանները ֆրանսերեն թարգմանեցին Դ. Ալիշանի «Միտուան» աշխատությունը³: Նուբարը 1866 թ. Կ. Պոլսի մոտ գտնվող Խասպուղում հիմնեց Շահնազարյան-Նուբարյան վարժարանը⁴:

Իր ժողովրդին օգնելու ամենապատեհ հնարավորությունը ստեղծվեց 1878 թ., երբ միջազգային դիվանագիտության սեղանին դրվեց Հայկական հարցը և Բեռլինի վեհաժողովում կարող էր իրականություն դառնալ Արևմտյան Հայաստանի համար ինքնավարություն ձեռք բերելու հարցը: Այս շրջանում Նուբարը բավական ոգևորված էր և ցանկանում էր օգտագործել ընձեռված պատեհ առիթը և իր դիվանագիտական կարողություններն օգտագործել հայության շահերը պաշտպանելու համար: Բեռլինի կոնֆերանսի նախօրեին, Նուբարը Հայկական պատվիրակության դեկավար Մկրտիչ Խրիմյանին առաջարկեց իր միջամտությունը և բարենորոգումների սեփական նախազիծը: Այդ ծրագրին հավանություն տվեցին նաև երկու նշանավոր հայազգի պետական գործիչներ՝ գեներալ Միքայել Լորիս-Մելիքովը և Լոնդոնում Իրանի դեսպան ու Բեռլինի կոնֆերանսում իրանական պատվիրակության դեկավար Մելքոն խանը, ինչպես նաև՝ Փարիզում Անգլիայի և Գերմանիայի դեսպանները: Մ. Խրիմյանը համոզված էր, որ պետք է ներկայացնեին Նուբար փաշայի նախազիծը, իսկ վերջինիս հրավիրելին Բեռլին, որպեսզի անձամբ վեհաժողովին ներկայացներ իր ծրագիրը: Սակայն պատրիարքը ոչ միայն մերժեց Նուբարի ծրագիրը, այլև արգելեց նրան հրավիրել Բեռլին:

Կյանքի վերջին տարիները Նուբար փաշան անցկացրեց Փարիզում, ուր և մահացավ 1899 թ. հունվարի 2-ին: Աճունը փոխադրվեց Եզիպտոս և թաղվեց Ալեքսանդրիայի հայկական եկեղեցու բակում⁵: Նրա մահվան առթիվ

¹ Ալպյաձեան Ա., Արարական Միացեալ Հանրապետութեան Եզիպտոսի նահանգը և հայերը, Կահիրե, 1960, էջ 94:

² Զարդարեան Վ., Յիշատակարան, հ. Բ, էջ 289: Նաև՝ Թոփուզյան Հ., Եզիպտոսի հայկական զաղութի պատմություն, էջ 96:

³ «Անակիտ», Փարիզ, 1899, թիւ 4, էջ 145:

⁴ Պերդրան Է., նշվ. աշխ., էջ 79:

⁵ Զարդարեան Վ., Յիշատակարան, հ. Գ, էջ 277-294:



ցավակցական հեռազբեր ստացվեցին բազմաթիվ նշանավոր մարդկանցից, այդ թվում՝ Անգլիայի թագուհուց և վարչապետից, Եգիպտոսի խոհվից: Նույարի մասին հոդվածներ տպագրվեցին եվրոպական գրեթե բոլոր պարբերականներում: Նրա հուլարկավորության օրը կառավարության որոշմամբ Եգիպտոսում ազգային սույն և ոչ աշխատանքային օր հայտարարվեց: Նույն օրը Լոնդոնի Ս. Պետրոս եկեղեցում ևս հոգեհանգստի արարողություն կատարվեց¹: Եգիպտոսը չմոռացավ հայ նշանավոր պետական գործչի ներդրումը այդ երկրի բարգավաճման գործում: Կանգնեցրել են նրա արձանները, նրա անունով անվանակոչել են փողոցներ Կահիրեում և Ալեքսանդրիայում, ջրանցքներ, երկաթուղային կայարաններ և պուրակներ Եգիպտոսի տարբեր վայրերում:

Նույարի դրստրերից **Զիպա-Մարիամը** (1852-1899) 1883 թ. ամուսնացել է Տիգրան փաշա դ'Ապրո Բագրատունու (1846-1904) հետ: Զիպան թաղվել Կահիրեի Ս. Մինաս հայոց գերեզմանատանը՝ Ապրոյան գերդաստանի մատուռ-դամբարանի մեջ: 1885 թ. ծնվեց նրա դուստրը՝ Մարգարիտ-Վարդուհին, որի կնքահայրը դարձավ քեօխն՝ Պ. Նույարը, իսկ 1886 թ.՝ որդին՝ Արամ-Ստեփան դ'Ապրոն: Մարգարիտն ամուսնացավ իտալացի մարկիզ Ռոբերտո Վենտուրի Զինորիի հետ և ունեցավ երեք զավակ, որոնք հաստատվեցին Նեապոլում և Ֆլորենցիայում:

Նույարի մյուս դուստրը՝ **Նոյեմի-Վարդուհին** (1853-1947) 1876 թ. ամուսնացել է Լևոն բեյ Գաֆամաճյանի հետ: Նոյեմի Գաֆամաճյանն աշքի է ընկել իր բարեգործություններով: Նա 41.000 դոլար է տրամադրել ՀԲՀՄ-ին, որով Փարիզի արվածան Շուազի Լը Ռուայի մեջ բազմաբնակարան շենք կառուցվեց, որը էժան գներով վարձով հատկացվում էր հայ չքավոր ընտանիքներին: Փարիզի Հայ աղքատախնամ ընկերությունը մշտապես վայելում էր նրա աջակցությունը, իսկ ՀԲՀՄ-ի կրթական ձեռնարկների համար հատկացրել է 35.000 դոլար:

Հայոց պատմության մեջ յուրահատուկ տեղ է զբաղեցնում Նույար փաշայի որդին՝ նշանավոր բարերար, հասարակական-քաղաքական գործիչ՝ **Պողոս Նույար փաշան** (1851-1930): Նրա անվան հետ է կապված հայկական ամենախոշոր բարեգործական հաստատություններից մեկի՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲՀՄ) ստեղծումն ու բարգավաճումը, Հայկական հարցի ամենածանր շրջանում՝ 1912-1921 թթ. նա ղեկավարեց Հայ ազգային պատվիրակությունը և մեծ ջանքեր գործադրեց հայանպատ

¹ Նույար փաշա ու եվրոպական մամուլը, էջ 140:



լուծումների հասնելու համար: Հավանաբար հայ իրականության մեջ նա միակ գործիչն է, որի ստեղծած բոլոր բարեգործական, կրթական հաստատությունները գործում են նաև հիմնադրի մահվանից հետո՝ մինչև այսօր: Նա տաղանդավոր գյուտարար էր և արժանացել է բազմաթիվ միջազգային մրցանակների:

Պողոս Նուբարը ծնվել է 1851 թ. օգոստոսի 2-ին Կ. Պոլսում: Փարիզում ճարտարագետ-երկրաշափի որակավորում ստանալուց հետո աշխատել է Ֆրանսիայի հանքերում ու երկաթուղիներում, որպեսզի կատարելագործի գիտելիքներն ու հմտությունները: 1880 թ. վերջնականապես վերադարձել է Եզիպտոս և ձեռնամուխ Եղել ֆինանսական, ճարտարագիտական ու երկրագործական խոշոր ձեռնարկներ իրագործելուն և կարծ ժամանակ անց դարձել Եզիպտոսի ամենահարուստ մարդկանցից մեկը: Այնտեղ նա դեկավարում էր մոտ 20 խոշոր ձեռնարկություններ, որոնց մեծ մասի հիմնադրին էր: Նրա կազմած նախագծով Նեղոսի վրա կառուցվեցին Կահիրեին ջուր մատակարարող ջրհան կայաններ:

Նա ավելի քան 7 տարի դեկավարել է Եզիպտոսի երկաթուղիների վարչությունը (1878-1879, 1891-1898): Նրա ջանքերով երկաթուղային համակարգը մեծ զարգացում ապրեց: Սակայն, չհանդուրժելով անզիացիների անհարկի միջամտություններն այդ բնագավառում, իրաժարական տվեց: Հայ գործիչը ամեն կերպ փորձում էր պաշտպանել իրեն հյուրընկալած երկրի ազգային շահերը: Հետագայում նրան բազմիցս առաջարկեցին նախարարական պաշտոններ, սակայն հայազգի գործիչը չընդունեց¹:

Պ. Նուբարը և բելգիացի միլիոնատեր Անքենը, որը Փարիզի մետրոյի հիմնադրիներից էր, Կահիրեի հյուսիս-արևելքում կառուցեցին Հելիոպոլիս թաղամասը: Այն մինչև այժմ էլ Եզիպտոսի մայրաքաղաքի լավագույն թաղամասն է համարվում:

Խոշոր ներդրում է ունեցել Եզիպտոսի երկրագործության զարգացման գործում: Նա Եվրոպայից ճանաչված երկրագործներ ու քիմիկոսներ էր բերում տեղում փորձեր կատարելու համար: Նա առաջինն էր, որ անմշակ ու աղային հողեր գնեց, դրանք նորագոյն մեթոդներով մշակելի դարձրեց և շահավետ գներով վաճառեց: Նրա ազարակները լավագույնն էին համարվում ամբողջ երկրում, իսկ դրանց արտադրանքն ամեն տարի մրցանակների էր արժանանում Կահիրեի հողագործական ցուցահանդեսում:

¹ Ալպօյաձեան Ա., Արարական Միացեալ Հանրապետութեան Եզիպտոսի նահանգը և հայերը, Գահիրէ, 1960, էջ 167:



1898 թ. հիմնադրվեց Եզիպտոսի Արքայական երկրագործական ընկերությունը՝ իշխան Հուսեինի նախագահությամբ, իսկ Պ. Նուբարը փոխնախագահն էր և, փաստորեն, ընկերության իրական ղեկավարը: Նա մեծ ներդրում ունեցավ ընկերության բարգավաճման և առաջին երկրագործական ցուցահանդեսների կազմակերպման գործում:¹ 1905 և 1906 թթ. որպես եզիպտական կառավարության ներկայացուցիչ մասնակցեց Երկրագործական միջազգային առաջին խորհրդաժողովին, որը գումարվեց Հռոմում՝ Իտալիայի թագավորի նախագահությամբ:² Նա նշանակալի դեր կատարեց այդ խորհրդաժողովում, չնայած փոքր երկրի ներկայացուցիչ էր:³

Պ. Նուբարը ստեղծել է նոր տիպի տրակտոր, որը 1900 թ. ցուցադրվեց Փարիզի ցուցահանդեսում: Այդ ցյուտի համար նա ստացավ ոսկե առաջին մեծ մեդալը և Պատվո լեզենի ասպետության խաչ: Զաջորդ տարի այն կատարելագործեց և 1906 թ. Միջանի ցուցահանդեսում ևս մեծ հաջողություն ունեցավ՝ ստացավ ոսկե մեծ մեդալը և Պատվո լեզենի սպայության աստիճան, ինչպես նաև՝ Ֆրանսիայի Երկրագործական ընկերության ոսկե մեդալը, որը չորս տարին մեկ շնորհվում էր Երկրագործական լավագույն գյուտարարին:

1914 թ. Եզիպտոսի կառավարությունը քննարկեց անգլիացի մասնագետների պատրաստած Սուլանի ջրաբաշխական ծրագրի երկու նախագիծ: Կառավարությունը դիմեց Պ. Նուբարի աջակցությանը, որպեսզի նա որպես հմուտ ճարտարագետ ընտրի դրանցից լավագույնը: Սակայն նա կազմեց իր տարբերակը, որը հավանության արժանացավ և նույնությամբ գործադրվեց:⁴

Պ. Նուբարը երկար տարիներ ղեկավարել է Եզիպտահայ համայնքի ներքին կյանքը և նպաստեց համայնքի զարգացմանը: Նրա մոտ բարձր էր ազգային արժանապատվության զգացումը: Նրա հրամանով հայերին արգելվում էր Եզիպտոսում և Սուլանում կոշիկ մաքրելն ու ներկելը:⁵ Նրա ատենապետության օրոք առաջնորդարանի նախկինում կուտակված պարտքերը վճարվեցին, իսկ հասույթներն՝ ավելացան: 1895-1896 թթ. համիլյան ջարդերից հետո, եթե Եզիպտոսում ապաստանեցին հազարավոր հայ գաղթականներ, նա ղեկավարեց Ալեքսանդրիայի նպաստամատուց հանձնաժողովը և բազմաթիվ հայերի փրկեց

¹ Անդ, էջ 174:

² «Լուսաբեր», 1905, թիւ 63:

³ Անդ, թիւ 104:

⁴ «Միութին», 1930, թիւ 141, էջ 332:

⁵ Դավթյան Ռ., Բարերարը, «Խորհրդային Հայաստան», Երևան, 1990, թիւ 94:

թշվառությունից ու սովոր, բազմաթիվ գաղթականների ապահովեց աշխատանքով:¹

Պ. Նուբարը դեռևս երիտասարդ տարիքից միշտ աչքի է ընկել բարեգործական հակումներով: Եզիպոսում գործող հայկական որբանոցների բյուջեների մի խոշոր մասը գոյանում էր նրա նվիրատվություններից, նյութապես աջակցում էր նաև եզիպտահայ մամուլի զարգացմանը: Եզիպոսում կատարվող բոլոր հանգանակությունների ցուցակները զլաւավորում էր նրա անունը: Մեծապես աջակցում էր Էշմիածնի Մայր Աթոռին, Կ. Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքարաններին:

Շուտով, բարերարը համոզվեց, որ մասնակի հանգանակություններ կատարելով կամ անհատական օգնությամբ անհնար է վերացնել այն անհուն թշվառությունը, որի մեջ հայտնվել էր հայ ժողովուրդը XX դարասկզբին: Նա մտահղացավ ստեղծել համահայկական բարեգործական մի ընկերություն, որը ժամանակին օգնության կիասներ աղետների դեպքում, կնպաստեր հայության նյութական ու տնտեսական վիճակի բարելավմանը, մտավոր ու բարոյական զարգացմանը: Նա ստեղծեց Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ), որը հիմնադրման օրվանից մինչև այժմ ամենախոշոր հայկական բարեգործական հաստատությունն է:

1912-1921 թթ. դեկավարել է Հայ ազգային պատվիրակությունը: Այդ ընթացքում նա ցույց տվեց դիվանագիտական բավական բարձր ունակություններ: 1914թ. հունվարի 26-ին Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրված հայկական բարենորդումների մասին համաձայնագիրն իրականություն դարձավ նրա դիվանագիտական ճիշտ քայլերի շնորհիվ:

Հայ ժողովրդին պատուհասած մեծ աղետից ու Հայկական հարցի ձախողումից ընկճական և ուժասպառ, Պ. Նուբարը 1921 թ. հեռացավ ոչ միայն Ազգային պատվիրակության նախագահի պաշտոնից, այև քողեց բոլոր անձնական գործերը և ամբողջ եռանդը նվիրեց ՀԲԸՄ հզորացմանը, որի մասնաճյուղերը տարածվեցին հայկական բոլոր համայնքներում և մեծ դեր խաղացին սկիզբանացնեցին հայկական կրթական ու մշակութային առաջնորդությունը, այն մեծ աջակցություն ցուցաբերեց Խորհրդային Հայաստանի վերաշինությանը և ներգաղթի կազմակերպմանը:

Նա մեծ ուշադրություն էր դարձնում կրթության զարգացմանը: Կառուցել է Կահիրեի Գալուստյան վարժարանի նոր շենքը (1907 թ.), Հելիոպոլսի Նուբարյան

¹ Յուշամատեան Պողոս Նուպար փաշայի, Լոս Անձելը, 1986, էջ 20:



ազգային վարժարանը (1924 թ.): 1906 թ. ուսանողական հիմնադրամ ստեղծեց, որի կրթաթոշակով մի քանի հայ ուսանողներ սովորեցին ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Եգիպտոսի բարձրագույն հաստատություններում: 1924 թ. ուսանողական այդ հիմնադրամը Կահիրեցից տեղափոխեց Բրյուսել, ուր ստեղծեց Հայ ուսանողական Նուրբարյան հիմնարկությունը: 1930 թ. ստեղծել է Փարիզի Հայ ուսանողական կենտրոնը, որը կոչ պատվին կոչեց Մարի Նուրբար ուսանողական տուն:

Ազգային բարերարը առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում հայոց լեզվի և հայագիտության զարգացմանը: Իր նվիրատվությունների զգալի մասը նա հատկացրեց այդ բնագավառին: Նրա հովանավորությամբ բազմաթիվ հայերեն և օտարալեզու հայագիտական աշխատություններ են լույս տեսել բազմաթիվ հայագետների կամ հայասերների հատկացրել է նյութական օժանդակություն: Պ. Նուրբարը 1924 թ. Օրբիդի համալսարանում հիմնել է Հայագիտական ամբիոն՝ Հայոց պատմության և գրականության ուսումնասիրության համար¹: Հայագիտությանը նվիրված խոշոր ձեռնարկներից էր Փարիզում Նուրբարյան մատենադարանի բացումը: Միաժամանակ այդ հաստատությանը հիմնադրամ հատկացրեց, որի եկամուտներով պետք է գնեին կամ հրատարակեին Հայաստանին, հայերին և Մերձավոր Արևելքին նվիրված գրքերը²:

Չնայած համոզմունքներով Պ. Նուրբարը դեմ էր խորհրդային վարչակարգին ու տնտեսածեին, այնուամենայնիվ, չզլացավ օգնություն ցուցաբերել Խորհրդային Հայաստանին, քանի որ գիտակցում էր, որ վարչակարգերն անցողիկ են, իսկ հայրենիքը՝ մնայուն: 1923 թ. նոյեմբերին Հայաստանի գյուղատնտեսության ֆոնդին փոխանցեց 1.000 ոսկի՝ հողաշինարարական աշխատանքներ կատարելու նպատակով³: Միաժամանակ նրա նախաձեռնությամբ ՀԽՍՀ իշխանությունների հետ բանակցություններ սկսվեցին հայ որբերին հայրենիք տեղափոխելու համար: Արդեն 1924 թ. Երևանում, Հայեալի և Բեյրութի որբանոցների 250 սաներ ժամանեցին Երևան: Տեղափոխության բոլոր ծախսերը հանձն առավ ՀԲՀՄ-ը, իսկ յուրաքանչյուր որբի համար Հայաստանի կառավարությանը տվեց 100 դրամ՝ հոգալու նրանց մեջ տարվա ծախսերը: Բացի այդ, ՀԲՀՄ-ը որբերին տրամադրեց որոշակի գումար՝ սեփական գործ սկսելու

¹ Գարտաշեան Ա., Նիւթեր Եգիպտոսի Հայոց պատմութեան համար, հ. Ա, Գահիրէ, 1943, էջ 246:

² «Միութիւն», Փարիզ, 1929, թիւ 132:

³ ՀԱԱ, ֆ.113, գ. 3, գ. 150, թ. 60:



համար՝ ըստ իրենց սովորած մասնագիտության: Պ. Նուբարի նախաձեռնությամբ ՀԲԸՄ-ը հոգաց նաև 1925-1927 թթ. ներգաղթի ծախսերը, որոնց զգալի մասն անձամբ բարերարի գումարներով:

Պ. Նուբարը արձագանքեց նաև ՀԽՍՀ-ին աջակցելու Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) 1924 թ. կոչին և հանդես եկավ սփյուռքահայությանն ուղղված շրջաբերականով, որպեսզի նրանք իրենց ներդրումը բերեն Հայաստանի օգնության հանգանակությանը¹: 1924 թ. ամռանը միայն Փարիզում արդեն հանգանակվեց 142.930 ֆրանկ, որից 50.000 ֆրանկը Պ. Նուբարի նվիրատվությունն էր, իսկ 20.000-ական ֆրանկ նվիրեցին նրա քույրն ու որդին:

Պ. Նուբարի օգնությունը չուշացավ 1926 թ. Լենինականի Երկրաշարժից տուժածներին: Աղետյաններին օգնելու համար նա կատարեց 40.000 դոլարի նվիրատվություն: Տաղիվ էին Երկրաշարժի ցավերը դարմանվել, երբ բարերարին ցնցեց Երևանի ջրհեղեղի չարաղետ լուրը: Նա և Գալուստ Կյուլպենկյանը 100.000 դոլար ուղարկեցին տուժածներին օգնելու համար²:

Պ. Նուբարը գիտակցում էր, որ Հայաստանի վերաշինության ու զարգացման համար անհրաժեշտ են որակյալ մասնագետներ: 1924 թ. նա տեղեկացրեց ՀԽՍՀ կառավարությանը, որ 12.500 ոսկի ոուրիշ է հատկացնում ՀԲԸՄ-ին՝ Երևանի պիտական համալսարանի լավագույն ուսանողներին կրթաթոշակ և Եվրոպայում ուսումը շարունակելու հնարավորություն տալու համար: Եվրոպայում ուսանողը պետք է համարվեր նաև Բրյուսելի ուսանողական հիմնարկության թոշակառու³: Սակայն, ցավոք սրտի, առաջին երկու տարիներին ուղարկված գումարները ոչ ամբողջությամբ ծառայեցին իրենց նպատակին, իսկ հետագա տարիներին մրցանակակիրների անուններ չներկայացվեցին և Նուբարյան մրցանակային հիմնադրամի գումարները երկար ժամանակ չօգտագործվելուց հետո, ի վերջո, հանձնվեցին Բրյուսելի ուսանողական հաստատությանը:

1930 թ. բարերարի ջանքերով Երևանում բացվեց Մարի Նուբար ակնաբուժարանը: Այդ հաստատությանը կարևոր դեր էր հատկացված Հայաստանի բժշկական հաստատությունների համակարգում, հատկապես, եթե հեշտագա տարիներին մրցանակակիրների անուններ չներկայացվեցին և Նուբարյան մրցանակային հիմնադրամի գումարները երկար ժամանակ չօգտագործվելուց հետո, ի վերջո, հանձնվեցին Բրյուսելի ուսանողական հաստատությանը:

¹ Շրջաբերական Վսեմ. Պողոս Նուպար փաշայի Հայաստանի օգնութեան հանգանակութեան մասին, «Միութիւն», Գահիրէ, 1924, թիւ 98, էջ 23:

² Դավթյան Ռ., Բարերարը, «Խորհրդային Հայաստան» օրաթերթ, Երևան, 1990, թիւ 94:

³ ՀԱԱ, ֆ.113, գ. 3, գ. 1745, թ.15-16:



Եին աչքի վարակիչ հիվանդությունները, իսկ մասնագիտացված հիվանդանոց չկար: 1930 թ. հունվարին նա Հայաստանին 12.000 ֆրանկ արժողությամբ վիրաբուժական գործիքներ նվիրեց:

Պ. Նուբարի հատկացրած գումարներով 1930 թ. ամռանը, ակադեմիկոս Ա. Թամանյանի նախագծով, Երևանից 7կմ հարավ-արևելք, սկսվեց Նուբարաշեն ավանի շինարարությունը: 1938 թ. ավանը անվանափոխվեց Սովետաշենի, և միայն 1989թ. դեկտեմբերի 3-ին այն կրկին վերստացավ իր հիմնադրի անունը¹:

Պ. Նուբարը կատարել է նաև բազմաթիվ այլ նվիրատվություններ, որոնք ամբողջությամբ ի մի բերել պարզապես անհնար է: Նույնիսկ մահվան մահճով բարերարը չէր դադարում մտածել իր ժողովրդի մասին: Իր կտակում նա 50.000-ական ֆրանկ նվիրեց Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ հայկական եկեղեցուն, Փարիզի Հայ Աղքատախնամին և Տիկնանց Միությանը, Կահիրեի և Ալեքսանդրիայի հայ աղքատախնամ ընկերություններին²: Ազգային մեծ բարերարը իր մահկանացուն կնքեց 1930 թ. հունիսի 25-ին, Փարիզի իր բնակարանում՝ 79 տարեկան հասակում: Թաղված է Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանատանը՝ Նուբարյան դամբարանում:

Պ. Նուբարի ավագ որդին էր **Առաքել-Ռուկան փաշա Նուբարը** (Ալեքսանդրիա, 1881-1954, Քար): Կրբությունը ստացել է Անգլիայում և Ֆրանսիայում: ՀԲԸ հիմնադր և գործուն անդամներից էր: 1904 թ. ամռանացել է Նազենի Գևորգի Ասլանյանի (1887-1974) հետ: Առաքել Նուբարը 1936 թ. Եգիպտոսի թագավորից ստացավ փաշայի տիտղոս: Առաքելն ու Նազենին կյանքի վերջին տարիներն անցկացրին Փարիզի մոտ գտնվող Քարշ քաղաքում, ուր և մահացան: Նրանք թաղված են Պեր Լաշեզում գտնվող Նուբարյանների տոհմական դամբարանում:

Պ. Նուբարի դուստրը՝ **Եվա-Զարուհի Նուբարը** (1883-1973) 1907 թ. ամռանացել է բելգիացի կոմս Գիյում դ'Արսքոր Շանհովենի հետ: Վերջինս Կ. Պոլսի բելգիական դեսպանատան ավագ քարտուղարն էր (1905-1910 թթ.), ապա՝ Բելգիայի Ալբերտ թագավորի դիվանապետը: Նրանց զավակներն էին Ֆիլիպը (ծն. 1908), որը 1935 թ. ամռանացավ Ռուբի դե Մյունի հետ, Աննան (ծն. 1910), որը 1938 թ. ամռանացավ կոմս Ֆրանսուա դ'Արստեղի հետ, Ժիլենը (ծն. 1912), որը 1934 թ. ամռանացավ իշխան Ֆրանսուա Ժոզեֆ դե Վինդիշ-Գրացի հետ,

¹ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևան, 1998, էջ 35-36:

² «Միություն», Փարիզ, 1930, թիւ 141, էջ 352:



Մարգարիտը (1916-1942), որը 1937թ. ամուսնացավ կոմս Դիդիե դ'Ասպրեմոն-Լինդեն-Մայլենի հետ:

Պ. Նուբարի երրորդ զավակն էր **Զարեհ-Տիգրան բեյ Նուբարը** (Ալեքսանդրիա, 1884-1963, Ժնև): Փարիզում ստացել է փիլիսոփայական կրթություն, մի շարք գրքերի հեղինակ է: 1921 թ. ամուսնացել է Երանուի Յալտայանի (1900-1944) հետ: Զարեհը երկար տարիներ ՀԲՀՄ վարչության անդամ էր, կատարել է բազմաթիվ բարեգործություններ. 1.000 ոսկի է հատկացրել Նուբարաշենի կառուցմանը, 29.000 ֆրանկ՝ ներգաղթի ֆոնդին, 5.000 անգլիական ոսկի՝ Երևանում «Բարեգործականի տան» կառուցմանը, 1956 թ. 25.000 ֆունտ ստերլիգով հիմնադրամ ստեղծեց, որի հասույթները հատկացվելու էին հայ գիտնականներին և արվեստագետներին, միշտ օժանդակում էր հայ ուսանողներին: 1956 թ. հաստատվել է Ժնևում և 50.000 շվեյցարական ֆրանկ հատկացրել տեղում հայկական եկեղեցի կառուցելու համար: Թաղված է Ժնևի Սեն Ժորժ գերեզմանատանը: Զարեհը Նուբարն ուներ երկու դուստր. *Մարիան* (ծն. 1923), որը 1949 թ. ամուսնացավ իշխան Պիեռ Վոլկոնսկի հետ և *Նոյեմին* (ծն. 1924), որը 1951 թ. ամուսնացավ կոմս Ինիգո դ'Օպերադորֆի հետ:

Պ. Նուբարի մյուս որդին էր **Վահրամ բեյ Նուբարը** (Ալեքսանդրիա, 1886-1957, Փարիզ): Միջնակարգ կրթությունը ստացել է Անգլիայի Էստրոն քաղաքի գիշերօթիկ դպրոցում, ապա՝ Ժնևում, բարձրագույնը՝ Լոզանի դաշնային բարձրագույն պոլիտեխնիկական դպրոցում, ուր ձեռք է բերել ճարտարագետի որակավորում: 1922 թ. նա ամուսնացել է Ռոզիտա Մորիի հետ և հաստատվել Փարիզում: Վահրամ բեյը եղել է ՀԲՀՄ Կենտրոնական վարչության պատվակալ նախագահը, 100.000 դոլար է հատկացրել ՀԲՀՄ-ին, որի եկամուտները որպես մրցանակ ամեն տարի հատկացվելու էին գրական և գիտական ուսումնասիրությունների համար: Գրել է սոցիալական, տնտեսական և հատկապես միջազգային խաղաղության հարցերին նվիրված մի շարք աշխատություններ: Թաղված է Փարիզի Նուբարյան դամբարանում: Վահրամ Նուբարն ուներ երեք դուստր՝ *Ինձին* (ծն. 1923), որը 1950 թ. ամուսնացել է Միշել Շիպովի հետ, *Պառլա-Նվարդը* (ծն. 1925), որը 1946 թ. ամուսնացել է Արա Չամբերթյանի հետ և *Մարի-Աստոհիկը* (ծն. 1935): Նվարդի դուստրը՝ Ինգրիդը (ծն. 1947), 1974 թ. ամուսնացել է Զավեն Եկավյանի հետ, որը երկար տարիներ «Գալուստ Գյուլպենկյան իիմնարկության» հայկական բաժնի տնօրենն էր:

Պ. Նուբարի կրտսեր որդին էր **Ասլան-Կարապետ Նուբարը** (1888-1904): Ծնվել է Ալեքսանդրիայում: Միջնակարգ կրթություն ստացել է Փարիզում, ապա՝



Լոգանում: Վախճանվել է պատասխ տարիքում՝ 1904 թ. հոկտեմբերի 21-ին: Այունը հոդին է հանձնվել Փարիզի Նուբարյան դամբարանում:

Այսպիսով, պետք է արձանագրենք, որ Սյունիքից սերող Նուբարյան գերդաստանի ներկայացուցիչները, հաստատվելով Զմյուռնիայում, ապա՝ Եզիփտոսում ու Եվրոպական երկրներում, աշքի ընկան գործարար աշխարհում, պետական կառավարման համակարգում, գրական, հասարակական, բարեգործական ասպարեզներում: Այս տոհմի ներկայացուցիչները ամենուրեք բարձր են պահել հայի անունը և հպարտացել են իրենց ծագմամբ: Ցավոք սրտի, ինչպես վերեւում տեսանք, ազգային նշանավոր գործիչ Պողոս Նուբար փաշայի սերունդները խառն ամուսնությունների հետևանքով հետզհետև հեռացել են հայ իրականությունից, և, պետք է տիկուրությամբ արձանագրենք, որ ուժացման այդ վտանգը լուրջ և չափազանց մեծ սպառնալիք է ամբողջ հայկական Սփյուռքի համար:

Ամփոփում

Նուբարյան գերդաստանը սերում էր Սյունիքի մելիքներից և ամենանշանավոր հայկական տոհմերից էր: Նրա ներկայացուցիչները եղել են ճանաչված ռազմական, պետական գործիչներ, դիվանագետներ, մտավորականներ, բարեգործներ, հաջողակ առևտրականներ: Այս տոհմի ամենանշանավոր ներկայացուցիչներն էին Նուբար փաշան և նրա որդին՝ Պողոս Նուբար փաշան: Ավաղ, Նուբարյան տոհմի անդամները խառնամուսնությունների հետևանքով այժմ հեռացել են հայկական արմատներից:

The Nubaryan Family

S. Poghosyan

Summary

Key words - Nubaryan family, the Meliks of Syunik, Nubar, Boghos Nubar, Araquel Nubar, Mesrop Nubaryan.

The Nubaryans originate from Syunik meliks and were one of the most prominent Armenian families. Its representatives have been recognized as a prominent military,



politicians, diplomats, intellectuals, philanthropes, and successful traders. The most famous members of this dynasty were Nubar Pasha and his son - Boghos Nubar Pasha. Alas, the members of Nubaryan family as a result of mixed marriages are now moved away from the Armenian roots.

Семейство Нубарян

С. Погосян

Резюме

Ключевые слова - Нубарян семейство, Сюникские мелики, Нубар, Погос Нубар, Аракел Нубар, Месроп Нубарян.

Нубаряны происходят от Сюникских меликов и были одним из самых выдающихся армянских семей. Его представители были признаны в качестве выдающихся военных, политиков, дипломатов, интеллектуалов, благотворителей, успешных торговцев. Наиболее знаменитые представители этой династии были Нубар Паша и его сына - Погос Нубар Паша. Увы, члены семьи Нубарян в результате смешанных браков в настоящее время отошли от Армянских корней.



**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ԳՈՐԾԼՆԹԱՅՈՒՄ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆԻՑ (1990-2001թթ.)**

**Էդուարդ Պողոսյան
պ.գ.դ., ՀՊՄՀ դոցենտ
Արմինե Եփրիկյան
պ. գ.թ., ՀՊՄՀ դոցենտ**

Բանալի բառեր՝ ՄԱԿ, անկախություն, Հայաստանի Հանրապետություն, ինքնիշխան պետություն, Ղարաբաղյան հիմնահարց, ֆինանսական կառույցներ, տեխնոլոգիաներ, խաղաղ հանգուցալուծման գործընթաց:

Տակավին անկախության նվաճմանը անմիջապես նախորդող ժամանակահատվածից և հատկապես պետական ինքնիշխանության հոչակումից հետո Հայաստանը հետևողականորեն իրականացնելով միջազգային հարաբերություններում սուրյանտայնության իր իրավունքը ձեռնամուխ նորական համաշխարհային հանրության մեջ ներգրավելու ուղղությամբ վճռական քաղաքական քայլերի, որոնք նաև և առաջ դրսուրբեցին համաշխարհային հեղինակավոր կառույցներին անդամակցելով և միջազգային իրավական դաշտին միանալուն միտված պետական ակտներով։

Զգունով դանալ աշխարհի պետությունների ընկերակցության լիիրավ անդամ և պարտավորվելով իր հարաբերությունները բոլոր երկրների հետ կառուցել միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի հիման վրա Հայաստանի Հանրապետությունը տակավին 1991 թվականի սեպտեմբերին, անկախության հանրաքաղաքացի մի քանի օր անց միացավ ԵԱՀԽ ընդունած բոլոր փաստաթղթերին՝ 1975 թվականին Հնասինյան խորհրդակցության նզրափակիչ ակտին, 1980 թվականի Մադրիդյան հանդիպման նզրափակիչ փաստաթղթին, 1986 թվականի Վիեննայի հանդիպման նզրափակիչ փաստաթղթին, 1990 թվականի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթղթին, 1990 թվականի Փարիզյան խարտիային¹ և այլն, ինչպես նաև քաղաքական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին², միջուկային գենքը չտարածելու մասին ՄԱԿ-ի 1968 թվականի պայմանագրին³։ Թվում է այնքան էլ անհնարքքիր չէ այն փաստը, որ հենվելով 1990 թվականի օգոստոսին ընդունված անկախության հոչակագրի վրա՝ Հայաստանը

¹Հայաստանի Հանրապետության Գնրագույն խորհրդի տեղեկագիր, N18 (998), 30 սեպտեմբերի 1991, էջ 5-6, Հայաստանի Հանրապետություն, 25 սեպտեմբերի 1991։

² «Հայաստանի Հանրապետություն», 2 ապրիլի 1991։

³ «Հայաստանի Հանրապետության» Գնրագույն խորհրդի տեղեկագիր, №18 (998), 30 սեպտեմբերի 1991, էջ 5, «Հայաստանի Հանրապետություն», 25 սեպտեմբերի 1991։



անկախության հռչակումից ամիսներ առաջ, դրանորենով անկախության ուղին որդեգրած հանրապետության հավատարմությունը, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համբարձանուր հռչակագրի դրույթներին տակավին 1991 թվականի ապրիլին էր միացել Միավորված ազգերի կազմակերպության արդեն հիշատակված Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային պայմանագրին և դրան կից ֆակուլտատիկ արձանագրությանը¹: Այդպիսով կարելի է արձանագրել, որ միջազգային կառույցների ու հատկապես ՄԱԿ-ի հետ ՀՀ համագործակցությունը ձևավորվել էր Հայաստանի անկախության հռչակումից առաջ և նոր թափ ստացավ հանրապետության անկախացումից հետո: Մասնավորապես ակտիկ աշխատանքներ սկսվեցին Միավորված ազգերի կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությանը (ՅՈՒՆԵՍԿՕ) Հայաստանի Հանրապետության անդամակցության ուղղությամբ², իսկ 1991 թվականի դեկտեմբերի 10-ին ՀՀ-ն միացավ «Յնդապահնության ոճրագործության կանխման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի 1948 թվականի կոնվենցիային³: Բարձր գնահատելով Հայաստանի Հանրապետության պատրաստակամությունը՝ անշեղորեն հետևելու ՄԱԿ-ի կանոնադրական սկզբունքներին և նպատակներին, ի պատասխան 1992 թվականի հունվարի 23-ին միջազգային այդ ամենահետինակավոր կառույցին անդամակցելու Հայաստանի պաշտոնական դիմումի⁴, նույն թվականի հունվարի 29-ին ՄԱԿ-ի աճվուանգության լսորիւրդը, իր 3035-րդ նիստում ընդունած թիվ 735 որոշմամբ կազմակերպության գլխավոր ասամբլեյին դիմու Հայաստանի խնդրանքը բավարարելու միջնորդությամբ⁵: Եվ ահա 1992 թվականի մարտի 2-ին Նյու Յորքում, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեյի 46-րդ նստաշրջանում Հայաստանի Հանրապետությունը միաձայն ընդունվեց ՄԱԿ-ի անդամ⁶: ՄԱԿ-ին անդամակցելու նախ և առաջ նշանակում էր ճանաչվել, որպես անկախ և ինքնիշխան պետություն, համաշխարհային թատերաբեմում գործող մյուս երկրներին հավասար գործնկեր: Դա նշանակում էր, որ այլևս որպես քաղաքական ամբողջություն հայ ժողովուրդը ևս իրավունք էր ճնշող բնրում մասնակցելու, իր ներդրումը բնրելու աշխարհում ծավալված գործընթացներին:

Հիրավի, վերջապես հաղթեց պատմական արդարությունը, և հազարամյակների պատմություն ունեցող քաղաքակրթության ակունքներին կանգնած հնամենի ժողովուրդը իր կերտած անկախ պետության շնորհիվ և նրա միջոցով դարձավ համաշխարհային հանրության լիիրավ անդամ: Հայաստանը ժողովուրդների համաշխարհային ընտանիքի իրավահավասար անդամ դարձավ իր քաղմադարյա պատմության ընթացքում նյութական ու հոգևոր արժեքներ կերտելու, համաշխարհային քաղաքակրթությանը իր արժանի նպաստը բնրելու իրավունքով ու նաև այն

¹ Հայաստանի Հանրապետության Գնրագույն լսորիւրդի տեսկագիր, №7 (987), 15 ապրիլի 1991, էջ 10-11:

² Նույն տեղում, №19 (999), 15 հոկտեմբերի 1991, էջ 14-15:

³ «Հայաստանի Հանրապետություն», 13 դեկտեմբերի 1991թ., «Հայաստանի Հանրապետություն» միջազգային պայմանագրերի ժողովածու: Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում կնքված պայմանագրեր, Երևան, 2004, էջ 45-48:

⁴ Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում. 15 տարի, -Երևան, : 2007, էջ 9:

⁵ «Հայաստանի Հանրապետություն», 31 հունվարի 1992:

⁶ ՀՀ ԱԳՆ ՊԴԲ, գ. 1, գ.8, թ. 21, «Ազգ», 4 մարտի 1992:



իրավունքով, որ Հայաստանը, քննարկվող պատմական ժամանակաշրջանում, թևակղիսն էր զարգացման միանգամայն նոր փուլ, հասնել էր անկախության և ի լոր աշխարհի հայտարարել առաջադիմության, բարգավաճման ճանապարհով ընթանալու իր նպատակադրումների մասին, որի ընթացքում հայոց պնտությունը որպես ուղենիշ ընտրել էր ժողովրդավարությունը, ազատությունը, ինքնիշխանությունը և քաղաքակրթական մյուս գնրակա արժեքները: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նստաշրջանում կազմակերպությանը Հայաստանի անդամակցության կապակցությամբ արտասանած իր ճառում «Հարուդնախասարար Ռ. Հովհաննիսյանը, լսու էության արտահայտնով հայ ժողովրդին պատաճ զգացումները, մասնավորապես նշեց »...Միավորքած ազգների կազմակերպության անդամ պնտությունների դրոշների կողքին այսօր ծածանվեց նաև մեր նոագույնը՝ մեր իշենի, մեր ինքնության, մեր ազատության դրոշը»¹:

1992 թվականի մայիսից Հայաստանը ՄԱԿ-ում ունեցավ իր մշտական ներկայացուցիչը²: Ըստ նախապես կնքված համաձայնագրենի՝ 1992 թվականի դեկտեմբերին ՄԱԿ-ի Հանրային տնտեկատվական վարչությունն ու Զարգացման ծրագիրը ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի լիազորությամբ Երևանում հիմնադրեցին Միավորքած ազգների կազմակերպության հայաստանյան գրասենյակը³, որը 1998 թվականին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի կողմից հաստատվեց որպես ՄԱԿ-ի շենք, որը համատեղ սկսնցին օգտագործել Միավորքած ազգների կազմակերպության համակարգի մեջ մտնող մի շարք մասնագիտացված գործակալություններ, ծրագրեր, հիմնադրամներ, ինչպես օրինակ ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը, Պարենի համաշխարհային ծրագիրը, Մանկական հիմնադրամը, Միգրացիայի միջազգային կազմակերպությունը, ՄԱԿ-ի Մարդասիրական վարչությունը և այլն⁴: Զարգացման ծրագիրը ՄԱԿ-ի առաջին համակարգված միջոցառումներից էր, որին տակավին 1992 թվականին միացել էր Հայաստանի Հանրապետությունը: Այդ ծրագրի կենսագործմամբ ՄԱԿ-ը, խրախուսելով նորանկախ Հայաստանի տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլ բնագավառներում մասնակի բարեփոխումները, միաժամանակ հանրապետությունում բարձրացնելու համար: Հայաստանի Հանրապետությունում իր հիմնադրման պահից Զարգացման ծրագիրը խորհրդատվական աջակցություն էր զույց տալիս քաղաքականության մշակման բնագավառում, ինչպես նաև տեխնիկական բնույթի համագործակցություն էր ծավալում իշխանական օդակների հետ ժողովրդավարական կառավարման, տնտեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների, աղքատության նվազեցման, էներգետիկայի ու բնապահպանության և այլ ոլորտներում⁵: Ինչպես արդեն պարզ դարձավ, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի գործողությունները մշակվում էին Հայաստանի կառավարության հետ համատեղ, ինչպես նաև այդ ոլորտում ազգային ու միջազգային այլ գործընկեր հաստատությունների հետ ակտիվ

¹ «Հայաստանի Հանրապետություն», 3 մարտի 1992:

² «Հայաստանի Հանրապետություն», 7 մայիսի 1992:

³ Միավորքած ազգների կազմակերպությունը Հայաստանում. Երևան, 2003, էջ 10, 132, «Հայաստանի Հանրապետություն», 12 հունիսի 1992:

⁴ Միավորքած ազգների կազմակերպությունը Հայաստանում. 15 տարի, Երևան, 2007, էջ 10-11:

⁵ Միավորքած ազգների կազմակերպությունը Հայաստանում. Երևան, 2003, էջ 17-18:



փոխգործունեության արդյունքում¹: Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի առաջին փուլը, որն ընդգրկում էր 1992-2000 թվականները, միտքած էր նպաստելու քաղաքական ու տնտեսական առումով անցումային շրջանում զտնվող ՀՀ-ում ազգային, տարածաշրջանային և տեղական կառավարման մակարդակների բարձրացմանը, աղքատության արդյունավետ վերացման նպատակով բազմակողմ մոտեցումների ապահովմանը և այլն²: 2000 թվականից ՀՀ-ում սկսվեց Զարգացման ծրագրի հանրապետության կառավարության, ՄԱԿ-ի համապատասխան գործակալությունների և միջազգային դրնոր համայնքի հետ համատեղ ջանքնորվ մշակված նորոգորդ փուլը, որի գլխավոր խնդիրներից էին զարգացման ազգային նպատակների սատարումը, հանրապետությունում անցումային շրջանի բացասական հետևանքների հաղթահարման ուղղությամբ նրկի իշխանությունների գործունեությանը աջակցնելը, ինչպես նաև ՀՀ-ում կյանքի բոլոր բնագավառները ընդգրկող համապարփակ զարգացման ուղիների որոնումը: Նարկ է նշել, որ Զարգացման ծրագիրը ՄԱԿ-ը Հայաստանում իրականացնում էր բացարիկ հետևողականությամբ: 1993-ից մինչև 2000-ականների սկիզբը ՄԱԶԾ-ի կողմից հանրապետությունում իրականացված ծրագրերի ընդհանուր ծավալը դրամական արժեքով կազմել էր ավելի քան 16 մլն դոլար³: Այդպիսով փաստորեն ՄԱԿ-ը Հայաստանում իր գործունեությունը սկսեց Զարգացման ծրագրի կենսագործմամբ, որն էլ ժամանակի ընթացքում համալրվեց Միավորված ազգների կազմակերպության այլ կարգի ֆոնկցիաներ իրականացնող օդակներով: Այսպես, տակապին 1992 թվականի մայիսին Հայաստանի Հանրապետությունը դարձավ ՄԱԿ-ի համաշխարհային առողջապահության կազմակերպության, արդյունաբերական զարգացման կազմակերպության և ՄԱԿ-ի առևտիքի և զարգացման համաժողովի անդամ⁴, իսկ 1992 թվականի հունիս, սեպտեմբեր ամիսներին Հայաստանի Հանրապետությունը դարձավ ՄԱԿ-ի նրկու խոշորագույն ֆինանսական կառույցների Միջազգային վայուտային հիմնադրամի⁵ և Համաշխարհային բանկի խմբի գլխավոր վարկատու կազմակերպության՝ վերակառուցման ու զարգացման միջազգային բանկի անդամ⁶ և այլն:

2000-ականների սկզբին Հայաստանում ՄԱԿ-ի համակարգը ներառում էր հանրապետությունում մշտական ներկայացուցչություն ունեցող 11 գրասենյակներ, գործակալություններ, ծրագրեր և հիմնադրամներ, որոնց մեջ արդեն հիշատակված Զարգացման ծրագրի հետ մտնում էին նաև փախատականների հարցներով գերագույն հանձնակատարի գրասենյակը, Համաշխարհային բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը և այլն: Քննարկվող ժամանակահատվածում ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի հետ ակտիվորեն համագործակցում և ՀՀ-ում Միավորված ազգների կազմակերպության համակարգի անդամներից էին նաև շուրջ մեկ տասնյակ հաստատություններ, որոնք հանրապետությունում չունեին մշտական ներկայացուցչու-

¹ Նույն տեղում, էջ 17:

² Միավորված ազգների կազմակերպությունը Հայաստանում, Երևան, 2003, էջ 18:

³ Միավորված ազգների կազմակերպությունը Հայաստանում, Երևան, 2003, էջ 18:

⁴ «Հայաստանի Հանրապետություն», 16 մայիսի 1992:

⁵ «Ազգ», 22 ապրիլի 1992, Հայաստանի Հանրապետության Գնրագույն խորհրդի տնտեկագիր, Տ.8 (1012), 30 ապրիլի 1992, էջ 11-15; «Հայաստանի Հանրապետություն», 2 հունիսի 1992:

⁶ «Հայաստանի Հանրապետություն», 18 սեպտեմբերի 1992:



թյուններ: Այդպիսիք էին օրինակ Առևտրի համաշխարհային կազմակերպությունը, Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը, Առևտրի և զարգացման հարցերի համաժողովը, Միջազգային զարգացման ընկերակցությունը և այլն¹: Հայաստանի Հանրապետությունում իրենց գործունեությունը ծավալած ՄԱԿ-ի բոլոր գործակալությունները, ծրագրերն ու հիմնադրամները միավորված էին մեկ համակարգի մեջ, որի հենակավարը կամ համակարգողն էլ հենց հանդիսանում էր ՀՀ-ում Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարի ներկայացուցիչը: Հայաստանում որպես ՄԱԿ-ի միջանըալ գրասենյակի տնօրեն և մշտական համակարգող առաջինը 1992-ից մինչև 1994 թվի հանդիսացել է Թ. Օ'Կոն-Սոլոր Սանոն²:

Հիրավի, անգնահատելի էր խնդրո առարկա ժամանակահատվածում, հատկապնա հասարակական-քաղաքական ու տնտեսական ոլորտներում արմատական հեղաքեռում իրականացնող Հայաստանում, Միավորված ազգերի կազմակերպության խաղացած բացարիկ դերը: Օրինակ ՀՀ-ում ՄԱԿ-ի կառուցներից Զարգացման ծրագիրը ակտիվորեն աջակցում էր Հայաստանում թափանցիկ և հաշվնուու կառավարման մելքանիզմների հաստատմանը, օժանդակում էր հանրային հատվածի բարեփոխումներին, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կառավարման ապակենուրունացմանը միտված նախաձեռնություններին: ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը պրակտիկ քայլեր էր իրականացնում ներկրում գործազրկության և աղքատության նվազեցման ուղղությամբ և այլն: Վերոհիշյալ և բազմաթիվ համաճաման այլ խնդիրների լուծման նպատակով Հայաստանում ՄԱԿ-ի ճնշնարկած քայլերից էին՝ անմիջական նյութական օժանդակության ցուցաբերումը, տնտեսության, հասարակական, քաղաքական կյանքի առանձին խնդիրներին նվիրված ուսումնական ծրագրերի իրականացումը, մասնագիտական տեղեկատվության ապահովումը և այլն: Այսպես ՀՀ-ում ընտրական համակարգի համապարփակ բարեկավման նպատակով ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը նորանկախ Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ 1998 թվականի արտահերթ նախագահական ընտրությունների կապակցությամբ կազմեց և գործարկեց էլեկտրոնային հատուկ էջ, իսկ հաջորդ տարի էլ ՀՀ ԱԺ ընտրությունների ընթացքում իրականացնում էր այդ կարևորագույն պետականաւունդ գործընթացի տեխնիկական և դիտորդական օժանդակության համակարգումը: Հաջորդ ժամանակահատվածում ՄԱԿ-ի իրականացրած «Օժանդակություն ժողովրդավարական գործընթացներին Հայաստանում» ծրագիրը ներառում էր ընտրություններին ցուցաբերվող տեխնիկական աջակցություն, օժանդակ նյութերի պատրաստում և իրատարակում, ողջ հանրապետությունում ընտրական հանձնաժողովների ավելի քան 17 հազար անդամների ուսուցում, տեղեկատվական քարոզարշավ, օժանդակություն ընտրության արդյունքների համակարգաշային հաշվարկման գործում և այլը³: Կոնկրետ Հայաստանի պարագայում բավականին արդյունավետ էին նաև

¹ Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում.-Երևան, 2003թ., էջ 13-14, «Հայաստանի Հանրապետություն», 16 մայիսի 1992, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր», հ. 5-6 (1105-1106), մարտ 1996թ., էջ 10, «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», N25 (91), 30 սեպտեմբերի 1999, էջ 120-127:

² «Հայաստանի Հանրապետություն», 5 դեկտեմբերի 1992:

³ Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում, Երևան, 2003, էջ 20-21:



ՄԱԿ-ի օժանդակությամբ կազմվող ՀՀ տարբեր բնագավառներում արդեն կատարվածը ամփոփող և միաժամանակ հնտագա խնդիրները ուրվագծող փաստաթղթերը: Այդպիսին էր, ասենք 1997-1999 թվականներին հրապարակված «Գնույց զարգացման ուղղված համագործակցության մասին» պիտական և ոչ պիտական մակարդակներով Հայաստանին ցուցաբերված օգնության և տեղում դրա օգտագործման պատկերը ներկայացնող փաստերի և վերլուծությունների ժողովածոն¹: Ակսած 1995 թվականից՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի նախաձեռնությամբ և անմիջական նյութական ու մեթոդական օժանդակությամբ հաճախաբնության անկախ փորձագետների կողմից մշակվում ու հրապարակվում էին այսպես կոչված »Մարդկային զարգացման ազգային գնույցի« ամենամյա ստվարածավալ համարները: Դրանք, ըստ էության, հանդիսանում էին կենտրոնացված քաղաքական ու տնտեսական համակարգից դեպի ազատական հասարակական հարաբերությունների և շուկայական տնտեսության ընթացող Հայաստանի հանրապետության նկարագիրը տարվա կտրվածքը:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի այդ նախաձեռնության նկատմամբ ՀՀ իշխանությունների շահագրգիռ վերաբերմունքի վկայությունն էր այն, որ 1994 թվականին Հայաստանի կառավարության որոշմամբ Մարդկային զարգացման ազգային գնույցի պատրաստման կազմակերպման և համակարգման նպատակով ստեղծվել էր հաճախաբնության տարբեր ոլորտների բարձրաստիճան պաշտոնյաներից և ՀՀ-ում ՄԱԿ-ի ներկայացուցչության ղեկավարներից կազմված 14 հոգանոց մի հանձնաժողով²: Հստ էության ազգային գնույցները կարծ ժամանակում Հայաստանում վեր էին ածվել յուրօրինակ քարոզական զննքի, որը կոչված էր նպաստելու անցումային հասարակության մեջ ժողովրդավարության և համընդհանուր ազատականության համարդկային գաղափարների ներդրմանը³:

Նորանկախ Հայաստանի վերակառուցվող տնտեսության համար չափազանց կարևոր էր ՄԱԿ-ի ֆինանսական կառույցների հետ փոխարձունենությունը: Միավորված ազգերի կազմակերպության հիմնական ֆինանսական օրակների՝ Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի հետ Հայաստանի Հանրապետության համագործակցությունը վկայվել էր տակավին այդ կառույցների մեջ ներգրավվելու նպանական շրջանից: Այդ փուլում համագործակցության հիմնական բնագավառներն էին ՀՀ գյուղատնտեսությունը, էներգետիկան և աղոտի գոտին⁴: ՄԱԿ-ի ֆինանսական կառույցները մասնագիտական ակտիվ օգնություն էին ցուցաբերում նաև

¹ Նույն տեղում, էջ 22:

² ՀԱԱ, ֆ.113, գ.172, գ. 329, թ.1-2:

³ Մարդկային զարգացման գնույց, Հայաստան 1995, Երևան, 1995, Մարդկային զարգացման գնույց, Հայաստան 1996, Երևան, 1996, Մարդկային զարգացման գնույց, Հայաստան 1997, Երևան, 1997, Մարդկային զարգացման գնույց, Հայաստան 1998, Պետության դերը, Երևան 1998, Մարդկային զարգացման գնույց, Հայաստան 1999. Մարդկային զարգացման հիմք տարին Հայաստանում, Երևան, 1999, Մարդկային զարգացման ազգային գնույց, Հայաստան 2000, Մարդու իրավունքները և մարդկային զարգացումը, գործողություն հանուն առաջընթացի,- Երևան, 2000, Մարդկային զարգացման ազգային գնույց, Հայաստան 2001, Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում.- Երևան, 2001:

⁴ «Հայաստանի հանրապետություն», 23 սեպտեմբերի 1992թ., 1 մայիսի 1993.:



Նորանկալս Հայաստանում բանկային գործի ու ողջ ֆինանսավարկային համակարգի կայացման գործընթացին¹: Հնչու 1992 թվականին «Հ կառավարության և Համաշխարհային բանկի միջև ձեռք բնրված համաձայնությամբ ՄԱԿ-ի կառույցը աղետի գոտու վերականգնման համար պետք է տրամադրեն 30-40 մլն դոլարի երկարաժամկետ վարկ, ինչպես նաև անհատույց օգնություն²: ՀԲ-ի ինստիտուցիոնալ բարեփոխումների համար հատկացված 12 մին դոլարի վարկից 1993 թվականին կայացված համաձայնությամբ Հայաստանի տրամադրվեց ավելի քան 3 մին դոլար գործազրկությունից մարդկանց պաշտպանելու, նրանց վերամասնագիտացման աշխատանքների կազմակերպման և զրադապույթյան ծառայությունների վերաբաշխման նպատակով³: 1992-ից մինչև 1994 թվականի կենսեր ՀԲ-ն Հայաստանում իրականացվող ամենատաքրեն ծրագրերի համար տրամադրել էր 107 մլն դոլար վարկ՝ այդ թվում 40 մլն ոռոգման ենթակառուցվածքների բարելավման, 30 մլն դոլար էներգետիկայի համակարգի զարգացման համար⁴ և այլն: Աղետի գոտում ՀԲ-ի առաջին խոշոր ծրագրիր դա վերականգնման նպատակներով 28 մին դոլարի վարկի միանվագ տրամադրումն էր 1994 թվականին: Վարկը տրամադրվեց 35 տարի ժամկետով և 0,5 տոկոսով: Համաշխարհային բանկի աղետի գոտու վերականգնման տնօրինությունը ծրագրել էր շահագործման հանձնված և արդեն իսկ ՀԲ-ի միջոցներով սեփականաշխորհված բնակարանների տերերից գանձել դրանց առանց այն էլ զածը արժենք՝ 2600 դոլարի ընդամենը 2%-ը, այն էլ 25 տարվա ընթացքում⁵: 1994 թվականի սեպտեմբերին «Հ կառավարությունում ստորագրված պայմանագրով Համաշխարհային բանկը Հայաստանին 35 տարով 20 մլն դոլարի անտոկոս նոր վարկ տրամադրեց⁶: Համաշխարհային բանկի տրամադրած վարկերով ռեալ վերակառուցողական գործունեությունը էր ծավալվել հատկապես աղետի գոտում: Այսպես, ՀԲ-ի հատկացված վարկի հաշվին աղետի գոտու վերականգնման ծրագրի իրականացման գրասենյակը շինարարական վերականգնողական աշխատանքներ իրականացնելու նպատակով 1995 թվականի ընթացքում կատարել էր մոտ 15 մլն 350 հազ. դոլարի շինարարական աշխատանքներ: Ընդհանուր առումամբ 1994 թվականից մինչև 1996 թվականի վերջը աղետի գոտու վարկի հաշվին իրականացվել էին մոտ 27 մին 630 հազ. դոլարի շինարարական վերականգնողական աշխատանքներ⁷: Քննարկվող ժամանակահատվածում ընդհանրապես Հայաստանի տրամադրված օտարենիքայ վարկերի գերակշռող մասը հատկացրել էր ՄԱԿ-ի Համաշխարհային բանկը: Այսպես, 1990-ականների կենսերին Հայաստանին արտներկրից տրամադրված բոլոր վարկերի 60 տոկոսը կազմում էին ՀԲ-ի արտոնյալ վարկերը⁸: 1995 թվականի վերջերին ՀԲ-ի հետ Հայաստանի կառավարության կայացված համաձայնությամբ վերակառուցման և զարգացման միջազգային բանկի կողմից Հայաստանին տարեկան լրացուցիչ

¹ Նոյեմբերում, 21 հոկտեմբերի 1992:

² Նոյեմբերում, 16 դեկտեմբերի 1992:

³ «Հայաստանի Հանրապետություն», 24 փետրվարի 1993, 18 հունիսի 1994, 9 դեկտեմբերի 1995:

⁴ Նոյեմբերում, 18 հունիսի 1994:

⁵ «Հայաստանի Հանրապետություն», 10 օգոստոսի 1994:

⁶ Նոյեմբերում, 21 սեպտեմբերի 1994:

⁷ Նոյեմբերում, 18 մարտի 1997:

⁸ Նոյեմբերում, 9 դեկտեմբերի 1995:



տրամադրվում էր 150 մլն դոլար վարկ¹: 1993-ից մինչև 1996 թվականը ներառյալ Համաշխարհային բանկը Հայաստանին տրամադրել էր շուրջ 280 մլն դոլարի վարկ, որոնցով ինչպես արդեն նշել ենք իրականացվել էին ամենատարբեր ծրագրեր՝ աղետի գոտու վնրականզնում, սոցիալական իրավիճակի բարելավմանը, նպատակամոված կառուցվածքային վերափոխումներ, այդ վերափոխումների տեխնիկական աջակցության ծրագրեր և այլն: Նշված և մի շարք այլ ծրագրեր հիմնականում ուղղված էին բնակչության սոցիալական պաշտպանվածությանը, ֆինանսական հնատիտուսների և էներգետիկայի զարգացմանը, մասնավոր ձեռնարկատիրության և սեփականաշխորհման աջակցությանը: ՀԲ-ն այդ նպատակներով բացի աղետի գոտու, ինստիտուցիոնալ վերափոխումների և այլ ծրագրեր ուղղակի վարկավորելուց առմիջական ֆինանսական օգնություն էր ցուցաբերում տնտեսության մասնավոր հատվածին և այն, իրականացնում էր մեծ ծավալի խորհրդատվական, տեղեկատվական գործունեություն²: Այսպես, միայն 1998 թվականի ընթացքում Համաշխարհային բանկի տրամադրած վարկի հաշվին իրականացվել էին 14 մին դոլարի կառուցապատման շինարարական աշխատանքներ, շուրջ 8 մին դոլարի մագիստրալային և ներտնտեսային ոռոգման ջրանցքների, պոմպակայանների, խորբային հորենի վերականգնման աշխատանքներ, շուրջ 2 մին դոլարի շինարարական աշխատանքներ էներգետիկայի ոլորտում, ինստիտուցիոնալ վերակառուցումների նպատակով շուրջ 4 մին դոլարի շինարարություն է իրականացրել Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցով³ և այլն: Համաշխարհային բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը ցուցաբերվող օժանդակությունը չթուլացող տեմպերով շարունակվում էր նաև հետագա տարիներին:

Հայաստանում կառուցվածքային վերափոխումների, մասնավորապես բաշխչ էլեկտրական ցանցների մասնավորեցումը իրականացնելու նպատակով Համաշխարհային բանկը 2001 թվականի ապրիլին ՀՀ կառավարությանը հատկացրեց 50 մին դոլար վարկ⁴, իսկ հուլիսին ՀՀ խորհրդատվական խմբին Փարիզում Հայաստանի կառավարության կողմից, հանրապետությունում իրականացվող վերափոխումների վերաբերյալ, տրված մանրամասն հաղորդումից հետո Համաշխարհային բանկը դրույների հետ միասին որոշում կայացրին 2001-2003 թվականներին Հայաստանին տրամադրել 620 մին ԱՄՆ դոլարի օժանդակություն⁵ և այլն:

1992 թվականին ՄԱԿ-ի մյուս խոշոր ֆինանսական կառույցին՝ Արքույթի միջազգային հիմնադրամին անդամակցած Հայաստանի նախնական վարկային հասույթը սահմանվել էր մոտ 130 մին դոլար⁶: Ըստ ՀՀ կառավարության հետ կայացած հանդիպումներում ձեռք բերված պայմանագրվածությունների ԱՄՀ-ն ակտիվորեն մասնակցում էր նաև Հայաստանի Հանրապետությունում բանկային համակարգի բարեփոխումներին ու բանկային գործի կատարելագործմանն առնչվող խնդիրների

¹ Նոյեմբերի 9 դեկտեմբերի 1995:

² Հայաստանի Հանրապետության Գնրագույն խորհրդի տեղեկագիր, Հ.6 (1082), 31 մարտի 1995թ., էջ 37, «Հայաստանի Հանրապետություն», 18 հունիսի 1994թ., 2 մարտի, 26 հոկտեմբերի 1996, 22 հունվարի, 1997:

³ «Հայաստանի Հանրապետություն», 26 մարտի, 1999:

⁴ Նոյեմբերի 1 մայիսի 2001:

⁵ «Հայաստանի Հանրապետություն», 13 հուլիսի, 2001:

⁶ Նոյեմբերի 2 հունիսի 1992:



լուծմանը: Համագործակցության նախնական փուլում ԱՄՀ-ի անմիջական մասնակցությամբ մշակվնեցին »Կենտրոնական բանկի մասին« և »Բանկերի և բանկային գործունեության մասին« ՀՀ օրենքները: Միաժամանակ ՀՀ նորաստեղծ կենտրոնական բանկում ձևավորվել էր ԱՄՀ-ի խորհրդատոնների ինստիտուտ: Հետաքրքիր է նշել, որ սկսած 1992 թվականից ԱՄՀ-ն օժանդակում էր ՀՀ-ում ազգային դրամի ներդրման հետ առնչվող աշխատանքներին¹: Հետագայում Արժույթի միջազգային հիմնադրամը ակտիվ խորհրդատվական գործունություն էր ծավալի ՀՀ-ում լրացրող մասնավորեցման, աշխատավարձի, ինքնակառավարման, պետական սուբյեկտակում արդյունավետության բարձրացման, գննի ակտիվացման, բյուջետային համակարգի ձևավորման գործընթացներին աջակցելու ուղղությամբ²: Իր կողմից էլ Հայաստանը անվերապահորեն կատարում էր ԱՄՀ-ից աջակցության դիմաց առաջադրված նախապայմանները, որոնք հիմնականում վերաբերում էին տնտեսության հետագա արդիականացմանը, տրամադրված միջոցների նպատակային օգտագործմանը և այլն³: Ծագած խնդիրների օվերատիվ լուծմանը, ստեղծված կոնկրետ իրավիճակում մասնագիտական խորհրդատվության ապահովմանը, Հայաստանում ծավալված վերափոխումների իրական վիճակի մասին տեղեկատվության ստացմանը մեծապես նպաստում էին ՀՀ իշխանությունների և Արժույթի միջազգային հիմնադրամի դեկավարների պարբերական հանդիպումները, ԱՄՀ-ի առաջատար մասնագետներով համարված պատվիրակությունների պարբերական այցելու Հայաստանի հանրապետություն: Այսպես, 1992-ից մինչև 1996 թվականի ապրիլ ընկած ժամանակահատվածում Հայաստան էր այցելել ԱՄՀ-ի շուրջ 50 այդպիսի պատվիրակություն⁴: Փաստորեն ՀՀ-ում տնտեսական բարեփոխումները ԱՄՀ-ի հետ համագործակցության շրջանակներում հիմնականում ներառում էին Հայաստանի տնտեսական վերափոխումների համար հոյս կարևոր այնպիսի ոլորտներ, ինչպիսիք էին ֆինանսական, հարկաբյուջետային, բանկային, վիճակագրության բնագավառները և այլն: Հասկանալի է, որ թվարկված և բազմաթիվ այլ խնդիրների լուծման համար Արժույթի միջազգային հիմնադրամը անպայման պնտը է որոշակի ֆինանսական հատկացումներ կատարել, տրամադրել վարկեր և այլն: Այսպես 1994 թվականին ԱՄՀ-ն Հայաստանին տրամադրել էր 27 մլն դրամի վարկ հանրապետության վճարային հաշվելչոր պակասորդ փակելու համար, իսկ 1995 թվականից ՀՀ-ին հատկացրել էր ևս 63 մլն դրամի վարկ ներկրում կատուցվածքային փոփոխությունները արագացնելու նպատակով⁵ և այլն: Նույն թվականի աշնանը Հայաստանին ՄԱԿ-ի 2 զիլակով վարկատու ֆինանսական կառուցների համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի ամենամյա ժողովը որոշեց ՀՀ-ի արդյունաբերության, մասնավորապես, պրոնախառնության զարգացման ծրագրերի իրագործման նպատակով յուրաքանչյուր տարի Հայաստանին տրամադրել մոտ 400 մլն դրամ ցածր տոկոսադրույթով վարկ⁶: Սկսած 1999 թվականից՝ ԱՄՀ-ն հատկացն մեծ ծավալի

¹ «Հայաստանի հանրապետություն», Գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.): Երևան, 1995, էջ 480-501:

² «Հայաստանի հանրապետություն», 13, 18 հոկտեմբերի, 12 նոյեմբերի 1994թ., 30հունիսի 1995:

³ Նույն տեղում, 24 սեպտեմբերի, 1994:

⁴ «Հայաստանի հանրապետություն», 14 մարտի 1996:

⁵ Ազգ, 4 հոկտեմբերի 1994թ., «Հայաստանի հանրապետություն», 30 հունիսի, 1995:

⁶ «Հայաստանի հանրապետություն», 14 հոկտեմբերի, 1995:



գործունեություն էր ծավալել Հայաստանում էներգետիկ ոլորտի բարեփոխումների, արդեն կայացած քանկային և հարկային համակարգների կատարելագործման, ձեռք բերված մակրոտնտեսական կայունության ամրապնդման և մի շարք այլ հրատապ հարցերի հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ¹ և այլն:

Հայաստանում ՄԱԿ-ի բացառիկ հաջողությամբ իրականացված ծրագրերից էր Պարենի համաշխարհային ծրագիրը: 1993 թվականին Հայաստանում հաստատվելուց հետո իր գոյության մոտ 10 տարվա ընթացքում այդ ծրագրի կնճսագործումը էավելս նպաստել էր հանրապետությունում սոցիալական կազության բարելավմանը: Այդ ընթացքում Պարենի համաշխարհային ծրագիրը ՀՀ-ին տրամադրել էր շորոշ 52 մին դոլարի 107 հազար տոննա մարդասիրական օգնություն, որից օգտվել էր տարեկան միջին հաշվով Հայաստանի ավելի քան 200 հազար կարիքավոր քաղաքացի²: Հայաստանի Հանրապետությունում նոյն հաջողությամբ էին գործում ՄԱԿ-ի՝ Փախստականների հարգերով գերազույն հանձնակատարի գրասենյակը, Մանկական հիմնադրամը, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, Միգրացիայի միջազգային կազմակերպությունը և այլն: 1999 թվականից Հայաստանի Հանրապետությունը ակտիվ գործունեություն էր ծավալել ՄԱԿ-ի Առևտիքի համաշխարհային կազմակերպությանը անդամակցելու նպատակով երկրում տակավիճ 1992 թվականից նախաձեռնված անհրաժեշտ բարեփոխումների իրականացման ուղղությամբ³:

ՄԱԿ-ին ՀՀ անդամակցումից հետո Միավորված ազգների կազմակերպությունը ակտիվութեան արձագանքում էր նորանկախ Հայաստանի համար ամենակարևոր հիմնախնդիրն՝ Աղբենջանի ծեռնարկած ազրեսիայի արդյունքում ծագած, հայադրենջանական առճակատմանը Արցախում ծավալված իրադարձություններին⁴: Դրան էավելս նպաստում էր այն հանգամանքը, որ տակավիճ 1992 թվականի հունվարի սկզբին ԼՂ խորհրդարանը դիմել էր Միավորված ազգների կազմակերպությանը օգնության խնդրանքով⁵: ՄԱԿ-ի հենց սկզբից, իրավիճակին տիրապետելու նպատակով հակամարտության գոտի էր ուղարկում փաստահավաք լսմբն և պատվիրակություններ⁶: Քննարկվող ժամանակահատվածում ՄԱԿ-ի բազմաթիվ կառույցներ հանդիս են նկել հայտարարություններով, կայացրել քանաձևներ: Այդ ուղղությամբ հատկապն մեծ ծավալի աշխատանք էր իրականացրել ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը, որում դարձարայան հիմնահարցը վկած 1992թ. հոկտեմբերից հաճախակի եղել է բննարկման առարկա⁷: Անվտանգության խորհուրդը իր որոշումներում բազմից դատապարտել է ԼՂ-ի ու Հայաստանի դեմ Աղբենջանի ազրեսիան, շրջափակումները և այլն⁸: Միայն 1993թ. ընթացքում Լեռնային Ղարաբաղի կապակցությամբ ՄԱԿ-ում ընդունվել էին խոշորամաշտաբ երեք քանաձևներ⁹: Ղարաբաղյան հիմնահարցի

¹ Նոյն տեղում, 14 մայիսի, 22 հունիսի, 8 հուլիսի, 17 սեպտեմբերի 1999:

² Միավորված ազգների կազմակերպությունը Հայաստանում.-Եր.: 2003, էջ 59:

³ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, №25 (91), 30 սեպտեմբերի 1999, էջ 120-127, №6 (104), 5 ապրիլի 2000, էջ 88-89:

⁴ «Հայաստանի Հանրապետություն», 29 հունվարի, 5, 10 մարտի 1992:

⁵ Նոյն տեղում, 4 հունվարի 1992թ.:

⁶ Նոյն տեղում, 14, 21, 23, 26 մայիսի, 1 հունիսի, 10 դեկտեմբերի 1992թ., 26 մարտի 1993թ.:

⁷ Նոյն տեղում, 28 հոկտեմբերի 1992թ.:

⁸ Նոյն տեղում, 14 մայիսի, 9 հունիսի 1992թ.

⁹ Նոյն տեղում, 4 մայիսի, 22 հոկտեմբերի, 16 նոյեմբերի 1993թ.:

խաղաղ լուծման ուղղությամբ իր ակտիվ գործունեությունը ՄԱԿ-ը շարունակում էր նաև հնտագայում:

Ամփոփում

Միջազգային կառուցների և հասլապես ՄԱԿ-ի հետ Հայաստանի համագործակցությունը ձևավորվել էր տակալին ՀՀ անկախության հոչակմանը անմիջապես նախորդող ժամանակահավածից և նոր թափ ստացավ հանրապետության անկախացումից հետո: 1992 թ. ՄԱԿ-ին անդամակցելով ՀՀ-ն ճանաչվեց, որպես անկախ և ինքնիշխան պետություն, համաշխարհային թատերաբեմում գործող երկրներին հավասար գործընկեր: ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակին առընթեր գործում էին մի շարք մասնագիտացաված գործակալություններ, ծրագրեր, հիմնադարամներ: 2000-ականների սկզբին ՄԱԿ-ի համակարգը ներառում էր հանրապետությունում մշտական ներկայացնություններ ունեցող 11 կառուցներ և էի շորջ մեկ տասնյակ հաստատություններ, որոնք հանրապետությունում գրանցված չէին: Այդ կառուցները աջակցություն էին ցուցաբերում նորանկախ Հայաստանի Հանրապետությանը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում վարվող քաղաքականության մշակման և իրկանացման բնագավառում, տեխնիկական բնույթի համագործակցություն էին իրականացնում իշխանական օդակների հետ ժողովրդական կառավարման, տեխնակատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների, ալքաստության նվազեցման, էներգետիկայի ու բնապահպանության և այլ ոլորտներում: Նորանկախ Հայաստանի վերակառուցվող տնտեսության համար չափազանց արգասարեր էր ՄԱԿ-ի ֆինանսական կառուցների հետ ՀՀ փոխգործունեությունը:

ՄԱԿ-ը, բննարկվող ժամանակահատվածում, նաև ակտիվորեն աջակցում էր Ղարաբաղյան հիմնահարցի խաղաղ հանգուցալուծման գործընթացին:

Из истории деятельности организации объединенных наций в процессе утверждения независимой государственности в Армении (1990-2001гг.)

Э. Погосян,

доктор исторических наук, доцент АГПУ им. Х. Абовяна

А. Епrikян,

кандидат исторических наук, доцент АГПУ им. Х. Абовяна

Резюме

Ключевые слова: ООН, независимость, Республика Армения, суверенное государство, Карабахский вопрос, финансовые структуры, технологии, мирное урегулирование

Сотрудничество Армении с международными структурами, в особенности с ООН, сформировалось еще с периода, непосредственно предшествовавшего провозглашению независимости РА, и получило новый размах после достижения независимости. В 1992 году став членом ООН, РА была признана независимым,



суверенным государством и равноправным партнером действующих на мировой арене стран. При представительстве ООН в Армении действовал целый ряд специализированных агентств, программ, фондов. В начале 2000-х годов система ООН состояла из 11 структур, имеющих свои постоянные представительства в республике, и еще около десятка незарегистрированных учреждений. Эти структуры оказывали поддержку достигшей независимости Республике Армения в деле разработки и реализации осуществляемой политики в различных сферах общественной жизни, осуществляли сотрудничество технического характера со звеньями власти в сфере демократического управления, информационных и коммуникативных технологий, сокращения бедности и т.д. Для перестройки экономики провозгласившей независимость Армении сотрудничество РА с финансовыми структурами ООН было очень плодотворным. В обсуждаемый период ООН также активно содействовало процессу мирного урегулирования Карабахского вопроса.

**From the History of UNO Role in the process of Establishment of Armenia
as an Independent State**

E. Poghosyan,

Ph Doctor of Historical Sciences, ASPU after Kh. Abovyan

A.Eprikyan,

Ph Assistant of Historical Sciences, ASPU after Kh. Abovyan

Summary

Key words: UNO, independence, Republic of Armenia, sovereign state, Kharabakh conflict, financial structures, technologies, peaceful solution.

The coordination of Armenia with international structures and especially UNO had initially been formulated long before the Republic of Armenia proclaimed its independence and prospered after the Republic got its independence. In 1992 the Republic of Armenia was admitted in the membership of UNO, was recognized as an independent and sovereign state, as well as an equal partner among all the countries in the world. A number of specialized agencies , programs and funds started their activities together with the Armenian foundation of UNO.

At the beginning of 2000 the system of UNO involved permanent representatives in the Republic from 11 structures , also about a dozen institutions which weren't registered in the Republic. These structures supported the newly established Armenian Republic in different spheres of social life, in the field of elaboration and policy realization, working out the coordination of technical type with various authorities , democratic government, mass media and communication technologies , reducing poverty, energetic, defense of natural resources and other fields. For the reconstruction of economy of the independent Armenia the collaboration with the financial structures of the UNO was very significant. In the discussed period the UNO also actively supported the process for the peaceful solution of the Kharabakh conflict.

**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
2005-2008 թթ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ¹**

**Հարությունյան Մ. Ա.,
պ. գ. թ., դոցենտ**

Բանակի բառեր. ինժեներական ծառայություն, Պաշտպանության բանակ, ամրաշինական կառույցներ, առաջնազիծ, պաշտպանական համակարգ, մարտունակույցներ, անվտանգություն, մարտական հեղթապահույցներ:

Ամրաշինական կառույցները զորքերի մարտական գործողությունների, դիրքերում և տեղակայման շրջաններում կենացնակույցան բարձր մակարդակի պահովման կարևորագույն միջոցնեն, բարձրացնում են զենքի և մարտական տեխնիկայի կիրառման արդյունավետությունը, ապահովում ժամանակակից խոցման միջոցներից զորքերի պաշտպանությունը:

Պաշտպանության բարձր մակարդակն ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել աճապիսի համակարգ, որի շնորհիվ կրակային միջոցները օգտագործվեն արդյունավետ, կասեցվի հակառակորդի առաջխաղացումը և հասցվեն առավելագույն կորուստներ, վճռական հակագրորդի համար ստեղծելով անհրաժեշտ պայմաններ:

Պաշտպանության բանակի ինժեներական ծառայության կազմակիրման ու կայացման մասին ժամանակին ադրադարձել ենք², ուստի սույն հրապարակմամբ քննության ենք առնել միայն 2005-2008 թթ. զործունությունը:

2005-2008 թթ. Պաշտպանության բանակի ինժեներական ծառայության հիմնական ջանքերն ուղղված են եղել մարտական հեղթափահությունում ընդգրկված անձնակազմի անվտանգության ապահովմանը, ինժեներական կառույցների և արգելափակուցների կատարելագործմանը, պլանային ինժեներական աշխատանքների և խնդիրների կատարմանը:

ՊԲ հրամանատարին ինժեներական ծառայության պետ, զնդապնտ Կ. Թովմայանը³ զեկուցել է, որ 2007 թվականի մարտ ամսվա ՊԲ ռազմական խորհրդի որոշմամբ նախատեսված բոլոր միջոցառումները հիմնականում կատարվել են⁴:

¹ Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 16.10-007 գիտական թեմայի շրջանակներում:

² Ինժեներական նոր խնդիրների առաջ[Ս. Հարությունյանի հարցազրոյցը ՊԲ ինժեներական ծառայության պետ Եղուարդ Այդինյանի հետ]. - «Մարտիկ», 1 – 7 ապրիլի 1998 թ., հմ. 12 (257), էջ 2:

³ Կարեն Թովմայանը ծնվել է 1960 թ. ապրիլի 28-ին, ԼՂՀ Մարտունիի շրջանի Ճարտար բնակավայրում: 1986-ին ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը և ստացել ինժեներ-մետալուրգի որակավորում: 1977-1978 թթ. աշխատել է Ճարտարի «Կոմունիզմ» կոլտնտեսությունում, 1986-1989 թթ. Ալավերդիի Լեռնամետալուրգիական կոմբինատում, որպես՝ հեղթափոխի վարպետ, հետո՝ արտադրամասի վարպետ, 1989 թ. տեղափոխվել է Ճարտար և մասնակցել գյուղի



Ամրաշինական կառույցների և արգելափակողների օգտագործումը հաշվարկվել է մարտական գործողությունների կարծ ժամանակահատվածի համար, նրանց պահպանումն երկար ժամանակահատվածում առաջ է բնրել մի շարք դժվարություններ, որոնց հաղթահարումը հրատապ էր ՊԲ-ի համար:

Այսպես, ՊԾ-ների պաշտպանության տնդամասների առաջին խրամատի ինտենսիվ մաքրման հետևանքով խրամատի վերսի մասի լայնությունը տեղ-տեղ հասցվել է այնպիսի լայնության, որը կորցրել է անձնակազմի պաշտպանող հատկությունը հակառակորդի հրետանու և հատկապես ականանետների կրակից:

Անհրաժեշտ է սպասարկման աշխատանքները կազմակերպել այնպես, որպեսզի ամրաշինական կառույցները պահպաննեն իրենց պաշտպանիչ հատկությունները:

Հաշվի առնելով պաշտպանական շրջանների կողմից իրականացվող մարտական խնդիրները՝ պաշտպանության տնդամասնությունը առանձնահատուկ տեղ է զբաղեցրել ջոկի դիրքների հնմտներական կահավորումը:

Առաջադրված խնդիրները բխել են հակառակորդի կրակային խոցման աստիճանը բարձրացնելու և առաջնազգի պաշտպանական համակարգը մշտապես կահավորված վիճակում պահպանելու անհրաժեշտությունից:

Փորձը ցոյց է տվել, որ յուրաքանչյուր ուսումնական փուլում, եթեն խրամաքիշները, ինչպես նաև հաղորդակցման ուղիները չեն սպասարկվում, ապա դրանք փլփում և շարքից դուրս են գալիս:

Առաջին խրամատ (դիրք) տանող հաղորդակցման ուղիները մշտապես պահվել են կահավորված վիճակում:

Ոլորտի պատասխանատուն նշել է, որ եթեն պահվող կացարանները վերանորոգվել և սպասարկվել են, ապա չպահվող կացարաններն ուշադրությունից դուրս են մնացել, ժամանակին չեն կատարվել սպասարկման աշխատանքները, հերթափոխներին դրանց հանձնումը-ընդունումը²:

Հրաձգային գումարտակներում հակառակորդի կրակային խոցման համար կարևոր միջոցներ են համարվել ականանետները և հակատանկային միջոցները, որոնց կրակային դիրքների և ծավալման բնագծների հնմտներական կահավորումը ևս համարվել է ՊԲ հնմտներական ծառայության բաժնի պետ:

Պահապահաշտպանական ջոկատի կազմավորմանը: 1992 թ. ծառայում է Պաշտպանության բանակում, որպես՝ 24-րդ գլումարտակի հրամանատար, 1995-1997 թթ. 2-րդ ՊԾ-ի հրամանատարի տեղակալ, 1997-2001 թթ. նոյն ՊԾ-ի հրամանատար, 2001-2003 թթ. Լեռնահրաձգային գորամասի հրամանատարի տեղակալ, 2003-2006 թթ. նոյն գորամասի հրամանատար, 2006-2012 թթ. ԼՂՀ ՊԲ հնմտներական ծառայության բաժնի պետ: Պահեստագոր արձակվելուց հետո նշանակվել է ԼՂՀ «Մարտակերտի ջրային տնտեսություն» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն(2013-2014 թթ.), «Ջրային տնտեսություն» ՓԲԸ-ի տնօրեն(2014-2015 թթ.), իսկ 2015 թ. հունիսի 3-ին ԼՂՀ կառավարության որոշմանը՝ Մարտունիի շրջանի վարչակազմի ղեկավար: Պարզաբանվել է ՀՀ և ԼՂՀ 2-րդ աստիճանի «Մարտական խաչ» շքանշաններով, ՀՀ «Մարտական ծառայություն» մեդալով, ԼՂՀ վարչապետի հուշամեդալով:

¹ «Կաձառ» գիտական կենտրոնի արխիվ, ֆ. 192, գործ 1, թ. 1-9:

² «Կաձառ» գիտական կենտրոնի արխիվ, ֆ. 192, գործ 1, թ. 3:



Հակատանկային միջոցների կիրառման վրա բացասաբար է անդրադարձն լայնածավալ հակատանկային փոսերի և փոս-ճանապարհների կառուցումը, որի հողադատանշները փակել են տեսաննելիությունը:

Ակներեարար առաջին խրամատի հաղորդակցման ուղիների, ականանետային դասակի կրակային դիրքի, հակատանկային դասակի ծավալման բնագծերի, դեկապարման կետերի կահավորված վիճակում պահելու և տարեկան սպասարկումներն իրականացնելու համար պահանջվել է անձնակազմի մեծ քանակությամբ ներգրավիում և նյութական միջոցների ծախս:

Ինչպես նշել է ոլորտի պատասխանատուն, տեղերում հրամանատարության ուշադրության կենտրոնից դուրս է մնացել չպահպող դիրքերի, գումարտակի երկրորդ, երրորդ խրամատիների, հաղորդակցման ուղիների կահավորումը:

ՊԲ հրամանատարի կարգադրության հիման վրա 2008 թ. մարտի 6-ից 20-ն իրականացվել են պաշտպանության տեղամասերի, շրջանների ինժեներական առումով կահավորման աշխատանքներ, որի ընթացքում վերակառուցվել և վերափոխվել են խրամաքիցները, լրակահավորվել են կրակային գոտիները: Մեծածավալ աշխատանքներ են տարվել նաև առաջին դիրքի խրամատների, խրամաքիցների, հաղորդակցման ուղիների լրակահավորման և բարելավման ուղղությամբ:

Բոլոր ՊԵ-ներում, տանկային և մոտոհրաձգային վաշտերի համար կահավորվել են կենտրոնացման շրջանները, կրակի բնագծերը:

Հիմնականում բոլոր ամրակառույցների առկայությունն ապահովվել է, տանկերի և ՀՄՄ-ների խրամատները նորմերին համապատասխան փորվել են, բացառությամբ փակ խրամաճներերից: Միաժամանակ ՊԲ ԻՄԲ պետք բարձրածայնել է տանկերի և ՀՄՄ-ների համար կրակային բնագծերում նախատեսված խրամատները վերանայելու անհրաժեշտությունը՝ կապված վերջնի կառուցված հակատանկային փոսերի և փոս-ճանապարհների հետ:

Հիմնականում ստորաբաժանումների կրակային դիրքերը և դիտակենտերը հիմնականում կահավորվել են և մշտապես լրահամարվել: Սակայն ստուգումների ժամանակ ի հայտ են բերվել մի շարք թերություններ:

Յուրաքանչյուր տարվա պյանով նախատեսվել են ճանապարհների վերանորոգման և սպասարկման աշխատանքներ: Սակայն, ինչպես նշել է զնդապես Կ. Թովմայանը, ճանապարհների վերանորոգման աշխատանքների վրա լուրջ ուշադրություն չի դարձվել, ինչի պատճառով դրանք ժամկետից շուտ շարքից դուրս են եկել:

Կարևորվել է ինժեներական գործիքների պահպանմանը վերաբերող և մի հարց: Թեև բոլոր մարտական դիրքերն ինժեներական գործիքներով ապահովվել են, սակայն դրանց պահպանման և շահագործման վրա ստորաբաժանումների հրամանատարները լուրջ ուշադրություն չեն դարձել, ինչի պատճառով ինժեներական գործիքները ժամանակից շուտ շարքից դուրս են եկել: Ամեն տարի պակասորդի կամ ջարդված գործիքների վերականգնման համար իրականացվել են պահումներ, այսպես՝ 2005 թվականին զանագի է 291.000 դրամ, 2006 թվականին՝ 790.600 դրամ, 2007 թվականին՝ 204.800 դրամ¹:

Այստեղ հարկ է նշել, որ բոլոր կացարանները ջնուցվել են հեղուկ վառելիքով, որի պատճառով դիրքերում առկա կացինների և սղոցների անհրաժեշտությունն այլևս չի

¹ «Կաձառ» գիտական կենտրոնի արխիվ, ֆ. 192, գործ 1, թ. 6:



զգացվել, ուստի նպատակահարմար է համարվել ինժեներական գործիքների ցանկից հանել կացինները և սղողները, բացի բարձրենոնային տեղանքում տեղակայված գորամասներից:

Անդրադառնալով արգելափակողների վիճակին, կարող ենք փաստել, որ ՊԲ պաշտպանական գոտու ականապայթյունային և ոչ պայթյունային արգելափակողներից կազմված ինժեներական արգելափակողների համակարգը մշտապես կատարնագործվել է:

Փուն-ճանապարհները պաշտպանության գրուում ապահովել են մերժնաների անվտանգ երթը: Մարտական գործողությունների ժամանակ դրանք օգտագործվելու են որպես հակատանկային արգելք:

Գաղտնիք չէ, որ տարեցտարի տեղադրված ականադաշտերի արդյունավետությունը նվազել է, քանի որ 10-14 տարվա վաղնություն ունեցող ականները կարող են շարքից դուրս գալ (ինչպես մասնագետներն են կարծում հակատանկային ականների 10-15 %-ը, իսկ հակահետևակային, առանձնապես ՕՉՄ-72, ՊՕՄԶ-2 տիպի ականների 50-60%-ը):¹

Բացի դրանից, սկսած 2000-ից 2007 թվականներին առաջնային գծից առաջ դիվանուն հետախուզական խմբների հնարավոր ներթափանցման ուղիների վրա և միջդիրքային տարածություններում տեղադրվել են հակահետևակային ականներ(տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Ականների տեղադրման քանակն ըստ թվականների²

2000 թ.	2002 թ.	2003 թ.	2004 թ.	2005 թ.	2006 թ.	2007 թ.
4223	5431	5184	1992	13200	4165	2608

2007 թ. ընթացքում վերանորոգվել է մոտ 90 միավոր տեխնիկա, որից մոտ 50 միավոր՝ կրկնակի և եռակի անգամ:

Վերանորոգման ժամկետները ծագած են հիմնականում համապատասխան պահենատամասների և հանգույցների ճնորքներման դժվարության պատճառով: Իսկ հաճախակի խափանումների հիմնական պատճառներից նշվել են մեխանիկ վարորդների և անձնակազմի կողմից ինժեներական տեխնիկայի շահագործման ու պահպանման կանոնների խախտումները:

Ինժեներական տեխնիկայի և սպառագինության անհրաժեշտ հաշվառում տանելու, ժամանակին և որակով տեխնիկական սպասարկումներ և նորոգումներ կատարելու գործում 2007 թ. աշըի են ընկել հյուսախային ուղղությունում գործող առանձին հրաձգային գումարտակներից մեկը և զենիթահրթիւտական այլ գորամասը:

2007 թվականի ինժեներական սարքավորումների կատարնագործման նպատակով իրականացվել են մեծածավալի ինժեներական աշխատանքներ:

2007 թվականին չափարտված պլանային ինժեներական աշխատանքները շարունակվել են 2008-ին, այդ տարվա համար նախատեսված պլանային

¹ «Կաձառ» գիտական կենտրոնի արխիվ, ֆ. 192, գործ 1, թ. 6:

² Նույն տեղում:



աշխատանքների համար համապատասխան նյութական միջոցների հատկացմանը գուգընքաց:

Ուշագրավ են ՊԲ ինժեներական ծառայության պետի առաջարկները.

- Լուրջ ուշադրություն դարձնել ինժեներական պլանով նախատեսված մարտական դիրքերի քարտվ նրանապատման աշխատանքներին, ղեկավարվելով ՊՆ ինժեներական գորքների վարչության կողմից մշակված ուղեցույցով և առանձնահատուկ ուշադրություն դարձնելով խրամաբարձիշների և կրակի գոտիների կահավորմանը:

- Տանկային և մոտոհրածագային ստորաբաժանումների կրակի ծավալման բնագծերը կահավորել համակարգված, հաշվի առնելով կառուցված հակատանկային փոսերի հողապատճենները և սահմանափակ զորաշարժի ճանապարհները:

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հակահետևակային բնկորային ականները (ՕԶՄ-72, ՊՕՄՁ-2) ժամանակի ընթացքում օբյեկտիվ պատճառներով շարքից դուրս են գալիս, նպատակահարմար է օգտագործել միայն մարտական գործողությունների վարման կամ է սպառնալից ժամանակահատվածում: Ներկայումս ականադաշտերի տեղադրման համար օգտագործել միայն հակահետևակային ֆուզասպյին (ՊՄՆ, ՊՄՆ-2, ՊՄՆ-Ե, »Կայծակ«) տիպի ականներ:

Այսպիսով, ՊԲ ինժեներական ծառայությունը 2005-2008 թթ. կատարել է պլանային և հրատապ միջոցառումները, նպաստելով ՊԲ մարտունակությանը, դիրքերում մարտական հերթապահություն տանող անձնակազմի անվտանգությանը:

Ամփոփում

2005-2008 թթ. Պաշտպանության բանակի ինժեներական ծառայության հիմնական ջանքերն ուղղված են եղել մարտական հերթապահությունում ընդգրկված անձնակազմի անվտանգության ապահովմանը, ինժեներական կառույցների և արգելափակողների կատարելագործմանը, պլանային ինժեներական աշխատանքների և առաջարկված խնդիրների կատարմանը:

Առաջարկված խնդիրները բխել են հակառակորդի կրակային խոցման ասիժճանը բարձրացնելու և առաջնազգի պաշտպանական համակարգը մշտապես կահավորված վիճակում պահպանելու անհրաժեշտությունից:

ՊԲ ինժեներական ծառայությունը 2005-2008 թթ. կատարել է պլանային և հրատապ միջոցառումները, նպաստելով ՊԲ մարտունակությանը, դիրքերում մարտական հերթապահություն տանող անձնակազմի անվտանգության բարձրացմանը և ամրաշինական կառույցների կատարելագործմանը:

Из деятельности инженерной службы армии обороны в 2005-2008 гг.

**М.Арутюнян,
кандидат исторических наук, доцент
Резюме**

Ключевые слова: инженерная служба, Армия Обороны, фортификационные строение, передовая линия, боевое дежурство, оборонительная система, боеготовность, безопасность



В 2005-2008 гг. основные усилия инженерной службы Армии Обороны были направлены на обеспечение безопасности личного состава, вовлеченного в боевое дежурство, совершенствованию инженерных и фортификационных строений, выполнению плановых работ и поставленных задач.

Поставленные задачи вытекали из необходимости повышения степени огневого поражения противника и сохранения в постоянном обустроенным состоянии оборонительной системы передовой линии.

Инженерная служба Армии Обороны в 2005-2008 гг. выполнила плановые и востребованные мероприятия, способствуя боеготовности АО, повышению безопасности личного состава, несущего боевое дежурство и совершенствованию фортификационных сооружений.

**From Defence Army 2005-2008 Engineering
Service Activity**
M.Harutyunyan,
Candidate of Historical sciences, docent
Resume

Keywords: *engineering service, Defense Army, fortifying defensive constructions, first line, defense system, security included, military duty, defense system.*

In 2005-2008 the main efforts of Defense Army engineering service were directed towards the support of the staff security included in military duty, the improvement of engineering constructions and barriers, fulfillment of the given tasks and planned engineering activity.

The tasks set were arisen to enhance degree of enemy's fire wounding and from the necessity of keeping the first line defense system permanently furnished.

Defense Army engineering service of 2005-2008 has done all the planned and urgent measures thus supporting the Defense Army combat readiness, the security of staff being on duty in emplacements and perfection of fortifying defensive constructions.



ԶԱՎԵՆ ՄԱՀՏԵՍԻ ԲԱՐԵՎԱՆ (1876-1925)

*Օֆելյա Բաբայան
բ.գ.թ., պրոֆեսոր, ԱրՊ*

Բանալի բառեր՝ հոգևորական, Ղարաբաղի թեմ, Հայոց թեմական հոգևոր դպրոց, Էրզրումի թեմի առաջնորդ, և Գայանե, մահապարտների գունդ, Սարդարապատի ճակատամարտ:

Մեր ժողովրդի պատմության քաններորդ դարի հակասական ու հոգեցունց իրադարձություններ՝ Առաջին համաշխարհային պատերազմ, 1915թ. նդեռն, Հայկական Առաջին Հանրապետություն, Հայաստանի խորհրդայնացում, կուլակաթափություն, ստալինյան ռեժիմ, հայրենադարձություն, Երկրորդ համաշխարհային պատերազմ, անձի պաշտամունքի քննադատություն, պայքար անկախության համար, ԽՍՀՄ-ի քայլայում, Արգախան պատերազմ, խոր հետք են թողել մարդկանց հոգեկերտվածքի ու մտածողության վրա: Այդ դարի 40-50-ականներին ծնված սերունդը տարիների հետովից ուշացած փորձում է ընկալել ու խմատավորել նախորդ տասնամյակների պատմական դեպքերն ու մարդկանց գործունեությունը, ճանաչել իր արմատները: Նոյն ընտանիքում մնացած հարազատ մարդիկ տարբեր ուղիներ են ընտրել, դարձել կոմունիստ, դաշնակցական, հոգևորական...

Մեծ հորեղաբար՝ Անդրեյ Բաբայանը, կոմունիստ էր, երկար տարիներ աշխատել է մեր երկարամասի դատական, արդարադատության մարմիններում: Բարձրագույն իրավաբանական կրթություն ստանալուց հետո նշանակվել է Բարփի նախկին Վորոշիլովի, Ձերժինսկու շրջանների ժողովադատություն: Հայրենական մեծ պատերազմի տարիներին եղել է զինվորական տրիբունայի անդամ, նախագահ, պատերազմից հետո՝ Ադր ԽՍՀ փաստաբանների կողնգիայի նախագահի տեղակալ, իրավաբանական կրնառութացիայի վարիչ: ԼՂ արդարադատության մարմինների երկարամյա աշխատող Բ. Տեր-Կասպարովը, ով Բարփում Ա. Բաբայանի հետ աշխատել էր, նրա մասին գրում է: »Վերին աստիճանի համեստ ու ազնիվ մարդ էր«¹: Թաղված է Բարփի հայկական գերեզմանոցում (ո՞վ կարող էր մտածել, որ բազմազգ Բարփում ազերի վայրագները հիմնահատակ կրանդեն հայկական գերեզմանները):

Հորս հորեղբօր որդին՝ գնդապետ Մովսես Մահտեսի Բաբայանը, Շուշու ռենալական դպրոցի շրջանավարտ էր, Պետրոգրադի տեխնոլոգիական ինստիտուտն ավարտած ճարտարագետ: Եթե պայյօնում է առաջին աշխարհամարտը, ենթարկվում է զորակոչի, ուղարկվում զինվորական դպրոց, չորսամյա դասընթացն ավարտելուց հետո որպես սպա ուղարկվում ճակատ: Ուսւ նշանավոր զորավար Բրուսիլովի զորաբանակում աչքի է ընկնում իր քաջությամբ, արժանանում Գնորգյան երկրորդ և ապա առաջին աստիճանի շքանշանի և ոսկե թրի: Մովսեսն աշակերտական նստարանից դաշնակցական էր և Շուշիում դաշնակցական աշակերտական միության վարչության անդամ, լավ ձայն ուներ, երգում էր թեմական դպրոցի քառածայն խմբում թե՛ պատարագի, թե՛ միջոցառումների ժամանակ:

¹Տեր-Կասպարով Բ., Արդարադատությունը Լեռնային Ղարաբաղում (1923-2003թ), Ստեփանակերտ, 2005, էջ 27:



Ինչպես գրում է Եղիշե Իշխանյանը, ովՄովսես Մահտենի Բաբայանին ճանաչում էր Ծուշու ռեալականից, Մովսեսը մտահոգված էր հենդափոխության հետ կապված իրավիճակով: Հայ սպանները որոշել են դիմել կառավարությանը որպեսզի թույլ տա իրենց փոխադրվել կովկասյան ճակատ: Մովսեսը երկու հարյուր հիսուն զինվորներ է հավաքում, ներկայանում զինվորական նախարարին, բայց դանդաղում էր հայ զինվորներին կովկասյան ճակատ ուղարկելը: Մովսեսը զոհվում է Արևմտյան ճակատում: Նրա մեծ նորբարձ՝ Զաքարը, ճակատից դիմ բերում, ամփոփում է Վարանդայի Գիշի գյուղի գերեզմանատանը¹:

Մովսեսի հայրը՝ Խոջա Սարգսին, ժամանակին ակնածանքով ընդունել էր Խրիմյան Հայրիկին, այնպիսի գործ փոխել նրա ոտքերի տակ, որն արժանացել էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուշադրությանը: Ինչպես վկայում է Խոջա Սարգսին թոռը՝ Հայրապետ Բաբայանը, այդ գործը գտնվում էր Էջմիածնում:

Փորձում նմ հասկանալ հորս պատմածը՝ Հայրս՝ Ենոք Բաբայանը, Գիշու դպրոցի վաստակաշատ ուսուցիչներից էր: Նա ոչ մի խմբակցության, կուսակցության անդամ չէր դարձել: Ասած եղբոր մասին խոսելիս երբեմն իշխում էր մոր պատմածը, որ թևանիստները գիշերը հանկարծակի ենել են Անդրեյին քննելու, ով լենինյան գաղափարներով ոգևորված կոմունիստ էր: Երևան նա տեղյակ էր և անտառներով փախել էր մորական Ննգի գյուղը: Երբ թևանիստները տեսնում են պատից կախված մկարը, լսաչակնելով հետանում են՝ ասելով. «Սա Տեր հոր տուն է, թե կոմունիստիք»: Եվ Խորհրդային երկրի մարդուն հետաքրի չէր՝ ո՞վ է Տեր հայրը, չնայած երբեմն գնում էինք Ոսկի խաչ սրբառնին, մոմ վառում, մատաղ անում: Հայրս էլ չէր խոսում այդ մասին, բայց երբ 1965-ին Երևանում բուիի ընդունելության քննություններ էի հանձնում, իր հորեղբոր տղայի հետ, ով իր որդուն Զավեն էր անվանել, նկարվել էր Գայանե վանքի բակում թաղված հորեղբոր՝ Մայր աթոռի միաբան, նպիսկոպոս Զավեն Մահտենի Բաբայանի շիրմաքարի մոտ, և Թուրշյանի «Սարդարապատի ճակատամարտը» գրքում կարմիր մատիսով ընդգծել հորեղբոր և Մահապարտների գնդի մասին պատմող հատվածները. «Դաշնակցության անդամալուծության և այլ պարտիաների բացակայության այդ տարտամ և հոգնվարքային օրերին հայ զորքին խանդապանու և ժողովրդին ինքնապաշտպանական կովհութի հանելու գործում մեծ նաևսածնություն ցույց տվին Էջմիածնի հոգևորականներից ոմանք, հատկապես ճեմարանի տեսուչ, հայտնի հայագետ Գարեգին նպիսկոպոս Հովսեփյանը, Էրգրումի առաջնորդ Զավեն նպիսկոպոս Մահտենի Բաբայանը, վարդապետներ Եղնիկը, Դանիելը և Թամալոսը»²:

Հնդինակը նշում է, որ Գարեգին և Զավեն նպիսկոպոսները մայիսի 22-ի վագառական ծի հեծած գնում են Էջմիածնի մոտակա Հայի Ձեյքա և Քյորփալու գյուղերը: Վերջինս որպես Էրգրումի թեմի առաջնորդ Երգնակայից մինչև Արարատյան դաշտը հաճախ էր նոր ուազմաճակատի առաջին գծերում, իսկ անշուր ուվուր Գարեգին նպիսկոպոսը՝ որպես գրի ու զիսության մարդ, առաջին անգամն էր կովի դաշտ գնում: Նրա զենքը պերճախտությունն է: Նա մահապարտներ է անվանում հայ ժողովրդին ու նրա զորքին, 5-րդ գունդը վերանվանում է Մահապարտների գունդ և նրան նրդվեցնում կովի դուրս գալ անկախ ու աննահանջ: Երկու նկնդցականները,

¹ Իշխանյան Ե., Լեռնային Ղարաբաղ(1917-1920), Երևան, 1999, էջ 4-5:

² Թուրշյան Հ., Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1968, էջ 128-129:



խաչը ձեռքին բարձր պահած, ընկնում են զորքի առաջ և հրամանատար գնդապնտ Պավել Փիրումյանի հետ միասին նրանց առաջնորդում դնախ իմացյալ մահ։ Մայր տաճարի զանգերը դողանջում են, որոնց ձայնակցում են բոլոր վանքերի Եկեղեցիների զանգերը, և այդ ահասարսուու ահազանգը ույթ օր շարունակ (մայիսի 22-ից մինչև մայիսի 29-ը) տարածվում էր ամենուր։ Միաբանները ոսքի են ենում, Եզնիկ, Դանիել, Թաղևոս վարդապետները Սարդարապատի վրա կռվի են տանում հինգ հարյուր պատանքավոր, որոնք միջնադարյան կրոնական պատերազմների անձնագործությամբ կրվում էին Մահապարտների 5-րդ գնդի աջ թևում¹։

1911թ. մարտից Զավեն Մահտեսի Բարեյանը աշխատել է Շուշիում։ «Բագուի Հայոց Եկեղեցիների գործակալ տ. Զաւեն վարդապետին կարգել Ղարաբաղի վիճակային կոնսիստորիայի նախանդամ, որը թեմի առաջնորդ չի լինելու պատճառով պէտք է վարի կոնսիստորիայի և տեղական հոգևոր դպրանոցի հոգաբարձութեան նախագահողի պաշտօնը»²։

Սանդր Բնիքույյանը, հիմք ընդունելով վավերագրերը, իր գորքի առաջաբանում նշում է, որ Հայ Եկեղեցն միշտ ընդգծված նախանդախնդիր վերաբերմունք է ունեցել մանուկների դաստիարակության խնդիրների հանդեպ, այդ ոլորտըմիշտ եղել է հոգածության առարկա³։ Այդ է Վկայում նաև Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ Զավեն վարդապետի ստորագրությամբ 1912թ. վավերագիրը։ Տեղեկագիրը սկսվում է Երկրի աշխարհագրական դիրքի բնորոշմամբ, տրվում են հոգևոր-վարչական բաժանման սահմանները, հոգևորականների թվաքանակն ու կրթական մակարդակը. «Անվիճնի է, որ ներկայում կենանքը նախկին տարիների համեմատութեամբ աւելի առաջ է գնացել. առաջ, որ քահանան գիտի միակ գրագետ և «կարդացած» մարդն էր համարում, այժմ արդեն յնտին շարքերն է անցել, որովհետև թէ՝ հայոց Եկեղեցական-ծխական դպրոցների և թէ պնտական դպրոցների գոյութիւնը գիտերում տարեցտարի տալիս է գրագետ գիտացիների աւելի թիւ, որովհետև գիտ են գալիս քաղաքներում պանդսությթեան ժամանակ գրագետ դարձած գիտակ մարդիկ իրենց նոյնիսկ միջնակարգ դպրոցներում մի քանի տարի ուսած զաւակներով և գիտը միանգամայն փոխառում է իր նախկին դրույթինից։ Այժմ արդեն մեր գիտացիները պահանջ են զգում ուսման, գիտութեան, ընթերցանութեան, նոյնիսկ լրագրութեան, որի միջոցն մասնակից են դառնում իրենց հետաքրքրութեամբ ոչ միայն հայ ազգի, ոչ միայն հարևան ազգերի կենաքին, այլև հետաքրքրութեամբ են հեռու անծանօթ ներկրներում տնի ունեցող ներսույթներով և դէպքերով»⁴։

Բարձրաստիճան հոգևորականը անհանգստանում է, քանի որ աշխարհականների մեջ արդեն շատ են քանիմաց, ուսած մարդիկ, մինչդեռ քահանաներից շատերը հակառակ իրենց կոչման, ծոյլ են, զգում են հոգևոր պաշտոնյանների ցարզն ու պատիւր», զորկ են անզամ Աւտոտարան և այլ գիրք կարդալու, հասկանալու ընդունակությունից ու կարողությունից։ Գյուղերում տնի ունեցող այդ մտավոր

¹ Թուրշյան Հ., նշվ.աշխ., էջ 128-131։

² Կաւերագրել հայ Եկեղեցու պատմութեան, գիրք թ, Հայ առաքելական Եկեղեցու Արցախի թեմը (1813-1933թթ.): Կազմեց և առաջաբանը գրեց Սանդր Բեկրուտեանը, Երևան, 2001, էջ 527։

³ Նույն տեղում, էջ 22։

⁴ Նույն տեղում, էջ 547-548։



փոփոխությունները զատ են ազդում նկեղեցու, կրոնի վրա, «ոչնչութեան է հաւասարութ մեր քահանաների նշանակութիւնը, որոնք իրենց տգիտութեամբ են միայն աչքի ընկնում (Բացառությունները միշտ յարգելի են)»: Ըստ նրա՝ անհրաժեշտ են կրթված, աչքաբաց քահանաներ, որոնք կարողանան կենդանի խոսքով ժողովրդին կապել կրոնի, նկեղեցու և հոգևորականության հետ: Հատկապես պետք է ոչապրություն դարձնել նոր ձեռնադրվող քահանաների կրթության վրա և քահանայական վկայական տալ թեմական դպրոցների ավելի բարձր դասարանների ցննաց ունեցողներին, որովհետու «պահանջունիլիք գհնենր չեն համապատասխանում ինչպէս ժողովրդի, այնպէս և ժամանակի հրամայողական պահանջներին»¹:

Զավեն Մահտեսի Բարեյանի մասին հիշողություններ ունի Շուշիի թեմական հոգևոր դպրոցի շրջանավարտ Աբրամ Կիսիբեկյանը: 1912-ին, երբ դեռ թեմական դպրոցի աշակերտ էր և ապրում էր Սառա Ղատումյանի տանը, 1905-1906 թ.թ. շարժման ակտիվ մասնակիցներից մեկը՝ Հայրում Վարդանյանը, Զանգեզուրից նկել էր և մի քանի օր մնում էր նոյն տանը: Մի օր Հայրումն իրեն ուղարկում է Ներսես Բարեյանին կանչելու (Գիշեցոց տները գտնվում էին Մելրեցոց նկեղեցու ներքևով անցնող ճանապարհի տակը, իսկ Ներսեսը Մովսեսի եղբայրն էր, ով կրթություն էր ստացել Շվեյցարիայում): Տարիներ հետո նա իմանում է, որ Հայրումը և Ներսեսը զնացել են Զավեն հայր սուրբի մոտ, ով այդ ժամանակ Ղարաբաղի թեմի առաջնորդն էր, լավ ծանոյթ էր Հայրումի գործունությանը: Հայր Սուրբը միջոցներ է հայթայթում, նրան ճանապարհում Բաքու: Հուշագիրը լավ վերաբերմունքով է հիշում նրանց «....անզուգական Սառա բաշին իր մայրական հոգատարությամբ դեպի հալածականները, Հայրումը՝ գլուխը փաթթած, խորհրդավոր, մաշված, բայց հպարտ դեմքով ու վիճ հայացքով, Զավենը՝ իր հաղթանդամ հասակով, փառավոր միրուրով, ազնիվ ու բարի աչքերով և մեր փոքրիկ Ներսեսը իր «յակիշ» մահուդի կարծքով հազին, անհոգ, ուրախ ու ժպտերեա»²:

Մեկ ուրիշ առիթով Կիսիբեկյանը գրում է, որ Զավեն հայր սուրբը շատ մտերիմ ու հարազատ վերաբերմունք ուներ դեպի Թեմական դպրոցի շրջանավարտները, մանավանդ նրանց նկատմամբ, ովքեր ավարտել էին Հայր սուրբի առաջնորդության տարիներին³:

1911-ին Զավեն վարդապետը նշանակվելով Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ՝ սեպտեմբերին ընտրությունների միջոցով վերակազմակերում է Թեմական դպրոցի հոգաբարձուական կազմը: Նյութական ծանր վիճակում էր դպրոցը, նոյնիսկ ուսուցիչները չեն կարողանում կանոնավոր աշխատավարձ ստանալ: Այդպիսի պայմաններում Զավեն վարդապետը բարձրացնում է դպրոցի հոբելյանը նշելու հարցը⁴: Դա մի պատճի առիթ էր հասարակության ոչապրությունը դպրոցի անմիտիքար դրության վրա դարձնելու համար: Զավեն վարդապետը 1912-ին դիմում է Թիֆլիս, Բաքու, Մոսկվա, այնուն ապրող դարաբաղցիների շրջանում արձարծում Թեմական դպրոցի 75-ամյակը նշելու հարցը: Տոնախմբության

¹ Նույն տեղում, էջ 547:

² Կիսիբեկյան Ա., Հուշեր, հ.1, Երևան, 2011, էջ 180-181:

³ Նույն տեղում, էջ 189:

⁴ Էջ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր դպրոցի, 1838-1913, Թիֆլիս, 1914, էջ 618:



ժամանակը որոշվում է 1913 թվականը¹: Միաժամանակ Ղարաբաղի հայոց թեմական դպրոցի հոգաբարձության նախագահ Զավեն վարդապետը պաշտոնական գրություն է ուղարկում Լենինին. «Ձեզ ևս քաջ յայտնի է որ Ղարաբաղի թեմական ազգային դպրանոցը ներկայ թուականին բոլորում է իր գոյութեան 75 ամեակը... Այդ նշանաւոր տօնի առթի հոգաբարձութիւնը անհրաժեշտ համարելով գրել դպրանոցի պատմութիւնը՝ իր ամսոյ 23-ի նիստում որոշել է խնդրել Զեզ յանձն առնել այդ աշխատանքը կատարելու, որպէս սրտացաւ և ջատագով հայրենակից և քաջ ծանօթ դպրանոցի անցնալի հետ»²:

Թեմական դպրոցի հոբելյանական տոնակատարությունների համար ստեղծվում է Կենտրոնական հոբելյանական հանձնաժողով, որի նախագահ, Արցակի թեմի ժամանակավոր կառավարիչ Զավեն վարդապետի հայտարարության համաձայն՝ դպրոցի հոբելյանը որոշվում է տոնել 1913 թվականի օգոստոսի 10-11-ին: Դպրոցի հոբելյանի նախապատրաստական աշխատանքները սկսվում են նաև դպրոցի նյութական ապահովության համար դրամահավաքության գործով:

1912 թվականի փետրվարի 15-ին Զավեն վարդապետը խնդրանքով դիմում է Գևորգ Ե կաթողիկոսին՝ Թեմական դպրոցի հոբելյանը նշելու և ընդհանրապես կրթական գործի անապահով դրության բարելավման համար օրինության և հորդորական թույլ տալու դարաբաղջների անունով՝ այդ բարենպատակ ու ազգօգուտ գործին նպաստելու համար: Թեմական դպրոցի հիմնադրման հոբելյանի առթիվ կայանալիք միջոցառումների նախապատրաստության համար Զավեն վարդապետը և Ս. Սինոռի անդամ Բաբկեն վարդապետը, ով նշանակվել էր Ս. Էջմիածնից հոբելյանական աշխատանքներին աջակցելու համար, տարաբնույթ աշխատանքներ են ձեռնարկում: Շուշի են մեկնում պատգամավորներ հայ ազգային-հասարակական, կրթական հաստատություններից, մասուլի, խմբակցությունների կողմից ննիկայացուցիչներ, որոնց թիվը հասնում էր 90-ի: Ստացվում են շնորհավորական հետագործ, գրություններ, ուղերձներ, նվերներ, տպագրվում են գրքներ, տարբեր նյութեր՝³:

Տոնախմբությունները սկսվում են օգոստոսի 4-ին. Գանձասարի վանքում հոգնեանգիստ է կատարվում Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Զալայյանի գերենգմանի վրա: Այսուհետու Շուշիում սկսվում է հոբելյանական շաբաթը, լինում են գրական, երաժշտական ներկույթներ, դասախոսություն: Բուն տոնակատարությունը բաղկացած էր նկնդիգական հանդեսներից: Վերջում Թեմական դպրոցի մեծ դահլիճում հանդիսավոր ճաշ է տրվում, որին մասնակցում էր մոտ 300 մարդ: Նույն դահլիճում ներկոյան տեղի է ունենում գրական-երաժշտական ներկոյաց: Լեռն այդ մասին գրում է. «Օգոստոսեան այս շրեն տօնախմբութիւնները վերին աստիճանի հազորագիւտ ուրախացուցիչ երևոյթ էին Շուշու կեանքի մէջ: Մեծարուեց Ղարաբաղի ազգային մեծագործ հիմնարկութիւնը: Մեծարուեց ժողովրդի կրթական գործի 75-ամեայ հասակը: Գաւառական այս խուլ, մուրացկանութեան սովորած անկիւնը

¹Նույն տեղում, էջ 629:

²Նույն տեղում, էջ 4:

³Քոչարյան Ա., Շուշիի հայոց թեմական հոգևոր դպրոցի հիմնադրման 75-ամյակի տոնակատարությունները ըստ ախիվային վավերագրերի, «Շուշին՝ հայկական մշակույթի օջախ» 2012թ. միջազգային գիտաժողովի նյութեր: «Կաճառ», Շուշի, 2014., էջ 69-71:



անկերծապէս ուրախութիւններ արաւ, ուրախութիւններ, որոնք գնդնցկազնում էին նոյնիսկ նրա բազմաթիւ սրտածմլիկ աւերակները¹:

Զավեն Մահտեսի Բարայանի օրոք Արցախում վերականգնվել է հայ պարբերական մամուլը, Շուշիում հրատարակվել է «Ղարաբաղ» թերթը: Նա հրատարակչական գործի ջատագունդի էր (Ս.Ավագյան):

Զավեն Մահտեսի Բարայանը ծնվել է Արցախի Վարանդայի (այժմ՝ Մարտունու) շրջանի Գիշի գյուղում: Թաղված է Էջմիածնի ս.Գայանե վանքի բակում Սարդարապատի հերոսների հարևանությամբ:

Եվ այսպես՝ տասնյակ տարիների հետվից ծննդյան 140-ամյակի կապակցությամբ փորձեցինք ներկայացնել արցախցի հոգևորականներից մեկի կյանքի մի քանի դրվագներ:

Այսօրվա սներունդը վերադառնում է իր արմատներին, դաստիարակվում մեր աշխարհիկ և հոգևոր նվիրյալների օրինակով: Արցախյան ազատամարտի առաջին իսկ օրերից բազմաթիվ հոգևորականներ զինվորագրվեցին մեր պայքարին: Հայրենի հողն ազատագրելու համար կրվի դաշտ մեկնած հայ հոգևորականներն իրենց ներկայությամբ ազատամարտիկներին էին փոխանցում Ղևոնդ Երեզի, Գարեգին ու Զավեն նախակոպոսների ուազմաշունչ ոգին²:

Ամփոփում

Լրացնել է արցախցի հոգևորական Զավեն Մահտեսի Բարայանի ծննդյան 140-ամյակը: Նա 1911-16 թ.թ. նոր է Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ: 1913-ին նշվել է Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի 75-ամյակը, Արցախում վերականգնվել է հայ պարբերական մամուլը, Շուշիում 1911 թ. նոյեմբերին հրատարակվել է «Ղարաբաղ» թերթը: 1918 թ. մայիսին, նոր արդեն Էրզրումի թեմի առաջնորդն էր, նաև Գարեգին Հովսեփյանը, խաչը ճնշվել պահած, Սարդարապատի ճակատամարտում Մահապարտների գունդը առաջնորդել են դեպի իմազյալ մահ: Զ. Ս. Բարայանը ծնվել է Վարանդայի (Մարտունու) Գիշի գյուղում, Մայր աթոռի միաբան էր, նպիսկոպոս, թաղված է Էջմիածնի ս. Գայանե վանքի բակում Սարդարապատի հերոսների հարևանությամբ:

Завен Магтеси Бабаян (1876-1925)

Օ. Բաբայն

к.ф.н., профессор, АрГУ

Резюме

Ключевые слова: священнослужитель, Карабахская епархия, армянская епархиальная школа, руководитель епархии Эрзрума, с. Гаянэ, полк смертников, битва Сардарапата.

¹Նշվ. աշխ., էջ 637-639:

² Ղանդիլյան Վ., Վրդ. Նավասարդյան Վ., Հովհաննիսյան Պ., Վրդ. Անանյան Շ., Հայոց Եկեղեցու պատմություն(հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի համար), Երևան, 2013, էջ 95:





Исполнилось 140-летие священнослужителя родом из Арцаха Завена Магтеси Бабаяна. В 1911-1916гг, он работал временным правителем Карабахской епархии. В те годы, 1913г., отмечалось 75-летие Карабахской армянской епархической школы, в Арцахе восстановилась армянская периодическая печать, в ноябре 1911г. Стала издаваться газета "Карабах". В мае 1918г., будучи руководителем епархии Эрзрума, он и Гарегин Овсепян, высоко держа крест в руках, в битве Сардарарапата шли впереди полка смертников к осознанной смерти. Завен Магтеси Бабаян родился в селе Гиши, был монахом, епископом, похоронен во дворе церкви с. Гаяне Эчмиацина, по соседству с героями Сардарарапата.

Zaven Mahtesi Babayan (1876-1925)

O. Babayan

Ph.D, professor, ASU

Summary

Key words: clergyman, Karabakh Diocese, the Armenian diocesan seminary, the head of Erzurum Diocese, St. Gayane, regiment of suicide bombers, battle of Sardarapat.

It has been celebrated the 140 anniversary of ZavenMahtesiBabayan. In 1911-1916 he was the temporal head of karabkhian diocese. In 1913, the 75-years of karabkhian Armenian diocesan school was celebrated under his leadership and the periodical press of Artsakh was reformed. The journal <<Karabakh>> (1911, November) was published in Shushi. In May 1918, being already the head of Erzrum diocese, ZavenBabayan together with GareginHovsepyan holding the cross high in hand, was going to his doom in the battle of Sardarabad. ZavenMahtesiBabayan was born in the village of Gishi. He was a monk, bishop and is buried in the yard of St. Gayane's Church, Etchmiadzin, in the neighbourhood of Sardarabad heroes.



**ՍԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ
ԺԱՆՄԵՐԸ Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ «ՆՇԽԱՐՆԵՐ ԱՐՑԱԽԻ
ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ» ԳՐՔԵՐՈՒՄ**

***Սնահիւ Արայան,
բ.գ.թ., պրոֆեսոր***

Բանալի բառեր մանկական գրականություն, օրորոցային, շուտասեղուկ, իսկ հաշվերգեր, նշանավոր բանահավաք, վաստակաշատ մանկավարժ, խաղ-բանաստեղծություն, նշխարներ, բարոյականություն, հյուրասիրություն, առաջ-ասացվածք, բանահյուսական ժանրեր:

Հայ մանկական գրականության ակունքները սկսվում են վաղ ժամանակներից: Դարերի խորքից են հառնում ժողովրդի կենդանի խոսքը, նրա բանահյուսությունը:

Միշտ էլ հայ մանկանը ուղեկցել են ժողովրդական երգերը, հեքիաթները, մանրապատում ստեղծագործությունները: Արցախի ժողովրդական բանահյուսության նմուշները դարձել են հայկական դպրոցների դասազրբերի զարդը, երեխայի մշտական ուղեկիցն ու դաստիարակողը, որովհետև այն փոքրիկի եւրիան մեջ է թափանցում ամենավաղ մանկությունից: Մանկական գրականության գերազնիվ նպատակը մանկան դաստիարակությունն է, իսկ այն իրականացվել է առաջին հերթին ժողովրդական բանահյուսության միջոցով: Բանահյուսությունը նախ մանկան շրջապատն է մտել բանավոր, իսկ հետո՝ գրավոր, կամ մանկական պարբերականների միջոցով ու նշանավոր հեղինակների մշակումներով:

Նշանավոր բանագետ Լ. Հարությունյանի <<Նշխարներ Արցախի բանահյուսության>> 5 ժողովածուները պարունակում են բազմաթիվ նյութեր, որոնք վկայում են, որ երեխայի մեջ դարեր շարունակ իրենց դաստիարակչական բնույթով լայն տարածում են գտել շուտասեղուկները, զվարճախոսությունները, սուտասեղուկները, սուրասեղուկները, հաշվերգերը, հանելուկները, որոնք իրենց հակիրճությամբ հեշտունակալ են, պատկերավոր ու իմաստալից: Արանք ցայտուն են դարձնում որևէ բնորոշ միտք, վարժանք և զվարճալիք են, ժողովրդի կենսափորձն են հաղորդում փոքրիկին, ընդլայնում են նրա մտահորիզոնը:

Ժողովրդական բանահյուսության հնագույն ժանրերից է օրորոցայինը: Նպատակն է հայաշխարհիկ ավանդույթներով դաստիարակել հայ երեխային, մոր կաթը դարձնել հայրենական բալլասան: Արցախյան բանահյուսության մեջ դեռևս մատնաշափ ու մտատկար մանուկը այսպիսի երգեր էր լսում իր մորից, երբ անզոր պառկած էր օրորոցում.



Լայ անիմ, վեր քնանաս,
Լայ անիմ շուտ մեծանաս,
Քու հոր աշըղը օնիս,
Դուշմանին աշկը հանիս
Լայ-լայ, իմ չախմուր բալա:
Լայ-լայ, իմ կամրուր լալա:¹

Նշանավոր բանահավաքը գրում է. «Այսօր և ընդմիշտ Արցախի հայ պատանին, երկու ոտքով ամուր կանգնելով հայրենական զորավոր հողի վրա, որպես հավերժական պատվիրան պետք է կրկնի, այն աներեր համոզմունքով, որ՝

Սշխարի եկա, հայերեն խոսելու համար,
Հայու երգ լսելու համար,
Հայու երգ ասելու համար,
Հայերեն պարելու համար,
Արցախի մեր հողի վրա
Քիրսի պես տնկվելու
Եվ հավերժ ապրելու համար:²

Վաստակաշատ մանկավարժը իր հոդվածներում, գրառումներում խոսում է ժողովրդական բանահյուսության նյութերի կրթադաստիարակչական նշանակության մասին: Մայրական գովքը զուգակցվում է օրինանքին ու ջերմությանը: Գեղեցիկ մակդիրները խոսում են օրորոցային երգերի բարեհնչունության, անկեղծության մասին: Մայրը երկար կյանք է ցանկանում իր տղային կամ աղջկան, ուզում է, որ որդին «ուշոնցատու» չինի, որ երկար ապրի, մաքուր լինի, թշերը կարմիր, շուտ մեծացող: Մոր որդին ոսկե լալա է, ծաղկած կապար, նախշած աշուն: «Բալան հրեյի հասնողա», ասել է թէ՝ օգնող, սատար լինող է:

Անսահման է օրոր ասող մոր սիրտը, նրա գորովը: «Մոր կշեռքը» երկում նոր բալիկ ծնած ջահել մայրը տան եղած ամբողջ բարիքը հանում-փոռում է իր շուրջը և վերցնում-ձգում կշեռքը.

-Էս մի խնձորը աստծոն նժարին,
Էս երկու զույգն ել բալիս նժարին:
Էս մի զույգ նուրը աստծոն նժարին,
Էս երկու զույգն ել բալիս նժարին...³

¹ Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք 4, Ստեփանակերտ, 2009, էջ 20:

² Նույն տեղում., էջ 21:

³ Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բան-ն, գիրք 5, Ստեփանակերտ, 2011, էջ 7:



Մայրը ամեն ինչից բաժին է հանում և իր որդուն, և աստծուն, բայց առավել շատ որդուն է տալիս իր բաժինը: Սակայն էլի չի հովանում սիրտը.

«Ողորմած աստված,-ասում է նա,- թե որ կշռելիս արդար չեմ եղել: Դու ել քո հերթին»

Մոր խղճի բուռով

Տարիք հավելիք բալիկիս փային: ¹

Օրորոցային երգերը մի տեսակ խաղացկուն են, այնուեւ մենք տեսնում ենք զավակների արտաքին ու ներքին բարեմասնությունները: Մայրը դարդը մի կողմ նետած՝ պար է ածում երեխային՝ փորձելով փոքր ինչ ազատվել հոգսերից:

Պապար, պապար, պար անինք,

Բալքի դարդիս ճար անինք,

Պար կյանք, քշերը լուս անինք,

Դարդերը տանան տուս անինք...²

Նետաքրքիր են մոր ցանկությունները.

Ճակատող պաշիմ, խելունք ինիս,

Աչքերդ պաշիմ՝ բարայ անիս,

Քեթերդ պաշիմ՝ պլկանուտ չընիս,

Թոշեթերդ պաշիմ՝ կամբուր ընիս,

Դերանրդ պաշիմ՝ ըշունցատու չընիս,

Մազեթերդ պաշիմ՝ կեռ-կըռանաս,

Չանադ պաշիմ՝ մրքավուր տեռնաս: ³

Մայրերն ու տատիկները ցանկանում են, որ երեխաները անդարդ մեծանան, քաղցր լեզու ունենան, «մեր աղոթքը ասատծուն տան», «մեր դարդերը՝ քամոն»:

Իսկ ամենակարևորը՝ Այս մատադ քու ջանետ,

Ճապկեցպատ բդանետ,

Դուշմանին աշկը վիծըցընիս,

Տանը լուսը ճուխտըցնիս: ⁴

Ղարաբաղցին միշտ էլ հավատարիմ է մնացել նախնիների ավանդույթներին, առաջնորդվել է այս աշխարհաշեն սկզբունքով.

Ժառանգ թողեն,

Կամար կապե,

Մին կյիր կյրի,

Մին ծառ տնկե,

Հավատող էլ դայիմ փոնե: ¹

¹Նոյն տեղում, էջ 8:

² Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բան-ն, Երևան, 1991, էջ 169:

³ Նոյն տեղում, էջ 169:

⁴ Նոյն տեղում, էջ 168:



Վաստակաշատ մանկավարժը, քաջածանոթ լինելով մանկան մտածողությանն ու զգացողության ոլորտներին, ի մի է հավաքել բանահյուսական այս ժանրերը, որոնք երեխայի կյանքում կարևոր դեր են խաղում, որոնց ուսուցողական ու ձանաշողական դերն ակնհայտ է:

Մանկավարժական միտքը վկայում է, որ բոլոր ժամանակներում էլ խաղը կարևոր դեր է խաղացել երեխայի կյանքում: Խաղ-բանաստեղծությունների շատ ենք հանդիպում մեր դասական մանկագիրների երկերում (Աղայան, Թումանյան, Պատկանյան): Բանահյուսական խաղային ժանրերը բացահայտել են երեխաների կենդանի խառնվածքը, խաղի միջոցով ժողովուրդը ներգործել է երեխայի վրա: Բանահյուսական խաղերը դաստիարակում են առաքինի, խելացի, հնարամիտ սերունդ, որը ճիշտ է կողմնորոշվում կյանքում, սովորում է գործելու, համագործակցելու ունակություն: Հմայիչ խաղերն ու զրոյցները երեխաներին հաղորդակցից են դարձնում հայրենի երկրի ու ժողովրդի խնդիրներին, ընդարձակում են նրա կենսաճանաչողությունը: Ժողովրդական խաղերը իմաստուն ու կենսուրախ են: Դեռևս Խ. Արովյանը, Հ. Թումանյանը գտնում էին, որ խաղը փոքրիկի բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է, և որ «կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, խաղով է քննում, խաղով է ձանաշում ու ընդունում, դա նրա ձեն է, նրա մեթոդը»: Թումանյանն ասում է. «Եվ ամեն բան, ինչ որ նրան տրվում է խաղով, ուրախությունով ընդունում է, հեշտ է յուրացնում, առանց ձանձրանալու, առանց հոգնելու»: Թումանյանը ամենակրտսեր տարիքի երեխաների համար ձեռնարկում է հայրենագիտական խաղեր կազմելու գործը, որպեսզի նրա միջոցով «մեր երեխաներն ու պատանիները ճանաչն ու սիրեն հայրենիքը»:

Ժողովրդական բանահյուսության խաղերը ներդաշնակում են երեխաների հետաքրքրությունների աշխարհին: Լ. Հարությունյանի գրի առաջ խաղերի ու խաղերգերի զվարթությունը խոսքի կախարդող ուժը, աշխույժ ու կենսալից պատումը հնարավորություն են տալիս, որ դրանք նպաստեն երեխաների ճաշակի ձևավորմանը, գեղեցիկի ընկալմանը:

«Նշանական Արցախի բանահյուսության» գրքի առաջին հատորում Լ. Հարությունյանը զետեղել է ժողովրդական խաղերի ցանկ, որոնցից շատերը բացատրված են՝ խաղի կանոնների վերհանումով: Օր. զյուղլկանե, բարադրությունը, դնողի, ըշկըճպովան, ըրկընցուիկե, թոփե, թուխմակոխ, լուրտանե, կլըկոնձի, կմբլեչի, կոխ, հարի, մընեքքարե և այլն:

Շատ անուններ հուշում են խաղի բնույթին ու իմաստը: Դրանք հմտություն, ձարպելություն, հնարամտություն են սովորեցնում: Այսպես. նկարագրելով «Սիրկուն» խաղը, Լ. Հարությունյանը նշում է խաղի մշտական բնույթը, եթե մահակը ձեռքից ընկնում է, փշրվում, դա վկայում է պարտության մասին:

¹ Նույն տեղում, էջ 5:



Պարտված հակառակորդը իրավունք չունի տեր կանգնելու մահակին: Սա ուզմական դաստիարակության նպատակ ունի: Նոյնպիսի նպատակադրությունը է ձևավորված «Թուխակալով» խաղը: Հետաքրքիր խաղերը լցում են երեխայի օրը, նրանց հաճույք պատճառում, սովորեցնում ընկերասիրության, պարտքի ու պատասխանատվության զգացում, զայլածություն, ձկունություն, կամք:

Իր ժողովածուներում Լ. Հարությունյանը զետեղել է մտային բազմաթիվ հետաքրքրաշարժ վարժանքներ:

Այսպես. -Մին խոսք ասե

-Խնձոր:

-Խնձորը խնձորեն օտե, տու էլ իմ խնձորս օտիս, վեր խնձորս կյածեր տոնը, հինչ կտա՞ս:

-Նոռնը:

-Նոռնը նուռնեն օտե,...¹

Խաղացողն այնպիսի պատասխան պիտի ընտրի, որ հարցնողը պարտվի:

Օր.- Բաղարաքը բաղարաքին օտե, տու էլ իմ բաղարաքս օտիս...

Հակառակորդը պարտվում է:

Կամ - «Կարո՞ղ ես նախադասություններ կազմել, որի բոլոր բառերը սկսվեն միևնույն հնչյունով. օր. Տիբոշեն տատը տակարը տարապ տվակ տվըրածեն:

Հետաքրքիր է խաղի մի տեսակ, որի ժամանակ երեխան պետք է ընկալի երևույթը: Խաղավարը հայտնում է խաղի կանոնները. Երեխանները պետք է ցուցամատերը բարձրացնեն այն ժամանակ, երբ խոսքը վերաբերի թոշունին, իսկ կենդանու ժամանակ, չպիտի բարձրացնի, հակառակ դեպքում՝ պարտությունն ակնհայտ է: Միավորն դուրս է մնում խաղից: Սա ևս մտավոր վարժանքի տեսակ է:

Այսպես ժողովուրդը հորինել է տարբեր խաղեր, որոնք թե ոգևորում, թե ճանաչողական ուներ են խաղում: Իսկ «Պատասխանիր արագ» բաժնում տրամաբանական առաջադրանքներ է ժողովուրդը հորինել՝ փորձելու համար երեխային:

Օր. -Ծուկունկեսը կպըկկեսա, օխտը ծուկունը քանի՞ կապեկ կընի:

Կամ - Ծառեն 3 քաշ կա, մինը վեր թվանգավ վեր քցիմ, տակեն քանե՞սը կմնա:

Կամ - Էս մարթին կնքանը ախալեր իմ դայիյա, էս մարդը իմ հի՞նչըսա:

Կամ - Երկու հար, էրկու վերթի կյամըն դոնադ, տնատեռնը հյաթումը 3 ծառ արնում, ծիենը հունց կապին, վեր ամեն ծառու մին ծի ըղնե (ես, իմ տղան, իմ տղես տղան):²

¹ Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսություն, Երևան, 1991, էջ 321:

² Նոյն տեղում, էջ 323:



Լ. Հարությունյանի վկայությամբ Արցախում տարածված էին հանգախաղերը, որի մասնակիցները իրար բառեր, բառակապակցություններ ու նախադասություններ էին առաջարկում և հակառակորդները պատասխանում էին՝ ստեղծելով հանգախաղ:

Պատասխանները հաճախ դրւում էին գալիս բառախաղերի սահմաններից և ներկայանում որպես ամբողջական կարձ բանաստեղծություններ՝ որոշակի տևաքաղաքացիությամբ:

Խաղի նպատակը առաջարկվածին գեղեցիկ ու սահուն հանգեր հորնելն է՝ որքան հնարավոր է արագ ու զավեշտական: «Մի ժամանակ բոլոր դարաբաղիները հանգախոսներ էին: Ընդունված կարգով՝ խոսքը հանգափորփում էր տոնական օրերին, հարսանիքների, խնջույքների, առօրյա խոսակցության, անզամ տիսրության պահերին: Փաստեր կան, որ հանգախաղերը մտային մարզանքի ժամեր էին նաև դպրոցներում՝ Մեարուայի ժամանակներից սկսած և դրան ի նպաստ կային ձեռնարկներ, որոնց մեջ ընդգրկված էին խաղերգեր, շուտասելուկներ, հանելուկներ և այլն»՝գրում է Լ. Հարությունյանը:¹ Եթե խաղը կազմակերպվում էր տոնախմբությունների ժամանակ, հանգախաղեր էին տեղի ունենում աղջիկների և տղաների միջև: Խաղերգերը հիմնականում մանկանք զվարացնելու նպատակով էին ստեղծվում: Այս մասին վկայություններ կան մանկական պարբերականներում:

«Նշանականների» 4-րդ գրքի «Նրախճանք և խրախճանականներ» բաժնի ակնարկում Լ. Հարությունյանը փորձում է բացահայտել այս ժանրի էությունը: «Միշտ էլ նորանոր հնարներ էին փնտրվում խրախճանքները միօրինակությունից գերծ պահելու համար: Տեսզիետե ավելի հեզաձկուն ու բազմաձև էին դառնում նախկին ծիսական պարերը, մերձենում հայ առօրյային, կատարելագործվում էին երգամատուցման ձևերը, խրախճանքներին ուղեկցող «դրսային» վարժանքներն անզամ՝ ձիախաղը, կոլիր, լարախաղացությունը...անբաժան էին մնում հնարագործություններից, երգի ու տաղասացությունից: Վաղուց ստվորություն դարձած խրախճանամիջոցների կողքին ավելանում են նորերը, հանգախաղը, գլուխկոտրուկները, խնդրախաղերը, արագ հաշվումները, ոչ մի սահման չճանաչող զվարացարանությունները, նմանակումները, հնարամտելը...»:²

Լ. Հարությունյանը կարևորում է հանգերն ու շուտասելուկը: Հանրահայտ՝ «դերին ճրին ծորումը դերին ծորուն ճուղը ծուռ» կամ «Մուկունը քցիմ, ծուկուն օտիմ, ծուկունը քցիմ մուկուն օտիմ» շուտասելուկները պահանջվող կարգով արտաքերելիս հիմա էլ իրենց ուրախ դերն էին կատարում՝ ծփանք

¹ Լ. Հարությունյան, Նշանական պարբեր Արցախի բանահյուսություն, Եր. 1991, էջ 323:

² Լ. Հարությունյան, Նշանական պարբեր Արցախի բանահյուսություն, գիրք 4, Ստեփանակերտ, 2009, էջ 105:



առաջացնելով ասողների և լսողների մեջ», - գրում է Լ. Հարությունյանը:¹ Նա գտնում է, որ եթե ի մի գումարվեր աշխարհի ժողովուրդների շուտասելուկային ողջ հարստությունը, ապա նրանում իր դասական հանձարեղ կեցվածքով ուրույն տեղ կունենար «Ակուփ ապեր» շուտասելուկը.

Ակուփ ապեր,

Տու ինձետե

Մին խուփ կապէ,

Մին կեփ կապէ,

Մին տեփ կապէ,

Անումդ տինիմ

Խուփըկապէ,

Կփըկապէ,

Տփըկապէ

Ակուփ ապեր:²

Ինչպես տեսնում ենք նշված շուտասելուկը ունի յուրօրինակ ռիթմ ու երաժշտականություն, նաև հուշում է նշանավոր արհեստավորի մասին, որը և երեխայի մեջ սեր ու հարզանք է ներշնչում աշխատանքի ու մարդու մասին: Նա նաև տեղեկանում է կենցաղային տեփ, կեփ, խոփ գործիքների մասին:

Լ. Հարությունյանը գրի է առել «հայի հինգ մատները» հին զրոյցը, որը երեխաներին և մատների անուններն է սովորեցնում, և՝ բարոյական դասեր է տալիս նրան.

ա.

Ճկույթիկն ասաց.-Եկեր հաց ուտենք:

Մատնեմատն ասաց.- Բա ինչ ուտենք:

Մեծ մատն ասաց.-Աստված կտա՝ կուտենք:

Յուցամատն ասաց.-Որ չտա ...

Բուլին ասաց.-Կգողանանք՝ կուտենք:³

Գողություն բառը լսելուց հետո բոլոր մատները թափվում են բութ մատի վրա, ծեծում, ծեծում, մինչև խեղճը տափականում է:

Բ մասում բութն ասում է, որ եթե աստված չտա, կարարեն՝ ուտեն:

Գ հատվածում մատները կասկածում են, որ աստված իրենց կպահի, բութն ասում է, որ կրունցքվեն.... Այսպես բութ մատը ինքնազիտակցության եկած հայն է, որ ի վերջո զալիս է բոռնցքվելու զաղափարին:

¹ Նույն տեղում, էջ 105:

² Լ. Հարությունյան, Նշանական Արցախի բանահյուտություն, գիրք 4, Ստեփանակերտ, էջ 105:

³ Նույն տեղում, էջ 24:



Լ. Հարությունյանն իր հավաքածուներում զետեղել է նաև մանկական երգեր, որոնք և՛ ճանաչողական են, և՛ դաստիարակիչ, երբեմն՝ զավեշտական ու խարազանող.

Այիբ քեն,
Տախտեն դփեմ,
Օխտը հացը
Մեհետ կըխպեմ,
Պենեն ժամեն
Փախճիմ-կորչիմ,
Հացեն ժամեն
Կյամ խլըշիմ:¹

Նշխարների առաջին գրքում զետեղված են ժողովրդական բառ ու բանով համեմված փոքրիկ երգեր, որոնք և բարեհունչ են, և դյուրընկալ ու հեշտ անգիր արվող.

Այսպես. Ցորեն՝ հաց,
Մաշկաս կաց,
Կորեկ հաց
Փորաս կաց...²
Կամ. Թըթրմաղե, թըթրմաղե
Քու մար ասումա ձելի մաղե:³

Յուրահատուկ հնչողություն ունեն բնությանն ու կենդանական աշխարհին նվիրված մանկական երգերը: Լ. Հարությունյանի հավաքած խաղիկներում արցախցու բարոյականությունն է, հյուրասիրությունն ու պատվասիրությունը.

Այ ախպեր
Հայ ախպեր
Տժեր օրեն
Թայ ախպեր:⁴
Կամ
Հյավուր ընք,
Սվավուր ընք,
Թվավուր ընք:
Հայ ընք,
Վայ ընք,
Հստծու թայ ընք:¹

¹ Լ. Հարությունյան, «Նշխարներ ... », Երևան, 1991, էջ 170:

² Նույն տեղում, էջ 170

³ Նույն տեղում, էջ 171:

⁴ Նույն տեղում, էջ 173:



Այստեղ նաև հայ մարդու ճակատագիրն է:

Հանելուկը դեռևս հեթանոսության շրջանում տարածված էր ժողովրդական լայն զանգվածների մեջ, «մտնում էր ամեն ընտանիք ու հավաք, կատարելագործվում ու զարգանում, դառնում հաճելի մտավոր ժամանց՝ բոլոր խալկերի մարդկանց համար: Այն ընկալվում է որպես իմաստաբանություն, որը խորին քննության ու ստեղծագործական պրատումների արդյունք է և որի շուրջ պետք է լրջորև մտորել: Ընդունված էր նաև հանելուկով միջելու տպիրությունը»:
Լ. Հարությունյանի վկայությամբ հանելուկների մեծ մասը վերծանելու համար պահանջվում է հոգեղեն – իմացական, լայն առումով՝ բնածանաշղղական և աշխարհածանչողական բարձր մակարդակ: Նման կարողունակություն հայ ժողովուրդը ձեռք է բերել հանելուկի և նմանատիպ գլուխութրուկների շարունակական մասսայականության և խոր տարածվածության և իր ընդարձույթ բնապաշտության և հետաքրքրասիրության շնորհիվ:

Լ. Հարությունյանը պարզաբանում է հանելուկ բառը, նշում, որ բարբառում այն ավանդվել է հնելիք տեսքով, «որն իմ համոզմամբ, առավել ստույգ է մատուցում բարի նախնական իմաստը և ձեր՝ հանելիք, որ հեշտությամբ կարելի է փոխարինել մեկնաբանելիք, քննելիք, բացահայտելիք, հայտնաբանելիք և այլ հոմանիշներով: Հանելիք բառը իրեր և երևույթներ քննելու, նրանց գաղտնիքների մեջ խորանալու միտում ունի»:²

«Հանելուկի, շուտաելուկի, զվարճախտության համար Արցախի բարբառը ունի մի ընդհանուր անուն՝ պնզը: Այս բառը բարբառում որոշ իմաստով բացահայտական է (ոչ լուրջ բան): Ուրեմն՝ պնզաբանել-կնշանակի ոչ լուրջ բան ասել: «Ըստ քրիստոնեական մոտեցման պնզաբանելը հեթանոսությունից ժառանգած պիղծ սովորություն է», - գրում է Լ. Հարությունյանը:

Նա «Քաթ, քաթ» բանահյուսական չափածու շարքը պարզում է, որպես հանելուկների շարք, այնինչ բանասերներից ումանք դա անվանել են հերիաքների նախարան: Լ. Հարությունյանը, բանագետի հմտությամբ պարզում է հանելուկի իմաստը, այլարանական պատկերների միջից վեր է հանում իրերի ու երևույթների ներքին էռությունն ու աշխարհիկ բովանդակությունը:

Ճետաքրքիր, ճանաչողական հանելուկներ կան 4-րդ գրքում:

Օր.-Ապան Եկավ՝ քրտնած տախ,

Շալքը Էրկան քթան կախ:

(թեյնիկ)

Ես քինիմ, ինքը մնա:

(հետք)

Էն հինչնա,

¹ Նույն տեղում, էջ 173:

² Լ.Հարությունյան, «Նշխարներ...», գլուք 4, Ստեփանակերտ, էջ 107:



Հայերը օտումըն,
Թորքերը խմում:

(Երդում)

Պահում-պաշտում՝

Կտրում՝ տեն ածում:

(Մազեր)¹

Հանելուկը խոսքի, տրամաբանության զարգացման կարևոր գործոն է: Այն պահանջում է մտային վարժանք, համադրում, առարկաների ծանոթ և անծանոթ հատկանիշների քննում, որի արդյունքում ստացվում է առարկայի ամբողջական պատկերը:

Հանելուկի քողարկված միտքը ստիպում է երեխային ի մի բերել իրեն ծանոթ հատկանիշները, համադրել դրանք: Վերլուծական-համադրական ուսուցողական մեթոդը օգնում է երեխային ստեղծել առարկայի մտովի դիտողական պատկերը, լարել հիշողությունը և մտահանգում կատարել: Երեխան ուրախություն է ապրում, երբ գտնում է ձիշտ պատասխանը: Նա նաև առնչվում է բնության հրաշալիքներին, կենցաղային իրերին ու երևույթներին: Արցախի բանահյուսության այս ժանրը մանկան դաստիարակության կարևոր գործոն է եղել դեռևս շատ հնուց: Ժողովրդին միշտ էլ հետաքրքրել է երեխայի դաստիարակության ու կրթության կարևոր գործոնը:

Արցախյան առածներն ու ասացվածքները միշտ էլ դաստիարակել են երեխային, պատվաստել բարոյական բարձր արժանիքներ: Սրանք մարզում են երեխայի միտքը, ճանաչել տալիս դրականը, անհանդուրժողականություն ցուցաբերել բացասականի հանդեսը:

«Զրույցներ, առակներ, ավանդություններ» բաժնում (1-ին գիրք) զետեղված են նյութեր, որոնց դաստիարակիչ արժեքը անշափ մեծ է, «Մին պիծի հափուռ», «Լուծը», «Վե՞ր Արտավազ», «Մարդին աշկը մինակ վերը կրուշտընե», «Փիսը լավին, լավը՝ փիսին», «Տոնդ քանդվի, պրտքատար», «Քրիստոսը ըստի ասից» և այլն:

Ավանդությամբ մեզ հասած տեղեկությունները ևս ճանաչողական նշանակություն ունեն: «Վեղը շատ չքարե» զրույցում մարդը զախս է այն եզրակացության, որ ամենաքաղցրը հողն է, ամեն ինչ հողից է, ամեն ինչ հողով է կենդան: «Վը են հիշքան շատ չքարիս էնքան վեղը քիսծրանումա, վեղեն քաղցրն էլ տամա պրանետ: Մեննդ պահե, քու դուշմանդ քու աշկդա, վեղումդ թմահեն ծառը տնգիսուց: Չաշմիշ կընիս...հացդ պատան չի կենալ, սորփը մատադրդ ընթունել չի, կաթնդ կշաղե²»... Որոշ երգիծագրույցներ վերաբերում են ուսմանը,

¹ Նոյն տեղում, էջ 114, 115:

² Լ.Հարությունյան, «Նշխարներ ...», Երևան, 1991, էջ 67:



դպրոցին, գրածանաշությանը («Գյուղում չեմ», «Լոխ մինա», «Տանա իվիլ ընիլ չի», «Ռուսերն խոսելը»):

Մանկապատանեկան շրջանում լայնորեն տարածված ժանրը հեքիաթն է՝ իր 3 տեսակով: Արտացոլելով արցախցու մտածողությունը՝ հեքիաթը հսկայսկան դեր է կատարել երեխաների դաստիարակության գրքում:

Փաստերը վկայում են, որ մինչև մանկական գրականության որպես առարկա ձևավորվելը, ժողովրդական բանահյուսության նյութերը կրթադաստիրակշական դեր են կատարել՝ դառնալով ընթերցանության լավագույն նյութ, զետեղելով ծրագրերում, ընթերցանության նյութերի ցանկում:

Նշանավոր մանկավարժի կարծիքով «Մեկ անգամ սովորեցնելու համար 10 անգամ սովորել է պետք, պահանջելու համար իրավասու պետք է լինել դաստիարակելու համար պետք է ունենալ ամենահոյակապ մարդկային կերտվածքը», -գրում է Լ. Հարությունյանը:

Հետաքրքիր է Լ. Հարությունյանի գրառած մանկական բառաշաբթը: Այն մեկից-մեկուկես տարեկան երեխաների բառապաշարին է վերաբերում: Հետաքրքիր բառապաշարը բացահայտում է երեխաների բնավորությունը: Իսկ թե ինչպես են Արցախում համառոտում անձնանունները, վկայում են Լ. Հարությունյանի «Նշխարների» առաջին հատորի, «Անձնանունների համառոտություններ ու հնչունադարձումներ» բաժինը:

Դեռևս իր առաջին գրքի առաջաբանում Լ. Հարությունյանը հմուտ մանկավարժի հավատամբով նշում է, որ դարաբաղյան ամբողջ բանահյուսության միջով անցնում է որդան կարմրի մի երակ, դա հայ ժողովրդի ազատասփրությունն է, իր ազգային իրավունքների, արժանապատվության, ազատ գոյության համար մաքառումը, որը իր գոյավիճակի թելադրանքով ամենուր ընդունել է ազգային կեցվածք ու բնավորություն:

«Մարթ ըշխարես լրացր տանը պտըրիանավն ա տեսնում»:

«Անհնար է ծուտ արխարհում շիտակ ապրելը: Կարել չըս դուզ քինիս, վեր հղեն ծորմոռա»:

Ղարաբաղցին հանգիստ խնձով չի նստել անարդարության հետ դեմդեմի: («հարուր տրեկան էլ ընիմ, ծոռ փաղը չալիգ չըմ շինիր»): Ինչպիսի ծանր պայմաններում էլ լինի արցախցին, թեկուղ 100 տարեկան ծեր, չի հենվի ծուտ ցավազանին:¹

Լ. Հարությունյանի «Նշխարներում» դարաբաղցին պաշտում է Աստծուն՝ որպես իր երկվորյակի, իր շնորհակցի, միշտ էլ օրինակ ունենալով նրան, նրա մեջ փնտրելով լավին ու կատարյալին: Նա երբեք աստծուն անիրական չի համարել: Աստված էլ տառապանքով է անցնում իր ուղին, ինչպես՝ մարդը: Մի օր մռայլ է, մի

¹ Լ.Հարությունյան, «Նշխարներ ...», Երևան, 1991, էջ 6:



օր ուրախ, մի օր ցավի միջից ժպտում է անցավ: Նրա համար կլ երազային է մանկությունը:

«Աստծուն ըսեցին-խե՞ տխուր ըս: Ասից-խխորունս մեննս ընգավ: «Աստծուն ըսեցին-խե՞ ուրախ ըս: Ասից-խխորունս մեննս ընգավ»:

Աստված պարզ ու հասարակ է, ինչպես ինքը, նրա հետ կարող է հանաք անել, խաղալ, խրատել, պատժել... «Աստուծ, մեզ լավ պահե, թա կարումշըս, վեր եկ մեր կոշտը, մունք քեզ ճպադրու մաշու նման պահինք»: Նա միշտ մարդկանց կողքին է, առօրյա հոգսերի ընկերը:

Արցախի բանահյուսության բոլոր ժանրերն ել մանկական գրականության համար արժեքավոր նյութեր են և մտնում են մանկական ընթերցանության շրջանակները:

Չնայած հնում մանկական գրականությունը չի գիտակցվել որպես գեղարվեստական գրականության ինքնուրույն հատված, դա չի խանգարել մեր մանկավարժներին՝ երեխաների ուշադրությունը բներել բանահյուսական ստեղծագործությունների վրա: Իսկ Արցախի բանահյուսության բազմաթիվ ժանրեր տեղ են գտել նաև Լ. Հարությունյանի «Նշխարներ....»-ի 5 գրքերում: Բանահյուսական այդ գանձերը անզնահատելի դեր ունեն մեր բանարվեստի պատմության մեջ և արժեքավոր նյութեր են նաև հայ մանկական գրականության համար:

Ամփոփում

«Մանկական գրականության բանահյուսական ժանրերը Լ. Հարությունյանի «Նշխարներ»-ում» հոդվածում բնութագրվում են բանահյուսական ժանրից օրորոցային երգը, հանելուկը, խաղերգերը, շուտաելուկները, սուրասելուկները, զվարձախոսությունները, որոնց նպատակն է հայաշխարհիկ ավանդույթներով դաստիարակել երեխային, ով պետք է 2 ոտքով ամուր կանգնի հայրենական գորավոր հողի վրա: Վաստակաշատ մանկավարժի հոդվածները, գրառումները խոսում են բանահյուսական նյութերի կրթադաստիարակչական նշանակության մասին:

Լ. Հարությունյանի «Նշխարներ»-ի 5 հատորներում գետեղված բանահյուսական ժանրերը հրաշալի նյութ են բոլոր ժամանակների մանկական գրականության, մանկական ընթերցանության համար:

“Жанры детской литературы в “Реликвиях” Л. Арутюняна

А. Атаян,
к. ф. н., профессор
Резюме

Ключевые слова: Детская литература, колыбельная, скороговорка, загадка, считалочка, известный сборщик фольклера, выдающееся педагог, игра-стишок, реликвии, мораль, гостеприимство, пословица-поговорка, фольклерные жанры.



В статье “Жанры детской литературы в “Реликвиях” Л. Арутюняна: характеризуются колыбельная песня, загадка, игра-стишок, скороговорка, остроумное высказывание, анекдоты фольклерных жанров, целью которых является воспитать ребенка национальных традициях, , который должен обоими ногами твердо встать на родной могущественной земле.

Статьи, очерки заслуженного педагога говорят о учебно-воспитательном значении фольклерных материалов.

Жанры, расположенные в пяти томах “Реликвии..” Л. Арутюняна великолепные материалы для детской литературы и детского чтения во все времена.

**Abstract Folklore genres of Children's Literature, according to
L. Haruotunyan's "Fragments of Folklore"**

A. Atayan,

PhD, prof.

Summary

Key words: children's literature, lullaby, tongue-twister, riddle, counting songs, large folklore collection, merited teacher, poem game, fragments of folklore, morals, hospitality, fable-proverb, folklore genres

Abstract Folklore genres of Children's Literature, according to L. Haruotunyan's "Fragments of folklore", are lullaby, riddle, counting songs, tongue-twisters, witty quotes, jokes, which are intended for the traditional Armenian upbringing of children who should stay rooted in the soil of their mighty homeland. The articles and notes of merited teachers point to the educational value of the folklore pieces. Folklore genres of L. Harutunyan's five volume book "Fragments of Folklore" present valuable material for children's reading and children's literature of all times.



ԲՈԿԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն. Ենգիբարյան,		
Մ. Տիտանյան,		
Դ.	ՊԵՂՈՒՄՆԵՐ ՆՈՐ ՀԱՅԿԱՁՐԻ	
Միրիջանյան,	ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏՈՒՄ	
Տ. Ալեքսանյան		4
Ա.Հայրվերդյան,	ՄՐԳԱՋՈՐ ԳՅՈՒՂԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԴ	
Գ. Շաքունց	ԳՅՈՒՂՈՒՄ ԵԿԵՂԵՑԻ ԿԱՌՈՒՅԱԾ ՍՅՈՒՆԵՑԻ	
	ՏԻԿՆՈԶ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՉ	
		14
Ռ. Բայայան	ՇՈՒՇԻՒ ՎԵՐԱՇՈՒՄԸ ԴԱՐԱԲԱԴԻ ՀՈԳԵՎՈՐ	
	ԿԵՆՏՐՈՆԻ	19
Վ. Բայայան	ԴՊՐՈՅԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ և ԱԶԳԱՅԻՆ	
	ԴԱՍԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՇՈՒՇԻՈՒՄ 1813-1917 թթ.	28
Գ. Սոեփանյան	ԾԱՍԱԽԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՅԱՆԵՐԻ	
	ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆԻՑ (XIX դ.)	42
	ՎԱՀԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱԳՈՒԹՅԱՆ ԵՎ	
Ա.Հարությունյան	ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԱՆԵՐԸ ՈՐՊԵՍ	
	ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՄՄԵՎՈՐՄԱՆ ԶԵՎ	60
	ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ,	
Ա. Սարգսյան	ԲԱՆԱՀՅԱՆՈՒՄՈՒԹՅՈՒՆԸ և ԲԱՐԲԱՆԸ ՍՏԵՓԱՆ	
	ԼԻՍԻՑՅԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	67
Վ.Բայայան,	ՎԱՆՔԱՍՏԻ ԵՎ ՆՐԱ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐՍՔՆԵՐԻ	
Հ Գրիգորյան	ԲՆԱԴՐԱՍԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	87
	ՄՐՅԱՆՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԻ	
Ն. Սարումյան	ՆՈՐՈՅՑԱ ՓՈՒԼԸ (մաս առաջին)	94
Ս. Պողոսյան	ՆՈՒԲԱՐՅԱՆ ԳԵՐԴԱՍԱՆԸ	110
	ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ	
	ՀԱՅԱՍՏԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ ՄԻԱՎՈՐՎԱԾ	
Է. Պողոսյան	ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ	
Ա. Եփրիկյան	ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆԻՑ (1990-2001թ.)	127
	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ	
Մ.	ԾԱՌԱՅՅՈՒԹՅԱՆ	
Հարությունյան	2005-2008 թթ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ	139
Օ. Բարայան	ԶԱԾԵՆ ՄԱԿԿԵԽԻ ԲԱՐԱՅՑԱՆ (1876-1925)	145
	ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՀՅԱՆԱԿԱՆ	
Ա. Արայան	ԺԱՆՐԵՐԸ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ «ՆՇԱՄՐՆԵՐ	
	ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱՀՅԱՆՈՒԹՅԱՆ» ԳՐՔԵՐՈՒՄ	152



СОДЕРЖАНИЕ

<i>Н. Енгибарян,</i>	
<i>М. Титанян,</i>	<i>РАСКОПКИ НА НОР АЙКАДЖУРСКОМ</i>
<i>Д. Мириджанян,</i>	<i>НЕКРОПОЛЕ</i>
<i>Т. Алексанян</i>	<i>4</i>
<hr/>	
<i>С. Ахвердян,</i>	<i>К ВОПРОСУ ЛОКАЛИЗАЦИИ СЕЛА МАРГАДЗОР</i>
<i>Г. Шабунц</i>	<i>И ИДЕНТИФИКАЦИИ ЛИЧНОСТИ</i>
	<i>СЮНИКСКОЙ КНЯЖНЫ</i>
	<i>14</i>
<hr/>	
<i>М. Балаян</i>	<i>ПРЕВРАЩЕНИЕ ШУШИ В ДУХОВНЫЙ ЦЕНТР</i>
	<i>КАРАБАХА</i>
	<i>19</i>
<hr/>	
<i>В. Балаян</i>	<i>ШКОЛЬНАЯ ЖИЗНЬ И ВОПРОС</i>
	<i>НАЦИОНАЛЬНОГО ВОСПИТАНИЯ В ШУШИ В</i>
	<i>1813-1917 ГГ.</i>
	<i>28</i>
<hr/>	
<i>Г. Степанян</i>	<i>ИЗ ИСТОРИИ АРМЯНСКИХ ШКОЛ ГОРОДА</i>
	<i>ШАМАХИ (XIX В.)</i>
	<i>42</i>
<hr/>	
<i>A. Арутюнян</i>	<i>РЕГИОНАЛЬНЫЕ АДМИНИСТРАЦИИ И</i>
	<i>ФУНКЦИИ БЕЗОПАСНОСТИ ВАНА КАК ФОРМА</i>
	<i>ПРОЯВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННОСТИ</i>
	<i>60</i>
<hr/>	
<i>А. Саркисян</i>	<i>ЭТНОГРАФИЯ, ФОЛЬКЛОР И ДИАЛЕКТ АРЦАХА</i>
	<i>В</i>
	<i>ИССЛЕДОВАНИЯХ СТЕПАНА ЛИСИЦИАНА</i>
	<i>67</i>
<hr/>	
<i>К. Балаян,</i>	<i>ПРИРОДНО-ИСТОРИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ</i>
<i>Г. Григорян</i>	<i>ВАНКАСАРА И ПРИЛЕГАЮЩИХ ТЕРРИТОРИЙ</i>
	<i>87</i>
<hr/>	
<i>Н. Сарумян</i>	<i>НОВАЯ ФАЗА ПРОЦЕССА УРЕГУЛИРОВАНИЯ</i>
	<i>АРЦАХСКОГО ПРОТИВОСТОЯНИЯ</i>
	<i>94</i>
<hr/>	
<i>С. Погосян</i>	<i>СЕМЕЙСТВО НУБАРЯН</i>
	<i>110</i>
<hr/>	
<i>Э. Погосян,</i>	<i>ИЗ ИСТОРИИ ДЕЯТЕЛЬНОСТИ ОРГАНИЗАЦИИ</i>
<i>А. Еприкян</i>	<i>ОБЪЕДИНЕННЫХ НАЦИЙ В ПРОЦЕССЕ</i>
	<i>УТВЕРЖДЕНИЯ НЕЗАВИСИМОЙ</i>
	<i>ГОСУДАРСТВЕННОСТИ В АРМЕНИИ</i>
	<i>(1990-2001 ГГ.)</i>
	<i>127</i>
<hr/>	
<i>М. Арутюнян</i>	<i>ИЗ ДЕЯТЕЛЬНОСТИ ИНЖЕНЕРНОЙ СЛУЖБЫ</i>
	<i>АРМИИ ОБОРОНЫ В 2005-2008 ГГ.</i>
	<i>139</i>
<hr/>	
<i>О. Бабаян</i>	<i>ЗАВЕТ МАГТЕСИ БАБАЯН (1876-1925)</i>
	<i>145</i>
<hr/>	
<i>А. Амаян</i>	<i>“ЖАНРЫ ДЕТСКОЙ ЛИТЕРАТУРЫ В</i>
	<i>“РЕЛИКВИЯХ” Л. АРУТЮНЯНА</i>
	<i>152</i>



CONTENTS

<i>N. Yengibaryan,</i>	<i>EXCAVATIONS IN NOR HAYKAJUR GRAVEYARD</i>	
<i>M. Titanyan</i>	<i>N. YENGIBARYAN, M. TITANYAN</i>	
<i>D. Mirjanyan,</i>	<i>D. MIRIJANYAN, T. ALEQSANYAN</i>	4
<i>T. Aleqsanyan</i>	<i>THE LOCATION OF MARKADZOR VILLAGE AND THE IDENTITY OF THE LADY FROM SYUNIK REGION WHO HAD BUILT A CHURCH IN THAT VILLAGE ARE BEING CHECKED</i>	14
<i>S.Ahverdyan,</i>	<i>MAKING SHOUSHI SPIRITUAL CENTRE OF KARABAKH</i>	
<i>G. Shabunc</i>	<i>THE SCHOOL LIFE AND THE PROBLEM OF NATIONAL EDUCATION IN SHUSHI IN 1813-1917</i>	19
<i>V. Balayan</i>	<i>FROM THE HISTORY OF ARMENIAN SCHOOLS OF THE CITY OF SHAMAKHI (XIX CENTURY)</i>	28
<i>G. Stepanyan</i>	<i>VAN'S REGIONAL ADMINISTRATION AND SECURITY FUNCTIONS AS A FORM OF MANIFESTATION OF STATEHOOD</i>	42
<i>A. Harurunyan</i>	<i>ARTSAKH ETHNOGRAPHY IN THE WORKS OF STEPHEN LISITSIAN</i>	60
<i>A. Sargsyan</i>	<i>THE NATURAL AND HISTORICAL FEATURES OF VANKASAR AND THE ADJACENT AREAS</i>	67
<i>K.Balayan,</i>	<i>A NEW PHASE OF THE PROCESS OF SETTLEMENT</i>	
<i>H. Grigoryan</i>	<i>OF ARTSAKH CONFRONTATION</i>	87
<i>N.Sarumyan</i>	<i>THE NUBARYAN FAMILY</i>	94
<i>S. Poghosyan</i>	<i>FROM THE HISTORY OF UNO ROLE IN THE PROCESS OF ESTABLISHMENT OF ARMENIA AS AN INDEPENDENT STATE</i>	110
<i>E. Poghosyan,</i>	<i>FROM DEFENCE ARMY 2005-2008 ENGINEERING</i>	
<i>A.Eprikyan</i>	<i>SERVICE ACTIVITY</i>	127
<i>M.Harutyunyan</i>	<i>ZAVEN MAHTESI BABAYAN (1876-1925) ABSTRACT FOLKLORE GENRES OF CHILDREN'S LITERATURE, ACCORDING TO L. HARUOTUNYAN'S "FRAGMENTS OF FOLKLORE"</i>	139
<i>O. Babayan</i>	<i>ZAVEN MAHTESI BABAYAN (1876-1925)</i>	145
<i>A.Atayan</i>	<i>ABSTRACT FOLKLORE GENRES OF CHILDREN'S LITERATURE, ACCORDING TO L. HARUOTUNYAN'S "FRAGMENTS OF FOLKLORE"</i>	152



ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՐԱՆ

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

(գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

АРМЕНОВЕДЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ
(периодический сборник научных статей)

ARMENOLOGY RESEARCHES
(periodical collection of scientific articles)

7

Տեխնիկական խմբագիր՝ Դ. Հովսեփյան

Հանձնված է շարվածք՝ 25.09.2016թ.:
Ստորագրված է տպագրության՝ 19.12.2016թ.:
Չափսը՝ 70x108 1/16: Ծավալը՝ 10.5 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 100:
ԱրՊՀ հրատարակչություն
ք. Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5:
